

Ճ 91. 99 սփ

4-17 1937

00 AUG 2010



№ 2

ՀԱՆՐԱՊԵՏ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ժ Թ

ԱՊՐԻԼ - ՅՈՒՆԻՍ

Փ Ա Ր Ի Ձ

1937

# "V E M,"

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE

Directeur : S. VRATZIAN

## ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱՆ ՄԻՆԱԵՆՈՐԵԱՆ. — Արհաւիրքի Օրեր . . . . .	1
Յ. ՔԻՒՐՏԵԱՆ. — Հայ եւ Արաբ հնագոյն յարաբերութիւնները . . . . .	38
ՏՈՒՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ. — Յուշատետրէս . . . . .	44
ՀԱՅ — ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — . . . . .	58
ՀՄ. ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Գեղեցիքը Վասպուրականում . . . . .	73
ՄԻ ՔԱՆԻ ՇՇՏՈՒՄՆԵՐ. — Ս. ՎՐ. . . . .	78
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. — ԸՆԾԱՅԵՅԻ . . . . .	83
ԱՆՅԵԱԼՔ. — Ատրպետ, Հայաստան Գեղարգեան, Զ. Մաքիկեան . . . . .	91
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ. — Գրականութեան վիճակը Հայաստանում. — Բաֆֆի Յոբելեանը. — Մուր. — Ռաֆայէլեան վարժարանի հարիւրամեակը. — Քաղաքային Թանգարան Երեւանում. — «Մարջան» օպերա . . . . .	94
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՍՈՒԼ. — Հրատարակութիւնների վիճակը Հայաստանում. — Բաֆֆի երկերը. — Նուպարեան Մատենադարան . . . . .	103
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ. — Մ. Օրախեյաշվիլի՝ «Ս. Թրջոնիկիճէ», Ն. Բաղայեան Ն. Հանգոյց՝ «Մեր Կանոնագիրը», Ս. Վ. — . . . . .	106
ՍՏԱՅԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .	110
ՅԱԻԵԼԻԱԾ. — Վահրամ Եպ. Մանկունի, «Գեղորգ Գ. եւ իր ժամանակը» . . . . .	273


## ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Յրանաա եւ Սիրիա տարեկան՝ 60 ֆրանկ  
 Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս՝ տարեկան 4 դոլար  
 Մնացեալ բոլոր երկիրները տարեկան՝ 3 դոլար  
 Կանխիկ վճարող նոր բաժանորդների համար՝ նախորդ տարիների թիւերը՝ կէս գնով :  
 Հասցէ՝ նամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն տեսակ առաքումների համար. —

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant : V. Hampartzoumian

Impr. ARTISTIQUE, 12 Rue de la Fontaine, PARIS 17e.



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՏԵԱՆ

Ե. ՏԱՐԻ, ԹԻԻ 2

1937

ԱՊՐԻԼ — ՅՈՒՆԻՍ

ՎԱՀԱՆ ՄԻՆԱԵՆՈՐԵԱՆ

## ԱՐՅԱԻՐՔԻ ՕՐԵՐ

VIII

ՃԱԿԱՏԱԳԻՐ

Ոչ օրը, ոչ ժամը չեմ յիշում : Ինչ որ տեղ պառկած էի : Գրեթէ կենդանութեան նշոյլ չկար վրաս : Գլխիս մէջ մերթ միտք էր ծագում, բայց երբ ջանք էի թափում գիտակցել, աղօտանում ու ցնդում էր : Ու հետամուտ էի լինում այդ անհետացող մտքերս որսալու : Բայց ամէն անգամ դարձեալ ընկնում էի թմրութեան մէջ : Որքան երկար տեւեց այդ դրութիւնս՝ չգիտեմ : Բայց յիշում եմ, որ մի անգամ, անընդհատ լսելով անունս, ինձ յաջողեց յաղթահարել արճիճի պէս վրաս ծանրացած քունը : Պառկած էի մի սենեակում : Մահճակալիս մօտ, աթոռներին նստած էր երկու մարդ : Մէկը Գաւախի պետական քննիչն էր, միւրը՝ Սամսոնի պարսկական հիւպատոսի Գաւախի ներկայացուցիչը, որը եւ բացատրեց այդ, յայտնելով, թէ ինքը Փիր — Աղան է : Ժպտուն, բարի, կլոր դէմքով մարդ էր, որին առաջին անգամն էի տեսնում : Եւ քունը դարձեալ այնպէս էր յաղթահարում, որ դժւարութեամբ էի պահում ինձ :

— Ներէլի սըն, հարց տուց քննիչը, ձեռքին բռնած մի թղթի վրա գրելով :

« Որտեղացի ե՞մ » ...  
 — Վահան Էֆէնդի, առյի՛կ, Արե՞լի սըն, ասաց Փիր — Աղան այնպիսի մի վստահութեամբ, որ կարծես թէ կնքահայրս է :  
 — Իրանի ...

3214



515-2001

- Իրանըն Գերեթե՞ն, հարցրեց քննիչը:
- Թեպրիգտէն...
- Թեպրիգրն Գե՞ երտէն:
- Կարաճատագտէն...
- Կարաճատագրն Գե՞ երտէն:
- Վահան էֆէնդի'... Սալլէ', Կարաճատագրն Գե՞ երտէն...
- Չհեր ֆէոյտէն...
- Կա՞չ եաշընտա սրն:
- Վահան էֆէնդի'... Վահա՞ն էֆէնդի'... սալլէ', կա՞չ եա՞ - շը՞ն - տա՞ - սր՞ն:
- Օ... քն՛ւզ...

Վերջացաւ: Բարձիս տակ այժմ կարծես, թէ ղողրալով դառնում է ջրաղացի քար ու մէկը, խորխով լեցուն կոկորդով, երգում է...

Ու, իբր թէ, ես դառնում եմ ծննդավայր: Եւ, փողու մէջ կորած կօշիկներս քաշքշելով, հազիւ հազ հասել եմ շրջակայքին: Դաշտի մէջ, հեռուից տեսնում եմ մի դետ, որ փալիւրմ է արեւի տակ, արծաթէ երկար գօտու պէս: «Մեծ Գետն» է, մտածում եմ ես եւ ոյժ տալիս ոտքերիս: Թեք արեւի ճառագայթների տակ այժմ տեսնում եմ այգիների մի աշխարհ. «Ձորի բաղերն» են, ասում եմ ինքս ինձ ու թեքում դէպի աջ: Դեռ հեռուից նշմարում եմ մեր հինաւուրց չինարիների գաղաթները, որոնց վրա անձայն ճախրում են աղաւաններ: Բայց երբ մտնում եմ ճամբու մէջ, տեսնում եմ իրար վրա թափւած սեւացած չորացած տախտակներ, որոնց արանքում նստել է ուռած, փքւած հինգ - վեց տարեկան մի մանչ, որ բռերով հաւաքում է հողի մէջ ցրւած ալիւրը եւ ուտում: Եւ ինձ տեսնելով՝ մտնում է տախտակների տակ:

— «Ելիր, տղաս, ելիր, մի վախենայ, ես հայ եմ», ասում եմ ես: Բայց զարմանքով տեսնում եմ, որ մանչը չքացել է: Այն ժամանակ ես շարունակում եմ ճամբաս ու մտնելով մի փողոց՝ ուշադիր դիտում ծառերի տակ նիրհող չէնքերը: Մարդ չկայ, ձայն չկայ: Արեւի թեք ճառագայթները խաղում են բարտիների տերեւների վրա: Ես կանգ եմ առնում մի տան առաջ եւ բաց պատուհանից նայելով՝ ինքս ինձ ասում եմ. «ահա!»: Ապա մի քանի քայլ անելով՝ մտնում եմ փողոցի դռնից: «Այս ի՞նչ է եղել մեր բակը եւ ո՞ւր են թթի ծառերը», մտածում եմ՝ զարմացած դիտելով բակի ամայութիւնը: Բակի խորքում տեսնում եմ աղլուսակերտ մի պատշգամբ: Այստեղ դրւած է ճերմակ սիւնոցով ծածկւած մի սեղան, որի չորս կողմը նստած են մայրս, տատս, քոյրերս եւ մէկ-երկու ուրիշ մարդիկ, որոնց առաջին անգամն



եմ տեսնում: Բոլորն էլ անշարժ նայում են սեղանին: Կարծես, թէ չեմ եկել... Հերթով նայում եմ բոլորին. ոչ մի ձայն եւ ոչ մի շարժումը: Այն ժամանակ դառնացած ասում եմ.

— «Ահա, թէ ինչպէս էք ընդունում ինձ»...

Ու քայլերս ուղղում եմ դէպի դուրս: Դեռ տախտակներին չհասած՝ տեսնում եմ, որ մայրս խեղճ ու յանցաւոր մի ձեւով իմ յետեւից դալիս է: Ես կանգ եմ առնում, որ հասնի: Բայց այդ վայրկեանին, յանկարծ, տախտակների տակից դուրս է դալիս մի մարդ եւ կացինով խոյանում վրաս.

— «Փախի՛ր», ճշում եմ դէպի մայրս ու նետում կացնաւորի վրա...

Խոր, անթարթ գիշեր էր եւ հազիւ էի ինձ դտել, երբ ներս մտաւ մի յաղթանդամ մարդ, որին, կարծես թէ, տեսել էի: Մարդու քիթը բերանը այնքան կարմիր էր, որ կարծես թէ, նոր էր դուրս եկել բաղնիքից: Փէսը իջել էր ճակատին, փիւսկիւլը կախւել էր առջեւից: Խոշոր հանդարտ աչքերը սրտած էին մշուշով: Աթուր քաշեց, նստեց, քննեց բաղկերակս եւ մշուշապատ հայեացքը վրաս յառած՝ ասաց.

— Լաւ է, ուրեմն, Աստծոյ կամքը այնպէս էր, որ ապրիս: Անիմանալի է նրա խորհուրդը, բարեկամ, ով ուզում է մեռնել, ապրում է, ով ձգտում է ապրել՝ մեռնում է: Հիմա, եթէ Տէրը կամենայ, որ այստեղ մնաս, խօսք չկայ, որ քեզ կը բժշկեմ, հասցնելով վիճակդ այնպիսի մի դրութեան, որ ոչ առողջ, ոչ էլ հիւանդ լինես... Այո՛, այդ ծայրայեղ դրութիւնները ներկայ պայմաններում հաւասարապէս վտանգաւոր են հայ մարդու համար, բարեկամ... Մի՛ նայիր ինձ այդպէս, ես յոյն եմ, մէկը այն յոյներից... Է՛հ, թողնե՛նք. իրիկունը քեզ բան տւե՞ց Իրակլին...

- Իրակլի՞ն...
- Այո՛, հիւանդանոցի ծառան...
- Այս հիւանդանոց է...

Մարդը մի սլահ մշուշապատ աչքերը սեւեռեց վրաս ու քիչ աւելի հանդիսաւորութեամբ, քան պէտք էր, վրա բերեց.

— Այո, բարեկամ, Նորին Կայսերական Մեծութեան Գաւախի ղինւորական հիւանդանոցն է այս:

Ու դէպի դուրս ձայն տւեց.

— Իրակլի՛...

Գինու սաստիկ հոտ առի:

— Ի հարկէ, Տիրոջը կամքը այս դէպքում էլ դործ տեսաւ, բայց, եթէ չլինէր Փիր-Աղայի եռանդուն միջամտութիւնը, դժւար թէ Տէ-

ըը միայն իր սեփական միջոցներով կարող լինէր քեզ այս հիւանդանոցում ընդունել տալ:

— Իրակլի՛... .

Ներս մտաւ մէկը, որին չէի տեսնում:

— Ո՞ւր ես, Մորիէոսի դաւակ, մի բաժակ ջրի մէջ երեք դալ մածոն լաւ խառնիր, տրորիր, բեր այստեղ:

Ու դառնալով ինձ՝ յարեց.

— Սա էլ յոյն է, լաւ տղայ է, բայց գիշեր – ցերեկ քնած է, հիւանդ է քնարբութեամբ, ասէնք փրկութեան միակ միջոցն էլ այդ է... Ինչ որ է, թողնենք: Գլխիդ վրա, անկման վէրքերից դատ, ծոծրակիդ մօտ դանակի մի խոր վէրք կայ, ո՞վ խփեց:

— Չգիտեմ... .

— Ա՞չքդ ինչ եղաւ:

— Խփեցին... .

— Այդ գիտեմ, ինչո՞վ:

— Մտրակով... .

Նա դարձաւ մի զինուորի, որ մածոնաջրով լի բաժակը ձեռքին ներս մտաւ.

— Ա՛ֆերիմ, տուր այստեղ եւ հիմա զնա քնիր, մինչեւ լոյս, եթէ աշխարհն էլ կործանելի, էլ քեզ ձայն տուող չի լինի:

Մածոնաջուրը մատակարարեց ինձ ու ասաց.

— Հիմա, բարեկամ, անհրաժեշտ է, որ ինձ իրողութիւնը ասես: Ինձանից իսկութիւնը պահելու որ եւ է պատճառ չունես, միւս կողմից, խնդրով հետաքրքրուեմ է նաեւ Փիր – Աղան, որ Սամսոնի հիւպատոսից ստացած հրահանգի համաձայն, պէտք է այստեղ քո շահերը պաշտպանի. դո՞ւ, թէ՛ ժանդարմները այն կիրճից վար նետեցին քեզ:

— Ե՛ս... .

— Նախ քան այդ, ո՞ւր կապեցին թեւերդ... .

— Թեւերս կապւած չէին... .

— Կապւած չէի՞ն... .

— Ո՛չ... .

— Հը՛... է՛հ, լաւ... .

Ու ելաւ.

— Վաղը թոյլ կը տամ, որ տանտիրուհիդ դայ քեզ տեսնի:

— Տանտիրուհի՞ս... .

— Այո՛, ի՞նչ կայ որ... .

— Դեռ այստե՞ղ է... .

— Այո՛: Երէկ, այսօր հնարաւոր չէր, բայց վաղը կարտօնեմ, միայն պէտք է իրիկնասպահին դայ եւ ազանը սկսելուն պէս զնայ. նկատի առ այս. այդ պահին դրեթէ մարդ չի լինում փողոցում. շուրջը այստեղ դեռ հետաքրքրութիւն կայ, պէտք չէ, որ շատ ուշադրութիւն գրաււի:

Գնաց: Ապա ականջներին հասաւ ծանր ու համաչափ ոտնածայն, որ լսուեմ էր դէպի վեր տանող տախտակի ինչ որ սանդուխքներից:

Հինգ – տասը վայրկեանի մէջ անյայտութիւնից նորից կեանքի յորձանքի մէջ ընկայ. Գաւախ, հիւանդանոց, Փիր – Աղա, հիւպատոս, տանտիրուհի... Իսկ աղջիկը, ի՞նչ եղաւ արդեօք Իսկուհին... Ամէն բան վայրկենապէս այս հարցման առջեւ տեղի տւեց... Երկար ժամանակ անցաւ, մինչեւ որ մի շարք դատողութիւնների հիմքերով եկայ այն եզրակացութեան, որոնց կենտրոնը, կարծես թէ, ես էի: Մենեակի մէջ, ուր պառկած էի մի պարզ մահճակալի վրա, երկու աթոռներից եւ մէկ քառակուսի նստարանից դատ ուրիշ բան չկար: Դէմ դիմաց խուլ պատ էր: Չախ կողմից պատին կախւած էր թիթեղեայ ճրագ: Գիշ դէպի աջ կար մի փոքրիկ պատուհան: Պառկած էի աջ պատի մօտ, աւելի մեծ պատուհանի տակ, որի մէկ փեղկը բաց էր: Մուտքը գլխի կողմից էր եւ չէի կարողանում տեսնել, ամենաթեթեւ շարժումը սաստիկ ցաւեր էր պատճառում: Գլուխս, ձախ աչքիս հետ միասին, վերակապերով փաթաթուած ու կապւած էր: Ոտքերս դօտուց վար ծանրացել, ընկել էին լեշի պէս: Թեւերս, ձեռքերս մի քանի տեղ ծառուած, քերծւած էին, բայց անվնաս էին մնացել: Ամենայն մանրամասնութեամբ յիշում էի անդունդից վար նետուելս, բայց ողջ մնալս հանելուկ էր... Յանկարծ, ուշադրութիւնս գրաւեց ինձ հազցրած շապիկի վրա ասեղնագործ «Գ» գիրը: Աչքերիս չէի հաւատում, բայց փաստ էր... Օ, այդ «Գ»-ը... Շապիկը այրում էր մարմինս, կարծես թէ, հնոցի մէջ էի... Պարզ է. բարձ, վերմակ, սաւան, ամէն բան տնային է... Այն ժամանակ նորից ինձ պատկերացաւ Սամսոնի զարթ ու անդորր կեանքը, սպա դաղթը, Չախալին, Էլէւին, Կաւզան, պահակատունը, լեռնադաշտը, կամուրջը, Գաւախի վերելքը, տանտիրուհիս, Իսկուհին... Այստեղ կանգ առի, որովհետեւ դէպքերի բերումով մոռացութեան մատնւած այս երկու անձերը այժմ յատուկ արժէք էին ստացել ինձ համար... Ու աշխատում եմ վերջիչել, թէ, վերջին անգամ, ե՞րբ տեսայ ես Իսկուհուն... «Վերջին անգամ»... Ո՛չ, չեմ յիշում: Բայց յիշում եմ երեքչորս ամիս առաջ սպրած օրերը, որոնք այժմ յաւիտենականութեան չափ հեռացել են... Յատկապէս խիստ թարմ է ցաք ու ցրիւ յուշերիս

մէջ մէկ գիշեր, որ թերեւս վերջինն էր, Սամսոնի համար արտասու-  
վոր մի ցուրտ գիշեր, երբ դառնում էի տուն: Գալիք արհաւիրքնե-  
րը, օդի մէջ դեգերող մղձաւանջի պէս, արդէն զգում էր ամէն մարդ:  
Թաղը լուս էր, դուրսը կենդանի շունչ չկար: Մուհաճիրներն անգամ,  
որ այդ օրերին վխտում էին թաղի մէջ, արդէն քաշել էին: Երբ հա-  
յայ մեր կարծ փողոցի ծայրին, դարմանքով տեսայ, որ տանտիրու-  
հուս սենեակում դեռ լոյս չկայ: Իսկ այդ նշանակում էր, որ դրսի  
դուռը ինքնիրեն կը բացւի, որովհետեւ Իսկուհին, պատահաբար,  
լուսամուտի որ եւ է անկիւնից միշտ տեսնում էր վերադարձս եւ դը-  
րան կեռի թելը ճիշտ ժամանակին վերեւից քաշում: Դուռը, իրօք,  
բացւեց. վրա դրի, կողպեցի, վեր ելայ: Բայց դեռ սենեակիս չհա-  
սած, լսեցի Ալէմշահ – հանումի ձայնը.

— Զաւա'կս, պառկած չենք, եկուր բաժակ մը թէյ առ մեզ հետ,  
չատ ցուրտ է:

Ներս մտայ: Պղնձէ կրակարանի նոր մոխրակալած ածուխների  
վրա մրմնջալով թշնջում էր թէյամանը: Մայր ու աղջիկ նստած էին  
կրակարանի մօտ, գորգին ձգւած մինդարներին: «Տեքիրը» կիսով չափ  
մտել էր կրակարանի տակ եւ անխռով մուտում էր:

— Ամա'ն, դաւակս, ո՞ւր մնացիր... Նստէ', նստէ', թէյը պատ-  
րաստ է. հիմա կրակարանդ ալ կը նորոգենք:

— Պէտք չկայ, Ալէմշահ – հանում, շուտով պիտի պառկեմ, —  
ասացի ես:

— Աղէ'կ, մեր կրակարանը ներս կառնես, հոս արդէն տաքցաւ:  
է', ի՞նչ լուր, ուշ մնացիր, բան մը կա՞յ...

— Ոչինչ չկայ, Փիրանեանների մօտ էի...

— Երէկ գիշեր Մարիամ դուգուէն իմացայ, որ Բէքը – փաշան  
Տօնիկեան էֆէնդուն ըսեր է, թէ շուտով օրթալուղը կը շտկւի.  
Խօսք, խորաքա՞յ է, դաւակս...

— Ի հարկէ, վերջ է վերջոյ կը շտկւի...

— Է', փառք Տիրոջ: Երէկ գիշեր չքնացայ, կէսօրէն ետքը հազիւ  
ժամ մը պառկեցայ, հիմա ալ քուն չունիմ... Աստուած կեանքը երկար  
ընէ, բախտաւոր ըլլայ, աղւորիկ մանչուկ մըն է...

Նայեցի Իսկուհուն, մօր միտքը հասկանալու համար. նա մատ-  
ներով շուրթերը հպած՝ ժպտում էր:

— Խօսքս Արտաշէս էֆէնդիի նորածնի մասին է, դաւակս: Երէկ  
գիշեր կը նայիմ, որ Վարդապետեաններուն մեծ ճրագը Փրֆուալէն  
կը վառէ. կըսեմ՝ հիւր ունին. մէյ մըն ալ կը նայիմ, որ Արտաշէս  
էֆէնդին պատուհանին տակ կը կենայ, կը քալէ. հէմէն կը յիշեմ,

որ Աշխէնին ծննդարեւութեան ատենն է: Կելնեմ, կերթամ. «հա՛»,  
կըսէ Արտաշէս էֆէնդին: Ներս կերթամ, կը նայիմ, Մարիամ դու-  
գուն հոն է եւ Աշխէնը կը պոռայ. ժամ մը չանցած՝ մա՛նչ զաւակ մը  
ծնեցաւ, եւ ան ալ ի՞նչ դաւակ, ահա՛...

Ու ձեռքերով նորածնի մեծութիւնը չափելու ժամանակ, յան-  
կարծ, պաղեց ու կանգ առաւ: Իսկուհին ափով պատել էր բերանը ու  
զստւած ծիծաղից նստած տեղը երերում էր:

— Փառք Աստուծոյ, լոյս բացւեց երեսիդ...

— Մայր, ատուրնէն մինչեւ հիմա հողիս ելաւ ատ նորածնին  
պատմութիւնը լսելով, ձգէ, պարոն Վահանը բան մը պատմէ, մտիկ  
ընենք:

— Աղէ'կ, աղջիկս, թող պատմէ:  
— Հա՞, պարոն Վահան, դեռ այնքան ալ ուշ չէ, վաղն ալ կիւրա-  
կի է, կրնաք երկար քնանալ:

— Հա՛, բայց չգիտեմ՝ ի՞նչ պատմեմ...

— Ինչ որ կուզէք, միեւնոյնն է...

— Լաւ, պատմեմ ձեզ մեր լեռներից մէկի վշտի մասին...

Նրա աչքերը փայլատակեցին եւ ի բնէ ազդագրասէր այդ աղջկան  
ողջ կութիւնը կեանք ստացաւ.

— Կերա՞ն վշտի մասին...

— Այո՛, մեր երկրի լեռներից մէկի, Քէափաղի վշտի մասին, որ  
չա՛տ տարիներ առաջ, մի այսպիսի գիշեր պատմել է ինձ տատս:

Արդէն այդ օրերին յաճախ յիշում էի ծննդավայրս. բաժանման,  
հեռաւորութեան դրացումս չափից աւելի սրել էր. կարծես, թէ  
զգում էի գալիքը եւ պատուհանից ճողոպրելու դրացումը թէ՛ զբա-  
ղեցնում, թէ՛ ճնշում էր. յատկապէս այդ գիշեր շատ հեռու էի Սամ-  
սոնից ու ինքս ի՞նձ էր, որ ասացի.

— Շատ տարիներ առաջ, Քէափաղի տակ մի ճգնաւոր էր ապ-  
րում, որ կնոջ մահից յետոյ հեռացել էր աշխարհից իր միակ աղջկան  
հետ: Այն ժամանակ Քէափաղը մեր երկրի բարձրաբերձ լեռներից  
մէկն էր: Զմբան օրերին իր սրածայր, ձիւնածածկ դադաթը դրեթէ  
միշտ պարուրւած էր լինում ամպերով: Աշնան բուք օրերին, քամին  
իր առասպելական թեւերը թափ տալով՝ ճախրում էր նրա չորս կող-  
մը: Եւ դադաթից վար տարածւած խորշերում դիշերելու էին դալիս  
արծիւները: Իսկ երբ բացւում էր դարունը, Քէափաղը պարզում էր  
երկնքի տակ իր ալիհեր դադաթը եւ լանջերը ծածկւում էին ծաղիկ-  
ներով, կանանչով: Հազա՛ր, հազար ջինջ վտակներ քրքջալով վա-  
զում էին լանջն ի վար: Ու զանգի պէս խոխոջալով նետում էին ժայ-

ուից ժայռ: Այստեղ, այնտեղ ժայթքում էին փրփրացրիւ շատրւաններ: Եւ, բաշերը ցից առիւծների պէս, վեր ցատկելով, պառկում էին խոռոչներում, փոսերում: Ամրան, վայրի կենդանիների, թռչունների ձայներից Քէափազը թնդում էր: Եւ օտթը, ծաղիկների հեշտասէր բուրմունքից արբեցած՝ երերում էր օդի մէջ: Իրիկւան դէմ նրա ձիւնագերծ խոռոչները հեռուից սուերանում էին թմրութեան մատնւած օձերի պէս: Իսկ երբ մթնշաղը թանձրանում էր, նրա ապառաժները նիրհում էին անակնկալի մատնւած հսկաների պէս: Գիշերը Քէափազի բոյսերից կախ էին ցողեր: Եւ երբ լուսինը շրջան էր անում, դողդողում էին, աչքերի մէջ թանձրացած արտասուքների պէս: Այն հեռաւոր ժամանակներում, ահա՛, այսպէս էր Քէափազը...

Հինդ ուլ, չորս ուլիկներ, մի տնակ, ինքը եւ աղջիկը — այս էր ճգնաւորի աշխարհը: Նա արթնանում էր արշալոյսին ու բազկատարած աղօթում Քէափազին. Աստուածն այնտեղ էր, սարի դլխին: Ապա անցնում էր աշխատանքի. ցանում, քաղում, կապում, դարսում, ձմրան պաշար էր ամբարում:

Աղջիկը, լոյսը բացելուն պէս, հոգւում էր ուլերին: Դեռ շատ փոքր էր, երբ անհաստատ քայլերով մազլցում էր մօտ ապառաժների գազաթները: Այժմ մէկ իղձ ունէր. մի օր հասնել Քէափազի սրածայր գագաթին:

Վրա հասաւ այդ օրը: Արեւը հաղիւ պարզել էր իր առաջին ճառագայթները եւ ցերեկի դեռ թոյլ տաքութիւնը գիշերւայ ցրտի հետ միախառնւած՝ երերում էր օդի մէջ: Նրա մարմինը նոր էր արթնանում քնից: Բայց երբ քիչ վեր գնաց եւ թփերի, ծաղիկների ցողերը արծաթագոյն կաթիլներով պատեցին նրա սրունքները, ողջ էութիւնը կեանք առաւ: Տենչանքով լի հայտնաբերեց Քէափազի գագաթին, ուր դեռ միտում ու ճերմակ քօղի պէս քաշում էր թանձր մառախուղը դէպի վեր: Ոչ թէ քայլում, այլ թեւ առած՝ ժայռից ժայռ էր ցատկում: Նրա հոգին ետում էր ու արեան տեղ երակներում, կարծես թէ, կրակ էր հոսում: Հասաւ բարձրարեւրձ մի ապառաժի, որ յենւած էր բնութեան կերտած երեք քարէ մարդկանց ուսերին: Զարմացաւ. «Ե՞րբ եւ ինչո՞ւ են քարացել»... Նրանց աչքերից արցունք էր հոսում ու մարգարիտների պէս թափւում ոտքերին: Տխրեց ու մի պահ ուզեց յետ դառնալ, բայց հաղիւ ելաւ ապառաժի վրան եւ շուրջը տարածւած արտասովոր ձայներից շարեց. ժայռը սրնգի պէս նրւագում էր. մի ջրվէժ քրքջալով ցատկում էր վերեւից սեւ քարերի վրա ու գլգլալով տեղն ու տեղը թափւում: Քովնտի սարի լանջը այդտեղ նստել էր եւ ընդարձակ տարածութեան վրա կազմել թաւ-

շանման հովիտ: Հովտի վրա արշալոյսը դեռ նոր էր փախչում, կանանչների վրայով սահելով: Յանկարծ, նա ցնցեց. դիմացից սրարշաւ դալիս էին երեք ձիաւորներ: Նրանք զինւած էին: Կանգ առան, իրար հետ ինչ որ անհասկանալի բառեր փոխանակեցին: Ծգնաւորի աղջիկը սարսափեց եւ ուզեց փախչել, բայց նոյն պահին վրա հասաւ ձիաւորներից մէկը, նրան գրկեց, նետեց թամբին ու նորից ձին հեծնելով՝ արշաւեց սարն ի վեր: Միւս երկուսը հետեւեցին նրան: Ծղգնաւորի աղջիկը թպրտացող ու վերաւոր եղջերուի պէս դողաց, ապա սկսեց պայքարել ու ճշալ, բայց ապարդիւն: Քիչ անցած, ամրան փոթորկից ծառից փրթող ոստի պէս, նա ձախ ընկաւ ձիաւորի ծնկներին:

Ծգնաւորը, որ վաղուց արդէն փնտռում էր աղջկան, տեսաւ այդ: Սիրտը ուժգին թարախեց ու խենթի պէս վեր վազեց, բայց որքա՞ն կարող էր վազել. շունչը հատաւ, կանգ առաւ. հասկացաւ, որ անկարող է ձիերի յետեւից հասնել: Այն ժամանակ նա ծունկի եկաւ, որ աղօթքով Աստծոյ օղնութիւնը հայցի: Եւարեց. չէ՛ր կարողանում աղօթել. մտքերը դատուել էին խօսքերից: Բայց, յանկարծ, նա ասաց.

— Եթէ Դու չդարձնես ինձ աղջիկս, այն ժամանակ դիտցիր, որ...

Պապանձեց. աղօթքը սպառնալիք դարձաւ. մտածեց, որ նախապէս անհրաժեշտ էր բոլոր ուլերը դահաբերելու խօսք անել: Բայց երբ տեսաւ, որ ձիերը գնալով հեռանում են, դարհուրանքով վեր ցատկեց ու նորից սկսեց վազել: Այժմ նա վաղում էր գինովի պէս դէս ու դէն ընկնելով ու գիտակցութիւնը քիչ — քիչ կորցնում էր: Մի պահ, նրան այնպէս թւաց, թէ դտաւ փրկութեան միջոցը եւ բոլոր ուժով աղաղակեց.

— Խնայեցէ՛ք...  
Ձիերը, յանկարծ, կանգ առին ու բաշերը վեր հանած ծառս ելան:

— Խնայեցէ՛ք, խնայեցէ՛ք, ծերութեանս գթացէ՛ք...  
Բայց ձիերի կողերին հարւածներ իջան, եւ նրանք, կրծելով սանձերը ու սմբակներով քարերից կայծակներ հանելով՝ սլացան դէպի վեր:

Այդ պահին, կարծես թէ, մէկը ճգնաւորին թիկունքից հրեց, եւ նա հինդ — տասը քայլ առաջ մղեց: Դիմացը բլուր էր. մազլցելով վեր ելաւ, բայց այլեւս ուժաստատ եղաւ եւ ընկաւ:

Ձիաւորները հասել էին սարի ալեհեր լանջերին եւ ձիւնը, յախճապակու պէս, փշրւում էր նրանց սմբակների տակ:

Ճգնաւորը գերագոյն մի ճիգով ոտքի ելաւ, բայց հազիւ երեք - շորս քայլ արաւ ու նորից ընկաւ. ապա մի վերջին փորձ ճշալու, աղաղակելու, բայց կոկորդը չորացել, լեզուն ցամաքել էր:

Ձիաւորները այժմ հասել էին սարի գագաթին: Ձիերը կայծակնահար աչքերով նայում էին չորս կողմը. ձիւնը այստեղ քարի պէս կարծր ու յղկած սառոյցի պէս ողորկ էր: Ձիաւորները ուժգին մտրակեցին նրանց: Բայց ձիերը յետ - յետ գնալով՝ ծանօտ ելան ու բաշերը թափահարելով մնացին. չէին կարողանում սարի թիկունքով վար իջնել. Գէափաղը, կարծես թէ, շղթայել էր նրանց:

Ճգնաւորի մէջ մի աղօտ յոյս ծագեց. նա անթարթ նայում էր ու ոչինչ չէր կարողանում հասկանալ: Յանկարծ, հզօր թափով վեր կացաւ, բայց առաջին խկ քայլին ոտքը դիպաւ քարին ու ընկաւ: Այն ժամանակ նա վրէժխնդիր մի թափով սարն ի վեր մոնչաց.

— Անիծւիս դու, լե՛ն, եւ անիծւած մնաս յաւիտեան. թո՛ղ ճեղքել՝ պատուել՝, փշո՛ւր - փշո՛ւր լինի քո սրածայր գագաթը...

Յանկարծ, լսեց մի ահաւո՛ր անդնդախոր դղրդոց: Միաժամանակ գետինը ուժգնօրէն երերաց եւ հազարաւոր վազերի մոնչման պէս գոռոցուցներ տարածւեցին ամէն տեղ: «Ելնել ու փախչե՛՛ր», առկայծեց ճգնաւորի գլխում: Բայց, յանկարծ, սարը պայթեց եւ ահասելի դղրդոցով վար սահեց: Ճգնաւորին հողը քաշում, տանում էր: Դղրդոցը գնալով սաստկանում էր: Շրջապատը խաւարում էր: Հող, ծառ, բոյս, սառցակոյտեր, ժայռ, ապուստ, քարակոյտեր դժոխային իրարանցման մէջ սահում, գլտորում, ճարձատում, փշրում, թափում, ջախջախում ու բարձր փոշու մէջ դղրդում էին:

Ձգայաղիւրկ ճգնաւորը մի շարժում արաւ, որ ոտքի կանգնի: Բայց այդ պահին փլչող սարի մի քար ընկաւ նրա վրա ու ոտքերը ջախջախելով վար սահեց:

Դղրդոցը մարեց: Բայց գրեթէ միաժամանակ սկիզբ առաւ ուժգին քամի, որ սուլելով, վնգվնգալով վեր էր հանում շրջապատի թանձր փոշին ու ամէն տեղ տարածում: Օր էր, թէ իրիկո՞ւն՝ յայտնի չէր: Արեւը բաց կարմիր, հիւանդազին տեսք ունէր: Փոշին, մռայլ, ահարկու ամպի պէս, քերում էր Մուսայ սարերի լեռնաշղթան:

Շա՛տ մղոնների վրա մարդիկ իրար էին անցել: Արեւելքում Տաթեւցիները, հիւսիսում Բանանցիցիները, արեւմուտքում Ղարաբաղցիները, հարաւում Լեռնային Ղարաբաղցիները, հանդերում, գիւղերում, դիտում էին բնութեան ահաւոր արհաւիրքը:

Աւելի մեծ էր իրարանցումը Գէափաղի մօտի գիւղերում: Սու-

լուքեցիները ահարեկաւ վազվզում էին իրար մօտ, բան հասկանալու համար: Գետաչէնցիները, աչքերին թեքած փափախները, նայում էին, թէ ի՞նչ է այն ոսկեգոյն ամպը, որ հարիւրաւոր վերստի վրա, բաց կարմիր ժապաւէնի պէս, մերթ կծկում է, մերթ երկարում դէպի վար: Եւ անգամ հեռաւոր Բարսումցիները ապշահար արձանացել էին իրենց ապառաժների ճեղքերում:

Այդ պահին Գէափաղի տակ ամէն բան արդէն խաղաղել էր: Տօթօրը, մայր մտնող արեւի ճառագայթների տակ, մազլցում էր փլած ապառաժների վրայով դէպի վեր եւ արեւահար քարերից խանձուած դոլորչի էր ծորում: Գէափաղի անհաշիւ ջրերը մի պահ ողողեցին նրա փլած լանջերը, ապա, յանկարծ, անհետացան ու ինչ որ տեղ պահւեցին...

Արեւը մայր մտաւ: Գիշերը, օձի պէս յամրաքայլ, սողում էր փլած Գէափաղի լանջն ի վեր: Լուսինը, սգաւորի պէս սեւ ամպերով պարուրւած՝ աճապարանքով թաւալում էր ու մերթ ընդ մերթ ցոլք էր նետում ցաք ու ցրիւ քարերին...

Արշալոյսը բացում էր: Արեւելքից երկինքը դունատում էր ու քիչ - քիչ ծածկում մուգ մոխրագոյն շերտերով: Եւ հորիզոնը շառագունում էր: Գէափաղի տակ, փլած քարակոյտերի արանքում, սուերանում էին անդունդներ, որոնց մէջ ծւարած խաւարը դուրս էր դալիս ու մազլցում սալ քարերի կնճիռների վրայով...

Լուսացաւ: Ձինջ երկնքից կախ ընկած ամպերի տակ, առասպելալիան հսկաների պէս, իրար յետեւից ցցում էին դլուխները սեպածեւ ժայռեր, փլած Գէափաղի լանջերին: Մի արծիւ կանգնել էր բարձր քարերից մէկին ու թեւերը կախ՝ նայում էր ճգնաւորին, որ արդէն արիւնաքամ էր լինում...

Շրջակայ գիւղերում թարմ ու հիասքանչ մի առաւօտ էր: Կաթնանման ամպեր իրար հրելով խմբել էին սարալանջերին, օդային լեռների նոր շարքի ձեւով: Կիւրակի էր: Ամէն մարդ վաղուց արդէն ոտքի վրա էր: Տղամարդիկ խմբել էին գիւղամէջերում, կանայք բակերում, կտուրների, մանչ, աղջիկներն անհանգիստ, անախկալների անհամբեր՝ դեգերում էին դէս ու դէն: Ամէն մարդ վար կախւած ամպերի տակ որոնում էր Գէափաղը, որ վաղուց արդէն պէտք է պարզած լինէր իր վեհապանծ գագաթը: Եւ ամենից շատ դարձեալ ահարեկաւ էին Սուլուքեցիները, որոնք գիշերն անգամ տեսնում էին Գէափաղը: Հարսները, կտուրների խմբած՝ ինչ որ բաներ էին փսփսում: Պառաւները բազկատարած աղօթում էին: Տղամարդիկ գիւղամիջում հազար ու մի ենթադրութիւններ էին անում:

Յանկարծ, մէկը ձայն տւեց.

— Ա՛յ, խալիս, Քէափազը փլե՛լ է...

Մարդիկ նրան խենթի տեղ դրին:

— Տեսէ՛ք, տեսէ՛ք... Քէափազը փլե՛լ է, ահա՛...

— Ա՛... հա՛... դոչեց ապշահար ամբոխը:

— Տեսնո՞ւմ էք, շնչահեղձ դոչեց սրատես գիւղացին, հիմա երկո՛ւ գլուխ ունի...

— Երկո՛ւ գլուխ...

Գիւղը իրար անցաւ. հարսները վար թափւեցին կտուրներից եւ բակից բակ վազելով՝ իրար շնջացին.

— Լսեցի՛ր, Քէափազը փլե՛լ է, երկո՛ւ գլուխ ունի...

Մանչերը պատահող մարդու երեսն ի վեր պարապ, սարապ դո՛չում էին.

— Քէափազը փլա՛ւ... Քէափազը փլա՛ւ...

Գիւղամիջում խմբւած մարդիկ դեռ նայում էին, չհաւատալով աչքերին:

— Քէափազի այս աղէտը մեր վատ բարքերի հետեւանքն է, աւաս սրատես գիւղացին:

— Ի՛նչ բարք, ի՛նչ վարք, ա՛յ մարդ, մեր քաշած շարձարանքների ու վշտերի խորհուրդն է, վրա բերեց մի ծերունի:

Բայց գիւղացին, որ շարունակ դիտում էր, յանկարծ, դոչեց.

— Տեսէ՛ք, տեսէ՛ք... Վա՛յ մեղ, ո՞վ է այն քարացած աղջիկը, որ աշխարհի աչքի առաջ նստել է քար կտրած ձիււորի գոգին...

Ամբոխը մոնչաց.

— Ա՛... աղջիկը՛...:

Մէկը բարձրացաւ առաջին պատահած կտրի վրա ու բորբոքւած դոչեց.

— Այ խա՛լիս, ո՞ւր է ձեր նամուսը...

Մարդիկ բերանբաց նայեցին:

— Պիտի թողնէ՞ք, որ ամէն օր մեր հարսները, աղջիկները նայեն այդ անոգամ աղջկան...

Մարդիկ շարած դոչեցին.

— Վա՛յ մեր նամուսին, ի՛նչ անենք...

— Փշրե՛նք, վար թափե՛նք...

Ամբոխը փրփրած կատաղութեամբ դոչեց.

— Փշրե՛նք... Վար թափե՛նք...:

Ու շարժման մէջ մտաւ: Այդ պահին, ամենահեռուոր գիւղերում անգամ, ամէն քայլափոխին կարելի էր լսել.

— Քէափազը փլա՛ւ...

— Քէափազը փլա՛ւ...

— Քէափազը փլա՛ւ...

Ու ձիւրով, սայլերով, էշերով, ոսքով, բոլոր գիւղերի ճամբաներին կարելի էր տեսնել անհաշիւ մարդիկ, որոնք շարժւում էին դէպի փլած Քէափազը: Սո՛ւր էր, խրախճա՞նք, տօ՞ն, թէ՞ կուի՛ յայտնի չէր: Գոյնզգոյն հագուստներով հարսները, կտակաւոր մայրերը, դարափափաղ այրերը, ստարորիկ մանչերը, ամէնը մէկ շարժւում էին դէպի փլած Քէափազը: Արդէն հասել էին ստորտը: Փրփրած ձիւրը ամբոմբոցով վազում էին փլած Քէափազի փէշերով եւ ոնգերը պայթելու չափ լայնացրած, թափահարելով բաշերը՝ կըրծում էին սանձերը: Վերելքը քանի գնում ցցւում ու ճանապարհը երկու կողմից սեղմւում էր: Աւելի վեր, փլած ժայռերի մի խումբ կազմել էր մի ձոր, որի գագաթներին պառկել էին ջարդւած, արմատից ելած, կախ ընկած ծառեր: Առաջ անցած սրատես գիւղացին, յանկարծ, ձին սանձեց ու գոչեց.

— Ա՛յ, խա՛լիս, այս ի՛նչ է, ճամբայ չկայ, դէո՛ւ է...

Եւ վրա հասնողները ապշահար դոչեցին.

— Գէո՛ւր, գէո՛ւր... Գէուրգէուր՛...

Այդ մի լիճ էր, որ կազմւել էր Քէափազից փախած ջրերից. իբր թէ, այդտեղ նա թաղնւել էր. եղերքներից իրեն ծածկել էր կախ ընկած, պառկած ծառերով, թփերով ու երկարավիղ ծաղիկներով, կանանչով: Այն ժամանակ նա խիստ յուզւած էր ու պղտոր: Այժմ Գէուրգէուր միշտ խաղաղ է ու վճիտ...

Զիւաւորները դարձան ու զուգահեռ մի ուրիշ ճամբայ բռնեցին ու նրանց յետեւից փոչտաով շարժւեցին նաեւ համբձրատար էշերը, երազադէմ ու անտարբեր եղները: Որքան գնում էին, այնքան մարդկանց թափը ընկնում էր եւ ահաւոր իրողութեան առաջ՝ զայրոյթը փոխւում էր կսկիծի: Մարը, իրօք որ, կիսով չափ փլել էր. երկու ձիւաւորները քարացել, կախւել էին անդունդից. միւս գագաթին, իր ձիու հետ, քարացել էր երրորդը ու թամբից կախ ընկած ճգնաւորի աղջիկը:

Սարի լանջին, բաւական վեր, ձիւրը, յանկարծ, ծառու ելան... Այնտեղ ընկած էր ճգնաւորը, որ հոգեվարքի ամենազօր գիտակցութեամբ այժմ հասկանում էր ամէն բան: Զիւաւորները վար իջան ձիւրից ու մօտեցան ճգնաւորին. ստաւորներն էլ հասնում էին:

— Ո՞վ է այն անոգամ աղջիկը, որ պառկել է քար կտրած ձիւաւորի գոգին, — հարց տւեց սրատես գիւղացին:

- Իմ աղջիկն է...
- Քո՛ր... աղջիկը...

Ամբոխը նորից իրար անցաւ.

- Վա՛յ, վա՛յ մեր նամուսին...

- Վա՛յ, վա՛յ մեր նամուսին... Ճգնաւորի՛ աղջիկն է...

Ճգնաւորը, քարերին յենած, վեր հանեց գլուխը եւ թոյլ ձեռքով խաչակնքեց: Վայրկենապէս խաղաղութիւն տիրեց. այրերը վար առին փափախները, մայրերը ծունկի եկան, հարսները փղձկալով մէկ կողմը քաշեցին, փոքրերը նայեցին մեծերին:

Այն ժամանակ ճգնաւորը շնչաց.

— Խնայեցէք, ծերութեանս գթացէք, իմ աղջիկն է, յանցանք չունի, փախցրին... Յանցաւորը ես եմ, որ անիծեցի... Լեռը փլաւ ու նա էլ այնտեղ քարացաւ...

Եւ, յանկարծ, կքեց ու բազկատարած երկարեց...

Կսկիծը համակեց բոլորին. կանայք վշտից շապիկները պատռեցին, այրերը քակեցին սրունքների փաթաթը, որ ճգնաւորի վերքերը կասկեմ, հարսները վաղեցին մինչեւ Գէոլղէոյ, որ ջուր բերեն: Բայց ճգնաւորը մեռել էր...

Այն ժամանակ նրանք ճգնաւորին թաղեցին, մի սալ քար դրին վերան, խաչ փորեցին ու դարձան...

Այդ հի՛ն ժամանակից մինչեւ հիմա, նրանք, տարւայ այդ օրը, ուխտի են գալիս ճգնաւորի գերեզմանին, Քէափաղին: Եւ ամէն մարդ իր լաթերից մի բան փրցնում ու կապում է Քէափաղի լանջին ցից — ցից բուսած կիսադալար մացառներին, թփերին: Այդ ձեւով իրենց ցաւերն ու վշտերը յանձնում են Քէափաղին ու դնում Գէոլղէոյի եղերքներին դարձանալու:

Եւ Քէափաղը միշտ անտրտունջ ընդունում է բոլորի ցաւերն ու վշտերը, որովհետեւ իր լերի կրծքում այնքա՛ն խորունկ վիշտ ունի, որ մարդկային բոլոր ցաւերն ու վշտերը նրա համար խաղ ու պար են, ոչի՛նչ բան»:

Կոյր աշուղի պէս ինքս ինձ աւելի ու աւելի տարւելով մանկութեան յուշերի հմայքով՝ ես բոլորովին հաշի չառի, թէ այդ ծանր օրերին ի՛նչպէս կազդի պատմութիւնս երկու ունկնդիրներիս վրա: Ու երբ ուզեցի վեր կենալ, Իսկուհին, յանկարծ, ձեռքս բռնեց ու շնչահեղձ գոչեց.

— Մի՛ գնաք...

Այդ պահին, կարծես թէ, ահաւոր վտանգ էր սպառնում մեզ: Երբեք նրան այդպէս ցրւած չէի տեսել՝ դէմքը գունատ, աչքերը ա-

հարեկ, շուրթերը կծկած եւ ձեռքիս ընկած խոնաւ մատները դողում էին:

— Իսկուհի՛... — դարմացած յանդիմանեց մայրը:

Շտիւկեց, դէմքին ձեւաւորեց մի յանցաւոր ժպիտ, ապա իրեն, կարծես թէ, դտաւ ու ասաց.


— Մայր, այնքա՛ն երկար են հիմա գիշերները, որ ի՛նչ դիտնամ, թէ ուշ է...

Ես ոտքի ելայ աւելի մտահոյ, քան մտել էի նրանց մօտ...

— Ձաւակս, ա՛ն հեռդ մեր կրակարանը, հոս արդէն տաքցաւ:

— Մայր, չէ՞ որ պարոն Վահանի կրակը նորոգեցի, մոռցա՞ր: Ու ոտքի ելնելով, դարձաւ դէպի ինձ.

— Միայն պէտք է քիչիկ մը յետ տալ մոխիրը...



Լուսացաւ: Կեսնքը սկսում էր նորից իր առօրեայ ու անպաճոյճ ուրարդութեամբ: Եւ աւելի քան երբեք հասկանում էի, որ կեսնքի մէջ ոչինչ, ոչի՛նչ չի փոխում: Պատուհանի բաց փեղկից տեսնում էի փողոցի միւս եզրի վերելքին թառած դաւառական անկերպարան շէնքեր, որոնցից մէկի կտուրը միւսի համար բակի տեղ էր ծառայում: Մի թրքուհի, չարաֆի մէջ անխնամ պարուրած, լացք էր կախում. քիչ հեռու խաղում էին երեխաներ...

Արեւն ելաւ եւ շօշափեց պատուհանի ծայրը:

— Էլ ուրիշ հիւանդ կա՞յ այստեղ, Իրակլի:

— Ոչ մի հատ, էֆէնդի, ասաց նա յօրանջելով, եւ քեզ էլ Աստուած հասցրեց, թէ չէ՛ հիւանդանոցը պիտի փակէր ու ես էլ մեկնելով կուի դաշտ՝ մի տեղ շանսատակ պիտի լինէի: Երկու շաբաթ հազիւ կայ ինչ հիւանդանոցը բացւել է, բայց ուզում են փակել: Երէկ, Եորիոս էֆէնդին գնաց Սամսոն, տեսնենք՝ կը փակեն, թէ կը պահեն:

— Եորիոս էֆէնդին ո՞վ է:

— Հիւանդանոցի կառավարիչը, որ դայ, կը տեսնես, այստեղ է քնում, վերի յարկի ծայրի սենեակում:

— Իսկ ո՞ւր է ապրում բժիշկը:

— Ի՛նչ կեսնք կայ, որ ինչ ապրի, էֆէնդի. առաւօտները գընում, գիշերները դալիս քնում է, ի՛նչ անի խեղճը, հիւանդ չկայ, դորձ չկայ: Վերի յարկի միւս ծայրի սենեակումն էլ Ալին է քնում...

— Ալին ո՞վ է...

— Հիւանդանոցի միւս ծառան. բայց ի՛նչ «ծառայ», աղա է, աղա՛. գիշեր, ցերեկ վարի սրճարանում նստած է:

— Վարը սրճարան է...

— Ապա ի՛նչ է, էֆէնդի...

Կարծես, թէ նոր եմ տեսնում այդ անվրդով երիտասարդի դէմքը. բերանը մեծ, աչքերը հանդարտ ու պարզունակ, ականջները կախ, քիթը խմորեղէնի պէս հաստ ու կլոր:

— Ես էլ վարի սենեակումն եմ քնում, բայց գիշերները գրամոֆոնի ղուլըոցից քուն չունեմ: Այս սենեակից դատ մէկն էլ կայ: Բա՛կի պահեստում բարձ, աթոռ, մահճակալ, ճերմակեղէն, սեղան, վերմակներ, ամէ՛ն բան կայ. Սամսոնի հայերի տներից հաաքել բերել են: Բայց ի՛նչ օգուտ, հիւանդ չկայ, գործ չկայ...

— ... Ծատ հայ կա՞յ այստեղ, Իրակլի:

— Ծա՛տ, երէկ հեռու գիւղերից մօտ երկու հազար հայ բերին: Հիմա վերը դաշտի մէջ են. չեն ուզում գնալ, յողմած են: Միւտիրն էլ ասումէ, թէ ձեր մէջ ժանտախտ կայ, պէտք է գնաք: Վերջը բժիշկը գնաց, նայեց ու միւղիւրին ասաց, որ ժանտախտ չկայ: Բժըլկից վախենում է...

— Ո՞վ է վախենում...

— Միւղիւրը:

— Ինչո՞ւ...

— Բժիշկը կարող է մեր փախստականներին ասել, մեր փախստականներն էլ կարող են միւղիւրին սպանել:

— Ծատ փախստականներ կա՞ն:

— Ծա՛տ, թուրքերը դողում են Իստիլից...

— Իստիլի՞ց...

Գլուխը թօթեց, պատուհանից դուրս նայեց, լռելու նշան արաւ ու դնաց:

Ու բեկեւած մտքերս Իստիլի վրա էլ մնացին. յանդուզն, թիկնեղ, գեղադէմ մի երիտասարդ էր Իստիլը: Յոյների մէջ օրը օրին ասում էր նրա համբաւը: Պատերազմից առաջ մի թուրք էր սպանել եւ այդ օրւանից ի վեր փախստական էր: Զօրակոչից յետոյ, Ջանիկի շրջանում գինւորագրութիւնից փախած յոյների պետը դարձաւ: Դէպքերից հինգ — վեց ամիս առաջ գտնւում էր Սամսոնում, իսկ ժանդարմները նրան «հետապնդում» էին գաւառում: Այդ օրերին էր, որ փրբանեանը, Թէրգեանը եւ ես նրա հետ մի գաղտնի տեսակցութիւն ունեցանք. խնդիրը դառնում էր քաղաքում հայերի եւ յոյների ջարդ լինելու դէպքում՝ Թոռամանի լանջով իրար հետ կապ պահպանելու

եւ փոխադարձարար օգնելու շուրջ: Բայց դէպքերը տարբեր ընթացք տոացան...

Անդորր ու խաղաղ եւ դրեթէ մեռած հիւանդանոցը, փողոցը ինձ դարձեալ մղում էր դեռ այնքա՛ն թարմ անցեալի, մարդկանց շրջանը, ու ո՛ր երորդ անգամն էր, որ ես քրքրում էի այդ դէպքերի շարքը, դալիքի մէջ որ եւ է մխիթարական անակնկալի յոյսով...

Կէսօրից անց էր, երբ Իրակլու առաջնորդութեամբ մի մարդ եկաւ մօտս: Վառվառն, կենսուրախ, աղատ շարժուձեւերով ծաղկափթիթ մի յոյն էր: Յուզեւած մօտեցաւ, հին բարեկամի յատուկ զուարթութեամբ հարցրեց որպիսութիւնս, բայց չճանաչեցի: Պարզուէց, որ Տէրվէնտ կիրճի մօտ եղած փակ հանգստակայանի տէրն է եւ այնտեղից տեսել է վար նետուխտ ու հասել կամուրջի տակ: Պատմեց շատ մանրամասնութիւններ, որոնք ճակատադրական քմահաճոյքների բնոյթն ունեն եւ հետաքրքրութիւն չեն ներկայացնում:

— Մի խօսքով, ասաց նա, երբ տեսայ ձեզ կամուրջի վրա, անմիջապէս յիշեցի ձեր վերջին դաշտահանդէսը, որին պատահաբար ներկայ էի. յիշեցի նաեւ, որ մրցանակաբաշխութիւնից յետոյ մութեսարիֆի հետ էիք: Ժանդարմները ուշ վրա հասան եւ ուզում էին ձեզ սպանել, բայց երբ յայտնեցի, թէ դիտեմ, որ դուք մութեսարիֆի բարեկամն էք, վախեցան ու թողին, գնացին: Յետոյ ես սայլապանի օգնութեամբ դուրս հանեցի ձեզ կամուրջի տակից եւ պառկեցրի սայլի մէջ: Ընկել էիք սալ քարի տակ եղած խճաքարերին. բնաւ չէի կարծում, թէ սղջ պիտի մնաք եւ մի սյարտք էր, որ կատարում էի խղճիս առաջ: Բայց հիմա, երբ տեսնում եմ, թէ ողջ էք, դո՛հ եմ Աստուծոց, ինձ այդպիսի սպասեհուձեւութիւն ընծայելուն համար...

Մարդը այնքան դժացել էր, որ ձայնը դողում էր:

— Ձեզ յիշելուց բացի ուրիշ ձեւով երախտագիտութիւնս յայտնելու հնարաւորութիւնից դուրկ եմ, — ասացի նրան:

Այդ յոյնի անունն էր Կիրեակոս, բնիկ Քատրքէոցի:

Երբ գնաց, նորից գաղթի մղձաւանջի մէջ ընկայ, անցեալն ու ներկան իրար հետ կապելու անկարող...

Իրիկնապահին եկաւ Ալեմշահ հանումը: Նա մի արագ, չփոթ ակնարկ նետեց չորս կողմը, մի պահ դամեւած մնաց կանգնած տեղը ու, յանկարծ, գրկելով ինձ լաց եղաւ: Գլխից վար սահած շալի տակից դուրս ընկան ալեխառն մազերը: Նա մի պահ աչքերը վրաս չըռած նայեց ու նորից սկսեց լալ: Որքա՛ն փոխել էր, դիւրաշարժ, տարիքից աւելի երիտասարդ այդ կնոջ վրա դէմք չէր մնացել:

112

3211

515-2001



— Ե՞րբ եկաք, — հարցրի ես, երբ մի քիչ հանդարտեց :

— Շարաթ մըն է, որ հոս ենք, ամէն օր կուզեն ճամբել վար...  
Լացը նորից խեղդեց .

— Ասոր, անոր աղաչեով, կաշառելով, յաջողեցանք մինչեւ օրս ձգձգել, բայց ալ ի՞նչ ընելս չեմ գիտեր...

— Հնար չեղա՞ւ մի կերպ քաղաքում մնալու :

— Հնար չեղաւ, դաւակաս, չեղա՛ւ... Տեսպոտի \*) չնորհիւ յոյներու քով աղէկ տեղ մը պահուած է. էլտոկիա — հանումին քովն ալ ես պիտի պահուէի... Երկու օր ետքը տուն եկաւ ու կըսէ, թէ պիտի երթանք... Կըսեմ, աղջիկս, ո՞ւր երթանք... Կըսէ՝ ամենքն ալ գացին, մենք ինչո՞ւ պիտի մնանք: Ամենքն ալ էրիկ մարդու տէր են, եաւրո՛ւս, կըսեմ. մենք առանց էրիկ մարդու, մեր չոր գլխով ո՞ւր երթանք... Կըսէ՝ ճամբուն պարոն Վահանը կը գտնենք... Ի՞նչ ըսեմ, դաւակս, ի՞նչ ալ ըրի՝ չեղաւ... Իրիկան դէմ գացի Բահար — աղային քով, խելք մը, խորհուրդ մը հասկնալու. ըսաւ՝ մի՛ երթաք, ետքը շատ կը զղջաք, ձեզ պարսիկներու քով կը պահեմ, ըսաւ: Տուն դարձայ, կը նայիմ սետիրին նստեր է ու կուլայ... Խելքս ցնդեց, չորս տարի է վեր անոր աչքին կաթիլ մը արտասուք տեսած չէի, սիրտս կտոր — կտոր կըլլար... Բահար — աղային ըսածները պատմեցի. լալով կըսէ, թէ յոյներու քովէն ելայ, որ պարսիկներո՞ւ քով երթամ... Համբերութիւնս հատաւ. ան ըսաւ, ես ըսի, ա՛լ խելք չը մնաց գլխուս: Իրիկունը ելայ շալս առի, որ երթամ Հերմինէնց ու հասկնամ, թէ ե՞րբ ճամբայ կելլեն. կը նայիմ Գրիստոստուրենց տունը ճրագ չկայ, Վարդապետեաններուն ճրագն ալ մարած է, Քէալլաջի Սարգիսը, Սրապիոնեանները արդէն գացեր էին: Վար իջայ մինչեւ Ծառուկեաններուն տունը... Ամէն տեղ մո՛ւլթ, խաւա՛ր, ձայն չկայ, մարդ, մարդասան չկայ... Չարհուրանքէն ծունկերս կը դողային: Կը խորհիմ՝ ապա եթէ ինձ հոս բռնեն, ի՞նչ պիտի ըլլայ Իսկուհիին վիճակը... Լեղապատառ ետ դարձայ ու ինքս ինձ կըսեմ .

\*) Այսպէս էր կոչումը յոյների հոգեւոր պետը Սամսուում. հայասեր, կարող եւ յանդուգն մի մարդ էր:

մէջ կը վառի... Ծունկերս թուլցան, հազիւ վեր ելայ... Կը նայիմ, որ Իսկուհին լաթերդ, ճերմակեղէններդ թափեր է մահճակային ու հանդարտ կը դարսէ ու կը կապէ... Շարեցայ. կըսէ՝ պարոն Վահանը բան մըն ալ չառաւ իր հետ, ճամբան կը գտնենք, կուտանք... Աման, դաւակս, ալ չկրցայ ինքզինքս դապել ու հիմա ալ ես սկսայ լալ... Եաւրուիս սիրտը կըսէր, որ քեզ պիտի պատահինք...

Այլէմ չա՛հ — հանումի դսպաւած լացը նորից պոռթկաց .  
— Կապեց, լմնցուց ու կըսէ՝ «Մայր, ալ մի լար, վաղը պիտի երթանք»: «Երթանք, աղջիկս», կըսեմ: «Ամենուն ինչ որ պատահի, մեզի ալ թող նոյնը ըլլայ», կըսէ: «Թող ըլլայ, աղջիկս», կըսեմ: Խելքս ցնդեր էր, դաւակս. ելանք, եկանք, հիմա ի՞նչ ընելս չեմ գիտեր...

- Ո՞ւր է հիմա...
- Խանը, Տողրուճ — հանումին քով նստած կուլար, երբ եկայ... Կուզէր հոս դալ, բայց կը վախնամ, դաւակս, կը վախնամ խանէն դուրս հանել...
- Ուրիշ ո՞վ կայ ձեզ հետ:
- Շատերը, թաղին մէկ մասը հոս է դեռ, ամենն ալ կաշխատին հոս մնալ...
- Ինչպէ՞ս պիտի մնան:

— Ի՞նչ դիտնամ, դաւակս, ամէն մարդ ընելիքը գաղտուկ կընէ: Առտուն փաստաջի Արմենակը կնոջ ու քենիին հետ եկաւ. Արմենակը ուսուսակատակ ըլլալով՝ հոս պիտի մնայ. գացի քովը խորհուրդ հարցնելու. դաւակիս տեղ սեպելով քեզ, չեմ ամնչնար տուած խորհուրդը ըսելու. կըսէ՝ պարոն Վահանը պարսկահպատակ է, միակ ելքը ան է, որ Իսկուհին անոր նշանածն ըլլայ. ատանկով, կըսէ, դուք ալ մերիներուն պէս կընաք հոս մնալ: Մարիցան, քոյրը վրաս թափեցան ու կըսեն՝ իրա՛ւ, պարոն Վահանը պարսկահպատակ է, շիտակ կըսէ Արմենակը, վաղէ՛, շո՛ւտ, շո՛ւտ... Խորհուրդը խելքիս պառկեցաւ, հէմէն գացի խանը, Իսկուհիին պատմեցի. խորհեցաւ... Ետքը մէկէն ելաւ ու կըսէ՝ պարոն Վահանին երթաս նէ, մի՛ ըսեր... Հիմա ի՞նչ ընեմ, քեզ ալ չըսեմ նէ, որո՞ւ ըսեմ, դաւակս...

— Լաւ է, որ ասացիք, Այլէմ չահ — հանում, այս պարագաներում, Իսկուհին քոյրս թէ նշանածս լինի, միեւնոյնն է: Կարելորն այն է, որ եթէ այդ ձեւով կարելի է այստեղ մնալ, անմիջապէս դործի անցէք: Հիմա, մինչեւ մութը վրա հասնելը ժամանակ կայ. այստեղից կերթաք Փիր — Աղայի մօտ, Սամսուի պարսկական հիւպատոսի Գաւաիսի ներկայացուցիչն է, հարցնէք, դիւրութեամբ կը գտնէք: Կը

յայտնէք, որ Իսկուհին իմ նշանածն է եւ թէ՛ ձեր, թէ՛ իմ կողմից կը խնդրէք, որ բոլոր հնարաւոր միջոցները ձեռք առնի, ձեզ այստեղ վար դնելու համար: Կասէք, որ եթէ ողջ մնամ, երբեք չեմ մոռանայ նրա այդ լաւութիւնը: Կասէք նաեւ, որ այս առթիւ շատ կուզէի իրեն տեսնել: Եթէ պէտք լինի, որ այդ մասին ես էլ որ եւ է յայտարարութիւն կամ խնդիր տամ, գրել տւէք, անմիջապէս հասցրէք ինձ, որ ստորագրեմ ու շուտով յանձնելի ում պէտք է: Յետոյ կերթաք Արմենակի մօտ եւ կը խնդրէք, որ այդ դործում ձեզ օգնի: Եթէ կարողանաք, այսօր տեսէք եւ բժշկին, լաւ մարդ է, կարող է օգտակար լինել. ինձ մօտ դալուսն պէս, ես ինքս էլ կը խնդրեմ...

— Հա՛, զաւակս, երթա՛մ, արդէն կը զգայի, որ ասանկ անտէր, անտիրական չենք կորուսիր...

— Սպասեցէ՛ք, միայն դրանով պէտք չէ դահանաք. պէտք է աշխատէք որ եւ է մարդասէր թուրքի մօտ աղախնի պաշտօնով մնալ... Ժամանակաւոր, մինչեւ կարելի լինի ուրիշ միջոցներ մտածել...

— Հա՛, դուբպան, երթա՛մ Բէքիր — փաշային քով...

— Միեւնոյնն է, լաւ տեղ լինի՛ կարող էք աւելի երկար մնալ: Եթէ այդ էլ չլինի, աշխատեցէք մի տեղ պահուել...

Յանկարծ, մօտ մի տեղից լսեց ազանը.

— Լա՛: ... Իլլա՛հ... Ի՛լ — Ալլա՛հ, Մուհամմէդ րէսուլ Ալլա՛հ: Ալէմշահ — հանումը անապարանքով դնաց...

Մթնել էր: Բայց Գաւախի կեանքը, կարծես թէ, նոր էր սկսուում: Փողոցից հասնում էին ականջներէս ոտնածոյն, հատ ու կտոր խօսքեր, կանչուտուք, քրքիջ ու զնալով փողոցը կենդանութիւն էր ստանում: Քիչ յետոյ, ածող ձայների միջից տարբերեցի դրամֆոնի դողոցը եւ խալոտ երգի ձայն, որ երբեմն, սադի ծկլթոցի նման ընդմիջւում էր, երբեմն էլ երկարում: Ապա լսեցի.

— Սառա պի՛ր...

Սրճարանն է: Ու մտքով իջնում եմ Գաւախի այն միակ դառի վար փողոցի ծայրից, որով վար սահեցինք մենք... Ապա յետ դառնալով, կարծես թէ, ճշտութեամբ կանգ եմ առնում այդ սրճարանի առաջ...

Երկար, շա՛տ երկար տեւեց աղմուկը: Վերջապէս, ձայները մարեցին եւ այժմ պատուհանի տակ, կամ շատ մօտ մի տեղ դուրսը դրւած գրամֆոնի երգն ու նւազն է, որ տիրապետում է համր լրուութեան մէջ: Միեւնոյնն բանը մի քանի անգամ դառնում է, աւելի ու աւելի դարմանքով համակելով ինձ... Յանկարծ, յիշեցի, որ Հայկ Խրիմեանից բազմիցս լսած երգերից մէկն է.

Եւ ի՞նչ գուրպաղըսար էօքէր կէօլլէրսէ... Ամա՛ն, ամա՛ն... Անասըզ, պապասըզ գալտըմ չէօլլէրսէ... Ամա՛ն, ամա՛ն... Թէգ կէլ, աղա՛մ, քէգ կէլ, օլմա մոխանէք... Ամա՛ն, ամա՛ն... Կուրպէքի ինաս էտէն կէօրմէսին ֆէննէք... Ամա՛ն, ամա՛ն...

Ականջներիս չեմ հաւատում. «Կուրպէքի ինաս էտէն կէօրմէսին ֆէննէք» \*) ... Ի՛նչ է այս ժողովուրդի երգն ու գործը...

Ազամ քըն քէրքիսինի պաղլայօր... Ամա՛ն, ամա՛ն... Դիւշմանլար իչիւն մարքինի եաղլայօր... Ամա՛ն, ամա՛ն... Գարիպ անամ եամա՛ն աղլայօր... Ամա՛ն, ամա՛ն...

Էլ ոչինչ չէի լսում, գլխիս մէջ ամէն բան խառնւել էր արդէն...

Դիշեր էր, բայց ո՛ր ժամն էր՝ չգիտեմ: Եւ դուրսը շոռկ անգամ չկար, երբ ներս մտաւ բժիշկը: Սիրտս թունդ ելաւ. այդ վայրկեանին ինձ այնպէս թւաց, թէ Գաւախի բովանդակ իշխանութիւնը նրա ձեռքըն էր՝ կորող է եւ պէտք է ինձ օգնի: Նա տեղ բռնեց աթոռին, մթութեան մէջ առկայծող կրակի պէս, մի շեշտակի ակնարկ նետեց վրաս, գլուխը կախեց ու լռեց... Նոյն կաս — կարմիր, միապաղաղ դէմքը, մշուշապատ աչքերը... Խմած էր...

- Չտեսա՞ք, արդեօք, այսօր տանտիրուհուս, բժիշկ:
- Տանտիրուհո՞ւլ...

Շփում էր ճակատը, կարծես, թէ ուզում էր վերջիչել.

— Այո՛... Փիր — Աղայի մօտ էի, երբ եկաւ: Բայց նշանածի հանգամանքով նրանց այստեղ պահելու զաղախարդ այնքան էլ յաջող բան չէ. լաւ կանես, եթէ այդ խեղճերին բախտիդ հետ չկապես, բարեկամ... Դրութիւնդ այսօր դաւալապէս վատացաւ եւ պարտք ունեմ յայտնելու, որ քեզ ամէն օր կարող են նորից վար քշել...

- Վա՛ր քշել...
- Այո՛, ի՞նչ զարմանալու բան կայ... Այսօր Կաղայից այստեղ հասաւ ու մեկնեց Սամսոն Իթթիհատականների պետը...
- Ստկի՞ն...
- Ի՛նչ ցաւ լինելը չգիտեմ... Կարգադրել է, որ քեզ Կեսարիա ճամբեն...
- Կեսարիա՞...
- Այո՛, իբր թէ Կեսարիայի հիւանդանոցում պէտք է «բուժեն» քեզ, հասկացա՞ր...
- Ո՛չ...

\*) Ղարիբալիւն ստեղծողը թոյ արժայութիւն չտեսնի:

Աչքերը փայլատակեցին .

— Ուզում են քեզ մորթել, հասկացա՞ր . . .

— . . .

— Հը՛ . . . Բայց այս անգամ չի յաջողւի այդ, բարեկամ . . . Դեռ կաւզային չհասած՝ մերոնք քեզ կը փախցնեն . յոյս ունեմ, որ խնդիրը մինչեւ այդտեղ չի հասնի, թէեւ այս էլ նկատի պիտի առնես : Առ այժմ՝ Փիր — Աղան յաջողել է մի քանի օր ժամանակ խնդրել, որ շատ քիչ կարգի ընկնես . իսկ գիտե՞ս հիմա ի՞նչ բան է ժամանակը, բարեկամ . . . Հը՛ . . . Միւրեքին ասել է՝ եթէ բարեխնամ կառավարութիւնը մեր հպատակին բժշկելու համար Սամսոնի հիւանդանոցից նախամեծար է համարում Կեսարիայի հիւանդանոցը, պիտի խնդրեմ, որ մի քանի օր մեկնումը յետաձգւի, որպէսզի հիւանդի խելքը գլուխը գայ : Հակառակ պարագային, ասել է, կարող է Կեսարիա չհասած մեռնել : Դրա վրա միւրեքին էլ ասել է, թէ շատ լաւ, եթէ մեռնելու վտանգ կայ, թող մի քանի օր մնայ, մինչեւ տեսնենք՝ ինչ է լինում . . . Հը՛ . . . Ուղղակի հոյակապ խօսակցութիւն . . . Փիր — Աղան Լայլէջի Հասանին նամակով ճամբել է Սամսոն, հիւպատոսին եւ երկու — երեք օրից յետոյ յոյս ունի պատասխան ստանալու : Բայց եթէ անգամ ընդունենք, որ այս պատուհան էլ կանցի գլխիդ վրայից ու կարող կը լինես աւելի երկար մնալ այստեղ, դարձեա՛լ հնարաւոր չէ, ե՛ւ միտք էլ չունի, այդ բարեկամուհիներիդ բախտը քոնի հետ կապել : Այստեղ տիրող կարծիքը այն է, որ դու քեզ կամուրջից նետել ես, իբր թէ, նշանածդ անպատելու պատճառով . . . Համբերութիւն, բարեկամ, ամէն բան պէտք է իմանաս, որ ի պահանջել հարկին կարող լինես քեզ պաշտպանել . . . Երկու ժանդարմներին, որոնք ճանապարհին անպատել են աշակերտուհիներիդ, այսօր այստեղ ձերբակալեցին ու ճամբեցին Սամսոն . . .

— Ինչո՞ւ . . .

— Օրէնքը, բարեկամ, օրէ՛նքը . . . Ձանիկի շրջանում, եւ այն էլ Գաւախի քթի տակ, այդպիսի բան անելու հրահանգ չկար . . . Բացի այդ, խնդիրը բարդացել է քո վար նետելու, Փիր — Աղայի, ըստ երեւոյթին, նաեւ Սամսոնի հիւպատոսի միջամտութեան, ինչպէս նաեւ այստեղ տարածւած այն լուրերի շնորհիւ, որոնց համաձայն, իբր թէ, քեզ վար ես նետել նրա համար, որ այդ անպատեւած երկու քոյրերից մէկը նշանածդ է եղել . . . Դրանց էլ բերել են այստեղ, Սամսոն պիտի ճամբեն հարցաքննելու : Սրանով էլ, թերեւս, բացատրւում է քեզ Կեսարիա ճամբու կարգադրութիւնը . ուզում են խնդրի միջից դուրս հանել . . . Հիմա, եթէ Փիր — Աղան ելնի վա-

ղը ասի, թէ նշանածդ այս է եւ ոչ թէ լերան գլխին բռնաբարւած աշակերտուհիդ, այն ժամանակ հարց է ծագում, թէ ինչո՞ւ այդ անդունդից քեզ վար նետեցիր : Բաղաքակա՞ն պատճառներով, հը՛ . . . Իսկ եթէ ասել՝ սա՛ էլ, նա՛ էլ նշանածդ էին, այն դէպքում դուրս է գալիս երկու հատ, բարեկամ :

Գլուխս ճաթում էր, այլեւս չէի կարողանում իրար հետ կապել սասածները : Նա ելաւ .

— Բայց պէտք չէ յուսահատութեան մատնես, բարեկամ . Փիր — Աղան վստահ է, որ կը յաջողւի քեզ այստեղ պահել, մինչեւ Սամսոնից կարգադրութիւն լինի . . . Հակառակ պարագային, արդէն ասացի . . . Գալով այդ երկու բարեկամուհիներիդ, որոնց առթիւ շա՛տ աւելի մտահոգեցի այսօր, քան կարող ես ենթադրել, երեւի մի ելք կը գտնուի : Փիր — Աղան, իմ ներկայութեամբ, խոստացաւ խնդրել միւրեքին, նրանց աքսորը յետաձգելու : Ներկայ պայմաններում, միւրեքի համար դժւար բան չէ այդ . հարիւրներով գալիս, գնում են, ո՞վ պիտի իմանայ : Երկու հազարից աւելի հայ կայ հիմա այստեղ . . . Երկու հազար եւ դեռ քանի՛ երկ — երկու հազարներ . . . Հիմա ինքը դատիր, մի կին, մի աղջիկ ի՞նչ արժէք ունի որ . . . Եթէ ասենք քսան, յիսուն, հարի՛ւր . . . Այդ ուրիշ բան է . . . Ի՞նչ ես ասում այս խօսքիս, բարեկամ . . . Ոչինչ չե՞ս ասում . . . Այդ լաւ է . որովհետեւ ժամանակ չահելու պարագային, մնացածը դիւրին է . ամէն կերպ պիտի աշխատեմ գործի մղել Փիր — Աղային . ես էլ ջանք չեմ խնայի բարեկամուհիներիդ համար իմ ազդեցութիւնն էլ օգտագործելու : Միայն պէտք է իմանաս, որ ուղղակի միջնորդութիւնս նրանց համար լաւ չէ . . . Յոյներիս խօսքը չի անցնում, մենք էլ «հերթի» ենք, բարեկամ . . .

Գնաց : Անհատական եւ հանրային ապրումների մի այնպիսի պայքար կար իմ մէջ, որի նմանը չէի զգացել երբեք . . .

\*\*\*

Նոր անակնկալներով յղի օրը արդէն սկսել էր : Դուրսը եռուզեռու կար, ինչ որ Գաւախի համար, այդ պահին, արտասովոր մի բան էր : Չարագուշակ նախազգացումների ճնշման տակ ես ինձ քիչ քիչ վերհանեցի եւ յաջողեցայ կիսով չափ նստած դիրք տալ ինձ : Պատուհանի դէմ, փողոցի երկարութեամբ կանգնած, նստած էին մարդիկ : Նոյն այն ամբոխն էր, որ երազի պէս մերթ ընդ մերթ պատկերանում էր ինձ, երբ կիսամեռ վիճակում հասայ Գաւախ : Եւ այժմ էլ թւաց, թէ մարդիկ հաւաքւել են դէպի Կեսարիա ուղեւորութիւնս

տեսնելու համար: Բայց որքան երկարում էր այդ սպասողական դըրուժիւնը, այնքան տարակուսանքներս շատանում էին. հիւանդանոցի մէջ ամէն բան առաջւայ պէս շուռ ու խաղաղ էր, իսկ դրսի մարդիկ ոչ մի հետաքրքրութիւն չէին արտայայտում դէպի շէնքը: Մէկը միայն ոտքերի ծայրին երկարելով նայեց դէպի ինձ եւ քովը կանգնածին ինչ որ բան ստաց: Ես յետ քաշեցի, բայց երբ նորից նայեցի, նրանք էլ նստել էին եւ գլուխները կախ համրիչ էին դարձնում: Յանկարծ, սիրտս ճմլեց... Հասկացայ՝ դադթ պիտի լինի... Արեւն ելաւ ու սկսեց շօշափել դիմացի շէնքի կտուրները, որոնց վըրա յայտնուում էին չարշաֆների մէջ պարուրած կանայք: Թուրք փոքրիկ տղաներ ոտաբորիկ, անդրավարտիկները պինդ բռնած՝ աղաղակելով վազվզում էին դէս ու դէն: Փողոցից դուրս, վերը, խրմբերով նստած, կանգնած են մարդիկ, որոնք քիչ - քիչ իջնում են դէպի փողոցի եզերքը, ուր ամբոխը սեղմուում էր. ամէն մարդ ուզում է առաջ կանգնել կամ նստել: Զարմանալի է, մեր դադթի ժամանակ այսքան մարդ չկար... Յանկարծ, նրանց դէմքերը ուղղեցին դէպի վեր եւ հայեացքները սրեցին, ապա լսեց մի տարօրինակ բացազանչութիւն.

— Հէլէ՛ - հէլէ՛ - հէլէ՛ - հէլէ՛ - լէ՛ - լէ՛ - լէ՛ - լէ՛ Է՛ . . .

Նշանակում է՝ գալիս են... Ահա՛, չորս ձիււոր ժանդարմներ, հրացանները վար առած, խորխտութեամբ անցան: Ապա յայտնեցին տարազեր գիւղացիների հատ ու կտոր խմբակներ, որոնց յաջորդեցին զանգաւաններ... Շատ մեծ գադթ է, այս անգամ, երեւի, վերջին հայն էլ գնում է: Նրանք անցնում էին մերթ խոշոր տոհմերի պէս սեղմ ու ու հաւաք, մերթ արդէն քայքայած խոշոր ընտանիքների պէս ցրած, մերթ երկար, բարակ շարքով՝ չորս - չորս, երկ - երկու, հաղապիտ դէպքերում՝ մէկ - մէկ: Ու երբեմն նմանում էին հոգեպէս գօտեպնդւած զօրքի, որ անցնելիք ճամբուց դատ ու սկսելիք կուրից բացի ուրիշ որ եւ է միտք չունի: Երբեմն էլ նմանում էին դէպի կախաղան քայլող անհատ գաղափարականների: Ի՞նչն է նրանց հոգեկան ուժի աղբիւրը՝ չիմացայ: Լուութիւն, անդորր ու կատարեալ մի լուութիւն. օրէ՞նք էր այդ, ծէ՞ս, թէ՛ գադթելու համահայկական վարքազը՞՝ չգիտեմ: Մեծ, փոքր, թոյլ, ուժեղ, առողջ, հիւանդ՝ միեւնոյնն է. երեւի նրանց բնազդն էր թելադրում լուել:

Սրա դիմաց, ամբոխի մէջ, գնալով սաստկանում էր ժխորը, որի միջից լսում էին գոչեր.

— Տո՛ւր, տո՛ւր ինձ փոքրիկդ, ո՛ւր ես տանում, մե՛ղք է...

— Ինձ տո՛ւր, Ալլահ՛ը վկայ, լաւ կը պահեմ...

— Տո՛ւր, տո՛ւր, մե՛ղք է, մի՛ տանի, փէյղամպէրը վկայ, լաւ կը պահեմ...

— Տո՛ւր փոքրիկդ, մե՛ղք է, տո՛ւր քեզ ասում եմ, հարազատ ցաւակիս պէս կը պահեմ...

Ապա գոչերին յաջորդում էր թմփթմփոց ու յայտնուում էին նոր խմբեր, խմբակներ, անհատներ... Ու տեսնում եմ պարուհիների պէս ճկուն ու ջլուտ գեղջկուհիներ, հազիւ ոտքի ելած ոտաբորիկ երեխաներ, ապա ըմբիշների պէս հոյակապ ու թիկնեղ արեւահար գիւղացիներ, որոնք, նախախնամութեան պատգամի ենթակայ մի թափով, բեռներ են կրում ուսերին: Կարծես մասունքներ են տանում: Ու թըւում է, թէ նրանց յետեւից հիմա պիտի անցնի հարազատ իշխանը, որ ամպհոփանու տակ, իր ինչքով, ժողովուրդով հարազատ երկրից դնում է այլ աշխարհ... Յանկարծ, խմբից մի կին դատեց ու ճամբու եզերքին կանգ առաւ. թեւերի մէջ հորիզոնաձեւ գրկել էր գլուխը կապած մի կրեխայ, որ, ըստ երեւոյթին, քնած էր կամ հիւանդ. մօր մօտ, անգիտակ ձագերի նման, կանգ էին առել հինգից եօթ տարեկան երեք ոտաբորիկ մանչեր:

— Տո՛ւր, տո՛ւր, Ալլահ՛ը վկայ, լաւ կը պահեմ, գոչում էր դէպի կինը բազկատարած մի թուրք:

Մայրը տատանում էր: Բայց, յանկարծ, երեխան տեց թուրքին ու փոքրերից մէկի թեւից բռնեց, որ գնայ: Վերջինները անընկարգրելի վայնասուն բարձրացրին: Մայրը խենթի պէս մտաւ ամբոխի մէջ, կորուեց... Երեւաց. ապա գոչուած ընկաւ փողոց ու բորենու պէս նետելով շարակը փոքրերից մէկին, միւսի թեւից քաշքը՝ շելով գնաց. երրորդը ճշալով վազեց նրա յետեւից: Այնուհետեւ տեսնում էի վեր մաղցող փոշի, լսում էի դժմօց...

Գաւախը նորից ընկել էր իր սովորական թմրութեան մէջ: Կարծես, թէ ոչինչ չէր եղել եւ մի հողմ էր, որ փչեց ու անցաւ: Գնացել էին շրջակայ գիւղերից Գաւախում խմբած ընակիչները: Այժմ, ինչպէս ասում էր Իրակլին, հերթի էին Սամսոնցիները: Խելքս անկարող էր հասկանալ համատարած պատուհասի թափն ու չափերը: Ոչ մի ուժ, ոչինչ չկար, կարծես թէ, որ կարող լինէր կասեցնել օրը ցերեկով շարժման մէջ եղած մարդկային մեծագոյն դժբախտութիւնը: Արձիճի պէս ծանրացած մի ճակատադրական անհրաժեշտութիւն ասնում էր իր կափարիչի տակ ամէն բան ու ճնշում, ոչնչացնում յոյսի վերջին ցոլքն անգամ, ոտեղծելով ամայութիւն...

Իրիկնապահին, յանկարծ, ներս մտան Ալէմչահ - հանումը եւ Իսկուհին... Ինչ զգացի՞ չգիտեմ: Մայրը թեւի տակ մի կապոց ու-

նէր, որ դրաւ աթոռին եւ յոգնատանջ միւսի վրա նետեց իրեն: Իսկուհին չարաֆի մէջ էր եւ թրքուհու պէս դէմքից կախել էր մի թանձրը քող: Նա ձեռքի արագ շարժումով յետ նետեց քողը, յանկարծ, նայեց ինձ ու մէկ – երկու բեկւած քայլ անելով՝ մահճակալին ծախրին նստեց: Փոխել էր: Միայն աչքերն էին մնացել, որոնք աւելի հրաւառ եւ ինքնագիտակ էին, քան առաջ: Յոնքերին իջած սեւ գըլլա կապի տակ դէմքը անհամեմատ դուռնատ էր: Նա կենտրոնացած նայում էր, կարծես թէ, բառ էր փնտռում ասելու.

- Ձեզ արդէն ճամբո՞ւմ են:
- Ո՛չ... Ձայնը դողաց:

Աչքս ընկաւ մօր վրա, որ մեղմօրէն լաց էր լինում...  
— Մա՛յր...

Ալէմշահ – հանումը շտկեց.  
— Հազուստներդ, ճերմակեղէնդ բերի, զաւակս, մեզ մօտ կրնայ կորսել...

- Ե՞րբ են ճամբում ձեզ:
- Պարոն Վահան, հաւատացէ՛ք, չեն ճամբեր, դեռ յոյս կայ, որ կը յաջողինք հոս մնալ...

Շեշտը հաստատուն, հայեացքը անվարան: Միայն թւաց, թէ չնչառութիւնը պահել է...

— Հա՛, զաւակս, մի չարչրկեր քեզ մեզ համար, քու ցաւը քեզ կը բաւէ, յոյս կայ, որ կը մնանք, զաւակս, հիմակ ու հիմա չեն ճամբեր: Փիւր – Աղան խօսեր է միւզիւրին, որ մեր աքսորը յետաձգէ, առտուն ըսաւ, որ տեղ մը մեզ իբրեւ աղախիններ վար պիտի դնէ: Ես ալ վաղը պիտի երթամ Բէքեր – փաշային ոտքերը ինձ, որ իր քով մեզ աղախիններ ընէ: Ասկէ դատ, կը խորհիմ, Իսկուհուն սուտ նիւթաւ ընել Մաթէոս աղային տղուն հետ: Հայր, որդի թրքացեր են, հոս պիտի մնան. անոնք համաձայն են, կը մնայ մինակ դատին համաձայնութիւնը առնել: Բայց եթէ վաղը յաջողինք տեղ մը աղախին ըլլալ, ասոր պէտքը չի զգացւիր:

Ալէմշահ – հանումը այդ բոլորը ասաց անգիր արածի պէս: Իսկուհին, որ գլուխը կախ լսում էր, յանկարծ, հարց տուց.

- Պարոն Վահան, իրա՞ն է, որ ձեզ Սամսոն պիտի ճամբեն...
- Չգիտեմ...
- Փիւր – Աղան մայրիկին ըսեր է, թէ ամէն կերպ կաշխատէ ձեզ Սամսոն ճամբելու...
- Կարող են, Կազայում ասացին, որ Սամսոն են ուղարկում...

— Ա՛խ, ի՛նչ աղէկ պիտի ըլլար, եթէ օր առաջ ձեզ ճամբէին Սամսոն, ասաց նա այժմ սովորական պարզութեամբ:

- Ինչո՞ւ ես այդպէս կարծում...
- Նախ՝ հոն ապահով կըլլաք եւ կրնաք շուտով բուժուել, ապա՝ կարող կըլլայիք հիւսաւորութիւնով աշխատել, որ մենք հոս մընանք եւ եթէ հնար ըլլայ, նորէն դառնանք Սամսոն:
- Իրօ՞ք ձեզ հիմա չեն ճամբում, Իսկուհի՛...
- Չըսի՞ր, որ չեն ճամբեր... Ա՛, պարոն Վահան, որքա՛ն թերահաւատ էք դարձեր... Ամէն հնար պիտի գործ դնենք հոս մնալու, կը լսէ՞ք...

Այդ պահին տարակուսանքների մէջ ընկայ եւ ի՛նչ ասելու չիմանալով՝ հարց տւի.

- Ովքե՞ր կան ձեզ հետ...
- Տնօրէնը, Երուզիկը ձգեր են յոյներու քով, մանկապարտէզի վարժուհիները, Հերմինէն, մայրը, Մատըլէնը, ամենն ալ կը բարեւեն ձեզ... Աւագեանները, Սաֆարեանները, Տօնիկեանները, Մարանեանները, Աբրահամեանները, Տիւրիզեանները, Թոքատեանները, ուրիշ շա՛տ շատերը. թաղին մէկ սուար մասը հոս է դեռ, միայն մեր թաղամասէն մարդ չկայ, հա՛, Տողրուճ – հանումը...

Ժպտաց ու ինքն իրեն մի ձեւով յարեց.

- Երէկ իրիկուն կտոր մը մոմ վառեց, աղօթեց, մոմը փչեց, պահեց, ետքը ականջիս կըսէ, թէ պարոն Վահանին անունն ալ յիշեցի, մի՛ վախնար, աղէկ կըլլայ... Սիրտս աղէկ չէր, բայց ձեւին վըրա խնդալս եկաւ. ըսի՛ անանկ փորձութենէն աղատելէն ետքը, ինչո՞ւ պիտի վախնամ պարոն Վահանին համար...

Ազանը հնչեց: Խօսքը կիսատ մնաց: Ալէմշահ – հանումը ելաւ:

- Մայր, արդէն պիտի երթա՞նք...
- Ելի՛ր, աղջիկս, բժիշկը ըսաւ որ էզանէն առաջ երթանք...

Ելի՛ր, ելի՛ր, վաղը նորէն կուզանք:  
Մայրը այդ պահին նորից թուլացաւ ու դողդոջուն ձայնով ասաց.

- Չաւակս, հազուստեդ, ճերմակեղէնդ դատ, կապոցին մէջ դրի եւ այն պղտիկ քիւլիմը, որ ամենէն աւելի կը սիրէիր... Թող քովդ մնայ, մենք չորս կտոր քիւլիմ ունինք, ի՞նչ պիտի ընենք...
- Ապա վար թեքեց, համբուրեց ու հազիւ իրեն զսպելով՝ դարձաւ Իսկուհուն.
- Աղջի՛կս, ի՛նչ կայներ, մնացեր ես... Ձեռք տուր պարոն Վահանին, որ երթանք, վաղը նորէն կուզանք...

Իսկուհու պաղ, խոնաւ մատները ձեռքիս մէջ դողում էին: Յանկարծ, նա դուրս քաշեց ձեռքը ու մօր պէս անշշուկ դնաց: Երբ կարողացայ յետ նայել, արդէն դուրս էին եկել: Լարեցի բոլոր լսողութիւնս... Չայն չկար: Բայց, յանկարծ, բոլոր թափով նորից թնդաց ու տարածեց:

— Լա'... ա'... :

Կարծես, թէ մինարէն պատուհանիս մօտն է.

— Իլլա'հ... Ի'լլ... Ալլա'հ:

Դողողաց, մարեց... Ու, կարծես թէ, հեռու մի այլ աշխարհից լսեցի.

— Մէհէմմէդ Բէսու Ալլա'հ...

Օրը հասնում էր իր վախճանին: Ու նորից կեանք էր ստանում փողօցը: Սրճարանում եռուղեռը արտակարգ էր: Ահ, եթէ կարելի լինէր չլսել կամ վար ցատկել պատուհանից եւ առաջին պատահած ուղղութեամբ փախչել... Գրամֆօնի դուրսը, այժմ ահեղ դղրդոցի նման, քաշքշում, քրքրում, խառնում էր ուղեղս...

Անցան երկար ժամեր: Գրամֆօնը դադարեց: Դրսի ձայները մարեցին... Յիշեցի, որ բժշկի յայտնելու ժամանակն է... Ու նորից ինչ որ յուսատու հեռանկարներ, մշուշապատ յոյսեր, անորոշ դաւադրութիւնների հետ կապած հնարաւորութիւններ... Ու կըռի'ւ... Այսպէս, ասենք թէ, մի խումբ զինւած հայեր մօտենում են ժանդարմներին ու դոչում:

— Ձեռքերդ վե'ր...

Ու նրանց զինաթափելով՝ տարագիրներին դարձնում են իրենց տները...

Գնալով այս կարգի բանդազուլանքներով տարւում էի: Բայց եւ աւելի ու աւելի թմրում էի եւ անյայտութեան մէջ ընկնում...

Մի անգամ ընդոստ արթնացայ. մրրկի պէս արշաւող մի ձիու դոփիւնն էր, որ պատուհանի տակ թնդաց ու մարելով չքացաւ... Սիրտս ուժգին բարախում էր... Թւաց, թէ տեսայ այդ բոթատար ձիաւորին, որ կզակը առջեւ նետած՝ պառկել էր սանձարձակ ձիու բաշին...

— Ղն'ւ... ր'ւ... :

— Ո'ւ... դր'ւ... :

Իրար հետ մրցում էին աքաղաղներ: Բայց դեռ մութ էր: Եւ տիրական քունը դարձեալ նւաճում էր ինձ...



Առաւօտը շատ ուշ արթնացայ: Մի պահ տեսայ Իրակլուն, բայց

ե՞րբ եկաւ, ե՞րբ գնաց՝ չիմացայ: Պատուհանը փակ էր: Դուրսը, կարծեմ, արեւ կար: Բայց ես սաստիկ մրսում էի ու դողում: Վերակապերը արճիճի սաղաւարտի պէս ճնշում էին գլուխս ու կապերի տակ, կարծես թէ, անհաշիւ միջատներ քրքրում էին վէրքերը... Ապա տեսայ բժշկին եւ սաստիկ դարմացայ. դէմքը խորշոմած, այտերը ներս ընկած, բոլորովի'ն դուռնատ, աչքերը պսպղուն, անհրապոյր ու թթւած... Ոչինչ չասաց: Ջերմաչափ դրեց, նայեց, գնաց, նորից վերադարձաւ ու ինչ որ գեղ սրսկելով թեւիս, Իրակլին պատերեց՝ միայն մածնաջուր տալ ինձ ու գնաց: Մտածում էի, որ այս կրկնակի հիւանդութիւնը լաւ չեղաւ եւ անհրաժեշտ է, որ մինչեւ նրանց գալը ինձ դտնեմ: Ժամ առ ժամ ես ինքս ինձ հետեւում էի ու վերմակով խնամքով փաթաթւած, քրտինքի մէջ կորած, դոհունակութեամբ տեսնում էի, որ դողս անցնում է: Կէսօրից յետոյ բաւականաչափ լաւ էի, երբ ներս մտաւ մի զինւոր, որին առաջին անգամն էի տեսնում: Մի բաց ածելի ձեռքին, նա մօտեցաւ. ինձ ու փոքրիկ աչքերը վրաս յտոած՝ կանգ առաւ:

— Ո՞վ ես դու:

— Ալին, հիւանդանոցի ծառան...

— Ի՞նչ ես ուղում:

— Հէ'չ, ասաց նա եւ ամէլին զնելով աթոռին, դուրս գնաց...

Աչքս մնացել էր այդ բաց ընկած ածելիի վրա... Ապա առի, զըննեցի, անկարող հասկանալու, թէ ի՞նչ էր նշանակում այդ... Յանկարծ, ձեռքս ցնցեց ու թափահարեց ածելին. կարծես, թէ հասկացայ... Ես ածելին յետ դրի աթոռին:

Քիչ յետոյ ներս մտաւ բժիշկը ու տեսնելով ածելին, առաւ, զարմացած նայեց մէկ ինձ, մէկ ձեռքի ածելին ու դոչեց:

— Ո՞վ բերեց...

— Ալին:

— Ալին բերեց եւ այստե՞ղ դրեց...

— Այո՛:

Մտածեց, ապա դայրացած ձայն տւեց.

— Իրակլի'...

Ներս մտաւ Իրակլին մի պղնձէ ամանով տաք ջուր եւ օճառ ձեռքին, որ դրեց աթոռին ու յետ քաշեց:

— Ի՞նչ է այս:

— Ածելին...

— Կոյր չեմ, տեսնում եմ, ինչո՞ւ տւիր Ալին:

— Որ բերի քեզ տայ, մինչեւ ես ջուրը տաքցնեմ. ասացի՝ հիւանդի դուրսը պիտի ածիլենք, տար թող բժիշկը տեսնի՝ լա՞ւ է սըրւած, թէ չէ...

Բժիշկը կայծակնահար նայում էր Իրակլուն, որ մոլորւած մնացել էր.

— Ե՞րբ պէտք է մարդ դառնաս, Իրակլի, որ արածներդ հասկանաս...

Բոլորովին շարեց:

— Անցիր, անցիր այստեղ, բռնիր:

Բժիշկը վեր հանեց եւ Իրակլու օգնութեամբ նստած դիրք տալով ինձ, սկսեց քակել վիրակապերս: Այժմ դուրսը ամպամած էր ու, կարծես թէ, քամի կար: Երբեմն ցաւերին տոկալը խիստ դժւարանում էր, բայց երբ աւարտեց ու սկսեց մաղերը խուզել ու ածիլել, մի դուրեկան թմրութեան մէջ ընկայ: Աչքս անվնաս էր մնացել եւ ուռուցքը իջել էր: Մօտ երկու ժամ, կոշտ ու կոպիտ, բայց եւ համբերութեամբ ու խնամքով, ինձնով զբաղեց բժիշկը՝ առանց մէկ բառ ասելու: Ես էլ զգում էի, որ ձայն հանելն աւելորդ է: Բայց երբ թարմ վիրակապերով նորից փաթաթեց, կապեց գլուխս եւ ուզում էր արիւնոտած շապիկս փոխել, խնդրեցի հագցնել իմ շապիկներից մէկը: Նա անխօս կատարեց խնդիրս: Կապոցի մէջ դրած էին նախ փոքրիկ գոլաւոր քիլիմը, որ ընտիր գործ էր. ապա վերջին դաշտահանդէսի առթիւ կարել տւած բոլորովին նոր հագուստներս եւ ձերմակեղէններս: Իրերը, երեւի, արժէք ունեն այն չափով, որքան յայտնագործում են ժամանակը: Եւ ժամանակների մի ժխոր էր տիրում այժմ գլխիս մէջ... Վերջապէս, բժիշկը աւարտեց իր գործը ու թեւիս նորից ինչ որ դեղ սրսկելով, գնաց: Ինձ համակած թմրութիւնը դրնալով սաստկանում էր, այնինչ ես պէտք է արթուն մնայի, որովհետեւ արդէն մօտենում էր Այէմշահ - հանումի եւ Իսկուհու այցելութեան ժամը: Բայց գլուխս աւելի ու աւելի մշուշանում էր, աչքերս իրենք իրենց փակուում ու բացուում էին աւելի յարատեւ մի ձեւով: Մինչեւ ո՞ր աստիճան մարդու մարմինը կարող է անդոր լինել բնութեան դէմ... Երբ բաւական ժամանակ անցաւ, սաստիկ ափսոսացի, որ ոչինչ չհարցրի նրանց մասին բժիշկին, ապա, յանկարծ, մի անդուստ անհամբերութիւն համակեց ինձ.

— Իրակլի՞...

Չայնս պահանջւած ձեւով դուրս չելաւ, կարծես թէ, փոսի մէջ էի: Դուրսը անձայն, անշուկ անձրեւում էր. մանր կաթիլներ, արծաթադոյն փոշու պէս, ընկնում էին փակ պատուհանի քառակուսի

ապակիներին ու քով քովի գալով, ուռճանալով, օձապտոյտ աղօսներով, յանկարծ, իջնում էին վար: Եւ քունը, ա՛խ, ի՛նչպէս էր համակում ինձ քունը... Թուում էր, թէ աւելի ուշ է, քան պէտք է, որ լինէր... «Ազանի՛, ազանի ժամանակն է», մտածում եմ ես ու լսողութիւնս լարելով՝ բերանարաց լսում եմ... Օ՛, քանի՛ անգամ ես քնեցի ու արթնացայ, բայց այդ օրը ազանջի կանչը չլսեցի...

Ու, իբր թէ, արեւահար մի օր է եւ լեռ, դաշտ, սար ու ձոր տօթի մէջ նստած՝ հեւում են: «Տեսնես ո՛ւր է եւ ճամբու ո՛ր մասն է», մտածում եմ ես, տեսողութիւնս լարելով: Հեռո՛ւ, լեռնադաշտին նշմարում եմ մի սեւ կէտ, որ գնդի պէս գլտորւում է դէպի ինձ ու մերթ ընդ մերթ լսում եմ դողոց, դղրոց... «Տեսնես ի՛նչ է այն», մտածում եմ ես տարակուսանքներով համակւած... Մա՛րդ է, թղուկի չափ մի սեւ մարդ. նա իջնում է սարի գլխից, հասնում է դաշտին... Քահանայ՛ի է. ահա՛ նա. գաւազանը ձեռքին, սքեմը քիչ վեր բռնած, հեւ ի հեւ ու քրտնաթոր գալիս է... Օ՛, Աստուած իմ, Սըրբազանն է... Որքա՛ն բարկացած է նա... Երբեք, երբե՛ք նրան այդպէս տեսած չեմ. «տեսնես, ի՞նչ է պատահել», մտածում եմ ես շքնազատ... Յանկարծ, գաւազանը գետնին յենելով, մի հսկայական քայլով նա ցատկեց ինձ մօտ ու ցասմամբ դռչեց.

— Ելի՛ր...

Չարմանքից մնում եմ շարած:

— Պառկելու ատե՞ն է...

— Ե՞ս... պառկած... ասում եմ նրան:

— Չե՞ս տեսներ, որ ամէն մարդ կերթայ...

— Ո՛չ, Սըրբազան, չեմ տեսնում:

— Ա՛... ա՛ - ա՛ - ա՛ - ա՛ - ա՛... չե՛ս տեսներ, — գրեթէ հեկեկալով ասում է նա:

— Եկո՛ւր իմ ետեւէն...

Ու գնում եմ ես նրա յետեւից դաշտն ի վեր: Սկսում է սաստիկ քամի: «Ի՛նչ սարսափելի քամի է», մտածում եմ ես ու զարմանում, թէ ինչպէս առաջնորդը, սքեմը հովին տւած՝ արագ - արագ գնում է: Ուժերս լարում եմ յետեւից հասնելու, բայց ի դուր. վայրկեան առ վայրկեան նա հեռանում է ինձանից: «Ի հարկէ, եթէ ես էլ գաւազան ունենայի»... մտածում եմ ես, տեսնելով, որ առաջնորդը, գաւազանին յենւած ոչ թէ քայլում, այլ մի քանի քայլ միանգամից ցատկելով՝ անցնում է:

Հասնում եմ լերան լանջին. այստեղ, պառկած եմ անհաշիւ մերկ

մարդիկ: Ոմանք նստում, քնատ աչքերով նայում են ինձ ու պառկում: Չեմ ճանաչում, առաջին անգամն եմ տեսնում նրանց: Որքան գնում եմ, այնքան շարքերը խտանում են: Տեղ – տեղ նրանք մէկ կողքից դառնում են միւսը ու իրարու շփելով, ճաթուած ձայներ են արձակում կաշիներից: Յանկարծ, վեր նայելով, զարմանքից ապշում եմ: Դիմացս ցցւել է դեղնագոյն մարմարէ մի հսկայ լեռ եւ լանջին կանգնած է առաջնորդը: Նա ձեռքով նշան է անում, որ գընամ: Ամօթից քիչ է մնում գետինը մտնեմ. ուժերս հաւաքելով աճապարում եմ: Որքան մօտենում եմ, այնքան ինձ համար պարզւում է, որ լեռը մի պարզ լեռ է եւ միայն ամբողջութեամբ ծածկւած է մերկ մարմիններով: Յաճախ հարկադրւում եմ կանգ առնել, պառկած մարդկանց միջից արահետներ գտնել, երբեմն էլ շրջան անել, որ անցնեմ: Վերջապէս, հասնում եմ առաջնորդին: Նա, կարծես թէ, ինձ նոր է տեսնում եւ ըստ սովորութեան, տխուր աչքերը թարթելով՝ բարեւում է: Այն ժամանակ ես հանում եմ գլխարկս ու գլուխ տալիս նրան:

— Եթէ յոգնած չես, երթանք:

— Երթանք... , ասում եմ ես, քրտինքս սրբելով:

Լերան միւս կողմին տարածւում են փոսեր, անդունդներ, խոռոչներ, քարանձաւներ, որոնց մէջ նստած, պառկած են անհաշիւ մարդիկ: Կարծես, թէ աշխարհը եկել այստեղ քնել է:

Առաջնորդը կողէկող մտնում է մի թափուր քարանձաւ: Ամէն անգամ, երբ իմ մէջ միտք է ծագում հարց տալու, թէ ուր ենք գընում, միշտ ամօթի մի զգացում հարկադրում է ինձ լռել: Ու ես, թէեւ մի պահ տատանման մէջ եմ ընկնում մուտքի մօտ, բայց անցնում եմ: Որքան առաջանում ենք այդ ընդարձակ քարանձաւի մէջ, այնքան աղօտանում է մուտքի ձեւը լոյսը: Մթութեան մէջ հաղիւ եմ տարբերում առաջնորդի ստերագող սքեմը: Ես, իբր թէ, բոլորովին անտարբեր եմ ու ոչ մի վախ չունեմ: Եւ խրոխտութեամբ ասում եմ.

— Ովքե՞ր են ապրում այստեղ, Սրբազան... .

Սարսուռը ցնցում է ինձ. ձայնս իմ ձայնի նման չէ... Նայում եմ չորս կողմս, անթափանցելի խաւար է... Չարհուրանքով ճչում եմ.

— Սրբազան... .

Արթնացայ եւ ահաւոր վտանգից ազատւածի պէս հաղիւ շունչ առայ ու տեսայ, որ գիշեր է...

Գիշե՛ր էր... Ու մի միտք անվե՛րջ հոլի պէս դարձնում էր գըլուխս.

— Եկել են...

— Գնացել են...

— Չեն եկել...

— Մնացել են...

— Ու դարձել, գնացել են...

Պաղ քրտինքը պատել էր մարմինս: Ոչ ներսը, ոչ դուրսը չչուկ անգամ չկար: Ու երեւի բաւական ժամանակ էր անցել, երբ ներս մըտաւ բժիշկը.

— Է՛... հիմա ի՞նչ պիտի լինի:

Կարմրած դէմքից, մշուշապատ աչքերից պարզ էր, որ խմած է: Բայց մի տեսակ աւելի շարժուն ու վճռական տեսք ուէնր:

— Կարո՞ղ ես երկու բառով ասել, թէ ի՞նչ ես մտածում, բարեկամ... .

Հարցումից եւ ձեւից զարմացայ:

— Չե՞ս կարող... Իսկ ե՞ս... կարո՞ղ եմ:

Ու աթոռը քաշեց, նստեց. ծոցի գրպանում ինչ որ բան փնտռեց, ըստ երեւոյթին, չգտաւ: Բայց ձեռքը մնաց այնտեղ:

— Հը՛... Ես նոյնպէս չեմ կարող...

Ապա մշուշապատ աչքերը վրաս սեւեռած, դուրս քաշեց ձեռքը եւ մատի տակ առաւ բազկերակս...

— Այո, բարեկամ, լինում են դէպքեր, երբ մարդ չի կարող հաշիւ տալ իրեն, թէ ի՞նչ է մտածում: Կեանքիս մէջ մի քանի այդպիսի դէպքեր եմ ունեցել եւ այժմ էլ, թէեւ յաճախ կրկնւում է, բայց այլեւս այն չէ. դժւար էր առաջ, շատ առաջ, երբ նշանածս մեռաւ, քիչ նւազ դժւար էր, երբ դաւակն մեռաւ, էլ աւելի նւազ դժւար էր, երբ կինս մեռաւ: Առաջին դժբախտութիւնից յետոյ, տարիներ շարունակ տեղ չէի գտնում կեանքի մէջ: Գիշեր, ցերեկ, այնքան էի տառապում, որ խելքս ցնդում էր. հանգստանում էի միայն այն ժամանակ, երբ գլխիս մէջ կատարեալ պարապութիւն էր տիրում: Հիմա կարող ես հարց տալ, թէ ի՞նչը փրկեց ինձ այդ ցաւից, որ մինչեւ անգամ, մինչե՛ւ անգամ որոշեցի կեանքս բարեկամութեամբ կապել հանդուրժեալ կնոջս հետ: Նախ եւ առաջ գինին. Լաւ խմելու դէպքում, մարդ գրեթէ ազատւում է մտածելու պարտականութիւնից: Բայց միայն սկզբում, երկսայրի սրի պէս մի բան է դա... Հաւատա՛, յետոյ վատ է լինում: Գլխաւորը այն էր, որ վերջ ի վերջոյ համոզեցի, թէ կեանքի մէջ ոչ ոք չի արժանանում սիրած կնոջ...

Ի՞նչ է ուզում ասել...

— Եւ իսկապէս, երբ եւ իցէ տեսե՞լ ես, որ մարդ կեանք ունենայ սիրած կնոջ հետ... Երբեւիցէ՞...

— Բժիշկ, չգիտե՞ք, արդեօք, թէ ի՞նչ եղան տանտիրուհիս, աղջիկը...

— Շատ լաւ ասացիր, ասա՛ ղեզ մի օրինակ. մարդկային, աստուածային օրէնքների, արդարութեան համաձայն, այդ աղջիկը պէտք է, որ տարբեր բախտ ունենար... Նոյնը դո՛ւ, երբո՛րդը, չորրորդը...

— Բայց արի ու տես, թէ ի՞նչ է տնօրինում ճակատագիրը...

— Գլխո՞ք, արդեօք, թէ ի՞նչ եղան նրանք...

— Գլխո՞ւմ, ինչպէ՞ս չգիտեմ...

— Այսօր չտեսայ, որ հասկանամ, թէ ի՞նչ եղաւ նրանց դործը...

— «Գործը» արժէք չունի, բարեկամ... Այսինքն, ուզում եմ ասել, որ Փիլը - Աղան թէեւ աշխատում է, բայց դժւար, թէ յաջողի օրը - օրին սաստկանում է աքսորը...

— Ուրեմն, յոյս չկայ...

— Տարօրինակ մարդ ես, արդէն եթէ յոյս չլինէր, ի՞նչ միտք կար աշխատելու...

— Չտեսա՞ք, արդեօք, իրենց...

— Տեսայ:

Ու պաղեց...

— Ե՞րբ տեսաք...

— Դեռ լոյսը չբացւած տեսայ:

— Լոյսը չբացւած...

— Այո, քարւանսարայում ծանր հիւանդ մէկը կար, կանչել էին, այնտեղ տեսայ նրանց...

Ելաւ ու շարժեց դէպի դուռը:

— Բժի՛շկ...

— Ի՞նչ կայ:

— Կարո՞ղ եմ վաղը նրանց տեսնել...

Յանկարծ, վար թեքեց ու շնջաց.

— Նրանք գնացին, բարեկամ...

— Գնացի՞ն... Ե՞րբ գնացին...

— Գնացին, այսօր լուսաբացին բոլորի հետ միասին գնացին... Հիմա, որ գիտես այդ, թոյլ տուր, որ ասեմ բոլորը: Դեռ մութ էր, երբ մի ժանդարմ եկաւ ինձ մօտ եւ ասաց, թէ քարւանսարայում ծանր հիւանդ կայ եւ պէտք է անմիջապէս գնամ: Որքան էլ արտասովոր մի բան էր, բայց հազնեցի, գնացի: Վերը, քարւանսարայի

մօտ, խմբած էին սայլեր: Դրան մօտ կանդնած էին մայրը եւ աղջիկը: Հիւանդ, բան չկար. նրանք էին կանչել... Ինչ որ է, չերկարեմ, հասկացայ, որ դնում են: Հարցումս փորձեցին քո մասին. ասացի, որ լաւ ես... Ի միջի այլոց, պէտք է քեզ ասեմ, որ դարմանալի՛ տպաւորութիւն թողեց վրաս այդ աղջիկը... Թէեւ, որքան գիտեմ, բոլոր հայերն էլ այդպէս են, բայց, շա՛տ մեծ սիրտ եւ հզօր կամք արտայայտեց այդ աղջիկը, բարեկամ. ինչ որ է... Վերադարձայ տուն ու չկարողացայ աչք փակել. լուսաբացին մօտ յիսուն սայլ անցաւ: Առաւօտը վիճակը լաւ չէր, չկարողացայ ասել եւ Իրակուն ալ պատւիրեցի, որ չասի. է՛հ, հիմա էլ ասում եմ, որովհետեւ երկարելը միտք չունի...

Նա ծոցի դրպանից մի ծրար հանեց.

— Հիմա, մի պարտք ունեմ կատարելիք այդ մարդկանց հանդէպ. խնդրեցին, որ իրենց մեկնելուց յետոյ, երբ յարմար գտնեմ, քեզ տամ այս: Ահա՛, բարեկամ, իմ պարտքը այդ մարդկանց հանդէպ վերջացաւ:

Ծրարը դրեց ձեռքս ու գնաց:

Կարի սեւ թելով խաչածեւ կապած ու տետրի թղթի մէջ փաթաթած մի ծրար էր: Թղթի մէջ կար մի փոքրիկ նարնջագոյն դրամապանակ ու չորս թերթից բաղկացած մի նամակ: Անմիջապէս ճանաչեցի Իսկուհու խոշոր, ուղղահայեաց ձեռագիրը ու վար դրի... Մեքենաբար գննում էի դրամապանակը: Յիշեցի, տեսել էի այդ խնդրիք դրամապանակը, որի մէջ հաղիւ կարող էր տեղ գտնել հինգ - վեց դրուշ դրամ: Նրա միակ բաժնի մէջ կար տոմսի ձեւով ծաւաւած մի ծրարիկ: Թղթի վրա պառկել էր շաղանակագոյն մագերի մի գանգուր: Կողքի սեւ ծաւրի մէջ կար մոռացւած մի ասեղ, որի վրա փաթաթած էր մետաքսի ճերմակ թել:

Երբ նորից ձեռքս առի նամակը, վերնադրեց գառ ոչինչ չկարողացայ հասկանալ: Բայց յետոյ մաս մաս կարդացի.

« Սիրելի պարոն Վահան,

Երբ նամակս ձեզ յանձնեն, մենք արդէն մեկնած կըլլանք Գաւալսէն: Հիմա անանկ տարօրինակ կը թւի ամէն բան, որ չեմ քաշւիր ձեզ ազատօրէն գրելու: Անձամբ, ի հարկէ, չպիտի կրնայի ձեզ ամէն բան ըսել, բայց գրելը դիւրին է: Արդէն յաճախ տունն ալ ձեզ նամակներ կը գրէի, բայց կարգալէն ետքը դրածս միշտ կը պատուէի: Հիմա, որ կերթանք, խորհեցայ, որ պէտք է ձեզ գրել: Գիտեմ, որ շատ պիտի տխրիք, բայց տուանց ձեզ լուր ձգելու մեկնելնիս խիստ դժւարս կուգայ:

Երէկ, երբ ձեզմէ ելանք, բժիշկը ըսաւ, թէ երեք - չորս ամսէն նորէն ի վիճակի կըլլաք քաշելու: Հազիւ կըրցայ ինքզինքս զսպել, որ չիյնամ ու չհամբուրեմ ոտքերը: Հիմա կը խորհիմ, որ եթէ երեք - չորս ամիս ասլրելու ըլլանք, պիտի հասկնամ, որ արդէն կը քալէք:

Գաղթելէն ի վեր միշտ կը մտաբերեմ ձեր մէկ կամ միւս պատմութիւնը, որ կընէիք մեզ այն երազ օրերու ձմրան գիշերներուն: Հաստ կողքով տեսրը, որուն համար այնքան կը խնդայիք վրաս, քովս է. հիմա կը խորհիմ, թէ որքա՞ն աղէկ եղաւ, որ գրի առի ձեր պատմութիւնները: Խիստ մտահոգեա՞ծ եմ այդ տեսրի բախտին համար: Երէկ պահ մը խորհեցայ ձեզի ճամբեմ, բայց չգիտցայ, թէ ի՞նչ ըսելով ճամբեմ: Տողրու՞ճ - հանու՞մն ալ ըսաւ. — մի՛ ճամբիր, մինակ ըլլաս նէ, կը կարդաս: Եւ իրաւ, յաճախ կը թղթատեմ, կը կարդամ ձեր մէկ կամ միւս պատմութիւնը եւ ինձ անանկ կուզայ, թէ նորէն ձեզ կը տեսնեմ ու կը լսեմ: Երէկ, իրիկնադէմին, երբ մայրիկը գնաց Բէքիր - փաշային քով, Տողրու՞ճ - հանու՞մին կարդացի «Բէափաղի վիշտը»: Չգիտցայ, թէ այդ ձեր վերջին պատմութիւնը պիտի ըլլար, որպէսզի շնորհակալ ըլլայի ձեր բոլոր պատմութիւններուն համար:

Առտու քովս եկաւ Սիրվարդը. չկըցայ մինչեւ վերջ մտիկ ընել ըսածները... Սամսոնին մէջ վերջին անգամ անկէ իմացայ, որ Թէր-ղեաններուն տունն էք: Ելայ, որ դամ, տուն կանչեմ ձեզ: Մինչեւ այդ ատեն մէկը հարցուցած չէր ձեր մասին ու խորհեցայ, թէ աւելի ապահով կըլլաք տունը: Բայց սիրտ չըրի ներս գալ ու Ծառուկեաններուն տունին քով կայնած մնացի: Ետքը տեսայ, որ դուրս ելաք ու գացիք վար: Սաստիկ վախցայ, ըսի վազեմ, ետ կանչեմ ձեզ. սիրտս անանկ կըսէր, թէ ձեզ հիմա պիտի ձերբակալեն: Բայց տեղէս շարժիլ չկըցայ, որուն համար օրն ի բուն կը զղջամ. եթէ կանչած ըլլայի, չերթայիք, չպիտի ձերբակալէիք ու ատանկ ալ չպիտի ըլլայիք...

Ձեր աքսորէն ի վեր կաշխատէի օր առաջ ձեր ետեւէն հասնիլ. կը խորհէի, թէ ձեզ հետ ըլլալով, պիտի կրնանք գաղթի դժուարութիւնները յաղթահարել: Չգիտէի, թէ ինչ բան է դաղթ ըսածը: Հիմա կը գիտակցիմ, որ այլեւս չենք տեսնուիր:

Երէկ, երբ ձեռքս պահեցիք, գլուխս դարձաւ ու պիտի վար իյնայի, եթէ չերթայի... Ալ հպարտութիւն չեմ գգար ձեր հանդէպ, պարոն Վահան, եւ ամէն բան կը գրեմ ու գիտեմ, կզգա՛մ, որ այլեւս չպիտի տեսնեմ ձեզ, որ գրածներուս համար ամչնամ:

Երբ դարձանք քարւանսարան, ինքս ինձ սիրտ տւի. խորհեցայ:

Թէ այսօր նորէն կուզանք: Օ՛ր, եթէ գալու ըլլայինք, բնաւ չպիտի քաշէի ըսելու, թէ որքան... (ջնջում էր): Բայց երէկ մութը կոխելուն պէս, քարւանսարային դուռները փակեցին, պահակներ դրին ու ըսին, թէ առտուն կանուխէն ամենքս ալ պիտի երթանք: Հիմա, ճամբուն ո՛ր մասին մէջ կըլլանք, երբ կարդալու ըլլաք նամակս՝ չը գիտեմ: Բայց անհուն սիրտանք կըզգամ, որ կը կարդաք: Ինձ անանկ կուզայ, թէ հիմա ձեր քովն եմ եւ կը տեսնեմ, թէ ինչպէս կը կարդաք գիրս: Առտուն ժամը ութին մինչեւ գիշեր ամէն վայրկեան պիտի խորհիմ, թէ նամակս կը կարդաք ու վաղն ալ, միւս օրն ալ, քանի ողջ մնամ:

Լուսաբացին մայրիկը կուզէր կաշառել պահակը եւ ինձ մէկ - երկու վայրկեանով ձեր քով բերել: Ըսի՛ չեմ երթար: Անտարակոյս քնացած պիտի ըլլայիք եւ ինչ կրնայի ըսել ձեզ մէկ - երկու վայրկեանի մէջ:

Պարոն Վահան, երանի թէ անցած դացած ըլլայիք եւ անանկ գիտնայի, թէ մեր առջեւէն կերթաք ու մենք ալ ուշ կամ կանուխ ձեր ետեւէն կը հասնինք: Հիմա, որ ատանկ տեսայ ձեզ, չգիտեմ, թէ ո՛ւր եւ ի՞նչպէս պիտի երթամ: Կը խենթեմ, երբ հիւանդանոցին քովէն անցնելու կը մտածեմ... Ի՞նչ տարօրինակ բան է աս, պարոն Վահան. պիտի երթանք ու քայլ առ քայլ հեռանանք կեանքէն. չեմ կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ պիտի երթանք... Կը գրեմ ու ականջներս կը խշշան, կարծես թէ, կը լսեմ փոթորկոտ ծովու շփոնքը...

Մայրիկը քովս նստած կուլայ. ատիկա ինձ մխիթարութիւն չէ, բայց կը սփոփէ:

Պարոն Վահան, կուզեմ, որ ողջ ըլլաք ու ձեր կեանքը լման բուրէք: Միշտ այնքա՞ն բարի էիք մեր հանդէպ, որ բնաւ չեմ կասկածիր, թէ ձեր կողմէն ջանք չպիտի խնայէք, որ այս վերջին խնդիրս, ի՛դձս անպայման իրագործւի... Ճրագը կը մարի, ալ չեմ կրնար գրել... Մնաք բարով, պարոն Վահան:

ԻՍԿՈՒՀԻ

Մայրիկը ձեզ կը համբուրէ ու կըսէ, թէ երբ կովկաս երթաք, բարեւ խօսեցէք ձեր մօրը, քոյրերուն: Տողրու՞ճ - հանու՞՞ր կըսէ՝ — «Հէլալ ըրէ դպրոցին, մանչերուն, ամենուս վրա թափած ջանքերդ»...

Բելգրադ

(Շարունակելի)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

### ՀԱՅ ԵՒ ԱՐԱՐ

## ՀՆԱԴՈՅՆ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընդհանրապէս Հայ եւ Արար յարաբերութեանց պատմականը մեր մօտ կը սկսի Արարացոց 640 թ. Հայաստան արշաւանքով:

Արդէն արարական (այսինքն մահմետական) վտանգը Բիւզանդիոնի Հերակլ կայսեր ուշադրութիւնը սկսած էր գրաւել նոյն իսկ 632 թ.: Սերէոսի վկայութեամբ մահմետական Արարացիք իբր Իսմայէլի որդիք եւ ժառանգորդները՝ Պաղեստինի, Ասորիքի եւ Միջագետքի տիրանալ կողմէն, եւ մարտնչումը անխուսափելի եղաւ:

Արար եւ բիւզանդական մարտնչման մէջ անկարելի էր որ Հայերն ալ մասամբ մասնակից չըլլային, թէեւ առանց որոշ կողմնակցութեան կամ մէկ կամ միւսին հետ լիասիրտ դործակցութեան: Այս մասին սակայն ցարդ տեսչներ կը պակսէին:

Պարսից եւ Արարացոց միջեւ ծայր տեսած մարտնչմանց Հայերը արդէն մասնակցած էին իբր Պարսից վարձկաններ, եւ 636-ին Արարացոց Պարսից վրա տարած առաջին մեծ յաղթութեան զոհուած էին նաեւ Մուշեղ Մամիկոնեան եւ Գրիգոր Միւնի նախարարները:

Մեր մօտ ցարդ կը պակսէին յաւելածական տեսչներ ու նոր փաստեր 640-ի արշաւանքէն առաջ Հայ եւ Արար յարաբերութեանց մասին: Ճիշտ այդ պակասն է որ կը լեցւի ստորեւ յառաջ բերուած տեսչներով:

Արար պատմիչ էլ Վազըտի իր «Պատմութիւն Միջագետքի Արարներէն գրաւման» գործին մէջ կը նկարագրէ Զիւլպա եւ Ռիպա բերդերուն գրաւումն ալ, տալով հետաքրքրական եւ պատմական մանրամասնութիւններ:

« Եւ ան (Եուզինա) \*) առաւ իր հետեւորդներէն հարիւր հօգի, լաւագոյն եւ քաջագոյններէն, իւրաքանչիւրը առաջնորդեալ ձիով մը, սակայն անոնք ոչ զէնք եւ ոչ ալ ուղտ առին, եւ գիշերով յառաջացան, էյատը Պալիլ թողելով, եւ գիշերան մնացեալ մասն ալ ճանապարհեցին, եւ արեւածագէն երկու ժամ առաջ հասան Սանուքա, ուր դտան հազար ՀԱՅԵՐ, զէնքերով եւ սարքածքով, թեթեւագէն զօրքերու հետ»:

« Եւ երբ անոնք (Հայերը) անոնց (Եուզինայի մարդոց) մօտեցան եւ իմացան ձիերու սանձերուն ծամելը, կեցան եւ մտիկ ըրին, եւ լսեցին, որ յունարէն կը խօսէին: Որով մօտեցան անոնց (Եուզինայի մարդոց) եւ հարցուցին ով ըլլալնին, եւ անոնք ըսին. « Ասիկա մեծ պատրիկն է, Հալէպի տէրը, Եուզինա անունով», եւ ան կը փախչի Արարներէն ու այս բերդը կը զիմէ», — ըսել ուղելով՝ Ռիպայի բերդը»:

« Եւ երբ անոնք (Հայերը) իմացան ասիկա, հրճեցան, նկատի առնելով, որ ասիկա լաւ լուր մըն էր, եւ դացին Եուզինայի մօտ, բարեւեցին դայն, եւ խրկեցին իրենց գլխաւորներէն մին, կողմնակից մը Աքշիֆաթի, որ կառավարիչն էր երկու բերդերուն, իրեն լուր տալու Եուզինայի պատմութիւնը, եւ անոր Արարներէն փախչիլը, եւ թէ անոր բերդ մտնելու թոյլտուութիւն խնդրելը»:

Այսպէս, ուրեմն, էլ Վազըտի վկայութեամբ, Սանուքայի (Միջագետք) մէջ հազարնոց Հայ բանակ մը կար, հաւանաբար վարձկան, որուն վստահեա՞ծ էր այդ երկրամասին հսկողութիւնը եւ, անշուշտ, ամբողջեանց պաշտպանութիւնը:

Յիշեա՞ծ Զիւլպա եւ Ռիպա բերդերը, որոնց շրջանին մէջ քիչ հեռու էր Սանուքայ, կարելի է գտնել այժմու աշխարհացոյցներուն վերա, Հալէպէն 150 անգլիական մղոն մը հարաւ — արեւելք կամ թէ՛ Ուրֆայէն Եփրատին հետեւելով, մօտաւորապէս երկու հարիւր մղոն հարաւ, Զէլէպէ եւ Ռիպա վայրերն են: Զէլէպէ՝ Եփրատի արեւմտեան, իսկ Ռիպա արեւելեան եզերքին կը գտնուէին, իրարու հետ հարկաւորակցելով ներքնուղիով մը, որ Եփրատի տակէն կանցնէր:

էլ Վազըտի վկայութեանց այս կարեւոր շարքը սակայն այս վե-

\*) Եուզինա Հալէպի քրիստոնեայ տէրն էր, որ այդ քաղաքին բնակիչներուն վատութեամբ պատճառաւ մահմետականութիւնը ընդունեց եւ քրիստոնէից ոյսերիմ եւ խորամանկ թշնամիք եղաւ: Վերը պատմածը քրիստոնէից դէմ իր մէկ յաղիմ մասին է որ յաջողեցաւ ու մահմետականներուն ձեռք տաւ Զէլէպէ եւ Ռիպա բերդերը:

րինով չի ըմբար: Ան կը պատմէ, թէ Էյատի (մահմետական Արարներու հրամանատարին) «լրտեսներ եկան եւ իրեն տեղեկացուցին, թէ Շարիատ, թաղաւոր Ռաս էլ Աինի, եւ Թուղա, տէր Գաֆր (Հիսնի Բէֆէ) ի, եւ մնացեալ գլխաւորները հաւաքած էին հարիւր հազարնոց բանակ մը, Յոյներու, Հայերու եւ Արարներու, սակայն Արարները անոնցմէ բաժնւած էին իրենց ընտանեօք եւ զաւակներով, եւ թէ անոնք Յոյներէն օրւան մը ճամբայ հեռացած էին, եւ կուզային դէպի մուսուլմանները»: Հոս յիշւած Արարները հեթանոսներ էին:

Հետեւելով էլ Վազըտին, կը կարդանք. «Շարիյատ հաւաքեց իր մեծաւորները եւ անոնց ըսաւ. — Դուք պէտք է գիտնաք, որ ես իմացած եմ, թէ անցեալ ժամանակներուն թաղաւորները անձամբ կը պայքարէին: Որով, ես կը ցանկամ, վազը բանակով դուրս դալ ընդդէմ այս ժողովուրդին (մահմետականներուն), եւ կուզեմ, որ դուք ընդդիմանաք ինծի, եւ քաշէք ձեր սուրերը, եւ այնպէս ցոյց տաք, որ իբր թէ դիս սպաննել կուզէք, եւ այն ատեն ես ձեզի պիտի ըսեմ՝ «Յանձնեցէք այս ժողովուրդին, որպէս զի տեսնեմ ձեր ենթարկելիք անոնց լուծին», եւ դուք այնպէս ցոյց պիտի տաք, իբր թէ ինծի կը հակառակիք, եւ ձեր սուրերը մէկդի չէք թողուր, այլ երկրորդ անգամ իմ վրաս կիյնաք, որուն վրա ես անոնց մօտ պիտի փախչեմ, եւ անոնց գլխաւորին առջեւ պիտի կանգնեմ, եւ անոնց պիտի ըսեմ, թէ դուք ինծի դէմ ապստամբեցաք եւ թէ ես կը ցանկայի իրենց յանձնուել, սակայն դուք ինծի դէմ ըմբոստացաք, եւ մտադիր էք զիս սպաննել, եւ արդ՝ ես ձեզի եկայ: Այն ատեն, երբ միւսլիմաններուն ուշադրութիւնը ինձմէ հեռանայ, ես պիտի իյնամ իրենց գլխաւորին վրա եւ պիտի սպաննեմ զինքը, եւ դարձեալ ետ ձեր մօտ պիտի փախչեմ»:

« Եւ Վարդապէք Հայը ըսաւ անոր. Ի՞նչպէս կրնանք թոյլ տալ, որ կեանքդ վտանգես: Եթէ դուն ասիկա կատարես, մենք չենք կըրնար Արարներուն վստահիլ, եւ կը վախնանք որ թաղաւորը մեզի պիտի դայրանայ եւ ըսէ՝ «Ի՞նչպէս կըլլայ որ դուք թոյլ տուիք իրեն այս կերպով իր կեանքը վտանգել»:

« Ասոր վրա Եուզինա ըսաւ. «Ո՛ր թաղաւոր, այս Սէյիտը (Հայ Վարդապէք իշխանը) ճշմարիտ է իր ըսածին մէջ: Ի՞նչպէս կրնանք թոյլ տալ, որ դուն այս ժողովուրդին երթաս: Սակայն, ես աւելի դիւրին կերպ մը կը խորհիմ»:

« Շարիյատ եւ Ռուպիլ Հայը հարցուցին. «Ի՞նչ է առաջարկած ռազմահնարքը»:

« Ան (Եուզինա հաւատափոխ մատնիչը) ըսաւ. «Թո՛ղ մենք ա-

մենքս միասին երթանք անոնց ընդդէմ, եւ մեր ծայրագոյն ուժը ցոյց տանք կուելով, եւ երբ Արարները մեզի մօտենան (եւ դուք պէտք է դիտնաք որ խումբ մը Յոյներ կան անոնց հետ իրենց զօրքերուն մէջ, որոնք ընդունած են անոնց կրօնքը, ինչպէս որ ես), եւ երբ անոնք մեզի մօտենան, եւ մեր վրա դառնան, մենք անոնց կը խրկենք պատգամաւոր մը խաղաղութիւն առաջարկող, եւ ան անոնց պիտի ըսէ. « Մեմք ձեր գլխաւորներէն տաւր հոգի կուզեմք, որպէսզի որոշեմք քէ ի՛նչ պիտի ըլլայ մեր մէջի կարգադրութիւնը, յուսալով որ մեմք խաղաղութիւն կնքեմք»: Եւ երբ անոնք մեր զօրութեան մէջ մտնեն, մենք զանոնք պիտի բռնենք, եւ իրենց բարեկամներուն ներկայութեան, մեր սուրերը քաշելով՝ պիտի ըսենք. «Կա՛մ դուք պէտք է լքէք պաշարումը եւ կամ թէ մենք կը կտրենք անոնց գլուխը»: Եւ երբ ժողովուրդը տեսնէ, որ մենք վճռած ենք, պիտի ցանկան իրենց գլխաւորները իրենց վերադարձած տեսնել, այն ատեն, մենք պիտի համաձայնինք իրենց հետ զանոնք ազատ արձակել, եթէ մեզմէ հեռանալ խոստանան, որովհետեւ, Արարները երբ բան մը խոստանան, կը կատարեն խոստումնին: Եւ մենք անոնց պիտի ըսենք. «Դուք առի՛ք Ռաս էլ Աինը, եւ երկու բերդերը եւ մեծ քաղաքները, եւ մեմք այժմ կը խաբիմք, որ լաւագոյնն է՝ ձեզի հետ տարւան մը հաշտութիւն կնքել, որմէ վերջ մեմք կամ ձեր կրօնքը պիտի ընդունինք եւ կամ քէ պիտի հեռանանք Յուսաց երկիրը»:

« Ռուպիլ Հայը այն ատեն ըսաւ. «Ի՞նչ պիտի ընենք երբ անոնք մեզի զրկեն անարժէք մարդիկ, կամ թէ նոյն իսկ եթէ իրենց գլխաւորները ըլլան, եւ մենք զանոնք բռնենք քու ըսածիդ պէս, եւ անոնց սպանանք մահով, ենթադրենք որ անոնք մեզի չլսեցին, այն ատեն մենք ի՞նչ պիտի ընենք»:

« Ասոր վրա Եուզինա ինքզինքը շատ բարկացած ցոյց տուաւ, եւ Մէսիայով երդնցաւ. «Այս ժողովուրդին սարսափը ձեր սրտերը յեցուցած է, եւ դուք ընաւ չպիտի բարգաւաճիք, կերպնում ձեզի թէ ես իմ բերդիս մէջ քաջութեամբ կուեցայ իրենց դէմ, եւ եթէ չըլլար Տամիս Ապու Լ՛Հուլ կուչւած դերիներուս մէկուն մատնութիւնը, անոնք երբեք ինծի չէին կրնար հասնիլ կամ ինձ յաղթել, եւ ձեր այս երկիրը ամբացած է, եւ հոն մուտք չկայ բացի երկու տեղէ, եւ ձեր պարիսպը ամբացած է: Ուրեմն հետեւեցէք խորհուրդիս եւ կուեցէք ձեր կրօնքին համար եւ հաճեցուցէք Մէսիային իր գործին համար կրուելով, եւ ձեր կողմէն պատգամաւոր մը զրկեցէք, եւ ես անոր հետ պիտի խնդրեմ նամակ մը մեզի զրկելի անձերուն անուններով»:

« Ասոր վրա Վարդապէք Հայը խնդաց, եւ ըսաւ. «Յանուն իմ կրօն-

քիս, Արարները մտիկ չպիտի ընեն ասոր, առանց մեզմէ պատանդ առնելու»:

«Շուքինան զայրացկոտ պատասխանեց. «Ինչպէ՛ս ձեր գաղափարները իրարու հակընդդէմ են եւ որքա՛ն թոյլ ձեր սրտերը: Եթէ մուսլիմանները պատանդ ուզեն, մենք պիտի գատենք քաղաքիս ամենաթշուառ բնակիչներէն, եւ անոնց պատուոյ հազուստներ հազւեցնենք եւ զարդարենք զլիսաւորներու զարդերով, եւ զանոնք անոնց պիտի զրկենք»:

«Շէրիյատ բացազանչեց. «Հաղորդութեամբ կերդնում, որ Շուքինայի ըսածին պէս յար եւ նման պիտի կատարենք»:

«Ասոր վրա ան հրամայեց իր հետեւորդներուն եւ զլիսաւորներուն պատերազմի պատրաստելի, եւ անոնք հնազանդեցան անոր եւ զինւեցան»:

«Եւ յաջորդ օրը ամենքն ալ յառաջացան, եւ երբ Ապտ Ալլահ (Իպն Ինան) զանոնք տեսաւ ճակատելու պատրաստ, իր հետեւորդներուն հրամայեց ձիաւորելի, եւ անոնք յառաջացան դէպի իրենց շինած խրամատներուն եւ դիմազրաւեցին իրենց թշնամին, կանչելով՝ «Ո՛վ Ասուած, օգնէ՛ մեզի ընդդէմ այս ժողովուրդին, որպէս օգնեցիր մեզի Ահգայի ֆակատամարտին օրը, երբ մենք Մարգարէին կուշտին կուեցանք»:

«Այն ատեն Իպն Ինան անցաւ իրենց շարքերէն եւ հրամայեց գումարտակներուն եւ ըսաւ անոնց. «Ես կերթամ այս ժողովուրդին գլխաւորին եւ իրենց խաչին, հետեւեցէ՛ք ինձի, ո՛վ մուսլումաններ, եւ եթէ Ասուած մեզի տայ յաղթութիւնը, եւ մենք իրենց խաչը վար առնենք, անոնք այլեւս մեր առջեւ չպիտի կանգնին»:

«Եւ անոնք պատասխանեցին. «Ո՛վ Ամիր, մենք կերդնումք Ասուածմով, որ կը քափանցէ ամէն սրտերու, դուք մեզի կը հրաւիրես կատարելու ինչ որ մենք ամենայն հանոյքով կը ցանկանք կատարել, ուրեմն յարձակէ անոնց վրա, որպէսզի մենք օգնենք քեզի»:

«Եւ Ապտ Ալլահ յառաջացաւ Կարկիշայի դէմ, եւ յարձակման ատեն մուսլումաններու դրօշակիրը Սօհաիլ Իպն Ատի ծանրօրէն վիրաւորեցաւ, սակայն անոնք լաւ գործածեցին իրենց սուրբերը Աստուծոյ թշնամիներուն դէմ»:

«Եւ Ապտ Ալլահ էր Ռահման Իպն Մալիք Էլ Աշքար հանդիպեցաւ Վարդապէք Հայուն եւ երբ ան տեսաւ անոր զրահը, գիտցաւ թէ անոնց զլիսաւորներէն մին է, անոր վրա ինկաւ եւ այնքան նեղը դրաւ, որ նիզակով մը ծակեց անոր կուրծքը, ու նիզակին գլուխը անոր ուսերուն միջեւ դուրս եկաւ»:

«Եւ Ինան Իպն Մուպարրան (Մըուան) հանդիպեցաւ Շարիյատի, որ գրեթէ բանակը փախուստի մատնած էր, եւ անոր վրա յարձակեցաւ, առանց դիտնալու, թէ ան թագաւորն էր, այլ զլիսաւորի մը տեղը դնելով, անոր վրա ինկաւ, գոչելով՝ «Ես Նաաման Իպն Մուպարրանն եմ, պատերազմի առիւծ»:

«Եւ երբ Շարիյատ լսեց անոր անունը, եւ ճանչցաւ զայն իրր գըլխաւորը, որ Շրուսաղէմին տիրած էր, գարձաւ եւ փախաւ: Սակայն Նաաման հետապնդեց զայն, աղաղակելով՝ «Ո՛ւր պիտի կրնաս փախչիլ ինձմէ, ո՛վ թշնամիդ՝ Աստուծոյ»:

«Եւ անոր հասնելով՝ նետեց՝ իր նիզակը անոր մարմնոյն մէջէն անցնելով, զէնքը միւս կողմէն դուրս ելաւ, եւ ան (Շարիյատ) գիտապաստ իր արեան մէջ ինկաւ»:

«Եւ երբ քրիստոնէից բանակը տեսաւ որ իրենց թագաւորը սպաննւած է, փախաւ եւ իր քաղաքին մէջ ապաստանեցաւ»:

Էլ Վազըտի կը շարունակէ պատմել՝ զէպերուն թաւկան դնելով Հիճրէթի 18 տարին, որ սկսաւ Յունւար 12, 633-ին: Հեղինակը նոյն իսկ Կարկիշայի անկման, որ վերի պատերազմին յաջորդեց անմիջապէս, նոյն տարւան Ռամատան ամսուան 1-ը կը նշանակէ, որ կընէ 6 Հոկտ. 639: Ուրեմն պատերազմը կատարւած է 639 Սեպտեմբերին:

Էլ Վազըտի վկայութեանց կարեւորագոյն մասը նախ հաստատելն է, որ Հայերը շատ ու շատ վաղուց հաստատուած էին Միջագետքի, Սիւրիոյ եւ Ասորիքի մէջ, նոյն իսկ աշխարհի վայրերու մէջ, ուր դարերով հայու հետք իսկ չէ մնացած: Հայերը եղած են ծանօթ երդարներով հայու հետք իսկ չէ մնացած: Հայերը եղած են ծանօթ երդարներով հայու հետք իսկ չէ մնացած: Հայերը եղած են ծանօթ երդարներով հայու հետք իսկ չէ մնացած: Հայերը եղած են ծանօթ երդարներով հայու հետք իսկ չէ մնացած:

Էլ Վազըտի վերջին վկայութիւնը մեզի կը ներկայացնէ նոյն իսկ երկու հայ իշխաններ աղաւաղեալ անուններով՝ Վարդապէք եւ Ռուբրիլ: Ասոնք հաւանաբար զլիսաւոր հրամանատարներն էին, որ բիւզանդական իշխանութեանց տակ կուող հայ զօրամասերու կը հրամայէին այս կողմերը: Էլ Վազըտի վկայութիւնը ցոյց կուտայ, որ անոնք ոչ միամիտ, ոչ ալ վատոզի հրամանատարներ էին, ինչպէս իրենց աւելի բարձրաստիճան յոյնմեծաւորները:

Ո՞վ էին Վարդապէք եւ Ռուբրիլ: Ասոնցմէ վերջինը գուցէ ըլլայ աղաւաղում մը Ռուբէնի, իսկ Վարդապէքը նմանաձայն է Վարդ Պատրիկի, Վարդանիկի, նաեւ Վարդապետի:

Էլ Վազըտի վկայութիւնը կարեւոր նեցուկ մըն է մեր պատմութեան համար:

ՏՈՒԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

### ՅՈՒՇԱՏԵՏՐԷՍ

Զ.

Գահաժառանգ իշխանին այս տարօրինակ ընթացքէն ես բնա՛ւ եւ բնա՛ւ չազդուեցայ, որովհետեւ՝ քսան եւ աւելի տարի անոր բժիշկը ըլլալովս եւ մտերմութեանը մէջ ապրելովս հանդերձ, զինքը ուսումնասիրել երբեք զանց առած չէի. խորը թափանցած էի անոր յարափոփոխ, դիւրազգաց ու դիւրախաբ բնաւորութեանը եւ մէկէ աւելի անգամ ականատես եղած էի, որ այս աւուր սիրած – յարգածը վաղը շուտով աչքէ կը ձգէր՝ անգոյ կամ ոչինչ պատճառով, եւ վստահ էի՝ թէ օրին մէկն ալ ինձ կրնար վիճակիլ՝ ենթակայ ըլլալ, անոր այդ կերպ շղային դիւրաբորբոք նոպային:

Ա՛հ, եթէ Ապտիւլ – Մէճիտ այդպէս չըլլար, մի քիչ պողարիւնութիւն ունենար եւ զգուշաւոր շրջահայեցութիւն, կամ թէ՛ անոր – ասոր շողմարար խօսքերէն ու քէմալական շարժումներէն չխաբւելով՝ քաջ գտնէր, Սուլթան Վահիտէտտինի մեկնումէն յետոյ՝ հաւատարիմ մնար ասոր անգլխամէտ քաղաքականութեանը, որուն ինքն ալ վաղուց ջերմ կուսակից եւ սիրահար եղած էր, չպիտի թոյլ տար, որ դարերէ ի վեր աշխարհի առաջ՝ Թուրքիոյ վարկը աստիճան մը յարգանքի արժանի առնող սուլթանական – խալիֆայական միալոյծ իշխանութիւնը ի քթի վրայ ակն ոտնակոխ ըլլար. չպիտի ներէր՝ որ սուլթանութիւնը ջնջէր, բաժնէր խալիֆայութենէն, այն ատեն, իրա՛ւ պիտի ժառանգէր նա մեծ՝ անուն Թուրքիոյ ժամանակակից պատմութեան մէջ: Բայց սկզբունքի տէր չէր, Գամէլէոն մ'էր:

Յայտնի է, որ Քէմալականութիւնը խափանեց Սուլթանութիւնը եւ միայն խալիֆայութիւնը պահեց (այն ալ՝ առերես եւ առժամանակեայ): Ապտիւլ Մէճիտ՝ իշխուելու մարմաջէն դրդւած՝ յանձն առաւ խալիֆա ըլլալ, չա՛տ սահմանափակ իրաւունքով:

Հաղիւ թէ երկու կամ քիչ աւելի տարի վարեց այդ պաշտօնը, այսինքն՝ միւսլիման կրօնին գլխաւորութիւնը, եւ ահա առաւօտ մ'ալ խուժեցին իր վրա, ստիպեցին անպայման թողուլ խալիֆայութիւն – մալիֆայութիւն եւ շուտով դուրս ելլել երկրէն, գնալ՝ ո՛ւր որ կամէր, ապա թէ ոչ՝ Դամոկլեան սուրբ պիտի շողար իր գլխին վերեւ: Քանի ճիշտ են անմահն Հ. Եղ. Հիւրմիւզի այն խորհրդաւոր տողերը, թէ՛

- « Յաջողութիւնք կոյր բախտին »
- « Անույ նման հոյովին. »
- « Իսկ մեծութիւնք մարդկային »
- « Քան ըզճաղիկ քարշամին... »

Յաւեցայ յոյժ, եւ կը ցաւիմ միշտ Ապտիւլ Մէճիտ խալիֆային այս դահալէժ անկումին համար. որովհետեւ մօտէն ճանչցած էի զինքը. դարդացած մարդ էր, ժողովրդասէր, եւ պիտի կարողանար՝ լաւ խորհրդականներ շուրջը առնելով, ըլլալ բարի եւ հեղինակաւոր թաղաւոր (կամ Սուլթան) մը: Իր փոփոխամտութեանը հետ՝ ունէր լաւ յատկութիւններ ալ. ազատամիտ էր, կը խօսէր Փրանսերէն, անգղիերէն եւ գերմաներէն, յոյժ սիրահար գեղարուեստի, ինքնօգնութեամբ եղած էր լաւ նկարիչ, քաջ երաժիշտ, միանգամայն կարող գրիչ. օրւան մեծ մասը կանցնէր՝ կարդալով եւրոպական երեւելի հեղինակներու գործերը, որոնցմով լեցուցած էր իր ընդարձակ ու շքեղ մատենադարանը եւ որուն սեղանին վրա՝ խեղճ Կոմիտաս վարդապետին լուսանկարը կը տեսնէր փառաւոր շրջանակի մը մէջ:

Այս բոլորէն գտտ, նա ամենաջերմ ու անկեղծ համակրող մը, բարեկամ էր Հայ Ազգին, ինչպէս յայտնած եմ նախապէս. ապացոյցներ տւած էր այս մասին. երբե՛ք եւ երբե՛ք անխող չեղաւ իր մօտ եղած զիմումներուն եւ դուն գործեց Հայ տառապանքին սփոփարար ըլլալ իւրովսանն:

Պարտականութիւն ինձ կը համարիմ, պահ մը զարտուղի Յուշատետրիս ժամանակագրութենէն, փոխադրելի 1915 չարազէտ՝ հայաստան տարին՝ պատմելու համար կատարւած իրողութիւն մը, որ պատաւարեր է Ապտիւլ Մէճիտի, այդ ատեն տակաւին ինքը դահաժառանգներու շորթորդը, ըստ կարգի՝ «աւագութեան տիպ»:

\*\*\*

1915 Մայիսին, երբ դրամական մեծամեծ զոհողութիւններով եւ ողբացեալ մօրեղբորս՝ քիմիազէտ Նշան Դուկասեանի, ինչպէս նաեւ անդրուզական եղբորս գերմարդկային ճիւղերուն շնորհիւ, յաջողեցաւ

ինձ պրծիլ աքսորէ, իմա՛ Ապրիլ 11/24ի ահաւոր եղեռնէն ու Կ. Պոլիս դառնալ՝ Կոմիտաս վարդապետի, Բիւզանդ Քէչեանի, պատելի Քերոբեանի, Կալուօշի եւ ուրիշ երեք անձի հետ, այն ատեն, Ձաւէն Պատրիարք՝ դեռ պաշտօնի վրա, զիս ու Կոմիտաս վարդապետը Քաղաքական ժողովին Յունիս 28-ի նիստին հրաւիրեով՝ տեղեկութիւններ հարցուց մեզմէ՝ աքսորի մէջ մնացած ազգայիններու վիճակին վրա եւ մեր ազատման պարագաներուն մասին. բայց Օգոստոս 9-ին զիս առանձին դարձեալ կանչելով, խնդրեց՝ որ կարելի եղածին չափ շուտով երթայի իշխան Մէճիտի մօտ եւ աղաչէի, որպէս զի իր բոլորազեղութիւնը չինայէր, վերջ մը դնել տալու համար հայկական արիւնհակ տեղահանութիւններուն եւ սոսկալի տարազրութիւններուն, որոնք օր ըստ օրէ աւելի ծանր ու խժոժական հանգամանք կստանային:

Մերայօժար կատարեցի Պատրիարքին յանձնարարութիւնը եւ 1915 Մեպտ. 22-ին հազիւ կարողացայ ընդունել իշխանէն եւ մեր Պատրիարքին կողմէն աղերսելով՝ խնդրեցի, որ բարեհաճէր՝ ինչպէս որ յարմար կը դատէր, իւր ազդեցութիւնը ի դորձ դնէր, կասեցնել տալու հայալինջ եղեռնադորձութիւնը, զոր թուրք կառավարութիւնը կը շարունակէր առանց յոգնելու եւ տեսակ մը կանոնաւորութեամբ...

Իշխանը խորապէս յուզելով, խոստացաւ երթալ անձամբ խօսիլ Սուլթանին (որ էր Րէշատ):

1915 Մեպտ. 25-ին, կէսօրէ վերջ, Ապտիւլ Մէճիտ ինձ հեռախօսելով, ուզեց՝ որ գնամ զինքը տեսնալ՝ Բերա, իւր լուսանկարիչը եղող Սէպահ - է - ժողովի գործատեղին:

Անմիջապէս դացի որոշեալ տեղը, ուր իշխանը զիս առանձին սենեակ մը տանելով՝ օձիքս թոթուեց ու ըսաւ. « Հիմա՛, հիմա՛, ահա « Սուլթանին քովէն կուգամ. խօսեցայ իրեն ու պահանջեցի, որպէս « զի շուտով կանչէ իր նախարարները եւ պատիրէ որ վերջ տան Հա- « յերու դէմ գործուած այս անլուր չարագործութիւններուն, եթէ ոչ՝ « իր քաղաքութեան պատմութիւնը ամենասու (քառա վէ սիյահ) « իր բառերը) էջերով պիտի նսեմանան եւ պատասխանատու պիտի « ըլլանք ամենքս Աստուծոյ առջեւ »:

Սուլթան Րէշատ, իշխան Մէճիտի խօսքերէն այլայլմէ եղած, խոստացեր է, խիստ պատուէրներ հանել, կանչել եպարքոս Թալէաթ փաշան եւ պահանջել՝ որ վերջ տրւի տեղի ունեցած հայահալած ու հայալինջ գործողութիւններուն եւ պատժին ասոնց պարագլուխ - հեղինակները:

Իշխանը յանձնարարեց ինձ իւր բարեւները տանիլ մեր Պատրիարքին եւ հաղորդել Սուլթանին հետ ունեցած խօսակցութիւնը:

Իշխանին ձեռքը համբուրելով՝ շնորհակալ եղայ իրեն եւ չկրցայ զսպել արցունքս ու մեկնեցայ քովէն:

Յաջորդ օրը այցելեցի Պատրիարքին, պատմեցի Մէճիտ էֆէնտիէն իմացածներս ու խնդրեցի՝ որ ինքը շնորհակալութեան ուղերձ մը յղէր Իշխանին:

Ձաւէն Պատրիարք՝ որ սգաւորի մը պէս նստած կուլար՝ ոգեւորեցաւ եւ խոստացաւ պատրաստել առաջարկածս գիրը:

Եւ արդարեւ՝ Պատրիարքը չուշացուց ուղերձը եւ պատրաստել տաւ խիստ սրտաշարժ ու օրհնակից գեղեցիկ նամակ մը, զոր յանձնեց ինձ եւ ես տարի դայն իշխանին՝ 1 Հոկտ. 1915-ին, ու բերանացի ալ՝ Պատրիարքին կողմէն յայտնեցի երախտագիտական զգացումներ:

Որոշեալ էր սակայն, որ Ապտիւլ Մէճիտի մօտ կատարեալ Պատրիարքական այս դիմումը, ինչպէս նաեւ մատուցեալ գիրը, ամենազաւարտի պահէր, մինչ հակառակը եղաւ: Վաղայաջորդ օրն իսկ, Ոստիկանութեան բարձր պաշտօնեայի մը կողմէն աճապարանքով կանչեցայ ու ենթակայ եղայ խիստ դիտողութիւններու (չըսեմ յանդիմանութիւն), թէ ինչո՞ւ համար Պատրիարքին կողմէն դացեր խօսեր եմ իշխանին, սա ալ խնդիրը Սուլթանին ականջն է հասցուցեր, եւ այլ կարգ մը տաք ու սպաղ խօսքեր ու սպառնալիքներ, որոնք թէեւ բաւական ահուդող ազդեցին ինձ, այլ՝ բարեբախտաբար չար հետեւանք չունեցան:

Քանի մը օր վերջ, խոր ցաւով տեղեկացանք՝ թէ Ազգային Պատրիարքարանի այն ատենեան գործակատարը (Թալէաթի չա՛տ սիրելին) դացեր տեղեկագրեր է եղելութիւնը, վատ լրտեսութեան ստոր հերոսութիւն մը կատարած ըլլալու եւ պալտըի մը աւելի ստանալու համար:

\*\*

Հակառակ այս տհաճոյ միջադէպին, ես միշտ կուղէի, կարողութեանս ներած չափով, ծառայող ըլլալ մեր տարաբախտ ազգին եւ ամէն անգամ որ Պատրիարքը պատիւ կընէր ինձ բան մը յանձնարարելու, չէի վարանէր այս մասին:

Այսպէս՝ խնդրեց, որ Պապական Նւիրակ Մոնսէնէտու Տոլչիին երթայի եւ իր կողմէ խորին շնորհակալութիւններ յայտնէի՝ այն նիւթական եւ բարոյական մեծ հոգածութեան ու օժանդակութիւններ:

րուն համար, զորս Սրբազան Պապը ( Benoit XV ) իր միջոցաւ կը մատուցանէր տարագիր Հայերուն:

Կատարեցի այս պաշտօնն ալ, հետո աննելով Վիէննական Մխիթարեան Հ. Խորէն վարդապետը: Մանսէնէօր Տոլչի շա՛տ դո՛հ մնաց մեր Պատրիարքին այս խիստ գովելի փափկանկատութենէն, եւ իմ այցելութեանս յաջորդ օրը Պատրիարքին զրկեց Կարնոյ Փրանսական հիւպատոսարանին առաջին թարգման Պ. Սրապեանը՝ շնորհակալ ըլլալու, եւ աշնուհետեւ Տոլչիի մօտ իմ այցելութիւններս եղան յաճախակի: Գրեթէ ամէն շաբթու Պատրիարքին կողմէ կը տանէի իրեն տեղեկագիրներ, որոնք տեղահանուած, տարագրուած Հայերու կրած չարչարանքներուն նկատմամբ, աջէն – ձախէն ցանցառօրէն հասած սրտակեղեք լուրեր կը պարունակէին:

Մոնսէնէօրը սոյն տեղեկագիրները անմիջապէս կը յղէր Հոռոմ եւ Սրբազան Պապը զանոնք աւագ ուշադրութեան առարկայ աննելով, ո՛չ միայն դրամական օգնութիւն կը փութացնէր պոլսական Նւիրակին, որպէսզի անխտիր բաշխէր տառապանքի մէջ հեծող Հայերու, այլ եւ՝ իւր սրբագիծ գիրերովը ուղղակի Սուլթան Բէշատի գուլթը կը հրաւիրէր կատարուած խուժուժութիւններուն վրայ:

Մոնսէնէօր Տոլչի անձամբ պալատ կը տանէր Վատիկանէն եկած Գիրերը, ցոյց տուած է ինձ քանին, նաեւ հաշւետետրը բաշխուած օգնութիւններուն, որոնց դուժարը տեսայ որ կը հասնէր մէկ միլիոն Փրանքի:

Նւիրակ Սրբազանը կատարեալ տիպար մ'էր մարդասիրութեան, ազնիւ եւ ազնւական, ցաւակից էր միշտ մեզի եւ շատ անգամներ ազդու դիմումներ ըրաւ թուրք նախարարներու մօտ, աղաչելով՝ որ Հայերու վրա կատարուած անլուր եւ անօրինակ անդթութիւնները դադարէին:

Ըստ այսմ՝ մեր համագրային տառապանքներուն դարման ճարելու հետամուտ եղողներուն մէջ, գլխաւորներէն է, ըստ իս, Monseigneur Dolci-ն, այդ պատուական եկեղեցականը, որ Աւետարանի ճշմարիտ պատուիրանապահն եղաւ եւ անոր քարոզներուն անկեղծ դործագիրը:

Օր մը սակայն, մտերմական տեսակցութեան միջոցին, շա՛տ փափկութեամբ զգացուց ինձ, թէ հարկ էր՝ զի մեր Պատրիարքը շնորհակալութեան գո՛նէ երկտող մը ուղերձէր Սրբազան Պապին:

Տոլչիի այս առաջարկը թէեւ խորհրդածութեան կարօտ էր, այնուամենայնիւ ես համարձակեցայ իսկոյն խոստանալ գոհացում տալ

անոր, հակառակ որ՝ վստահ չէի, թէ Հայոց Պատրիարքը պիտի ուզէ՞ր իր ստորագրութիւնը ուղղել Վատիկան:

Կասկածս պարապը ելաւ. Չաւէն Պատրիարք չթերացաւ կատարելու քաղաքավարական այդ պարտականութիւնը, երբ 25 Նոյեմբ. 1915 երեկոյին, իր բնակարանը երթալով, հարցը ներկայացուցի իրեն:

Քանի մը օր յետոյ, զիս իր մօտ կանչելով՝ ինձ տուաւ Փրանսերէն նամակ մը, շատ լաւ կերպով շարադրուած, որով Պատրիարքը շնորհակալութիւններ կը յայտնէր Սրբազան Պապին, հայ տարագիրներուն եւ չարչարանքի ենթակայ եղող աղաւթիներու համար ունեցած իր հայրական հոգածութեանը համար:

Պատրիարքին այս նամակը ես անձամբ տարի յանձնեցի Մոնսէնէօր Տոլչիին՝ 1915 Դեկտ. 21-ին, որուն համար շատ դո՛հ եղաւ, եւ բաւական ժամանակ անցնելէ յետոյ, օր մը հրաւիրեց զիս եւ ըսաւ, թէ Սրբազան Պապը Օրհնութեան Գիր մը յղած է ինձ այս առթիւ:

Մոնսէնէօր Տոլչիին այդ գիրը պահեց իր ըովը, եւ միայն 1919 Յունվար 3-ին, անձամբ տունս դալով՝ յանձնեց ինձ զայն, զոր կը պահեմ՝ իրրեւ թանգ նէրը այդ մեծ Մարդասէր – Հայասէրին: Սրբազան Պապէն եկած գիրը կը կրէր՝ 10 Մարտ 1916 թւականը:

\*\*\*

Սակայն, Չաւէն Պատրիարքին իմ միջոցաւ ըրած դիմումները այսքան չէին, եղան դեռ ուրիշներ ալ:

Գացի Ահմէտ Բիգա պէյին, որ վաղեմի բարեկամս էր, եւ զոր ճանչցած էի ուսանողութեանս միջոցին, Բարիդ, 1882 թւին եւ որուն հայերէն գիր գրել սորվեցուցած էի. Ծերակոյտի նախագահ էր. խոստացաւ օգտակար ըլլալ դժբախտ Հայութեան, բայց բա՛ն մը, բա՛ն մը չկրցաւ ընել:

Գիմեցի նաեւ, բժիշկ Տոքթ. Պաղիլ Խանի միջոցաւ, պարսկական դեսպան Մուհամմէտ Գաճար Խանին. սա ալ շատ խոստացաւ, խոստում խոստումի վրա բերնէն առատօրէն հոսեցուց, բայց Հայաջարդը կը շարունակէր, եւ մեր աշխատութիւնները եղան գուր ջանք, անօգուտ վաստակ:

1915 տխրառիթ, սգազդեցիկ վատշուէր տարին բոլորեցաւ, ո՛չ մէկ դարման կարելի չեղաւ ձեռք բերել ի նպաստ Հայերու, երբ, յանկա՛րձ, 1916-ին, թուրք կառավարութիւնը ջնջեց Կ. Պոլսոյ կամ աւելի՛ թուրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը, զայն կեղրոնացուց Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսին վրա եւ անոր իբրեւ փոխանորդ նը-

չանակել տւաւ Գաբրիէլ Եպ. Ճէվահիրճեանը, որոշելով նաեւ աքսորել Չաւէն Պատրիարքը, որ իսկոյն ոստիկանական հսկողութեան տակ առնւեցաւ եւ Պատրիարքարանն ալ կնքւեցաւ ներքին գործերու նախարարութեան կողմէ :

Հակառակ այս խիստ հսկողութեան եւ տեսակ մը բանտարկութեան, Չաւէն Պատրիարք կրցաւ մէկ օր միջոց գտնել եւ ինձ հասցնել նամակ մը, որով՝ կը խնդրէր՝ որ ես դիմեմ բարեկամներու եւ անոնց պաշտպանութիւնը հայցեմ իր կեանքին փրկութեանը համար :

Ահաւասիկ այդ նամակը նոյնութեամբ, որ կը կրէ 1916 Օգոստ. 10 թւականը, եւ որուն իսկականը տւած եմ ի պահ՝ Բարիզի Նուպարեան Մատենադարանին :

« Մեծայարգ Տօքթոր ,

« Լսած էք անշուշտ որ անցեալ Կիրակի օրը ժամը 4-ին երեք « ոստիկաններով ոստիկանութեան դուռը առաջնորդւեցայ, ուր քա- « դաքային բաժնի տեսուչներէն մին յանուն ոստիկանութեան Ընդհ. « Տեսչին (որ այն ատեն ներքին գործոց նախարարին սենեակէն այս « հրահանգը տւած էր) ազդարարեց ինձ թէ 2 - 3 օրէն պէտք է Պաղ- « տատ մեկնիմ :

« Ես դիտել տւի թէ՛ քանի որ Պատրիարքարանը Ոստիկանու- « թեան Ընդհանուր Տեսչին ու Կրօնից Տեսչէն զատ ես ալ կնքած եմ , « Արդարութեան գործոց նախարարին հրամանագրին համաձայն , « հարկ չէ՞ որ սպասեմ մինչեւ որ Կաթողիկոսին Պոլսոյ փոխանորդը « նշանակւի եւ անոր յանձնեմ ամէն բան : Եւ որովհետեւ Ոստիկանու- « թեան պետը այդ պահուն ներքին գործոց նախարարին քովն էր , « կարելի չեղաւ անոր հետ թէլէֆօնով խօսիլ, ուստի յանձնարարեցի « որ յաջորդ օրը՝ կա՛մ այս մասին անոր հրահանգը ինձի հաղորդւի « եւ կամ ժամագրութիւն մը տայ ինձի որ իրեն հետ խօսիմ : Եւ « դարձեալ ոստիկանի մը հսկողութեամբ դարձայ տուն, որ ցայսօր « ոստիկանաց հսկողութեան տակ է :

« Այսօր հինգերորդ օրն է եւ տակաւին այս մասին ո՛չ մի պա- « տասխան չտրւեցաւ ինձի, հակառակ քանիցս ըրած դիմումներուս « գործակատարին միջոցաւ :

« Կիմանամ թէ Կաթողիկոսը ընդունած է իրեն տրւած պաշտօնը « և փոխանորդն ալ նշանակած է : Պաշտօնական հեռագիր եկած է ե- « դեր, բայց իրեն հեռագիրները չեն հասած դեռ :

« Ինչպէս կը տեսնուի, կառավարութիւնը զիս Պաղտատ աքսորել « որոշած է, վերջին հարւած մըն ալ տալու համար Հայ Ազգին : Այն-

« պիտի ժամանակ մը՝ երբ Հալէպէն Պաղտատ եղած ընդարձակ ա- « նապատին մէջէն Հայ մը մահը աչք առնելով միայն կրնայ անցնիլ, « դիտեմ թէ ինձի պէս եկեղեցական մը ամէն պարագայի մէջ ողջ չի « կրնար մնալ, եթէ նոյնիսկ կառավարութեան այս կարգադրութիւնը « դաւադրութիւն մը չէ եւ կասկած չկայ թէ այսպէս է :

« Երբեք չպիտի վարանէի երբ այսպիսի առիթ մը ներկայանար « ինձի աբիւնս խառնելու իմ հարիւրաւոր ժողովրդեանս արեան , « Միջագետաց անապատներուն մէջ, եթէ այս արարքը մտածել չտար « ինձի թէ Թուրքիոյ Հայութեան համար եւ մանաւանդ այդ ճամ- « բուն երկայնքը ցրւած հայ գաղթականութեան համար սոսկալի եւ « աղետալի սրտաբեկում մը առաջ բերէ : Ուստի, ի սէր այս տառա- « պող եւ մշտահալած ժողովրդեան, որուն Դուք ալ կը պատկանիք, « կը խնդրեմ որ բարեկամաց ուշադրութիւնը եւ անոնց աղղու միջ- « նորդութիւնը խնդրէք, հայ ժողովրդեան այս դառն բաժակը խնա- « յելու համար :

Ձերդ սիրով բարեկամը  
ՋԱԻՆ ԱՐՔԵՊ .

« 1916 Օգոստ. 10

Այս նամակը առնելուս պէս, իսկոյն թարգմանեցի ու դացի հա- « դորդել նախ զայն իշխան Մէծիտ էֆէնտիին եւ ապա Տուչի Սրբազա- « նին, աղաչելով՝ որ Պատրիարքին կեանքին գէթ խնայէր :

Չաւէն Պատրիարք աքսորւեցաւ, բայց ի պատիւ այս աղնւաղբի անձերուն, պէտք է բարձրաձայն ըսել, թէ անվտանգ հասաւ նա Պաղ- « տատ, ուր մնաց մինչեւ Փետրվար 1919 :

Թէ ի՞նչ կերպ ընթացք ունեցան սոյն անձերը, պաշտպանելու Պատրիարքին անձը, տեղեկութիւն չունիմ, բայց դիտեմ՝ որ հարկ ե- « դածը ընել ջանացին առ որ անկ էր :

Բայց թողունք այս ամենատխուր դառն յիշատակներով լի տա- « րին, 1915 - 1916 վատչուէր թւականը, դառնանք 1918-ին, Չինադա- « դարի օրերուն, յոյսերու, ոսկի երազներու խնծղալից տարիին, եւ տեսնենք թէ ի՞նչպէս անցան մեր օրերը :

\*\*

Հայաստանի Պատուիրակութեան Կ. Պոլսէն մեկնելէն յետոյ, ա- « մէն օր, ամէն վայրկեան խոր անձկութեամբ կը սպասէինք, որ՝ լա- « ւագոյն լուրերը հասնէին, Հայկական նորածին Հանրապետութեան

մասին. «Զանգ», «Հորիզոն» թերթերը կուգային, ասոնք թէև մեծ բաներ մը դեռ չէին աւետեր, սակայն դարձեալ մեր սիրտերը խանդավառութեամբ կը սարարէին եւ ասպագայի քաղցը յոյսերով կը լեցնէին, ուստի կը շարունակէինք մերովսանն ընել կարելին, որպէս զի տիրող թշուառութիւնները դէթ մասամբ մեղմելու համար կազմած մարմինները կանոնաւոր եւ արդիւնաւոր գործունէութիւն ունենային:

«Հայ Բժշկական Միութիւն»-ը, «Լիկա»-ն եւ «Հայ Կարմիր Խաչ»-ը, որոնք երեքին ալ նախագահութիւնը ինձ էր վիճակած, մեծ թափով, անդու կաշխատէին:

Առաջինը՝ իր սովորական - դիտական ժողովները գումարելով հանդերձ, կը հաստատէր հիւանդապահութեան դասախօսութիւններ, որոնք երկսեռ ունկնդիրներու հոծ բազմութեան առջեւ տեղի կունենային թէ՛ Բերայի, Սկիւտարի եւ թէ՛ Քուժ - Քարուի մէջ՝ անձնէր ու հայրենասէր բժիշկներու կողմէ:

Հպարտութեամբ կը յատնեմ, թէ այս դասերը խիստ չահեկան եղան եւ մեծ յաջողութիւն ունեցան, ա՛յն աստիճանի՝ որ թուրք պաշտօնական կարեւոր անձեր ու բժիշկներ քանի՛ցս եկան ներկայ ըլլալ, ասպարտասանել գովութեան ճառեր եւ իրենց հիացումը հրապարակաւ յայտնել կազմակերպութեան կանոնաւորութեանը մասին: \*)

Բացի ունկնդիր ժողովուրդէն՝ հայ օրիորդներ եւ երիտասարդներ կանոնաւոր աշակերտութիւն ունեցան, յարատեւող եղան դասերուն, եւ երբ շրջանը բոլորեցաւ, հրապարակային հարցաքննութիւններու ենթարկեցան ասոնք, եւ քաջ հանդիսացողին տրեցաւ վկայական:

Վկայականները, որոնք հայերէն եւ ֆրանսերէն լեզուով տպւած էին, Հայ Բժշկական Միութեան կնիքը եւ Դիւանին ստորադրութիւնը կրելով հանդերձ, վաւերացեցան նաեւ Կ. Պոլսոյ Ֆրանսական Կարմիր Խաչի կողմէն եւ ստացողները՝ մեծ մասամբ ՀԻԽՍՆԻՍՊԱՀՈՒՀԻՆԵՐ, կրցան ասպարեւստը խիստ ձեռնհասօրէն ի գործ դնել հիւանդանոցներու մէջ եւ կամ այլուր:

Հայ Բժշկական Միութեան հետ զուգընթացաբար, Հայ Կարմիր Խաչը կը շարունակէր միշտ իր գործունէութիւնը, զոր յիշած եմ նախապէս, եւ որուն անդրադառնալ աւելորդ կը համարեմ:

\*) Այս դասերուն ծրագիրը բուրբերէնի քարգմանեցաւ եւ այդ ծրագրին համաձայն՝ բուրբ բժիշկներն ալ սկսան յետոյ նմանօրինակ դասախօսութիւններու:  
Տ. Վ. Յ. Թ.

Կարով «Լիկա»-ին, որ Ազգ. Պատրիարքարանի խանգարած վիճակին կենսունակութիւն տալու պատճառ եղած էր, կը յարատեւէր ո՛չ միայն Ազգ. Վարչութեան հետ խորհրդակցական ժողովներ ունենալ, այլ եւ գումարել Համազգային ընդհանուր ժողովներ, եւ միւսնոյն ժամանակ ալ, յոյն եւ հրեայ հասարակութիւններու վարչական մարմիններուն հետ յարաբերութիւններ հաստատել՝ համաձայնութեամբ գործելու համար միջազգային կարգ մը խնդիրներու մէջ եւ զեսպանատուներու մօտ կատարելի դիմումներու միջոցին:

Եւ որչա՛փ երկար է դեռ «Լիկա»-ի ըրածներուն պատմութիւնը, զոր մանրամասնելու պաշտօնը Յ. Ճ. Սիրունիին թողուով՝ ես կը բաւականանամ միայն յայտնել, թէ ստոր վերաբերումով մը վարձատրեցաւ այն ասպար, մեր Ազգ. Վարչութեանէն, որ «Լիկա»-ի շնորհիւ թողած էր իր կիսամեռութեան ձորձը:



«Լիկա»-ն, որ 1918 նոյեմբեր 8-ին գումարեցաւ առաջին անգամ եօթ կամ ութ անձերով, յաճախակի ժողովներ ունեցաւ մինչեւ դեկտեմբերի վերջ, ու նաեւ՝ մինչեւ 1919-ի սկիզբը: Այդ ժողովները տեղի կունենային կամ Ղալաթիա, Հմայեակ Խոսրովեանի պաշտօնատեղին, կամ Բերա՝ Ս. Երրորդութեան խորհրդարանը եւ ընա՛ւ ասպարդիւն չէին ըլլար:

Այլ սակայն՝ երբ Կրօնական ու Քաղաքական ժողովներ սկսան շնորհիւ «Լիկա»-ի, տակաւ շուրջ քաշել կամ, տեղն է ըսել, ՅԱՄԱՐԻՂ, յա՛նկարծ իրենց կողմէն ծայր տաւ զգուշաւորութիւն մը դէպի «Լիկա». անկարեւոր զայն սկսան համարել, ուրանալ անոր կարեւոր ծառայութիւնները, արդիւնք՝ անձնանէր աշխատութեան եւ դրական հեղինակութեան, որուն արձագանքը չէր յասպղէր հասնիլ Բարիկ, ուրկէ անմիջապէս Գարբիէլ Նորատունկեան եւ Արշակ Չօպանեան ինձ դիմելով՝ ստույգ տեղեկութիւններ կուղէին Կ. Պոլսոյ ազգային գործերու մասին:

1918-ի դեկտեմբեր ամսի մէջ էր այս, եւ ես չէի վարաներ, մեծ համբերութեամբ երկար նամակներ գրել սոյն բարեկամներուս, որոնք պիտի հաղորդէին Թրքահայ Դատին պաշտպանութեանը համար կազմուած բարեկեան այն ժողովին, որուն լիազօր նախագահն էր Պօղոս Վաչա Նուպար, ընտրուած Հայոց ընդհանուր Հայրապետ Գէորգ Ե. Կաթողիկոսէն:

Մինչ այս մինչ այն՝ «Լիկա»-ն իմացաւ, թէ Գ. Նորատունկեան



Թո՛ղ խօսի մէկ օր այդ մասին . ինձ լռութիւն է անկ , մանաւանդ այժմ , որ 1923-էն ի վեր Բարիզ ապրելովս՝ մօտէն տեղեկացած եմ Դուրեան – Տէր Յակոբեան առաքելութեան գործունէութեան մանրամասնութիւններուն :

Սպասելով՝ որ Բարիզ զացող պատգամաւորութիւնը ուրախառիթ լուրեր հասցնէր Կ . Պոլսոյ Հայութեան ականջին , մենք կը շարունակէինք սկսած բարեգործական աշխատութիւնները , միշտ երազելով նորածին Հայաստանը եւ ամէն վայրկեան անոր վերջնական ազատագրութեան անձուկը ունենալով , երբ աջէն – ձախէն տխուր տարածայնութիւններ սկսան ահա լսել :

1919 յունւարի 13-ն էր . նոյն օրը Աւետիս Ահարոնեան ու Տիկիւնը , ուրիշներու հետ Հայաստանէն կը վերադառնային Կ . Պոլիս , գնալու համար Բարիզ , ներկայ ըլլալու խաղաղութեան մեծ ժողովին , որ պիտի որոշէր նաեւ ամբողջ Հայաստանի գոյավիճակը :

Հազի՛ւ թէ՛ Ահարոնեանի հետ տեսակցութիւններ ունենալով՝ Հայաստանի մասին քիչ ու շատ միտքարիչ լուրեր առած էի , եւ ահա կը ստանայի պատմագէտ Բարսիսեանէն (Լէօ) շա՛տ տխուր նամակ մը , որ կը կրէր մարտ 30 (Ն . Տ .) 1919 թւականը , եւ որուն մէջ կը խնդրէր Լէօ , որ Ղարաբաղի գէշ կացութեանը համար ճար մը խորհէինք :

Ահա՛ այդ նամակը նոյնութեամբ .

« Իմ շատ սիրելի բարեկամ Դոկտոր .

« Խնդրեմ յատկապէս ուշադրութիւն դարձնէ՛ք Դուք եւ Կ . Պոլսոյ « սի մեր բոլոր ազգայինները հետեւեալ կարեւոր հարցի վրա :

« Այս բապէիս նգնաժամի մէջ է իմ հայրենիքը , Ղարաբաղը , « հայկական այդ քաղաքի Ղարաբաղը , որ ուզում է միանալ Հայաստանի Հանրապետութեան , բայց Բագուի թուրք կառավարութիւնն « աշխատում է բռնութեամբ իրան հպատակեցնել , եւ ի նախտինս « քաղաքակրթեալ եւ լուսաւոր Անգլիայի , այդ վայրենի բռնութիւնը « պաշտպանութիւն է գտնում անգլիական զօրքերի հրամանատար « ԹՕՄՍՕՆի կողմից : Յուզած է այստեղի ամբողջ Հայութիւնը , կա- « մովին անձնատրութիւն , ի հարկէ , չի լինի եւ իմ ձեռքը դողալով է « գրում այս տողերը , գո՛ւցէ անգլիական սրիներն այժմ ծակոտեն « դժբախտ Հայի մարմինը : Պէտք է ասեմ , որ Անգլիացիների այստեղ « գալը յատկապէս եւ միմիայն Հայերի համար մի երկնառաք պար- « գեւ էր , հրմանաբի ու միտքարութեան մի պատնառ : Այժմ ո՛րպի-


« սի հիասքափութիւն : Երեւակայեցէ՛ք , սիրելի բարեկամ , մի ժողո- « վուրդ , որ հրաշակերտել է Տաթևի եւ Գանձասարի վանքերը , պի- « տի վիզ մկէ դեռ բարբարիկ մի ժողովուրդի առաջ՝ որ դեռ վաչկա- « տուն դրութիւնից չէ դուրս եկել : Ահա կը խնդրէի , որ Կ . Պոլսի « մամուլը եւ ազդեցութիւն ունեցող շրջանները խօսէին այս մասին , « գո՛ւցէ այդտեղի անգլիական հրամանատարութիւնն ազդւի եւ ազ- « դէ այստեղիին վրա :

« Ջերմագին ողջոյններով  
Ձերդ

« Թիֆլիս , Մարտ 30 (Ն . Տ .) , 1919 Ա . ԲԱԲԱՆԱՆԵԱՆ

Բարսիսեանի այս նամակը խսկոյն տարի եւ Կ . Պոլսի ամերիկե- « ան դեսպանատան առաջին թարգման՝ Արշակ Շմաւոնեան՝ ողբաց- « եալ բարեկամիս , որ զայն թարգմանելով ներկայացուց զեսպան Մօր- « կընթառուի : Քանի մը շարքս յետոյ տեսանք՝ որ Լէօի յիշած անգլիա- « ցի հրամանատարը՝ Թօմսօն՝ կերթայ գէպի իւր երկիրը , բայց բա- « ւական ժամանակ մնաց Կ . Պոլիս եւ լաւ բոսկէներ անցուց թուրք հա- « րէմներու գիրկը . . . :

Բարիզ  
( Շարունակելի )



# Հայ - Հայկական Բանակցութիւնները

## ՆԻՍՏ ՎԵՑԵՐՈՐԴ

Վեցերորդ նիստը տեղի ունեցաւ նոյեմբ. 3-ին, առաւ. ժամը 11-ին:

Ներկայ էին բոլոր անդամները:

Նախագահում էր Պ. Ս. Վրացեան:

Կարգացւեց նախորդ նիստի արձանագրութիւնը, որոշեց ճշտել եւ լրացնել այդ արձանագրութեան մի քանի տեղերը: Միեւնոյն ժամանակ որոշեց կցել այդ արձանագրութեան այն յայտարարութիւնը, որ խոստացել էր ներկայացնել Պ. Մ. Յարութիւնեանը, իրենց երեքի ստորագրութիւններով, եւ որ պարունակելու է ամփոփւած ձեւով իրենց առաջարկութիւնները եւ թէ Պ. Թէքէեանի կողմից այդ գրութեան ներկայացելիք պատասխանը, նոյնպէս իրենց ստորագրութիւններով:

Դրանից յետոյ նիստը փակեց: Յաջորդ նիստը կը հրաւիրւի, երբ այդ երկու գրութիւնները ստացւած կը լինեն:

Ստորագրւած բոլարի կողմից.

### ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՓՈՆԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ապա, մինչեւ յաջորդ նիստը, հետեւեալ գրութիւններն են փոխանակուած բանակցող երկու կողմերի միջեւ:

Պատասխան Ազգ. Պատւիրակութեան առաջարկութիւններին՝

Միացեալ Հայաստանի Պարլամենտի, Կառավարութեան

եւ Պատւիրակութեան վերակազմութեան մասին

Քննելով Ազգ. Պատւիրակութեան ներկայացրած առաջարկները Ամբողջական Հայաստանի Պարլամենտի, Կառավարութեան եւ Պատ-

ւիրակութեան վերակազմութեան մասին՝ մենք ամենից առաջ նկատում ենք, որ նրանց մէջ երկուութիւն կայ: Մի կողմից այդ առաջարկութիւնները հիմնւած են հատուածական, միւս կողմից կուսակցական տեսակէտի վրա: Հատուածական տեսակէտով պահանջուած է յիշեալ պետական մարմինների մէջ կէս առ կէս ներկայացուցչութիւն երկու հատուածների. կուսակցական տեսակէտով պահանջուած է Դաշնակցութեան փոքրամասնութիւն՝ Կառավարութեան եւ Պատւիրակութեան մէջ եւ ժողովրդական քէարկութեամբ ընտրւած ներկայ Պարլամենտի լուծումը: Այնուհետեւ, Ազգային Պատւիրակութեան կողմից ուղարկւած բանակցողների կողմը եւ բերած առաջարկները այն սպաւորութիւնն են թողնում, որ մեզ հետ բանակցում է ոչ թէ Արեւմտեան հայութեան մէկ մասին ներկայացուցչութիւնը, այլ առանձնապէս Ռամկավար եւ ժողովրդական կուսակցութիւնները: Այսպէս, Կառավարութեան կողմի նկատմամբ յօդ. 3-ում ասուած է, որ նրա կէսը պիտի կազմւած լինի Ռամկավար եւ Հայ ժողովրդական կուսակցութեան անդամներից: Միւս կողմից, Ազգային Պատւիրակութիւնը, որ կազմւած է երկու Դաշնակցական եւ չորս ոչ - դաշնակցական լինելը, որ իբրեւ բանակցող ուղարկել է միայն մի կողմի կան անդամներից, իբրեւ բանակցող ուղարկել է միայն մի կողմի ներկայացուցիչներից, մինչդեռ հէնց դործի յաջողութեան համար բնական կը լինէր, որ իբրեւ բանակցողներ ուղարկէին բոլոր հոսանքներից, որպէսզի Ազգային Պատւիրակութիւնը հանդէս գար իբրեւ ներկայացուցչութիւն ամբողջ արեւմտահայ ժողովրդի եւ արտարեւ ներկայացուցչութիւնը չստացւէր, թէ հետապնդւում քին աշխարհում այն սպաւորութիւնը չստացւէր, թէ հետապնդւում են կուսակցական նպատակներ: Ապա, բանակցողների կազմը այստեղ եւ լրացնելու համար հրաւիրել է իբրեւ երրորդ անգամ ոչ այլ ոք, քան Պրն. Սամսոն Յարութիւնեանը, Հայ ժողովրդական կուսակցութեան պարագլուխը եւ հիմնադիրը, Հանրապետութեան ներկայ Պարլամենտի եւ Կառավարութեան դէմ կռիւ մղող ամենադործոն ան-Պարլամենտի եւ Կառավարութեան դէմ կռիւ մղող ամենադործոն ան-Պարլամենտի մէկը: Այս սակայն, արդեւ չպիտի հանդիսանայ, որ մեր բաձերից մէկը: Այս պահան, որովհետեւ մեզ զբաղեցնողը ո'չ թէ նակցութիւններն առաջ գնան, որովհետեւ մեզ զբաղեցնողը ո'չ թէ անձերն են կամ կուսակցական նպատակները, այլ հայ ժողովրդի շահն են եւ բուն ձգտումը՝ Ամբողջական Հայաստանը իրականացած տեսնել:

Աչքի առաջ ունենալով առարկայական պայմանները, ինչպէս նա-եւ հայ ժողովրդի բազմիցս արտայայտուած կամքը, մենք կարծում ենք, որ Ամբողջական Հայաստանի իրականացման համար կարելի են հետեւեալ փոփոխութիւններն ու լրացումները Հայաստանի Պարլա-հետեւեալ փոփոխութիւններն ու լրացումները Հայաստանի Պարլա-մենտի, Կառավարութեան եւ Պատւիրակութեան մէջ:

Ամենից առաջ, պէտք է պետական բոլոր մարմինների մէջ արեւմտեան հայերին ապահովել ոչ միայն կէսը, ինչպէս Ազգային Պատւիրակութիւնն է առաջարկում, այլ առհասարակ ամէն խտրութիւն արեւմտահայերի եւ արեւելահայերի միջեւ վերացնել: Իսկ մենք կուզէինք, որ նոքա ամէն տեղ լինեն կէսից էլ աւելի: Սակայն, անարդար ենք գտնում Ազգային Պատւիրակութեան կուսակցական պահանջները, որ կարելի չէ բաւարարել դժուած չափով, քանի որ ուժերի իրական փոխարարբերութիւնները բոլորովին այլ բան են թելադրում: Յայտնի է, որ մէկից աւելի անգամ կատարւած ընտրութիւնների ժամանակ Դաշնակցութիւնը ստացել է հայ ժողովրդի ձայների ճշնշող մեծամասնութիւնը, ինչ որ չի կարելի անտես առնել կառավարութիւն կազմելու միջոցին: Այս է պատճառը, որ մենք պատրաստ ենք բաւարարելու Ազգային Պատւիրակութեան բոլոր առաջարկութիւնները, սակայն հնարաւոր չենք համարում դոհացում տալ նրա կուսակցական պահանջներին:

Ազգային Պատւիրակութեան առաջադրած գլխաւոր կէտերի վերաբերմամբ մեր տեսակէտը հետեւեալն է.—

1.— Փարիզի Պատւիրակութիւնը կազմել առանց հատուածական եւ կուսակցական խտրութեան. ցանկալի է որ արեւմտահայերը այնտեղ մեծամասնութիւն լինեն, իսկ կուսակցական տեսակէտից Դաշնակցութիւնը կարող է լինել փոքրամասնութիւն: Այսպէս, եթէ Պատւիրակութիւնը կազմւած է երեք անդամից, Դաշնակցութիւնը կը տայ մէկ անդամ, իսկ եթէ հինգից՝ երկու անգամ: Երկու դէպքումն էլ Պատւիրակութեան մէկ անդամը պիտի լինի անկուսակցական: Համաձայն ենք, որ Պրն. Պօղոս Նուբարը լինի Միացեալ Պատւիրակութեան նախագահ, սակայն Պատւիրակութիւնը պիտի գործէ Հայաստանի Հանրապետական Կառավարութեան հրահանգներով:

2.— Կառավարութեան կազմի մէջ Դաշնակցութիւնը պիտի ունենայ կէսից մէկ անգամ աւելի: — Պատւիրակութեան նախագահը եւ Վարչապետը պիտի լինեն տարբեր անձեր. թէ՛ վարչապետը եւ թէ՛ բոլոր նախարարները պիտի մնան երկրում եւ մեր երկրում գործեն: Անընդունելի է Ազգային Պատւիրակութեան ներկայացուցիչների առաջարկը, որ Պօղոս Նուբարին տրւի Վարչապետութիւն, թէկուց իբրեւ լոկ տիտղոս:

3.— Ներկայ Պարլամենտի լուծման մասին խօսք լինել չի կարող, նա պէտք է շարունակէ իր զբաղմունքները: Անհնարին է նաեւ նրան զազար տալ մինչեւ Հանրապետութեան առաջին բիւզջի քննութեան

աւարտումը: Համամիտ ենք, եւ դա մեր փափաքն է, որ Պարլամենտի արեւմտահայ անդամների թիւը հաւասարեցւի արեւելահայերին: Կրճատել պատգամաւորների այժմեան թիւը իրաւական հիմունքներով հնարաւոր չէ: Արեւմտահայ նոր պատգամաւորների մուտքը Պարլամենտի մէջ պէտք է կատարել լրացուցիչ ընտրութեամբ: Մենք կարծում ենք, որ ընտրութիւններ պիտի նշանակւին Հայաստանի այն մասերում, ուր դեռեւս ընտրութիւն չի եղել: Ինչպէս օրինակ, Ղարսի շրջանը, Կիլիկիա եւ արտասահմանեան գաղութներում, այսինքն՝ Պոլիս, Բաղաններ, Եգիպտոս, Ամերիկա, Սեւ Ծովի ափերը եւ այլ տեղեր, ուր հնարաւոր է: Ընտրութիւնները պիտի լինեն Հայաստանի Հանրապետութեան օրէնքներով, որոնք պէտք է յարմարեցւին տեղական պայմաններին: Արեւմտահայերի վերաբերմամբ կարելի է ընդունել, որ մի պատգամաւոր ընտրելի ոչ թէ 20,000-ից, ինչպէս եղել է Հայաստանի Պարլամենտի ընտրութիւնը, այլ աւելի պակաս ազգաբնակչութիւնից: Նկատելով Պարլամենտի անդամների այժմեան կազմը հատուածական տեսակէտից, անհրաժեշտ կը լինի ընտրել եւս 51 պատգամաւոր, որով հատուածները թւով կը հաւասարւեն իրար, իսկ Պարլամենտի անդամների ընդհանուր թիւը կը դառնայ 131:

4.— Գալով Ազգային Պատւիրակութեան վերջին առաջարկին, որ Հայաստանի Հանրապետութիւնը իրեն միացած յայտարարի անկախ թիւրքաց Հայաստանին, սկզբունքային ո եւ է առարկութիւն չունինք, սակայն, չենք տեսնում այն ձեւը, որ քաղաքական ստեղծւած պայմաններում կարող էր հնարաւոր դարձնել այդ ակտը: Ընդհակառակը, քաղաքական դէպքերի դասաւորումով, Հայաստանի ներկայ Հանրապետութիւնը դարձել է յենարանը, որի վրա կանգնած՝ հայ ժողովուրդը պիտի շարունակէ Հայաստանի ամբողջացման գործը: Մենք չենք կարողանում երեւակայել Հայաստան առանց Տաճկահայաստանի կամ առանց Ռուսահայաստանի:

Ահաւասիկ այն փոփոխումներն ու լրացումները, որ մենք անում ենք Ազգային Պատւիրակութեան առաջարկութիւնների նկատմամբ:

Ս. ՎՐԱՑԵԱՆ  
ՄԱՐՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ  
Շ. ՄԻՍԱԲԵԱՆ

4-ին Նոյեմբերի 1919 թ.  
Երեւան

Փոխ – պատասխան Հանրապետութեան Կառավարութեան  
բանակցողներու նռնիւմեր 4 ք-ականի ներկայացած  
պատասխանագրին

Պատասխանելով Ամբողջական Հայաստանի Խորհրդարանի, Կառավարութեան եւ Պատերազանութեան վերակազմութեան մասին մեր առաջարկներուն դէմ հանած առարկութիւններուն՝ կը յայտնենք.

Ա. – Ազգային Պատերազանութիւնը Մայիս 28-ի ակտին օրինական եւ քաղաքական սխալը դարձանելու համար առաքելութիւն մը զըրկել որոշեց — փոխանակ պարզապէս հրապարակաւ բողոքելու անոր դէմ — միմիայն տեղի տալով Հանրապետութեան Պատերազանութեան պնդումին, եւ այդ առաքելութիւնը զրկեց միմիայն այն ատեն, երբ Պրն. Խատիսեան պատասխանելով Պրն. Ահարոնեանի հեռագրին — ուր յայտնուած էր, թէ «արեւմտահայութեան ներկայացուցչութիւնն եղող Ազգային Պատերազանութիւնը» անհամաձայն է Մայիս 28-ի ակտին եւ առաքելութիւն մը պիտի զրկէ անոր սխալները դարձանելու համար — բարի զալուստ մաղթեց առաքելութեան եւ խնդրեց փութացնել անոր առաքումը: Այդ իսկ պատասխանով Հանրապետութեան Կառավարութիւնը կընդունէր այն, ինչ որ հիմը կը կազմէ բանակցութիւններուն, այսինքն թէ Ազգ. Պատերազանութիւնը քաղաքական օրինակոր ներկայացուցչութիւնն է ամբողջ արեւմտահայութեան եւ ոչ թէ արեւմտահայութեան մէկ հատուածին եւ կամ անոր մէջ գործող այս կամ այն կուսակցութեան: Անընդունելի է, ուրեմն, որ առաքելութեան Երեւան հասնելէն վերջ առարկութիւններ յարուցին անոր եւ գայն զրկող մարմինին բնոյթին եւ իրաւասութիւններուն մասին:

Բ. – Առարկութիւնները, եթէ վերը յիշուած պատճառներով անընդունելի չըլլային, պէտք էր, որ յարուցէին բանակցութիւններու սկիզբէն առաջ, երբ առաքելութիւնն իր առաջարկութիւնները, որոնց վրա կը հիմնւին առարկութիւնները, գրաւոր ներկայացուց, եւ ոչ թէ վարելէ վերջ շարժաթ մը տեսող բանակցութիւններ, որոնց ընթացքին մեզ հետ բանակցողները ընդունած էին, ինչպէս կապացուցանեն արձանագրութիւնները, Ազգ. Պատերազանութեան եւ, հետեւաբար, իր զրկած առաքելութեան ամբողջ արեւմտահայութեան ներկայացուցչութիւնն ըլլալու հանդամանքը:

Այս հիմնական դիտողութիւնները ընելէ վերջ, մենք կը յայտնենք հետեւեալը. —

Թէ մասնանշուած երկուութիւնը, եթէ երկուութիւն կայ, կը բխէ նոյնինքն ներկայ Կառավարութեան եւ Խորհրդարանի արհեստական եղանակով ստեղծուած պատկերէն, որուն փոփոխումը նպատակն իսկ կը կազմէ ներկայ բանակցութիւններուն, ինչպէս այդ ընդունած են բանակցող երկու կողմերն ալ: Արդարեւ, Ազգային Պատերազանութիւնը, որ ամբողջ արեւմտահայութիւնը կը ներկայացնէ, երբ ինքզինք դտաւ Մայիս 28-ի ակտին առջեւ, գայն ըննելով տեսաւ, որ այդ ակտը կարելի եղած էր կատարել միմիայն արհեստական կերպով Խորհրդարան մտցած կուսակցական մեծամասնութեան շնորհիւ, եւ այդ ակտին յաջորդող բոլոր իրադարձութիւնները, ինչպէս նոր միատարր խորհրդարանի ընտրութիւնն եւ միատարր գահալիճի կազմութիւնն, հետեւանք էին այդ ակտին սպորինութեան եւ հնարաւոր եղած պիտի չըլլային, եթէ Ազգ. Պատերազանութիւնը ատենին կոչուած ըլլար իր համաձայնութիւնը տալու եւ մասնակցելու այդ ակտին կատարման, յանուն բովանդակ արեւմտահայութեան, եւ եթէ, միւս կողմէ, նոյն ինքն այդ ակտին սպորինութեան պատճառաւ, Հայաստանի ներկայ սահմաններուն մէջ ապրող ժողովուրդին մէկ մեծ մասն ալ, լինի իր արեւելահայ եւ արեւմտահայ երեք քաղաքական կազմակերպութիւններուն (Ժողովրդական, Սօցիալ – Դեմօկրատ, Ռամկավար) պաշտօնապէս արտայայտուած բողոքով, կամ լինի անհատապէս, կատարած գործողութիւններէն բոլորովին հեռու եւ Խորհրդարանի ու Կառավարութեան ներկայ կազմին մէջ անմասն մնացած չըլլար: Ազգ. Պատերազանութիւնը երբ, յանուն հայ ժողովրդի շահին եւ Հանրապետութեան Փարիզի Պատերազանութեան խընդրդի շահին եւ Հանրապետութեան Պարիզի Պատերազանութեան խընդրանքով, յանձն կանէր աշխատիլ գործուած սխալը դարձանելու եւ կը հրաւիրէր իբր հաւատար կողմ իր առաջարկները ներքայացնելու, անտարակոյս չէր կրնար անտարբեր անցնիլ կատարած գործերու տարամերժօրէն կուսակցական բնոյթին եւ արդիւնքին վրայէն եւ պարտաւոր էր գործին այդ կողմը եւս սրբազրութեան ենթարկել: Բաց աստի, ծանօթ է այն իրողութիւնը, որմէ բխած է ինքը Ազգային Պատերազանութիւնը, արդէն մէկէ աւելի անգամներ առիթն ունեցած էր զբաղելու իր անգամներէն ոմանց այն առաջարկով, որ կը ձգտէր նոյնքան անհեռատես կերպով, ինչպէս կատարուեցաւ Մայիս 28-ի ակտը, Համազումարին որոշել եւ ընդունել տալ այդ ակտին էութիւնը, այսինքն՝ Հանրապետութեան Կառավարութիւնը ընդունիլ տալ, առանց վերակազմութեան, երկու հատուածներու կառավարութիւն: Համազումարը սուտար մեծամասնութեամբ մերժած էր հետեւել այդ ճամբուն, որուն մէջ մասնելու զինք հրաւիրողները կը պատկանէին



րենք: Միաժամանակ անհրաժեշտ է ունենալ նոր թիւրիմացութեան տեղի չթողելու համար, որ յստակ կերպով ըսելի, թէ մեզ հետ բանակցողները ո՛ր օրինական մարմնին ներկայացուցիչներն են: Պրն. վարչապետին բացարձակ հաւաստիացումին վրա, թէ երբեք ինդերոյ նիւթ պիտի չըլլայ Ազգ. Պատւիրակութեան եւ իր բանադնացներուն իրաւասութիւնը, մենք եւս յանձն առած էինք չպնդել, որ ճշտելի մեզ հետ բանակցողներու ներկայացուցչական հանգամանքը, դոհանալով վարչապետին այն յայտարարութեամբը, թէ Կառավարութեան համար պարտադիր պիտի ըլլայ կնքելիք համաձայնութիւնը, որ նոյնպէս, կը վստահացնէր Պրն. վարչապետը, պիտի ընդունելի Սորհրդարանէն: Արդ, քանի որ այս համաձայնութիւնը չպահանջուաւ արդէն, հարկ է գրաւոր յայտարարութիւնով միանգամ ընդմիշտ մէջտեղէն վերցնել ամէն թիւրիմացութիւն:

Տրւած ըլլալով այս ամենը՝ որպէսզի կարելի ըլլայ արդիւնաւոր կերպով շարունակել բանակցութիւնները, անհրաժեշտ է, որ մեզի բացորոշ կերպով յայտարարելի հետեւեալը.

Ա. — Ազգ. Պատւիրակութեան առաքելութեան հետ բանակցողները Հանրապետութեան Կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչներն են.

Բ. — Հանրապետութեան Կառավարութիւնը եւ իր ներկայացուցիչները կը ճանչնան Ազգ. Պատւիրակութիւնը իբր բովանդակ արեւմտահայութեան ներկայացուցչութիւն.

Գ. — Հանրապետութեան Կառավարութիւնը եւ իր ներկայացուցիչները ունենան առարկութիւն չունին Ազգ. Պատւիրակութեան ղրկած առաքելութեան կազմին դէմ:

Ոչ ոք աւելի բուն ցանկութիւն եւ ձգտում ունի, քան Ազգ. Պատւիրակութիւնը եւ իր ներկայացուցիչները՝ Ամբողջական Հայաստանը իրականացած տեսնելու: Մենք կը սիրենք յուսալ, թէ ունենալով նոյն ձգտումը՝ Կառավարութիւնն ու իր յարգելի բանադնացները պիտի ընդունին մեր յառաջ բերած դիտողութիւններուն արդարացիութիւնը եւ մեր կամքէն բոլորովին անկախ կերպով ստեղծած ներկայ դժուարութիւնը բաժնալով՝ այս բախտորոշ ըրպէսներուն պիտի ջանան հայ ազգին գերագոյն շահերն ապահովցնել:

Ն. ՏԷՐ — ՍՏԵՓԱՆԵԱՆ  
Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ  
ՎԱՀԱՆ ԹԷՔԷԱՆ

Երեան, 6 Նոյ. 1919 թ.

Ստեղծած թիւրիմացութիւնները փարատելու նպատակով, Հ. Կառավարութեան Պատւիրակութեան նախագահը, նոյեմբ. 7-ին, հետեւեալ բացատրական նամակն է գրում Վ. Թէքէեանին. —

Մեծայարդ Պրն. Վ. Թէքէեան,

Ի պատասխան ձեր Նոյ. 6 գրութեան, պատիւ ունիմ հաղորդելու, որ ձեր գրութեան մէջ յարուցած բոլոր հարցերի պատասխանն արդէն տրւած կայ բանակցութեանց նիստերի արձանագրութիւնների մէջ: Առաջ եմ բերում այդ պատասխանները համաձայն ձեր գրած կէտերի. —

Ա. — Ազգային Պատւիրակութեան առաքելութեան հետ բանակցողները ներկայացուցած են Հայաստանի Նախարարապետ Ա. Սատիսեանի կողմից եւ լիազօրւած են պաշտօնապէս բանակցելու:

Բ. — Մեր նկատողութիւնն Ազգ. Պատւիրակութեան «արեւմտահայութեան մէկ մասի» ներկայացուցիչ լինելու մասին արեւմ է այն մտքով, որ Հայաստանի սահմաններում ապրող արեւմտահայութիւնը մասնակցելով Պարլամենտի ընտրութիւններին՝ արդէն իսկ միացած է Հանրապետութեան, եւ, հետեւաբար, Ազգ. Պատւիրակութիւնը ներկայացնում է Հայաստանից դուրս ապրող արեւմտահայերին:

Գ. — Մեր դիտողութիւններն Ազգային Պատւիրակութեան ուղարկած առաքելութեան կազմի մասին նպատակ չունին առաքելութեան մերժումը: Մենք կարծում ենք, որ բանակցութիւնների յաջողութեան համար իսկ աւելի օգտակար կը լինէր առաքելութեան մէջ տեսնել Ազգային Պատւիրակութիւնը կազմող բոլոր հոսանքներից ներկայացուցիչներ:

Այս բոլոր դիտողութիւնները, սակայն, ամենեւին արդելք չեն շարունակելու համար բանակցութիւնները: Մեր նպատակը չէ առաքելութեան որեւէ անդամի կամ ամբողջութեան դէմ որեւէ առարկութիւն հանել: Որքան եւ թերի լինէր կազմւած Ազգ. Համագումարն ու Պատւիրակութիւնը, տեսալ պայմաններում նրանք ճանաչուած են արեւմտահայերի ներկայացուցչութիւն, եւ մեր անկեղծ փափաքն է գտնել համաձայնութեան գետին երկու հատւածների միջեւ:

Յուսալով, որ ներկայ բացատրութիւնները բաւական կը լինեն ջրերու համար ձեր տարակուսանքները՝ սպասում ենք ձեր պատասխանին մեր կողմից ներկայացուցած հակառակարկներին, որպէսզի կարելի լինի գումարել նիստ՝ ցանկալի վախճանին հասցնելու համար սկսւած բանակցութիւնները:

Յարգանք՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

ՆԻՍՏ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Նիստը կայացա Նոյ. 13-ին, երեկոյեան ժամը 6-ին:

Ներկայ էին բոլոր անդամները, բացի Պ. Վ. Թէֆէեանից:

Նախագահում էր Պ. Ս. Վրացեան:

Հաստատուեց վերջին նիստի արձանագրութիւնը նոյեմբեր 3-ին:

Դրանից յետոյ եղել էին երեք ոչ պաշտօնական խորհրդակցութիւններ երկու կողմերի ներկայացուցիչներից: Վերջին խորհրդակցութիւնը կայացել էր նոյեմբ. 11-ին վարչապետ Պ. Խատիսեանի ներկայութեամբ: Այդ խօսակցութիւնների միջոցին աշխատում էին երկուստեք պարզել իրենց տեսակէտները եւ ըստ հնարաւորին դըտնել փոխադարձ համաձայնութեան հող:

Պ. Պ. Վ. Թէֆէեան, Ն. Տէր Ստեփանեան եւ Ս. Յարութիւնեան նիստից առաջ ներկայացրել էին իրենց երեքի ստորագրութեամբ դըրաւոր պատասխանը Պ. Պ. Ս. Վրացեանի, Մ. Յարութիւնեանի եւ Շ. Միսաքեանի Նոյ. 4-ի գրութեան: Այդ պատասխանը կցւում է սոյն արձանագրութեան:

Նախագահ. — Բանալով նիստը՝ յայտնեց, որ իրենք ստացել են այդ գրաւոր պատասխանը: Սակայն, ինքը գտնում է, որ թէեւ այդ պատասխանը ըստ արտաքինի պարունակում է որոշ զիջումներ, բայց այդ զիջումների հետ միաժամանակ այնպիսի պայմաններ են դրւած, որոնք չէզոքացնում են նրանց արժէքը: Խօսքը վերաբերում է նրանց պահանջին երկու — երրորդի մեծամասնութեան կառավարութեան մէջ որոշ խնդիրներ վճռելիս:

Խորհրդարանի վերաբերմամբ այդ գրութեան մէջ դարձեալ պընդում են, որ նա պէտք է արձակուրդ ստանայ անորոշ ժամանակով, մինչեւ արեւմտահայ պատգամաւորների ընտրութիւնը եւ նրանց երկու — երրորդի Երեւան ժամանումը:

Ն. Տէր — Ստեփանեանը բացատրեց, որ կառավարութեան մէջ ձայների երկու — երրորդի մեծամասնութիւն պահանջւում է միայն արտաքին քաղաքականութեան եւ ընկերային բարենորոգումներին վերաբերող խնդիրներին եւ Պատերազանութեան տրելիք հրահանգների վերաբերմամբ, իսկ մնացած խնդիրները վճռւում են ձայների պարզ մեծամասնութեամբ: Ինչ վերաբերում է, օրինակ, հողային խնդրին, նա ինքը անձամբ կողմնակից է հողերի պետականացման, սակայն, գտնում է, որ այդ եւ նման հարցերը այն տեսակի են, որ

կարող են սպասել մի քանի ամիս, մինչեւ Պարլամենտի լրացումը:

Ս. Յարութիւնեանը գտնում է, որ մենք բոլորս էլ պէտք է աշխատենք որքան կարելի է շուտ իրականացնել մեր ցանկութիւնը, այն է, որ կռաւիցիոն կառավարութիւնը կազմակերպւի եւ սկսի գործել:

Բիւզըջէի քննութեան վերաբերմամբ նա առաջարկում է երկու եղանակ, որոնցով կարելի է լուծել այդ խնդիրը: Նախ՝ այժմեան Խորհրդարանը կարող է ընտրել իր միջից մի յատուկ Փինանսական բիւզըջէտային յանձնաժողով, որ կարող է լիազօրել Խորհրդարանից, կառավարութեան հետ միասին քննել եւ վաւերացնել ներկայացրած նախահաշիւները:

Կարելի է և ուրիշ ձև առաջարկել, որը շատ անգամ գործադրւում է եւ որից օգտւել է Հայաստանի կառավարութիւնը անցեալ տարի: Դա այն է, որ կառավարութեանը իրաւունք տրւի առաջին չորս ամսայ ընթացքում, այսինքն՝ մինչեւ Մայիս 1 ղեկավարւել նախորդ տարւայ բիւզըջէով, իսկ Մայիս 1-ին արդէն նոր Խորհրդարանը լրացրած կազմով կարող կը լինի գործի անցնել:

Ս. Յարութիւնեան՝ առարկելով այդ առաջարկներին՝ գտնում է անընդունելի, քանի որ Խորհրդարանի ամենակարեւոր իրաւունքները մէկն է բիւզըջէի քննութիւնը եւ հաստատութիւնը, որից նա երբեք չի հրաժարւի: Նոյնպէս եւ հողային օրէնքի առթիւ նա դիտում է, որ այդ ուղղութեամբ մեր Խորհրդարանը եւ կառավարութիւնը արդէն որոշ քայլեր են արել եւ չի կարելի դադարեցնել այդ ըէֆօրմի ընթացքը:

Նախագահը նոյնպէս առարկեց կառավարութեան որոշումների վերաբերմամբ պահանջւած ձայների երկու — երրորդի մեծամասնութեան առթիւ: Օրինակ վերցնելով Ազգ. Պատերազանութեան գործունէութիւնը Փարիզում, նա գտնում է, որ այդ գործունէութիւնը ըստ էութեան ոչնչով չէր տարբերւում մեր Հանրապետութեան Պատերազանութեան գործունէութիւնից, որ ղեկավարւում էր մեր կառավարութեան հրահանգներով: Եւ այդ տեսակէտից, երկու — երրորդի մեծամասնութիւն պահանջ զնելը կառավարութեան որոշումների վերաբերմամբ միայն գալիս է դժւարացնելու կառավարութեան գրութիւնը:

Ապա ամփոփում է ներկայացւած գրութեան եւ բերանացի կերպով Պ. Պ. Ն. Տէր — Ստեփանեանի եւ Ս. Յարութիւնեանի տւած բացատրութիւնների արդիւնքը, որից յետոյ որոշւում է նիստը յետա-

ձգել մինչեւ շաբաթ առաւօտեան ժամ 1-ը, երբ պիտի ընդունւի վերջնական որոշում դրւած խնդիրների մասին :

Ստորագրւած բոլորից,  
բացի Վ. Թէֆէեանից (բացակայ)

Պատասխան Նոյ. 4 քւականա Ազգ. Պատւիրակութեան  
Առաքելութեան ներկայացւած վերջնական պայմաններուն

Իբրեւ ընդհանուր դիտողութիւն, կը նկատենք նախ, որ մեզի ներկայացւած վերջնական առաջարկներէն բխող պահանջը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Մայիս 28-ի ակտին երկրորդ մասին լիուրի ճանաչումը, մինչդեռ Ազգ. Պատւիրակութեան տեսակէտով անհրաժեշտ է, չեղեալ նկատելով այդ ակտին երկրորդ մասը, կազմել Միացեալ Խորհրդարանը, կառավարութիւնը եւ Պատւիրակութիւնը քաղաքական եւ օրինական բոլորովին նոր հիմքերով, այսինքն՝ այնպէս, ինչպէս բանաձեւած է 21 Հոկտ. մեր սկզբնական առաջարկներուն ու, մասնաւորապէս, այդ առաջարկներու Միացեալ Խորհրդարանին վերաբերող մասին մէջ: Անկէ ի վեր մենք ստիպւած եղանք, մեզ հետ բանակցողներու անդրդեւիութեան առաջին, ընդունիլ, ենթարկելով մեծ պատասխանատուութեան, այնպիսի կոմպրոմիսներ, որոնք համոզում է չեն բխիր եւ կրնան բացատրել միմիայն մեր ցոյց տւած համերաշխութեան սէրով եւ նկատի ունենալով այն ներքին ծանր հետեւանքները, որոնց տեղի կրնայ տալ բանակցութիւններու անյաջող ելքը:

Հատուածական տեսակէտէն մեզ ներկայացւած առաջարկները աւելի քան գոհացուցիչ պիտի ըլլային, եթէ անոնք բոլորովին անընդունելի չըլլային հիմնական կէտի մը մէջ, որ է այսօրուայ արեւելահայ Խորհրդարանի իշխանութիւնը տարածելու պահանջը երկու հատուածներու մասնակցութեամբ կազմուած կոալիտիոնի կառավարութեան վրա: Կուսակցական տեսակէտէն Ազգ. Պատւիրակութեան պահանջները կատարելապէս արդար են, քանի որ անոնք կը հիմնւին այսօր գոյութիւն ունեցող արեւելահայ եւ արեւմտահայ ներկայացուցչական մարմիններու կազմին վրա:

Այս ընդհանուր դիտողութիւններէն վերջ, մենք կը ներկայացընենք հետեւեալ վերջնական փոխ - առաջարկները ի պատասխան այն առաջարկներուն, որոնք մեզի ներկայացւած են Նոյ. 4-ի վերջին դրով:

Ա. — Համաձայն ենք Պատւիրակութեան կազմի մասին. կը նկատենք սակայն, որ պատւիրակութեան այս կամ այն կերպ կազմաւորումը, արւած ըլլալով, որ Պատւիրակութիւնը կախում ունի կառավարութենէն եւ կառավարութիւնը Խորհրդարանէն, այնչափով միայն իրական արժէք ունի մեզ համար, որչափով որ կառավարութեան եւ Խորհրդարանի կազմը կը գոհացնէ տրւած հիմնական տեսակէտները:

Բ. — Կառավարութիւնը պէտք է կազմուած լինի 9 կամ 13 անդամներէ: Իններորդ կամ 13-րդ անդամը, պատերազմական նախարարը ըլլալով անկախ անձնաւորութիւն մը՝ ընտրուած երկու կողմերու համաձայնութեամբ, միւս 8 կամ 12 անդամները պէտք է ըլլան կէս առ կէս թէ՛ հատուածներու եւ թէ՛ հոսանքներու տեսակէտով, այսինքն՝ չորսը արեւելահայ, միւս չորսը արեւմտահայ. չորսը դաշնակցական, միւս չորսը ոչ - դաշնակցական: Այս առաջարկութիւնն ընելով Ազգ. Պատւիրակութիւնը ղեկավարուած է անցեալ տարի դործող կոալիտիոնի կառավարութեան կազմէն: Գտնելով հանդերձ, որ այդ կազմը միակ բանաւորն է, մենք կրնանք ընդունիլ նաեւ 10 անձէ կազմուած կառավարութիւն մը՝ դաշնակցական բացարձակ մեծամասնութեամբ, այսինքն՝ նոյնը մնալով հատուածային համեմատութիւնը եւ պատերազմական նախարարը միշտ ըլլալով անկախ եւ ընտրուած երկու կողմերէն, հինգ դաշնակցական եւ չորս ոչ - դաշնակցական անդամներով, պայմանաւ, սակայն, որ այդ կառավարութիւնը ամէն բացառիկ կարեւորութիւն ունեցող որոշումները — արտաքին քաղաքականութեան եւ ընկերային բարենորոգումներու վերաբերող որոշումները, ինչպէս եւ Պատւիրակութեան տրելիք հրահանգները — կայացնէ երկու - երրորդի մեծամասնութեամբ, կամ լաւ եւս 7 ձայնով տասնի վրա: Պատւիրակութեան նախագահին միեւնոյն ատեն վարչապետ ըլլալու հանգամանքը զիջելով՝ կառավարիչները, հիմնելով նիստերու ընթացքին մեր պարզած քաղաքական տեսակէտներուն վրա, անոր տալ արտաքին դործերու նախարարութիւնը եւ կամ Հանրապետութեան Գերագոյն Ներկայացուցիչի դերը:

Գ. — Ներկայ Խորհրդարանը պէտք է ինքզինքին արձակուրդ տայ մինչեւ արեւմտահայ պատգամաւորներու ընտրութիւնը եւ անոնց երկու - երրորդին Յրեւան ժամանումը: Թէեւ մենք համոզւած ենք, որ սխալ է, Հանրապետութեան այժմեան Փինանսական պայմաններուն մէջ, բիւզջի քննութիւն կատարել, եւ նկատելով հանդերձ, որ այդ բիւզջին, համաձայնութեան պարազային, պիտի վերաբերի Միացեալ կառավարութեան եւ հետեւաբար պէտք է ան քննել Միացեալ Խորհրդարանէն, մենք այս մասին ալ զիջելով՝ կառավարիչներ, որ

կողմնակիցների կողմնակիցները գործի ձեռնարկէ այն օրը միայն, երբ Սորհրդարանը, աւարտելէ վերջ բիւզձէի քննութիւնը, ինքզինքին արձակուրդ տայ մինչեւ Սորհրդարանին միւս կէսին ընտրութիւնը: Արեւմտահայ պատգամաւորներու ընտրութեան նախաձեռնութեան եւ ընտրական օրէնքին եւ եղանակին որոշման իրաւունքը պէտք է պատկանի կամ Ազգ. Պատերազանութեան եւ կամ կողմնակիցների կողմնակիցներին: Համոզուած ըլլալով հանդերձ, որ, յանուն Հայ Պետութեան շահերուն, անհրաժեշտ էր կրճատել այժմեան Սորհրդարանի անդամներուն թիւը, այնպէս, որ Միացեալ Սորհրդարանի անդամներուն թիւը աւելի չըլլար քան իննսուն, մենք ստիպուած կընդունինք, որ կրճատուող տեղի չունենայ: Յանուն համերաշխութեան, ստիպուած կընդունինք նաեւ, որ այժմեան Սորհրդարանը, արձակուրդի ընթացքին, կարենայ վերստին նիստ գումարել բացառիկ պարագաներու մէջ, պայմանաւ, որ այդ պարագան քննէ ու քննութենէն անմիջապէս վերջ, առանց ուրիշ ռեւէ խնդրով զբաղելու, կրկին արձակուրդ: Այդ պարագաները պէտք է կանխորոշին յստակօրէն համաձայնութեան ակտին մէջ:

Դ. — Քաղաքական հրամայողական նկատումներ մեզ կը ստիպեն պահել Հոկտ. 21-ին մեր ներկայացուցած առաջարկներուն վերջին գլուխը, որ կը վերաբերի երկու Հայաստաններու միացման ձեւին եւ անոր յայտարարութեան:

Վերջացնելով հարկ կը համարենք դիտել ապա, որ ներկայ մեծ զիջումներու արդիւնք եղող առաջարկները աւելի աննպաստ են մեր տեսակէտներուն, քան այն առաջարկները, զորս Հանրապետութեան Պատերազանութիւնը Փարիզի մէջ ըրաւ Ազգ. Պատերազանութեան, եւ զորս Ազգ. Պատերազանութիւնը անընդունելի դտաւ:

Երեւան, 13 Նոյ. 1919.

Ն. ՏԷՐ – ՍՏԵՓԱՆԵԱՆ  
Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ  
Վ. ԹԻՔԷՆԵԱՆ

( Վերջը յաջորդ անգամ )



## ԴԵՊՅԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

( ՀՄ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ )

Ինչպէս «Վէմ»-ի նախորդ համարում յայտնել էինք, այստեղ կը տանք Հմ. Մանուկեանի յիշատակարանը, ուր առաջ են բերուած օրը օրին գրի առնուած դէպքեր ու այրումներ վանի վերջին օրերի յուզումնալից կեանքից: Մեր մտաւոր անցեալի պատմութեան համար անգնահատելի նիւթ է այս՝ այդ շրջանում կատարուած դէպքերն ու գործող դէպքերին հասկանալու համար: Այստե՛ս միայն, որ Հմ. Մանուկեանը իր օրագրութիւնը չի սկսել հէնց կովկասից մեկնելու օրից. բերեւս այդ պակասը մէկ ուրիշը լրացնէ: ԽՄԲ.

\*\*\*

1917 թ. Դեկտ. 1, Վան. — Երէկ երեկոյեան, Շրջանային Վարչութեան ժողովն էր: Կազմակերպական բիւրօ մը, որու անդամներն են՝ Զաւ. Կորկոտեան, Հմ. Մանուկեան, Ա. Թէրզիպաշեան, Ս. Մեսրոպեան եւ Միք. Տէր – Միքայէլեան: Բիւրօյի պարտականութիւնը պիտի ըլլայ պատրաստել վիճակագրական մանրամասն տախտակ մը եւ Շրջ. Վարչութեան հաւանութեան ենթարկելով՝ անմիջապէս գործադրութեան անցնել:

— Արմ. Մաքսապետեան տուաւ զեկուցում կրթական գործի մասին, որմէ ետք, որոշեցաւ ուսուցիչներ պատրաստել, նկատի ունենալով, որ շատ տեղեր ուսուցիչները մնացեր են նօթի, տալ անոնց ամսականները՝ փոխառաբար վերցնելով արհեստաւորաց յատկացուած 10,000 ըուբլէն, մինչեւ Մարմտի ձուկերու վաճառումը, կամ մինչեւ որ Թիֆլիսէն դրամ ստացւի: Նկատի ունենալով նոյնպէս, որ Արեւմտահայ Սորհուրդը 50,000 է յատկացուցեր Վասպուրականի դպրոցներուն, որոնց պիւտձէն 100,000 ըուպլին կանցնի, նաեւ այն պարագան, որ ներկայ խառնակ եւ անիշխանական պայմաններուն մէջ կրնայ ըլլալ որ այդ գումարն ալ չստացւի, որոշեցաւ յանձնարարել Ուսումնական Սորհուրդին, որ եթէ յարմար նկատէ, ուսու-

ցիչներէն 10 հոգի ազատ թողու կոմիսարութեան մէջ պաշտօններ ստանձնելու :

— Պարենաւորման կոմիտէն, որ տւաւ ղեկուցում իր գործերու մասին, խնդիր դրաւ իր անդամներու ոռոճիկի մասին՝ նկատի ունենալով որ իրենք իրենց մէջ գործի բաժանում ըրած են՝ Ա. Մաքսապետեանին յանձնած են զործի ընդհանուր կազմակերպումը, մանաւանդ գաւառներու մէջ, Հ. Մարգարեան ստանձնած է քարտուղարութեան եւ գրասենեակի գործերը, իսկ Թէրզիպաշեան՝ օժանդակութիւն երկուքին ալ: Թէրզիպաշեան նկատի ունենալով որ իր ոռոճիկի վրա 50 ٪ յաւելում եղած է, որով կը ստանայ 450 ռուպլի, առանձին պահանջ մը չըրաւ, Մարգարեան 350 ռ. որոշեցաւ, իսկ Մաքսապետեան 550 ռ.: Վերջինս դէմոնստրատիւ կերպով մերժեց, ինչ որ չափազանց յոռի ազդեցութիւն թողուց եւ ժողովը դարձաւ սակարկութեան վայր, որու համար բողոքեցի եւ դատապարտեցի ոռոճիկի տեսակէտը՝ յայտնելով, որ մենք բոլորս հոս եկած ենք հասարակական գործի համար եւ ոչ թէ հարստանալու: Ի վերջոյ, խընդիրը առկախ թողուցաւ, այն յոյսով, որ Կ. Համբարձումեան ժողովէն անկախ կարգադրութիւն ընէ, ինչ որ պահանջեցի ես սակարկութենէն առաջ:

— Ժողովէն վերջ Գաղաքներու Միութեան հիւանդանոց գացինք, ժամը 8-ին: Գուրբը խստորէն կը ձիւնէր: Հացկերոյթի հրաւիրւած էինք, կազմած ի պատիւ Գեներալ Սիլիկովի, որ վաղը պիտի մեկնի: Գեներալը շատ ազնիւ, հայրենասէր, վերին աստիճանի հոգատար հայ մըն է, որ հազիւ հայերէն կը հասկնայ: Ան էր, որ իր բոլոր միջոցներով օժանդակեց մեզ՝ տալով հրացան, ուտեստ եւ ամէն հնարաւորութիւններ, որպէսզի մենք տեղական հայ գունդեր առաջացնենք եւ ճակատի պաշտպանութիւնը ստանձնենք՝ յոյս չղնելով ուս զօրքի վրա, որ արդէն քայքայեր է եւ տուն կը փախչի: Ան էր, որ կարգադրեց ու Պակրանիչնի պոլկը ամբողջապէս հեռացուց Վանէն՝ թողլով, որ վերջինս ըլլայ գուտ հայկական — հայ պոլկ եւ տեղական հայ միլիցիոններ միայն: Գեներալի կենաց խանդավառ բաժակաճառեր արտասանեցան: Խանդավառներ էր մանաւանդ մեր սպիտակափառ եւ յստակասիրտ ընկ. Ա. Սահակեան, որ թամաղա էր: Ես բաժակ առաջարկեցի երիտասարդ Հայաստանի կենաց, մոխիրներէն, աւերակներէն, արեան լիճերէն եւ արցունքի գետերէն, մեր սիրտերէն ու հոգիներէն, մեր բազուկներու հարւածներէն եւ մեր հրացաններու բոմբիւններէն յառնող Հայաստանի կենացը:

Կէս դիշեր է: Տուն կը վերադառնամ: Ձիւնի հաստ շերտը բռներ է գետինը: Երկինքը սպաճառ է: Հոգիս կը թրվոյս երեխայի մը պէս. քանի՜ տարի է, որ ձիւն չեմ տեսեր, սպիտակափառութեանց վրայէն չեմ քայլեր եւ չեմ կծկեր այդ մաքրամաքուր ցուրտին դիմաց: Կը սիրեմ ձիւնը, սպիտակ, անբիծ ձիւնը, Վարադայ լեռն ու Սիփանը, Նեմրուան ու Գրգուռը, հայրենի լեռն ու ձորը պատող — պարուրող ձիւնը: Հայաստանի ցուրտն ալ քաղցր է, ձմեռն ալ հոյակապ է, ձիւնն ալ երազային է. ժամերով կուղէի քալել ձիւնի մէջ եւ ձիւնով ծածկելի:

— Այսօր ժամը 5-ին Ուսումն. Խորհուրդի ժողովին էի: Որոշուեցաւ, որ ես ստանձնեմ դանձապահութիւնը, մինչեւ Մ. Աճէմեան վերադառնայ իր արձակուրդէն: Նոյնպէս ինծի յանձնեցին Վանի եւ շրջակայ գիւղերու դպրոցական գործի հսկողութիւնը, իբր տեսչի: Որոշուեցաւ Երջ. Վարչութեան ներկայացնել 10 ուսուցչի անուն՝ ջանալով, որ անոնց յարմար պաշտօններ տրւին կոմիսարութեան մէջ:

— Այսօր Գրիգոր տւաւ ինծի Ն. Պասեանի նամակը, որով կը յայտնէր, թէ զինւորական համագումարի մէջ մերոնք առաջարկած են, որ ներկայ մոմէնտին, երբ զինադադարի եւ հաշտութեան հարցը հրապարակ եկած է, հայ ժողովուրդը երեւան դայ իբրեւ ամբողջութիւն եւ դնէ իր քաղաքական պահանջը՝ կա՛մ կեանք եւ կամ մահ նշանաբանով: Այս առթիւ Թիֆլիսի մէջ կազմուելու է Բիւրօներու եւ Կ. Կ.-ի ներկայացուցիչներու ժողով: Երեւանէն մեկնած են Արամ, Ռուբէն եւ Փափաղեան:

2 Դեկտ. — Այսօր Արեւմտահայ Խորհրդի նախագահ Փափաղեանէն հեռագիր մը ուղղւած էր Թէրզիպաշեանին, որով կը հրաւիրէր Թիֆլիս Դեկտ. 15-ին կայանալիք արտակարգ խորհրդակցութեան: Նոյն հեռագրով Երջ. Վարչութեան ալ ներկայացուցիչ կը խնդրէր: Իրիկունը կայացաւ Երջ. Վարչութեան ժողով, ուր ներկայացուցիչ զըրկելու խնդիրը թողնուեցաւ վաղւայ արտակարգ նիստին: Կոստին հաղորդեց, որ ինք հեռագիր ստացած է, որով 1300 լէպլէ հրացաններ ալ կը տրամադրուին միլիցիային. հազուատներու համար եւս խոստում եղած էր: Իրիկունը Լեւոնեց տունը Կոստի, Գրիգորի, Սամէլի, Լեւոնի հետ ունեցանք խորհրդակցութիւն, ուր յարմար նկատուեցաւ, որ Սամէլի երթայ Թիֆլիս, իբրեւ Երջ. Վարչութեան ներկայացուցիչ: Գրիգորը, ժամը 2-ին հազիւ կրցայ տուն վերադառնալ:

Դեկտ. 3. — Ռուս զօրքերը արդէն քաշեր են: Քաղաքի մէջ շատ

մը տուններ պարպւելը են: Ոմանք կը թալանւին ու կը քանդւին գիւղացիներու կողմէ:

Այսօր հիւանդ եմ. գլուխս կը ճաթի կարմիր երկաթի նման: Դուրս կելլեմ, ուսուցիչներուն քանի մը վճարումներ կընեմ, կերթամ Շրջ. Վարչութեան ժողովին, ուր չկրնալով մնալ՝ կը վերադառնամ տուն ու կը պառկիմ: Ճամբուն, երեք գինով զինւորներ բաներ մը կը հարցնեն ինծի ետեւէս. չեմ ուզեր աչքս ետեւ դարձնել, բայց կը ստիպուիմ. նոյն պահուն ատրճանակը կը պայթի ետեւս ու կը կարծեմ, թէ սպաննեցայ: Ի՞նչ յիմար բան կըլլար, եթէ իրապէս գիպաւծի զոհ երթայի. կը սարսափիմ այդ մտքէն:

Դեկտ. 5.—Այսօր Թիֆլիս մեկնեցան Սամւէլ եւ Թէրզիպաշեան:

Դեկտ. 6.— Կը դգամ, որ գործերով շատ եմ ծանրաբեռնւած եւ ուժերս չեն բաւեր բոլորին ալ հասնելու եւ խղճիս առջեւ հանգիստ ըլլալու համար: Վանի դաւառի (օկրուկ) կոմիսարի օգնական նշանակւած եմ նոյեմբ. 20—էն սկսեալ, Շրջ. Վարչութեան անդամ, վիճակագրութեան բիւրոյի անդամ, պարենաւորման կոմիտէի անդամ, քաղաքագլուխ Թէրզիպաշեանի բացակայութեան անոր փոխանորդ: Աստուցմէ զատ կազմակերպական զանազան գործեր, նամակներ գրել, ժողովներուն մասնակցել, զանազան գործնական խնդիրներ հետապնդել եւ այլն, եւ այլն. ահագին գործեր են, որոնց լծւած եմ ու կաշխատիմ իմոյսանն օգտակար ըլլալ: Ներկայիս այնպիսի պատմական օրեր կապրինք, յորում ամէն հայ անհատ պարտաւոր է իր բոլոր կարողութիւնները ի սպաս դնել աղգային գործին. անհատական ցանկութիւններ պէտք է զոհին ընդհանուրին: Այս ուղիով գործեր եմ եւ ուրախ եմ, որ կրնամ տակաւին անչեղօրէն երթալ հանրային եւ կազմակերպական անշահախնդրութեան ճամբայով:

Այսօր երեկոն վիճակագրութիւն կազմելու համար ժողով մը ունեցանք, որմէ ետք դացի Լեւոնի մօտ, որ հիւանդ պառկեր է: Կարծես թէ որբացեր է խեղճ տղան. Տիգրան խանը դացեր է. Սամւէլ Թիֆլիս մեկնեցաւ եւ ինք մնացեր է մինակ: Կը սիրեմ Լեւոնը իմ ընկերական ամբողջ թափով: Սիրեցի զինք ընկերական սիրով դեռ 1913—ի աշնան, երբ ոսյունական ժողովին առաջին անգամ լսեցի, Պոլսէն վերադարձիս, զաւառական գործիչ Լեւոնի անունը: Սակայն, յաճախ կը կուլիմ հետը. անգամ մը նա զիս չափազանց վիրաւորեց. քանի մը օր հետը չխօսեցի՝ փոխադարձ վիրաւորանք հասցնելով իրեն:

Դեկտ. 11.— Ամսոյս 5—ին քիւրտեր յարձակելով Առնիս — Արճէշ ճամբուն վրա երթեւեկող սայլերուն վրա՝ տարան 4 եզ: Սայլերը



ԱՐԻՆԵՐՈՒ ԽՈՒՄԻ ՄԸ, ՎԱՆԻ ՄԷՋ, 1918 Թ.



ԳՆԳԱՅԻՐԻ ԽՈՒՄԻ ՄԸ, ՎԱՆԻ ՄԷՋ, 1918 Թ.

դէնք կը փոխադրէին. անոնցմէ մէկը կտարած ըլլալով՝ մնացեր էր ճամբան: Ամսոյս 9-ի դէշերը Սորի քիւրտեր յարձակումի փորձեր կը կատարեն Առնիս – Բերկրի ճամբուն վրա:

Քաղաքապետարանի գործերով սկսած եմ հետաքրքրելի. խիստ մեծ անկանոնութիւններ եւ խնամիական կապեր իրենց ներկայութիւնը կը ցուցնեն: Մտադիր եմ լաւ մը ուսումնասիրելէ ետք ընդարձակ զեկուցում տալ կոմիսարութեան կամ Շրջ. Ժողովին: Երէկ իրիկուն երկար խօսակցութիւն ունեցայ Գրիգորի հետ ներքին անցուղարձերու եւ քիւրտական յարաբերութեանց մասին:

Դեկտ. 12. – Երէկ իրիկուն Սօսոյեան Մարգարի տուն ունեցանք ժողով մը, մտերմական եւ սերտ շրջանակ մը ստեղծելու եւ հասարակական գործերու մէջ նետուելու համար: Ներկայ էին Մ. Օվիկեան, Զ. Կորկոտեան, Մ. Սօսոյեան, Ա. Շիրվանեան, Օր. Անահիտ, Ֆէլդշէր Կարապետ, Վ. Թէրզիպաշեան եւ ես: Յանդեցանք դրական եզրակացութեան:

Այսօր Լեւոն յայտնեց ինծի, որ թուրք սպայ մը անցեր է Նոշարի շրջան. տեսնողը եղած է Մուլա Հասանի ուսու սարտատներէն մէկը, որ յայտնած է Սիմոնին:

Այսօր առաւօտեան Կովկաս մեկնեցան Ա. Սահակեան եւ Գր. Օհանջանեան: Նորէն գործերը շատ ծանրօրէն կը ճնշեն հողիս: Առաւօտը, Սղզա ապրող երեք այլի կիներ հաց պահանջեցին ինձմէ պաշտօնատան մէջ: Զո՛ւր անցան բոլոր ճիգերս դանոնք ճամբու դնելու. ստիպեցայ մեր տուն դրկել եւ մէկուկէս սրբոն տալ անոնց, որպէս զի ապրին քանի մը օր ալ: Օրհնելով մեկնեցան:

24 Դեկտ. – 10 օրէ ի վեր յիշատակարանիս մէջ ոչինչ դրեցի, որովհետեւ չափազանց դրաղած եմ եւ թաղած գործերու մէջ: Ամսոյս 20-ի իրիկուն տեղի ունեցաւ Շրջ. Վարչութեան նիստ, ուր կարգապահեցան Թիֆլիսէն զրկւած հեռագիրներ պարտադիր գինւորագրութեան մասին: Շրջ. Վարչութիւնը ընդունեց պարտադիր գինւորագրութեան հրահանգը 19 – 35 տարեկաններու համար եւ կազմեց Զինւորական Պուրհուրդ՝ միլիցիայի ներկայացուցիչ Գր. Պուրհարացիէ, կոմիտարիատի ներկայացուցիչ Կ. Համբարձումեանէ եւ Շրջ. վարչութեան ներկայացուցիչ Հմ. Մանուկեանէ բաղկացած: Նիստին ներկայ էին՝ Պաղտասարեան, Եղ. Վարդանեան, Եղնիկ վարդապետ, Հմ. Մանուկեան, Ն. Յովհաննէսեան, Զ. Կորկոտեան:

(Շարունակելի)

# ՄԻ ՔԱՆԻ ՃՇՏՈՒՄՆԵՐ

«Հայրենիք» ամսագրում Ռ. Սեւեանը սկսել է մի շատ կարեւոր աշխատանք — դիւանական աղբիւրների եւ արդէն լոյս տեսած տըւեալների հիման վրա լուսարանել Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան մութ համարած էջերը: Նման աշխատանքի արժէքը գլխաւորապէս նրա մէջ է, որ համեմատական լուրջ ու բազմակողմանի քննութեան ենթարկեն խնդրին վերաբերող նիւթերն ու հանդամանքները եւ եզրակացութիւնների հիմք ծառայող փաստերը լինեն լրիւ եւ բացարձակապէս անվիճելի, մինչդեռ Ռ. Սեւեանի գրութիւնները հէնց այս տեսակէտից կազում են, եւ այդ պատճառով նրա հանած եզրակացութիւնները, յաճախ, հասկանալիութեան կնիք են կրում եւ բաւականաչափ համոզեցուցիչ չեն:

Առնենք, օրինակի համար, «Ե՞րբ է հիմնել Դաշնակցութիւնը» յօդածը («Հայր», թիւ 170), ուր, մի քանի արդէն ծանօթ վկայութիւնների վրա հիմնելով, Սեւեանը եզրակացնում է, թէ Հ. Յ. Դաշնակցութեան ձեւակերպումը տեղի է ունեցել 1890 թ. օգոստոս ամսին, իսկ «աշխատանքի է լծել սեպտեմբերին»: Մինչեւ այժմ մեզ յայտնի ո՛չ մի փաստ իրաւունք չի տալիս այդպիսի վճռական եզրակացութեան. գիտենք, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը հիմնել է 1890 թ. ամառը, բայց թէ ստուգապէս ո՞ր ամսին է ձեւակերպւել եւ ո՞ր ամսին գործի անցել — յայտնի չէ: Հակառակ Ռ. Սեւեանի պնդումի, աւելի հաւանական է, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը 1890 թ. յուլիսին է ձեւակերպւել եւ օգոստոսին «աշխատանքի լծել»: Գէթ օգոստոսին արդէն, Դաշնակցութիւնը, որպէս կազմակերպութիւն զբաղւել է Կուկունեանի արշաւանքով (Տե՛ս «Դիւան Հ. Յ. Դ.», Ա. հատոր եւ Մ. Ծաթերեանի յուշերը) — սա «աշխատանքի լծել չէ»:

Նոյն յօդածում Սեւեանը ասում է, թէ 1890 թ. սեպտեմբերին Գր. Արծրունին Երեւանում էր եւ այստեղ «առաջին անգամ զարմացած Տ. Ստեփանեանից է իմանում, թէ Թիֆլիսում արդէն կազմակերպւել էր յեղափոխական կուսակցութիւն»: Կարելի՞ էր բան է այդ: Յունիս — օգոստոս ամիսներին, երբ տեղի էին ունենում Հ. Յ. Դաշ-

նակցութեան հիմնադիր ժողովները եւ կազմակերպում էր Կուկունեանի արշաւանքը հէնց Հ. Յ. Դ. հիմնադիրների աջակցութեամբ եւ նոյն Գր. Արծրունու բարեացակամ վերաբերումով, հնարաւոր բան է, որ Գր. Արծրունին տեղեկութիւն չունենար կուսակցութեան կազմութեան մասին: Մանաւանդ որ, ինչպէս հետագային Սեւեանն ինքն էլ է ասում, Հ. Յ. Դ. հիմնադիր ժողովներին, դէթ սկզբնական շրջանում «Ակնունին եւս ետանդուն մասնակցութիւն է ունեցել», իսկ Ակնունին (Խ. Մարումեանը) այն ատեն Գր. Արծրունու alter ego-ն էր:

Շատ ջուր վերցնող կէտեր կան եւ «Հ. Յ. Դաշնակցութեան սկզբնական ծրագիր — կանոնագիրը» յօդածում (թիւ 171): Այսպէս, հակադրելով «Իւժնիյէ նումերա» եւ «Սեւերնիյէ նումերա» պանդոկների խմբակները՝ Սեւեանը գրում է, թէ վերջինները «թէեւ ընդունում էին յեղափոխական ճանապարհով Հայաստանի ազատագրումը, բայց գտնում էին, որ ապագայ ազատ Հայաստանի օրէնքները պէտք է պաշտպան հանդիսանան հայ դրամատիրութեան, միշտ այնպէս, ինչպաշտպան հանդիսանում են արեւմտեան Եւրոպայում»: Հայ հասարակական կեանքի զարգացման պատմութեան համար շատ հետաքրքրական կեանքի զարգացման պատմութեան համար շատ հետաքրքրական կան կը լինէր փաստերով ու վաւերագրերով հիմնաւորել այս միտքը:

Նմանապէս, հիմնադիր ժողովում ընդունւած բանաձեւի մասին, թէ՛ նոր կուսակցութեան նպատակն է «յեղափոխական փոփոխութիւնը» Տանկահայաստանում մեղք բերել փաղափակ եւ տնտեսական ազատութիւն», Սեւեանը գրում է, թէ՛ «այդ բանաձեւը, ինչպէս ասում են, պատկանում էր Ս. Զաւարեանին եւ Քր. Միքայէլեանին»: Ո՞վ է «ասում»: Միայն «ինչպէս ասում են»-ով կարելի չէ ապացուցանել նման կարեւոր խնդիր:

Հ. Յ. Դաշնակցութեան սկզբնական ծրագրի մասին Ռ. Սեւեանի արած խորհրդածութիւնները շատ հետաքրքրական են, բայց, դժբախտաբար, նոյնպէս թոռնիկ ու ոչ բաւականաչափ հիմնաւորւած: Անբաւարար է եւ «Մանիֆէստի» սեպտեմբեր ամսում հրատարակւած լինելու պնդումը: Ինչո՞ւ սեպտեմբերին եւ ոչ օգոստոսին: Չէ՞ որ օգոստոսի վերջերը հիմնադիրների մի մասը արդէն ցրւած պիտի լինէր գաւառները, կամ Պարսկաստան ու Տաճկաստան: Աւելի հաւանական չէ՞ ենթադրել, որ Թիֆլիսից հեռանալուց առաջ էին կազմել «Մանիֆէստը»:

Նոյնը պէտք է ասել եւ «Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի հեղինակները» յօդածի մասին (թիւ 172): Այսպէս, մինչ նախորդ յօդածում Սեւեանը գտնում էր, որ հիմնադիր ժողովի ծանօթ բանաձեւը Հ. Յ. Դ. նպատակի մասին — «այստամբութեան միջոցով Տանկահայաստանում մեղք բերել փաղափակ եւ տնտեսական ազատու-

քիւն» — «պատկանում էր Ս. Զաւարեանին եւ Քր. Միքայէլեանին», այստեղ արդէն ասում է, թէ «այդ բանաձեւը պատկանում էր Քրիստափորին» (էջ 73) : Սեւեանը յայտնում է, թէ այս մասին «կան բաւականին բերանացի տեղեկութիւններ այն ընկերների կողմից, որոնք մասնակցել են այդ ժողովներին» . որոնք են այդ ընկերները եւ ո՞ւր կամ ո՞ւմ են յայտնուած նրանց թողած վկայութիւնները :

Սեւեանը գրում է, թէ՛ «անկասկածելի պէտք է համարել, որ Մանիֆէստի հեղինակը կամ հեղինակներից մէկը Քրիստափորն էր» : Կարող էր եղած լինել, ի հարկէ, բայց «անկասկածելի» համարելու համար միայն Սան — Աղատի եւ անյայտ ընկերների «բերանացի տեղեկութիւնները» բաւական չեն :

Բաւարար չէ եւ «Դրօշակ»-ի առաջին համարի առաջնորդողի հեղինակի մասին գրածը . Ռ. Սեւեանը, ասում է, թէ՛ «այդ ժամանակ Կենտրոնի մէջ էին Քր. Միքայէլեանը, Ս. Զաւարեանը, բժ. Լորիս Մելիքեանը, Ա. Դաստակեանը, Լ. Սարգսեանը, կարծեմ եւ Գաբո Միրզայեանը : Եթէ չեմ սխալուում Սիմէոնը եւ Քրիստափորը այդ ժամանակները բացակայ էին Թիֆլիսից, Լորիս Մելիքեանը եւ Ա. Դաստակեանը հայերէն վատ գիտէին, այնպէս որ անկարող պիտի լինէին գրել : Հետեւապէս, այդ առաջնորդողի հեղինակը պէտք է լինի կամ Լեւոն Սարգսեանը եւ կամ Գաբո Միրզայեանը» (էջ 74) :

Նախ՝ չպէտք է պատմական լուրջ գործի մէջ «կարծեմ» եւ «եթէ չեմ սխալուում»-ներով ղեկավարւել : Հարկաւոր էր ստուգել, թէ, իրօք, Սիմոնն ու Քրիստափորը Թիֆլիսում չէին, կամ Թիֆլիսում չլինելով էլ չէին կարող յօղած գրել : Երկրորդ՝ եթէ նոյն իսկ Գ. Միրզայեանի Կենտրոնի անդամ լինելը կասկածի տակ է գրւում, ինչպէ՞ս նրան վերագրել առաջնորդողի հեղինակութիւնը : Յետոյ, ինչո՞ւ հաշի չառնել եւ ուրիշների վկայութիւնները . օրինակ, Շիրվանզադէն էլ ուրիշին \*) է վերագրում «Դրօշակ»ի առաջին խմբագրականի հեղինակութիւնը : Միւս կողմից, բժ. Լորիս Մելիքեանը շատ որոշ կերպով պնդում է, թէ ինքն է գրել այդ յօղածը : Վերջապէս, Մ. Վարանդեանը «Հ. Յ. Դ. Պատմութեան» մէջ վճռական կերպով ասում է, թէ «Դրօշակի առաջին տարւան առաջին թւի խմբագրականը գրւած է անտարակուսելիօրէն Քրիստափորի ձեռքով» (էջ 115) : Այսքան բացայայտ պնդումից յետոյ, տարօրինակ է թւում Սեւեանի

\*) Սեւեանն ինքն էլ, հետագային («Հայր», 176), յիշում է, որ, ըստ Շիրվանզադէի, Ալ. Մելիք — Ալլախվերդեանն է գրել «Գրօշակ»-ի առաջին համարի առաջնորդողը :

գրածը, թէ՛ «Մ. Վարանդեանը, մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ, յենելով Ռոստոմի ասածների վրա, հաւանական էր համարում, որ այդ առաջնորդողը գրած լինի Գաբո Միրզայեանը» (էջ 74) : Առհասարակ, նման դէպքերում պէտք է խուսափել «մասնաւոր խօսակցութիւնների» վկայութեան դիմելուց, մասնաւոր, երբ «խօսողը» մեռած է եւ չի կարող իր ձայնը լսելի դարձնել :

Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի հեղինակի եւ կազմութեան ժամանակի խնդիրն էլ այժմ, կարծես, ենթադրւածի չափ հեշտ չի լուծւում : Սեւեանը ասում է, թէ «Դրօշակ»-ում լոյս տեսած «Այբուբեն» յօղածները «հիմն են կազմում մեր ծրագրի», որ այդ յօղածների առաջին երկու մասը, ինչպէս «Դաշնակցութեան Կենտրոնական Դիւանի մէջ գտնուած «Դրօշակ»-ի միակ ժողովածուից երեւում է», գրել են Ս. Զաւարեանն ու Քրիստափորը, իսկ վերջին մասը՝ Ռոստոմը . հետեւաբար, մեր ծրագրի հեղինակներն են Զաւարեանը, Քրիստափորը եւ Ռոստոմը : Միւս կողմից, «Թէպէտ ծրագրի վերելում գրւած է՝ կազմած 1892 թ. ընդհանուր ժողովում, սակայն, պարզ է, որ այդ ժողովը աւել է սկզբունքներ եւ, ինչպէս տեսանք, այդ ժողովից յետոյ Ս. Զաւարեանը եւ Ք. Միքայէլեանը աշխատել են ձեւակերպել սկզբունքները, տեսակէտները, որոնց հիման վրա Ռոստոմը վերջնականապէս կառուցել է մեր ծրագրի տեսական շէնքը» :

Եթէ Ռ. Սեւեանը ուշադրութեան անէր այս մասին «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան» մէջ լոյս տեսած նիւթերը, իր դատողութիւնները, թերեւ, այդքան վճռական չլինէին : Այսպէս, Քրիստափորի եւ Զաւարեանի նամակներից պարզ երեւում է, որ «Այբուբեն»-ի առաջին երկու յօղածները գրել է Քրիստափորը մենակ : Յետոյ, նոյն «Դիւան»-ում (էջ 91) տպւած Ռոստոմի մի գրութեան մէջ որոշ կերպով ասւած է, թէ՛ «Դաշնակցութեան ծրագրերը մշակւած է այդ (1892 թ.) ժողովում : «Մշակւած է» եւ ոչ թէ «տւել է սկզբունքներ», ինչպէս կարծում է Սեւեանը : Հետագային էլ ուղղումներ եւ լրացումներ են եղել, որ երեւում է եւ Զաւարեանի նամակից («Դիւան», էջ 143) :

Նոյն խնդրի մասին ունենք վկայութիւնը նաեւ Յովսէփ Արդութեանի, թէ՛ ինքն էլ մասնակցել է Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի մշակութեան աշխատանքներին : «Հորիզոն»-ի 1918 թ. Սեպտ — 1-ի համարում նա, ի միջի այլոց, գրում է .

« 1892 թ. մի նոր շրջան է կազմում Դաշնակցութեան պատմութեան մէջ : Երկու տարի էր ինչ Կուսակցութիւնը պաշտօնապէս գո-


յուրիւն ունէր, սակայն, Կուսակցութեան ծրագիրը եւ գործունէութեան եղանակը կուսակցական ընդհանուր ժողովի հաւանութիւնը եւ վաւերացումը չէր ստացել: Եւ այդ տեղի ունեցաւ 1892 թ. ամառը, Թիֆլիսում, ուր կայացաւ առաջին ռայոնական ժողովը (ուզում է ասել՝ «ընդհանուր ժողովը» • ԽՄԲ •):

Գրիստափոր Միքայէլեանը, Սիմոն Չաւարեանը եւ տողերիս գըրողը նոր էինք վերադարձել մեր արտօրավայր Քրչինեւից եւ Կուսակցութեան յանձնարարութեամբ պատրաստել մեր ապագայ գործունէութեան նախագիծը:

Ուրեմն, ծրագրի նախագիծ է կաղմւած, որ ասել է, թէ աւելի բան է կատարւած, քան «սկզբունքներ տալը»: Յամենայն դէպս, Սեւեանի լուսաբանութիւնները այս խնդիրն էլ չեն լուսաբանել:

Ռ. Սեւեանը օգտուում է դիւանական նիւթերից եւ առաջին ձեռքի աղբիւրներից: Նրա տւած տեղեկութիւնները, դիտողութիւններն ու դատողութիւնները կարող են շատ լուրջ արժէք ներկայացնել հայ յեղափոխական շարժման պատմութեան ուսումնասիրութեան համար: Բայց դրա համար, ինչպէս նկատեցինք, անհրաժեշտ է աւելի խորը եւ բազմակողմանի կերպով քննել առնւած խնդիրները եւ ի նկատի ունենալ նաեւ ուրիշների ասածները: Յետոյ, պէտք է ջանալ, որ առաջ բերւած փաստերն ու վկայութիւնները լինեն անթերի եւ հնարաւոր լինի, ի հարկին, վերաստուգութիւն կատարել: Այլապէս՝ ուսումնասիրութիւնը կը դառնայ ենթակայական գործ եւ դիտական լուրջ արժէք չի ներկայացնի: Իսկ երբեմն կը լինի նոյն իսկ վնասակար էլ, իբրեւ մոլորանքի աղբիւր ուրիշների համար

Ս. Վ.



### ՉԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Կաթողիկոսական Պատւիրակ Գարեգին Արքեպ. Յովսէփեանի երկամեայ գործընդունութիւնը արտասահմանում վարանդներին էլ համոզեց, թէ, այսօրւայ պայմաններում, էջմիածինը, նոյնիսկ իր լաւագոյն ներկայացուցիչների միջոցով, անկարող է վարել Խորհ. Միութեան սահմաններից դուրս ապրող հայութեան եկեղեցական – վարչական գործերը: (Փաստը ցոյց է տալիս, որ Խորհ. Միութեան սահմաններում էլ հնարաւորութիւն չունի): Էջմիածինը բացարձակապէս կարւած է արտասահմանից եւ իր խիստ սահմանափակ իրաւունքներով ու մարդկային ուժերով անկարող է ոչ հետեւել ու ստոյգ դադափար կազմել դրսի թեմերի վիճակի մասին, ոչ էլ արդար ու նպատակայարմար ընթացք տալ կեանքում օրը օրին ծագող խնդիրներին: Էլ չենք խօսում այն մասին, որ, իբրեւ խորհրդային իշխանութեան ենթակայ ու նրա քաղաքական նկատումներին ծառայող մի հաստատութիւն, էջմիածինը իրաւասու չէ ազատ շարժելու եւ պարտաւոր է ղեկավարել խորհրդային իշխանութեան ներշնչումներով եւ նոյն իսկ անմիջական հրահանգներով: Էջմիածնի գրութիւնը ծանրանում է եւ այն պատճառով, որ, ինչպէս յայտնի է, եկեղեցին խորհրդային սահմաններում իրաւական անձնաւորութիւն չէ, հետեւաբար, եւ Հայոց եկեղեցին էլ չի վայելում միասնականութեան իրաւունք. խորհրդային օրէնքը ճանաչում է միայն համայնքներ եւ մերժում է համայնքների միութեան, այսինքն՝ թեմերի եւ եկեղեցական միասնական կազմակերպութեան գոյութիւնը: Եւս առաւել մերժում է Հայաստանի եւ արտասահմանի եկեղեցական կազմակերպութիւնների միութեան իրաւունքը: Էջմիածինը իրաւական ոչ մի կապ չունի եւ չի կարող ունենալ արտասահմանի հայութեան հետ: Ինչքան որ հանդուրժում է՝ կապը լոկ բարոյական է եւ կարող է գոյութիւն ունենալ այն չափով, քան այդ օգտակար կը նկատուի խորհրդային իշխա-

նութեան համար: Իր դարաւոր գոյութեան ընթացքում Հայոց եկեղեցին երբեք այսպիսի իրաւունքներէ զերկացած, վարչականօրէն քայքայուած ու սլառակուած էջմիածնի ընդհանրական Կաթողիկոսութիւնը ո՛չ մի ժամանակ այսպիսի իրաւազուրկ եւ անճար վիճակում չեն գտնուել:

Հայաստանի համար այս դրութիւնը այնքան էլ մտահոգիչ չէ. այնտեղ եկեղեցին ազգային – մշակութային իրաւունքներ ու սլառականութիւններ չունի եւ ծառայում է միայն հաւատացեալներին կրօնական կարիքներին. թո՛ղ հաւատացեալներն էլ մտածեն նրա սլառականութեան մասին: Արտասահմանում կացութիւնը բոլորովին այլ է. այստեղ եկեղեցին սոսկ կրօնական հաստատութիւն չէ, այլ՝ առաւելապէս ազգային գործօն, հայապահպանութեան կարեւորագոյն ազգակներէ մէկը: Շատ տեղեր եկեղեցին նաեւ ազգային – վարչական հիմնարկութիւն է, եւ իրաւական ու տնտեսական աղբիւր ազգային հաւաքական կեանքի եւ կրթական գործի գոյութեան ու զարգացման: Եւ հասկանալի է, որ նրա ճակատադրով հետաքրքրուած են ոչ միայն հաւատացեալները, այլ եւ բոլոր հայերը անխտիր:

Եկեղեցին, իբրեւ հայոց ազգային դարաւոր մշակոյթի արդիւնքներից մէկը, իր ներկայ գործնական արժէքով, չի կարող չզրուել ու չզբաղեցնել հանրային ուշադրութիւնը, եւ զարմանալի չէ, ուրեմն, որ մեր մամուլը վերջերս աւելի եւ աւելի ուշադրութիւն է դարձնում Հայոց եկեղեցու վիճակին եւ բարեկարգութեան զանազան առաջարկութիւններ անում: Այս տեսակէտից նշանակալից են մասնաւորապէս Բոստոնի «Հայրենիք»-ի, Գահիրէի «Արեւ»-ի եւ «Յուսաբեր»-ի եւ Երուսաղէմի «Սիրոն»-ի մէջ վերջերս լոյս տեսած գրութիւնները:

Քննութեան առարկան, բնականաբար, ոչ թէ հաւատի ու դաւանանքի, այլ եկեղեցու ազգային – մշակութային – վարչական գործերին վերաբերող խնդիրներ են՝ ինչպէ՞ս անել, որ թէ՛ եկեղեցու միասնականութիւնը չխախտուի, թէ՛ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ընդհանրական իրաւասութիւնը մնայ անվթար եւ թէ՛ արտասահմանի հայութեան ազգային – վարչական գործերի բնականոն զարգացումը ապահովուի ու վերջ տրուի ներկայ անխնայութեան եւ անսանձ քմահաճոյքներին:

Հարցադրութեան եւ լուծման ձեւի տեսակէտից հետաքրքրական է Ընծայեցու վարը դրուած յօդուածը, որին մենք տեղ ենք տալիս սիրով: Ընծայեցի ստորագրութեան տակ գրողը Հայոց եկեղեցու անցեալին, ներկայ վիճակին եւ իրաւունքին շատ մօտէն ծանօթ մի անձ-

նաւորութիւն է, առաջնակարգ հեղինակութիւն, որի կարծիքը, անշուշտ, անարձագանգ չի մնայ հարցով հետաքրքրողներին. կողմից: Յօդուածում արծարծուած մտքերի եւ ներկայացուած առաջարկների սլառասլառատութիւնը, բնականաբար, ընկնում է միայն հեղինակի վրա:

\* \* \*  
ԻՆՏՊՅՍ ԿԱՐԵԼԻ Է ՊԱՀԵԼ  
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայ եկեղեցու միասնականութեան հիմնական պայմանը այն կապն է, որով եկեղեցական իւրաքանչիւր համայնք կամ համայնքների հաւաքականութիւն հաղորդակցում է եկեղեցու Հոգեւոր Կենտրոնի հետ: Ըստ այսմ՝ եկեղեցին ներկայացնում է մի համակենտրոնացած կազմակերպութիւն՝ բնորոշուած բարոյական նկարագրով:

Որպէսզի, սակայն, այս կազմակերպութիւնն օժտուած լինի կենդանի եւ յաւերժ գործօն գորութեամբ՝ պայման յարաճուն զարգացման եւ յառաջդիմութեան, անհրաժեշտ է, որ նրա վարչական գործառնութիւնը հիմնուած լինի մի ապակենտրոնացեալ դրութեան վրա: Այս դրութիւնը կը դառնայ աւելի հրամայական, երբ համայնքական եկեղեցիները կը գտնեն միմեանցից տարբեր պայմաններով կառավարող քաղաքական եւ ընկերային շրջանակներու եւ երբ, մասնաւորապէս, Մայր – Կենտրոնը զրկուած է առաջնորդողի դեր կատարելու բացարձակ ազատութիւնից, եւ զերծ չէ եկեղեցու ողու հետ անհաշտ ֆիզիչ եւ պարտադրիչ օտար ազդեցութիւնից:

Հայաստանեայց եկեղեցու միասնականութիւնը, գոնէ ութհարիւր վաթսուներեակաթնամեակից մինչեւ համաշխարհային պատերազմի նախօրեակը, սլառակուել է էջմիածնի Մայր – Աթոռի բարոյական հեղինակութեան տարածմամբ՝ Ամենայն Հայոց հոգեւոր կեանքի հետ կապ ունեցող, կամ քրիստոնէական հաւատի հիմնական սկզբունքներից բխած գործառնութիւնների վրա՝ թոյլ տալով, որ եկեղեցական զանազան շրջանակների — Կաթողիկոսութիւնների եւ Պատրիարքութիւնների — վարչական գործերը տնօրինեն մի տեսակ ապակենտրոնացեալ դրութեամբ, իւրաքանչիւր շրջանակ ունենալով որպէս ուղեցոյց կամ վարքագիծ իր ուրոյն Սահմանադրութիւնը կամ ներքին Կանոնադրը:

Այսպէս, Մայր Աթոռ, նախապատերազմեան շրջանում, իր

Պալատէնիայով, վերին հսկիչն եւ ուղղիչն է եղել ուստահայ եկեղեցական կազմակերպութիւնները՝ թէ՛ հոգեւոր եւ թէ՛ վարչական գործերին:

Կիլիկիոյ Հայրապետական Աթոռը Սիսուս, յորմէհետէ ստացել է ազգային ներազդործում եւ օրինականացում, որպէս առանձին կաթողիկոսութիւն եւ նոյն իսկ որպէս հոգեւոր ուրոյն ու անկախ կենտրոն՝ մի որոշ շրջանակում, կառավարել է վարչական ապակենտրոնացեալ կազմակերպութեամբ, եւ այդպէս էլ շարունակում է կառավարել մինչեւ այժմ:

Այսպէս է եղել որոշ չափով եւ Երուսաղէմի Պատրիարքութիւնը, նախապատերազմեան շրջանում, բոլորովին զերծ չլինելով, սակայն, Պոլսոյ Պատրիարքութեան հակակշիռից մասնաւորաբար իր տնտեսական եւ մատակարարական գործառնութիւնների մէջ: Իսկ ներկայումս նա վարչապէս բոլորովին անկախ է եկեղեցական ուր եւ իցէ վերին հեղինակութիւնից: Ուրեմն սա էլ կառավարում է ապակենտրոնացման սկզբունքով՝ պահելով իր բարոյական կապը Մայր Աթոռի հետ՝ զուտ հաւատքի եւ դաւանանքի վերաբերեալ խնդիրներում:

Տարբեր չէր նաեւ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը նախապատերազմեան շրջանում՝ բովանդակ թիւրքիայի, Եւրոպայի, Բալկանները, Եգիպտոսի եւ նոյն իսկ երբեմն Ամերիկայի առաջնորդութիւններով եւ հովուութիւններով: Իսկ այժմ, քաղաքական պայմանների շրջումով, նոյն այդ նկարագիրը առ երեւոյթս պահում է միայն թիւրքիոյ սահմաններում:

Համաշխարհային պատերազմից յետոյ, քաղաքական վերվայրումների եւ ստեղծած նոր եւ նմանը չունեցող պայմանների որպէս բնական եւ անխուսափելի հետեւանք, Եկեղեցին կորցրեց իր կառավարական բնականոն ուղղութիւնն ու ընթացքը:

Կիլիկիոյ Աթոռը, վտարանդի, ունեցաւ ի վերջոյ իր նոր կենտրոնը Սիւրիական նորաստեղծ Հանրապետութեան սահմաններում եւ Ֆրանսական իշխանապետութեան թեւարկութեան ներքեւ: Սահմաններ, որտեղ համախմբել էին ոչ միայն Կիլիկիայից, այլ եւ Թիւրքիայի Արեւելեան նահանգներից արմատահան եղած եւ հարածական հայութեան կոտորակած բեկորները:

Երուսաղէմի Աթոռը կարողացաւ պահել իր հոգեւոր շրջանակը, միայն իր մի շարք տեսչութիւնները կամաւորապէս փոխանցելով Կիլիկիոյ Հայրապետական Իշխանութեան, սոցա փոխարէն ստեղծելով կամ կազմակերպելով եկեղեցական նոր համայնքներ անգլիական թե-

ւարկութիւնը վայելող արաբական հողերի վրա եւ իր հոգեւոր իրաւասութեան ներքեւ:

Կ. Պոլսի Աթոռը կորցրեց արտասահմանեան իշխանութիւնը:

Քաղաքական յեղաշրջութիւնների հետեւանքով սոյն Պատրիարքութեան ենթակայ բոլոր արտասահմանեան թեմերն ու հովուութիւնները իրանց հոգեւոր - վարչական գործառնութիւնների ղեկավար կենտրոն ճանաչեցին Էջմիածնի Մայր Աթոռը, որից ստանում են ցարդ իրանց կառավարական ուղղութիւնը:

Աւելորդ է ասել թէ այսպիսի մի կենտրոնացում թէ՛ ժամանակավրէպ է եւ թէ՛ աղբւր բազմապիսի շարիքների:

Բացատրենք:

Մի կենտրոնացեալ վարչաձեւ, յետպատերազմեան սկզբնական շրջանում, գուցէ/տրամաբանական կերպն էր եւ նպատակայարմար՝ Էջմիածինը լինելով ազատ պայմանների ներքեւ շնչող եւ գործող ամենից ուժեղ եւ հեղինակաւոր հիմնարկութիւնը, երբ իր կապը՝ բոլոր եկեղեցական համայնքների հետ բնականոն եւ ամուր էր:

Դրանից յետոյ եւ այժմ, սակայն, իրերն եւ պայմանները փոխել են անհունապէս: Էջմիածնի Մայր Աթոռը գտնուում է Խորհրդ. Միութեան սահմաններում եւ Խորհրդային կառավարութեան բացարձակ ազդեցութեան ներքեւ:

Խորհրդային իշխանութիւնը ոչ միայն չի ճանաչում կրօնն ու կրօնական իշխանութիւնը, այլ եւ յարձակողական դիրքով հակալիւթական եւ անասուածական է իր ընկերային ըմբռնումների եւ սկզբունքների խտտութեն նիւթապաշտ բնոյթի բերումով: Նա թոյլ չի տայ, որ եկեղեցին ապրէ եւ գործէ համաձայն իր կոչումին՝ ներշնչելով ժողովուրդների կրօնական - բարոյական դաստիարակութեան գործին եւ մշակելով հոգեւոր բարձրագոյն կեանք նոցա մէջ:

Այսպիսի աննպաստ պայմանների ներքոյ խարխափող մի եկեղեցի, աւելի ճիշտ՝ մի եկեղեցական կազմակերպութիւն — որպիսին է Էջմիածնի Մայր Աթոռը — բացարձակապէս անբնական է որ կամենայ շարունակել իր առաջնորդողի դերը Սփիւռքի եկեղեցիների վարչական գործերում: Ոչ միայն անբնական է, այլ եւ վտանգաւոր է: Ապացոյցներ չեն պակասում, տարաբախտաբար: Գաղութահայութեան ներկայ պառակտեալ վիճակը արդիւնք է կուսակցական հակամարտութիւններից աւելի՝ Սփիւռքի եկեղեցիների Մայր Աթոռի հետ ունեցած վարչական անբնական յարաբերութիւնների:

Արդարեւ, ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ այսպիսի անբնականոն պայմանների ներքոյ՝ ի զուր է որոնել եւ պահանջել վարչական մի բռնագրութի միութեան մէջ, այն էլ՝ էջմիածնի կաշկանդած եւ անհետահաս հեղինակութեան ներքեւ: Ձենք ուզում ծանրանալ այն բռնադատեալ կազմակերպութեան վրա, որով էջմիածինը կիրառում է իր վարչական իշխանութիւնը, եւ որին տուն տուող ձեռքի թաքուն նպատակակէտը դժար չէ ըմբռնել՝ նկատի ունենալով նրա կրօնափանդ ձգտումը:

Տրած լինելով այս տխուր եւ անուրանալի իրողութիւնը՝ ԵԿԵՂԵցու միասնականութիւնը չի խախտուում, ընդհակառակը, աւելի է անխախտ եւ զօրաւոր լինում, եթէ խորհրդային սահմաններից դուրս գտնուող Սիւրբ Բարձր եկեղեցական համայնքները — Կիլիկիոյ Հայրապետութեան եւ զոյգ Պատրիարքութիւնների նման — պահելով հանդերձ իրանց հոգեւոր — բարոյական կապը Մայր Աթոռի հետ՝ գուտ վարչական գործերը տնօրինեն ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱՅԼ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ:

Ահա այդ հիմունքները՝ ըստ մեր ըմբռնման եւ համոզման:

Անհրաժեշտ է կիրարկել Եկեղեցական — վարչական ապակեկտրոնացեալ դրութիւն՝ Եկեղեցական — կազմակերպչական շրջանակների հետեւեալ բաժանումներով .—

Ա. — ՄԱՅՐ ԱԹՈՒ՝ Խորհրդ. Միութեան սահմաններում գտնուող եկեղեցական համայնքներով:

Բ. — ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՒ՝ Միւրիական Հանրապետութեան սահմաններում ապրող եկեղեցական համայնքներով:

Գ. — ԵՐՈՒՍԱԿԱՆ ԱԹՈՒ՝ Պաղեստինի, անգլիական իշխանութեանց կամ Անգլիոյ հովանաւորութիւնը վայելող նորակազմ պետութիւնների — Հնդկաստանի, Եգիպտոսի, Կիպրոսի, Անդը — Յորդանանի, Իրաքի, ինչպէս նաեւ Իրանի եւ Եթովպիոյ հայ եկեղեցական համայնքներով:

Դ. — Կ. ՊՈԼՍԻ ԱԹՈՒ՝ Թիւրքիայի եկեղեցական համայնքներով, եթէ կան այդպիսի համայնքներ՝ բացառութեան իրական նշանակութեամբ:

Ե. — ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱԹՈՒ՝ Միացեալ Նահանգաց եւ Հարաւային Ամերիկայի եկեղեցական համայնքներով:

Զ. — ԵՒՐՈՊԵԱՆ ԵՒ ԲԱԼԿԱՆԵԱՆ ԱԹՈՒ՝ Եւրոպական եւ Բալկանեան մեծ ու փոքր պետութեանց մէջ գոյութիւն առած եկեղեցական համայնքներով:

Ոչ մէկ տարակոյս, որ Մայր Աթոռը՝ իր Ընդհանրական Հայրապետով — Կաթողիկոսով — կը պահէ իր գերազահութիւնը եւ հեղինակաւոր ձայնը Հաւատքի եւ Դաւանանքի հարցերում:

Կիլիկիոյ Աթոռը՝ իր Տեղական Հայրապետով, ունենալով հանդերձ Ընդհանրական Հայրապետի ներապետական իրաւասութիւնները իր սահմաններում, ենթարկուում է Մայր Աթոռին՝ Հաւատքի եւ Դաւանանքի վերաբերեալ խնդիրներում:

Երուսաղէմի եւ Կ. Պոլսի Աթոռները կը պահեն իրանց իրաւական գոյավիճակը՝ վերեւ նշանակած սահմաններում:

Ամերիկայի եւ Եւրոպ — Բալկանեան Աթոռները կը վերածեն Արքեպիսկոպոսութիւնների, առաջինի աթոռանիստը լինելով Նիւ — Եորք, երկրորդինը՝ Փարիզ:

Աւելորդ է ասել՝ թէ Ամերիկայում, Եւրոպայում եւ Բալկաններում կը պահեն յարգէն գոյութիւն ունեցող առաջնորդական թեմերը, եւ կը ստեղծեն նորերը՝ համաձայն աշխարհագրական պահանջների:

Հինգ տարին մի անգամ տեղի կունենայ Եկեղեցական Համագումար, որին կը նախագահէ Ընդհանրական Հայրապետը եւ նրա բացակայութեան՝ փոխանորդաբար Կիլիկիոյ Հայրապետը կամ Երուսաղէմի Պատրիարքը: Ժողովատեղին կը լինի Երուսաղէմի Հայոց Ս. Յակոբեանց վանքը:

Այս Համագումարում նկատի կառնեն Հաւատքի, Դաւանանքի, Եկեղեցական կարգապահութեան եւ բարեկարգութեան վերաբերեալ բոլոր հարցերը: Ժողովին կը մասնակցեն բոլոր առաջնորդները, եպիսկոպոսները, եկեղեցիների քարոզիչները, աւագ — երէցները, եւ թեմական Երեսփոխանական Ժողովների կողմից ընտրւած մէկ — մէկ աշխարհական պատգամաւորներ:

Բաց ի սրանից, իւրաքանչիւր Աթոռ, տարին մի անգամ, կունենայ իր Շրջանակային Համագումարը՝ թեմակալի նախագահութեամբ եւ բոլոր հոգեւորականների եւ մէկ — մէկ աշխարհական ներկայացուցիչների մասնակցութեամբ, նպատակ ունենալով վիճակին կամ Թեմին ազային — մշակութային, կրօնական — հոգեւոր կեանքի զարգացումը:

Գուցէ առարկի. — Եթէ իրերը այսպէս շրջեն՝ Հայաստանի Կառավարութիւնը կամ խորհրդային իշխանութիւնը կարող է ջնջել էջմիածնի Հայրապետութիւնը:

Կրօնը եւ կրօնական հաստատութիւնները քանդելու հետամուտ մի իշխանութիւն՝ առնելով այսպիսի քայլ՝ ճշմարիտ կը լինի այն

վերագրումը, թէ Հայոց Կաթողիկոսի վերջին ընտրութիւնը թոյլատրեցաւ լոկ քաղաքական նկատումներով: Եւ այս պարագայում՝ տարակուս չկայ թէ փոքրագոյն չարիքը պիտի լինի գոհել էջմիածինը — ոչ թէ նրա գաղափարը կամ խորհուրդը — փրկելու համար Հայոց Եկեղեցին, այդ գաղափարը կամ այդ խորհուրդը, խնայելու համար այս Եկեղեցուն այն լայն պատակտումները, անկարկատելի խրամատները, որ էջմիածնից հասած տեղի եւ անտեղի հրամաններն եւ սպառնալիքները, Եկեղեցու միասնակամուրթիւնը շեշտող բարձունքների հետ անհաշտ, ստեղծել են եւ կը ստեղծեն գաղթահայ Եկեղեցիների մէջ՝ պարզելով գայթակղեցուցիչ, ընդվզեցուցիչ եւ կորստարբեր երևոյթներ:

Ստուգիւ, եթէ էջմիածին անկարող է Խորհրդ. Միութեան սահմաններում կիրառել իր առաքելական պաշտօնն ու հեղինակութիւնը լիակատար ազատութեամբ եւ տարողութեամբ, զրկած լինելով անհրաժեշտ բոլոր գործօններից — դպրոց, թերթ, հրատարակութիւններ, քարոզչութիւն՝ իր լայն նշանակութեամբ. եւ եթէ միւս կողմից իր անհարկի միջամտութիւնները Սփիւռքի եկեղեցական — վարչական գործերում, ուղղակի թէ անուղղակի ցուցումներով հակակրօն կառավարութեան, անվերջ կռիւ ու բաժանում միայն պիտի բերեն Եկեղեցում էլ՝ անհնար դարձնելով նրա միասնականութեան պահպանումը, եւ առաջնորդելով նրան դէպի կատարեալ եւ անխուսափելի քայքայում, — վարանումը՝ վճռական մի քայլով փրկելու Եկեղեցին իր գոյութեան սպառնացող ստոյգ վտանգից՝ պիտի լինի անարդարանալի եւ դատապարտելի:

Եւ այս փրկութիւնը հնարաւորող միակ միջոցն է Սփիւռքի եկեղեցական համայնքների եկեղեցական — վարչական ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄԸ, որով կարելի կը լինի պահել նաեւ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ բարոյական ամուր հիմերի վրա:

ԸՆԾԱՅԵՑԻ

### ԱՆՑԵԱԼՔ

#### ԱՏՐՊԵՏ

Մայիս 27-ին, Լենինականում, մեռել է գրող Ատրպետը: Նրա իսկական անունը Սարգիս Մուրաջաճեան էր: Ծնւել էր 1850 թ. Կարս քաղաքում: Միջնակարգ կրթութիւնը ստացել էր Պոլսում: Սկսել էր գրել 80-ական թւականներից: Իր առաջին վիպական գործն է «Խել կարապետը», որից յետոյ արտագրել է բազմաթիւ զեղարեւստական երկեր, ինչպէս «Արմաստ», «Տժվժիկը» եւ այլն, որոնցից եւ ոչ մէկը միջակութիւնից չեն բարձրացել: Ունի նաեւ պատմական ուսումնասիրութիւններ՝ «Խալիֆաթ», «Իմամաթ» եւ այլն, ինչպէս նաեւ հնագիտութեան, զրամագիտութեան, տեղագրութեան, արեւստի պատմութեան նւիրած աշխատութիւններ: Վերջին տարիները գրում էր զլիւսւորապէս «Հանդէս Ամսօրեայ»ում: Իբրեւ մարդ, Ատրպետը իրեն վարկարեկեց 1918 թ., թիւրքերի տիրապետութեան ժամանակ Ալեքսանդրապոլում՝ կատարելով անպատիւ յանձնարարութիւններ թիւրք զինւորականների համար:

#### ՀԱՅԱՍՏԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ

Մայիս 28-ին, Ժընևում, վախճանւեց երիտասարդ գրագիտուհի Տիկ. Հայաստան Գէորգեանը: Հանգուցեալը Շիրակի Դահարլու գիւղից էր, ծնւած 1901 թ. յունւ. 5-ին, գիւղական ուսուցչի ընտանիքում: Աւարտել էր Կարսի գիմնազիտը: Համարձակ եւ ըմբոստ բնւորութեան տէր աղջիկ էր, Դաշնակցական ուսանողական շարքերի մէջ: 1917 թ. նոյեմբերին, հակառակ հօր թախանձանքի, ծպտւած իբրեւ «երիտասարդ», մտնում է կամաւորական խմբերի մէջ, իբրեւ հեռախօսի պաշտօնեայ, իսկ յետոյ՝ փոխադրւում է Առաջին Հայկական Հրացանաձիգ գունդը, որպէս գնդացիի զինւոր: Մասնակցում է հայ — թիւրքական կռիւներին եւ 1918 թ. փետր. 28-ին, Իլիճայի

ճակատամարտում ցոյց տւած քաջութեան համար, ստանում է չորրորդ աստիճանի Գէորգեան խաչ:

Պատերազմից յետոյ, Հայաստան Գէորգեանը անցնում է արտասահման ուսանելու նպատակով: 1920 - 23 թ. յաճախում է Սորբոնի դրական բաժինը: Ապա տեղափոխւում է Գերմանիա, ուր ամուսնանում է Հանց Վինքլէրի հետ, որ հետագային նշանակւում է Թիւրինգէնի համալսարանի դասախօս: Հայաստանն ինքն էլ ռուս գրականութեան դասախօս է կարգւում նոյն համալսարանում: Մի պահ դրուում է խորհրդային կարգերով եւ 1927-ին մեկնում Հայաստան, բայց հիասթափւած վերադառնում է արտասահման, ուր ներընդ է գրականութեան: Իր անդրանիկ տպւած գործն է «Վիշապների աշխարհում»-ի առաջին հատորը (1934 թ.), որ ջերմ ընդունելութիւն գտաւ ամենքի կողմից: Ձեռագիր վիճակի մէջ պատրաստ է եւ նոյն գործի երկրորդ հատորը: Տիկ. Հայաստանի նպատակն էր ներկայացնել վերջին երեք տասնեակ տարիների հայ կեանքը վիպական ձևով: Ափսո՛ս, անողորմ մահը զրկեց նրան այդ հնարաւորութիւնից:

ԶԱՏԻԿ ՄԱԹԻԿԵԱՆ


Յունիս 3-ին, Նիւ Եորքում, մեռել է ամերիկահայ յայտնի հասարակական եւ դաշնակցական գործիչ Զատիկ Մաթիկեանը: Զատիկը Սեբաստիայի Ղաւրազ գիղից էր, ծնւած 1878 թ.: Դեռ պատանի հասակում, մեկնելով Պոլիս՝ ուսում է ստանում Պէրպէրեան վարժարանում եւ արդէն աշակերտական նստարանի վրա՝ մասնակցում է այն ժամանակւայ երիտասարդական - յեղափոխական շարժումներին: Այդ պատճառով ձերբակալւում է եւ օտար դեսպանների միջամտութեան չնորհիւ ազատւում եւ մեկնում է Փարիզ, ուր սովորում է մեքենագիտութիւն: 1896 թ. սկսած անդամագրւում է Հ. Յ. Դաշնակցութեան, որի ծոցում մնաց մինչեւ մահ:

1905 թ.-ին Զատիկը տեղափոխւում է Ամերիկա եւ հաստատւում է Նիւ Եորքում: Այստեղ նա մտնում է Հ. Յ. Դ. տեղական Կոմիտէի մէջ եւ շուտով աչքի ընկնում իր եռանդուն գործունէութեամբ: Այնուհետեւ Զատիկի անունը կապւած է Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպութեան հետ — տեղական, Շրջանային կամ Կենտրոնական Կոմիտէի անդամ, շրջուն գործիչ, կազմակերպիչ, բանախօս կամ ներկայացուցիչ, «Հայրենիք»-ի աշխատակից, ուր դրւում էր

Ալիքեան անունով — Զատիկը ամէն տեղ էր եւ համակ եռանդ ու գործ: Իր բնաւորութեամբ քաղցր ու զիւրամատչելի, զւարթ ու ընկերական, ուր լինում էր՝ ամէն տեղ հետը տանում էր կեանք ու ծիծաղ:

1919 թ. Զատիկը մասնակցեց Արեւմտահայ Համագումարին, Փարիզում, իրրեւ համաժողովրդական քւէով ընտրւած 4 պատգամաւորներից մէկը: Այնտեղից որոշած էր անցնել Հայաստան եւ այնտեղ հաստատուել, սակայն, քաղաքական դէպքերը արգելք եղան, եւ նա Պոլսից ստիպւած եղաւ նորէն Ամերիկա վերադառնալ ու դարձեալ լծւել հանրային գործունէութեան: Վերջին տարիները ամբողջապէս նւիրւած էր կուսակցական աշխատանքի, իրրեւ Հ. Յ. Դ. Ամերիկայի շրջանի գործիչ: Մահը նրան գտաւ իր պարտականութեան գլխին:

Զատիկ Մաթիկեանի մահով Ամերիկայի հայ դաղութը կորցնում է իր նւիրւած գործիչներից մէկին:



# ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

## ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մի տարի է, որ Հայաստանի մշակույթը անօրինակ տագնապ է ապրում. բոլոր շեղիկները կոպիտ ցախաւելը շարունակում է աւեր գործել: Այ. Բակունց, Գ. Մահարի, Վ. Թաթաւեան, Գր. Տէր - Սիմոնեան, Վ. Նորենց, Ալազան, Վահանգեյի — խորհրդային գրականութեան երէկայ զարդերը դեռ բանտումն են: Բայց հայածանքը այդքանով չի վերջացած. անընդհատ մաքրագործում են գրականութեան բոլոր անկիւնները: Այս տեսակետից, առանձնապէս ուշագրաւ է Հայաստանի Գրողների Միութեան այն ընդհանուր ժողովը, որ տեղի ունեցաւ ապրիլ 17 - 21-ին. «Այսպիսի ժողով առաջին անգամն է տեղի ունենում Երեւանում», իրաւամբ նկատում է «Գրակ. Թերթ»-ը (23 ապր.):

Այդ ժողովը վարելու համար յատկապէս Մոսկուայից ուղարկել է ռուս բոլոր շեղիկ գրող Վ. Կիրպատինը, որ մի ընդարձակ նառով քննութեան է ենթարկել հայ գրականութեան անցեալն ու ներկան եւ հրահանգներ տւել հայ գրողներին հետեւելիք վարքագծի համար: Կիրպատինի դատադուրբիւնները հայոց գրականութեան անցեալի վերաբերմամբ կարող ենք մի կողմ դնել. աւելի կարեւոր է նրա դատն ու դատաստանը ներկայի եւ ապագայի մասին: Ներկայումս ամէն կողմ վնասարարութիւն. «Միմոնեանը, Բակունցը, Ալազանը եւ ուրիշներ, գրականութեան մէջ, գոր-

ծել են որպէս վնասարարներ, որպէս հակայեղափոխականներ, որպէս տրագիկոսներ, դաշնակներ, որպէս միջագային կապիտալի գործակալներ, որպէսզի հայ ժողովրդին շեղէին երջանիկ կեանքի ուղուց եւ վերադարձնէին անցեալում նրա ապրած բոլոր սարսափներին»: \*)

Բայց այսօր արդէն սահմանափակում վնասարարների թիւը. Կիրպատինը բռնում է եւ եղիշէ Չարենցի օձիքը. «Վտանգաւոր ուղու վրա է գտնուում այժմ — այդ մասին պէտք է ասել ամբողջ ձայնով — Չարենցը ... Չարենցը, որպէս պոէտ, իր ստեղծագործութիւնն սկսեց յուսահատութեան երգերից: Նրա առաջին երգերը լի են խաւարով»: Ապա՝ Չարենցը «լսեց յեղափոխութեան կանչը եւ անցաւ նրա կողմը»: Հետեւանք եղաւ՝ Չարենցի «ստեղծագործութեան յաջողութիւնը, եւ փառք բերեց նրա համար»: Բայց «նա ռադիկալ ինտելիգենտ էր անցած յեղափոխութեան կողմը եւ ոչ թէ մի մարդ, որը լիովին ձուլւել էր պրոլետարիատի շարքերի մէջ»: Չարենցը ժխտում է «կուլտուրական ժառանգութիւնը», «ամբողջապէս ժխտում է այն, ոչնչացնում է

\*) Այս եւ հետագայ բոլոր մէջբերումները առնւած են «Գրական Թերթ»-ի 23 ապր. եւ 1 մայիս համարներից:

ամբողջ հինը, այդ բնութիւնն է, ինչ ստեղծել է ժողովուրդը եւ մեծ գրողները»: Իսկ «հետագայում Չարենցն ընկնում է հակայեղափոխական նացիոնալիստների ազդեցութեան տակ»: «Նա ստեղծում է մի գիրք («Գիրք նախապարհին»), որն ամբողջապէս գրւած է որպէս հայ գրականութեան «ազգային յատկանիշների խտացման» քերթիայի պատկերացում»:

Թէ ի՞նչ է այդ «ազգային յատկանիշների խտացման» տեսութիւնը, Կիրպատինի ասելով, Այ. Բակունցը դատական քննիչին տւած իր ցուցումներն. «Մեր խմբակի գործուղութիւնը, ամբողջովին վերցրած, ուղղւած էր Համ. կուսակցութեան ազգային քաղաքականութեան դէմ եւ ի հակակշիռ կուսակցութեան «ձեռով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրա» լոգունգի, մենք պաշտպանում էինք «ազգային յատկանիշների խտացման» քերթիւք. քաղաքականապէս այդ նշանակում էր «ձեռով ազգային, բովանդակութեամբ նացիոնալիստական կուլտուրա»:

Ապա, առաջ բերելով «կուլտուրական ժառանգութիւնը ժխտող», «ամբողջ հինը ոչնչացնող» Չարենցին հետեւեալ կտորը —

*Թո՛ղ հուրհուրաւ իմ զբըւծ ձեր ոգու  
ցուրը լուսէ,  
Թո՛ղ երգերում իմ այսօր, խօսքերում  
իմ՝ ձեր ջանքը եռայ,  
Ո՛վ մեծ վարպետներ, իմ թախան՝  
ձանքը լսէք,  
Ձեր անմահ կնիքը դրէք իմ անմար  
երգերի վրա... —*

— Կիրպատինը յայտնում է, որ՝ «Չարենցի վերաբերմամբ, չնայած նրա բոլոր սխալներին, հայ խորհրդային հասարակայնութիւնը, հայ ժողովուրդը ցուցաբերել են հիանալի համբերատա-

րութիւն եւ մեծահոգութիւն», բայց նա շահագործել է այդ վստահութիւնը: Այժմ, մի վերջին անգամ, Մոսկուայի լիագործ առաջարկում է հայ բանաստեղծին քողնել «հակայեղափոխական նախնի» եւ դուրս գալ «լուսաւոր ուղի»: «ուղղելու ուղին Չարենցի համար փակւած չէ»:

Չարենցին աքցում է եւ Ա. Ոսկերչեանը, թէ՛ «Չարենցը մեծ յանցանքներ է գործել ժողովրդի նկատմամբ, նա մասնակից է եղել հուլայեղափոխական — նացիոնալիստների գործունէութեան»: Ելոյթ ունեցող ուրիշ գրողներ էլ խօսել են Չարենցի դէմ:

Չարենցի դէպքը եզակի չէ. Հայաստանի գրողների ընդհանուր ժողովում «մերկացեցին» կամ դատապարտեցին նաեւ շատ ուրիշ գրողներ: Յիշենք միայն մի քանի օրինակ: Այսպէս՝ գրող Արագին կասկածի տակ է դնում *Դ.Եր. Դեմիրճեանին*, որի համար «մինչեւ այսօր էլ պարզ չէ ազգային ձեւի խնդիրը», Ռ. Չարեանը՝ «մէկը մեր երիտասարդ քննադատներից, որոնք ոչ այնքան հեռու անցեալում խնկարկել են Բակունցի եւ Ալազանի նման նացիոնալիստ — հակայեղափոխականների գրական «ստեղծագործութիւնները», խօսում է «իր կատարած սխալների մասին» եւ մեղա՛ է կարդում: Չարէլ Եսայեանը ծանրանում է «գրական կազմակերպութեան նացիոնալիստական — տրոցկիստական նախնի դեկավարութեան մեր գրականութեան հասցրած չարիքների վրա» եւ, ի միջի այլոց, պահանջում է, որ «գրողն ինքը ստեղծագործելիս պէտք է անկեղծ լինի»: Չարէլ Եսայեանն եւ անկեղծութիւն... Տիկինը զարմանով հարցնում է. «Ինչո՞ւ մեր գրողներից շատերը խուսափում են գրելու ժամանակակից թեմաների շուրջը, ինչո՞ւ նրանց յաջողում է աւելի շատ բացասական տիպեր տալ, քան դրական»: Հետաքրքրական է, որ

Չ. Եսայանը ինքն էլ «խուսափում է գրելու ժամանակակից բեմաների շուրջը» եւ գրադրած է անցեալի յուշերը քրքրելով...

Բանաստեղծ Ս. Տարոնցին, ժողովի առջեւ խոստովանում է «իր ստեղծագործութեան մէջ թոյլ տրւած մի շարք նացիոնալիստական սխալները: Կանգ է առնում հակայեղափոխական նացիոնալիստ Ալազանի եւ Նորենցի հետ միասին «Գրական Թերթ»-ում վարած նացիոնալիստական քաղաքականութեան վրա»: Բայց, «հետագայում ելոյթ ունեցող ընկերները իրաւացիօրէն գտան, որ Տարոնցին աւելին կարող էր ասել իր սխալների, հակայեղափոխական սրիկաներ Ալազանի եւ Նորենցի մասին, որոնց հետ երկար ժամանակ չափազանց սերտ կերպով կապւած է եղել»:

Արաքսը, Ոսկերչեանը եւ ուրիշներ խոստովանում են Մկրտիչ Արմէնի «նէտակցիոն ուսմանտիզմը», «գոռոգութիւնն ու մեծամտութիւնը», արտայայտած հակախորհրդային տեսակետները: Մ. Արմէնը վարդի գոյներով նկարագրել է հին Գիւմրին, ինչ որ բաշտելիկեան հասկացողութեամբ ծանր յանցանք է. պէտք է անցեալը միշտ սեւ ցոյց տալ, որպէսզի խորհրդային ներկան ներմակ երեւայ:

Անողոք քննադատութիւնների եւ յարձակումների ենթարկւեցին նաեւ ուրիշներ, ինչպէս Ա. Յովհաննիսեանը, Մ. Նալբանդեանի մասին գրած գրքի համար, Կ. Մելիք - Օհանջանեանը, Վ. Թէրզիբաշեանը, Ս. Սողոմոնեանը, Սուրբաթեանը, Կարինեանը, Պետերասի ղեկավար Չոփուրեանը եւ ուրիշներ: Իր գոեհիւրութեամբ առանձնապէս զգւելի է Սիմ. Յակոբեանի ելոյթը: Նա «Գրողների Միութեան եւ գրողների ուշադրութիւնն է հրաւիրում դէպի դեպրոցները: Այնտեղ աւանդում է գրականութիւն, չգիտեմք, թէ ովքեր են այդ

ուսուցիչները, ինչպէ՞ս են աւանդում գրականութիւնը: Այդ առանձնապէս կարեւոր խնդիր է, որովհետեւ մեր նախկին դասագրքերը լիքն էին նացիոնալիստական տիպի սխալներով:

«Ընկ. Ս. Յակոբեանը դնում է եւ մի ուրիշ կարեւոր հարց եւս. դա լրտես հակայեղափոխական Գր. Սիմոնեանի եւ Ն. Ստեփանեանի գլխաւորած տերմինաբանական յանձնաժողովի որոշումների վերանայումն է: Պէտք է վերանայել այդ որոշումները եւ փոխել մի քանի կէտեր:

«Խօսելով դասագրքերի մասին՝ ընկ. Ս. Յակոբեանը նշում է, որ Չարենցը դասագրքի էր կազմել, բայց այդ դասագրքից հանել էր ուսական եւ երազական գրողներին, մի խօսքով՝ օտար հեղինակների գրած գրքերը»:

Հարց է առաջ գալիս. ո՞ր էր Ս. Յակոբեանը երէկ, երբ Գր. Սիմոնեաններն ու Չարենցները «ի պատի» էին, ինչո՞ւ էր լռել եւ ինչպէ՞ս չի ամաչում այդպէս խօսել այժմ, երբ Սիմոնեանները բանտում են, իսկ Չարենցները՝ հարածի տակ առնւած:

Համագումարում առանձին տեղ է բռնում Ա. Իսահակեանի պարագան: Ինչպէս յայտնի է, արտասահմանում նա էլ «տրոցկիստ» էր, համակրում եւ գաղափարական ու բարեկամական կապերով կապւած էր Խանջեանի, Ալ. Բալուցի, Գ. Մահարիի, Ալազանի եւ ուրիշների հետ՝ Փարիզի սրճարանները ասպարէզ դարձնելով «հակայեղափոխական ելոյթների»: Երբ այլեւս Փարիզ մնալը դարձաւ անկարելի — պահանջում էին վերադառնալ Երեւան եւ սպառնում էին կտրել ամսականը — սրտի ծանր կծկումներով զնաց Հայաստան: Անշուշտ, եթէ ապրուստի փող վերադառնալու մէկը գտնուէր, կը գերադասէր մնալ արտասահմանում:

Փող տուղ չի գտնուել, եւ Ա. Իսահակեանը գնաց եւ ...

հակեանը գնաց եւ ... ահա՛ Կիրպոտի մի բացազանչութիւնը. «Իսահակեանը նստած է այստեղ, մե՛զ հետ, մեր շարքերում»: Ու Մոսկւայի լիագործ փառաբանում է «Արու Լալայի» հեղինակին, որ, վերջապէս, գտել է իր տեղը: Այն պահուն, երբ իր գաղափարակից եւ ընկեր բակուցները, Ալազաններն ու Մահարիները բանտում են, մահաւան սպառնալիքի ներքոյ, երբ իր մտերիմ Չարենցի գլխին շանք ու կայծակ են րափում, երբ ողջ Հայաստանի գրականութիւնն ու գրողները նետած են Ստալինի ու Բերիայի կոշտ կրունկների տակ, Ա. Իսահակեանը բարոյապէս հնարաւոր է համարում մի երկար գրութիւն ուղղել «Յոգովի»՝ դնելով այդ գրութեան վերնագիրը «Իմ ազատ եւ ստեղծագործ ժողովրդի հետ»: Ինչքան պէտք է բացած լինեն մարդու բարոյական ըմբռումները՝ գրելու համար նման մի թուղթ ա՛յն մթնոլորտում, որի մէջ տեղի էր ունենում Հայաստանի գրողների ժողովը: Չարենցը գէթ լսելու առաքինութիւնը ունեցաւ: Նա, ինչպէս վկայում է «Գր. Թերթը», «նոյն իսկ չմասնակցեց ժողովին եւ լռութիւն պահպանեց»: Իսկ Իսահակեանը այդքան տարրական առաքինութիւնից էլ գուրկ դուրս եկաւ եւ մի աման ոսպի համար ծախեց ե՛ւ իր միտքը, ե՛ւ խիղճը, ե՛ւ ամէն բան: Տեսէ՛ք, թէ նրա ձեռքը ի՞նչ անպիտան տողեր է գործում գրել իր երէկւայ ընկերների ու համախոհների մասին. «Ինձ շատ վիշտ պատճառեց նաեւ մի քանի գրողների ձերբակալութիւնը, որոնց մէջ ունէի անձնական ընկերներ, բայց երբ վերադարձայ Երեւան եւ հնար եղածի չափ ծանօթացայ իրերի եւ իրադարձութիւնների հետ, տեսայ, որ մեր կառավարութիւնը (որին ամալայման վստահում եմք) եւ ժողովուրդը՝ ուրիշ կերպ չէին կարող վարել նրանց հետ»:

Դժուար է, ի հարկէ, մարդկօրէն

հեռուից քար նետել մէկի վրա այս կամ այն արարքի համար, մանաւանդ, երբ մէկը գտնուում է խորհրդային պայմաններում, բայց կան դէպքեր, երբ նոյն իսկ մահաւան սպառնալիքի տակ, մարդ պարտաւոր է ազնիւ լինել: Մանաւանդ Ա. Իսահակեանի պէս մէկը, որին բնութիւնը տւել է տաղանդ եւ հասցրել է բարձրագոյն դիրքերի. մի Սիմ. Յակոբեան կարող է այդքան ցած ընկնել, Ա. Իսահակեանը իրաւունք չունի: Նա իրաւունք չունի իր ընկերների դիակի վրա իրեն համար անձնական բարեկեցութիւն հաստատել. ընկերների արխանով շահախառն հացը թոյնի պէս կը սպանէ նրան բարոյապէս...

Այսօր սարսափելի է խորհրդային իրականութիւնը: Եւ այդ դժոխքի մէջ հայ գրականութիւնն էլ գալարում է անասնի ցաւերով: Մանաւանդ, ծանր է կացութիւնը այս վերջին մէկ տարւայ ընթացքում, երբ պարզապէս խելագարութիւնն է տիրողը Հայաստանում: Այս տեսակետից ուշագրաւ է Հայաստանի կոմկուսի վերջին 10-րդ համագումարում պարզած պատկերը: Հայկոմկուսի քարտուղար Ամատունին, իր գեկուցման մէջ, երկարօրէն խօսել է եւ Հայաստանի գրականութեան ու արւեստի մասին: \*) Այդտեղից իմանում ենք, ի միջի այլոց, որ, իբր թէ, «Խանջեանի յանձնարարութեամբ Հայկիմոյում գումարել էր արւեստի աշխատողների ժողով, որտեղ դաշնակ թակուցը եւ ուրիշներ, Խանջեանի ցուցումով ... պահանջում էին, որպէսզի Կիմօն բանտների եւ գիւղացիների յեղափոխական կռիւն արտայայտող նկարների փոխառէն ցուցադրի դաշնակ արանտիրիստների յարձակումն Օտոմանեան Բանկի վրա, առաջարկում էին կիմօնկար պատրաստել հակայեղափոխական դաշնակ խմբապետ Անդրանիկի մասին»:

\*) «Գրական Թերթ», յունիս 12:

Իմանում ենք, որ հանգեանք հովանաւորել է Ալագանին, վանանդեցուն, Նորենցին, ինչպէս եւ «Նոյեմբեր» խմբակի պարագլուխներ Բակունցին, Մահարուն, Մ. Արմէնին եւ ուրիշներին, որոնց բուրքին միացրել է եւ «այդ բանդայի գլուխ կանգնեցրել լրտես Գ. Սիւննեանին»։ Այդ խմբակը «ժխտում էր Հայաստանում պրոլետարական գրականութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնը եւ հնարաւորութիւնը, հայկական խորհրդային գրականութիւնը հակադրում էր ռուսական խորհրդային գրականութեան»։ «Այդ նացիոնալիստական խմբակն սկսեց իր շուրջը համախմբել ինտելիգենցիայի հակախորհրդային, շովինիստական տարրերին՝ Բակունցը, Ալագանը, վանանդեցին եւ ուրիշները որպէս հակայեղափոխական տրոցկիստական տեղորոշուներ»։

Իմանում ենք նաեւ, որ «վերջերս Մկ. Արմէնը հրապարակով դատաւարանից իր անցեալ կապն այդ հակայեղափոխական խմբի հետ եւ իր անցեալ նացիոնալիստական գրածները»։ Որ «իր դիրքերի հակայեղափոխականութիւնը խոստովանեց գրող Ե. Չարենցը», որը Հայկումկուսի կենտր. կոմիտէի անունով ուղարկած նամակում գրել է. «Ես նոյնիսկ չեմ կասկածում, որ իրօք իմ սխալներն ունեն նացիոնալիստական, հետեւաբար եւ (սակում եմ ասել) հակախորհրդային էութիւն»։ Ամատունին սաստում է Չարենցին. «Ժամանակն է, վերջապէս, որ Չարենցը լրիւ հաշիւ տայ իրեն իր ամբողջ ուղու մասին եւ դադարեցնի թէ՛ իր եւ թէ՛ գրականութեան հանդէպ երկերեսանութիւնները։ Նա պէտք է հասկանայ, որ ամենից առաջ հարկաւոր է անկեղծութիւն»։

Ամատունուց իմանում ենք, վերջապէս, որ, «ներկայումս Ա. Իսահակեանը մի պոէմ է գրում վլադիմիր Իլիչի մասին, այդ գրածքի եւ ընդունում

նելով Լենինի մասին եղած ժողովրդական փոփոխութիւնը»։

Ամատունու գեկուցումից երեւում է, որ վերջին տարւայ ընթացքում գրական ստեղծագործութիւնը Հայաստանում բոլորովին կանգ է առել, ո՛չ մի աչքի ընկնող երկ չի արտադրել։ Հայ գրողները գրադատ են իրենց աղտոտ լաթերը լւանալով, փոխադարձ գուրտուհով, կամ իշխանութեան առջեւ փճնելով ու կուրորէն վերից տրած հըրամանները կատարելով։ Մտքի ազատութեան վերջին ճշոյլն իսկ վերացած է։

Բնորոշ է մի ուրիշ պարագայ։ Մերժելով «ազգային յատկանիշների խտացման» տեսութիւնը եւ նախորդ դեկալարութեան վերաբերումը դէպի «անցեալի ժառանգութիւնը»՝ նոր դեկալարութիւնը, ըստ էութեան, գնում է միեւնոյն ուղիով ինչ որ եւ հանգեանն ու Գր. Սիւննեանը, եւ նոյն իսկ աւելի «ազգայնական – յետադիմական» դիրքեր գրաւում։ Խանգեանի դեկալարութիւնն էլ ընդունում էր Մ. Նալբանդեանի եւ Գ. Սունդուկեանի գրական արժէքը. Ամատունին դեկալարութիւնը դրանց վրա աւելացնում է եւ Պերն Պոռչեանի, Ղ. Աղայեանի, Ալ. Ծատուրեանի եւ միջնադարեան ֆրիկի անունները։ Խանգեանի մարդիկ գոնէ գիտութիւն եւ գրական որոշ պատրաստութիւն ունէին եւ այս կամ այն հեղինակի արժէքը գրահատութեան ժամանակ ծանօթ էին այդ հեղինակի գործերին ի կարողանում էին իրենց տեսակէտների համապատասխան անուններ ընտրել։ Պատահաբար չէ, որ նրանք առաջ փաշեցին Սայեաթ Նուլայի, Խ. Արամեանի, Մ. Նալբանդեանի, Յ. Թումանեանի, Յ. Պարոնեանի, Ե. Օտեանի եւ այլոց անունները։ Ներկայ դեկալարութիւնը բացարձակապէս սգեւա է եւ չգիտէ, թէ ի՛նչ է անում, հակառակ դէպքում առաջ չէին փաշի Պ. Պոռչեանի ու Ալ.

Ծատուրեանի անունները — առաջինը բունդ պահպանողական — ազգայնական մի գրող, երկրորդը՝ Գամառ Քաթիպայի տիպի ազգայնական բանաստեղծ — ի՛նչ ընդհանուր բան կայ հայ — ֆրրիստոնեայ Պոռչեանի կամ «նացիոնա-

լիստ» Ծատուրեանի ու բոլշեւիզմի միջեւ...

Այսպէս թէ այնպէս, սարսափելի է Հայաստանի գրականութեան ներկայ վիճակը։

Ս. Վ.Ր.

ՐԱՅՖԻԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Այս տարի արտասահմանի հայութիւնը տօնում է Րաֆֆիի ծննդեան հարիւրամեայ տարեդարձի յոբելեանը։ Այդ նպատակով զանազան վայրերում կազմւած են յատուկ յանձնաժողովներ, որոնք պատրաստում են աշխարհում գտնուող իրարարեւելի հրատարակչական կոչը ծանօթացնում է Փարիզի յոբելեանական ձեռնարկի բնոյթին. բացի գրական — երաժշտական հանդէսից, հոկտեմբեր 30-ին, որոշւած է նաեւ հրատարակել մի ժողովածու՝ ներառած Րաֆֆիի կեանքին ու գործին։ Այդ նպատակով կազմւած է մի խմբագրական մարմին՝ բաղկացած հետեւեալ անձերից. Տ. Կամարական, Տոքթ. Վ. Թորգոմեան, Լ. Բաշալեան, Հ. Վ. Յովհաննէսեան, Փրոֆ. Ն. Աղոնց, Ս. Վրացեան (նախագահ), Ռ. Բերբերեան, Շ. Միլոյեան, Զր. Սամուէլ, Հ. Բալուեան։ Յանձնաժողովը դիմել է յիսունից աւելի մտաւորականների՝ խնդրելով գրել հիմնական ուսումնասիրութիւններ կամ յուշեր ու սպարաութիւններ Րաֆֆիի մասին։

Կոչը դնելուց առաջ, ցաւով արձանագրեմք նաեւ, որ Հայաստանը այս անկատարութիւններին չի մասնակցում. խորհրդային իշխանութիւնը մինչեւ այժմեւ էլ չի նշտել իր դիրքը դէպի մեծ միջոյն հայ վիպասանի յոբելեանը։ «Գրական թերթ»-ից ու «Խորհրդ. Հայաստան»-ից իմանում ենք, որ ներկայումս մասնակցել է վրացի ազգայնական

գրող Իլիա Չաչաւաճէի յոբելեանին. Րաֆֆին Չաչաւաճէի չափ է՞լ չկայ հայ բոլշեւիկների համար։



ԿՈՉ ՀԱՆՈՒՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Մեր ազգային մեծ վիպասան Րաֆֆիի Ծննդեան Հարիւրամեակի Յոբելեանական Յանձնաժողովս, որ վերջերս ընտրւեցաւ «Համազգային» Ընկերութեան Փարիզի կեդր. Վարչութեան հըրուէրով դումարւած հաւաքոյթի մը մէջ, որուն մասնակցեցան փարիզահայ մշակութային, հայրենակցական եւ մարդասիրական զանազան մարմիններու ներկայացուցիչներ, գլխաւոր հայ թերթերու խմբադիրներ եւ յայտնի մտաւորական անձնաւորութիւններ, որոշեց, ըստ այդ հաւաքոյթի մէջ արտայայտւած միահամուռ բաղձանքին, Փարիզի մէջ սարքել՝ ներկայ տարւան ընթացքին՝ Րաֆֆիի Ծննդեան Հարիւրամեակի յոբելեանական մեծաշուք հանդէս մը՝ պատուելու համար Սամուէլի եւ Կոչմերու անմահ հեղինակին գործն ու յիշատակը։

Հանդէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Հոկտեմբեր 31ի Կիրակի օրը կէս օրէ յետոյ ժամը 2էն 6, «Mutualité» — ի մեծ սրահին մէջ, որ արդէն վարձուած է, եւ Յանձնաժողովս ամէն ջանք պիտի թափէ, որպէսզի հանդէսին յայտագիրը տօնախմբուելիք մեծ դէմքին ար-

ժանի փայլ ու ճոխութիւն ունենայ, թէ՛ ի պատիւ Րաֆֆիի ճառերով եւ թէ՛ դեղարեւոտական բաժինով մը, ուր Րաֆֆիի գեղեցիկ էջերը արտասանւին եւ իր երգի վերածուած բանաստեղծութիւններէն ոմանք՝ հայ երաժշտութեան եւ քրնարերգութեան այլ ընտիր կտորներու հետ՝ արտասանւին, երգւին կամ նւագւին տաղանդաւոր հայ արեւստագէտներու կողմէ:

Յանձնաժողովս կը հրաւիրէ Մար - սէյլի, Լիոնի ու Ֆրանսական այլ քաղաքներու հայ գաղութները, որ յառաջիկայ սեպտեմբեր ու հոկտեմբեր ամիսներուն սարքեն նմանօրինակ հանդէսներ, որոնց կազմակերպումին մենք սիրով պիտի բերենք մեր բարոյական ակադեմիան, երբ այդ քաղաքներուն մէջ Րաֆֆիի Ծննդեան Հարիւրամեակի տեղական կարգադիր Մասնախումբեր կազմին եւ դիմեն մեզի:

Յանձնաժողովս նոյն հրապարակալին կողմէ նաեւ Սփիւռքի բոլոր հայ գաղութներուն, որպէսզի անոնք եւս կազմեն նոյն դրական մեծ յորբելեանի տեղական կազմակերպիչ յանձնաժողովներ եւ յառաջիկայ սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսներուն սարքեն նոյն ձեւով հանդէսներ տօնելու համար յիշատակը հայ Մշակոյթի փառքերէն մէկուն, որ կը պատկանի բովանդակ Հայութեան:

Յանձնաժողովս որոշած է նաեւ հրատարակել, հանդէսէն առաջ, հատոր մը, կազմած այս առթիւ յատկապէս դրած յօդածներով, զոր խումբ մը հայ ծանօթ գրողներ պիտի շարադրեն Րաֆֆիի կեանքին ու գործին վրա: Այդ հատորին տպագրութեան ծախքերը պիտի ապահովին Ֆրանսայի եւ այլ երկրներու մէջ տեղի ունենալիք հանդէսներու մուտքի հասոյթէն շահ մնացած գումարներով, որոնք պէտք է կեդրոնանան Փարիզի նախաձեռնարկ կազմակերպիչ Յանձնաժողովիս մօտ:

Յանձնաժողովս իր անդամներուն մէկ մասով կազմած է իմբարդական Մասնախումբ մը եւ անոր յանձնած է այդ հատորի ձեռագիրներուն համախմբման եւ հրատարակման գործը: Իր անդամներուն մէկ ուրիշ մասովն ալ կազմած է Ելեւմտական Մասնախումբ մը Փարիզի յորելեանական հանդէսին կազմակերպման ինչպէս եւ հատորին հրատարակման նիւթական հոգատարութիւնն անոր յանձնելով: Երկու մասնախումբերը պիտի աշխատին, Յորբելեանական լիակատար Յանձնաժողովին հաւանութեան ենթարկելով իրենց գործառնութիւնները:

Բաց ի հանդէսներու զուտ հասոյթով գոյացած գումարներէն, որ պիտի յատկացուին հատորին հրատարակման, Յանձնաժողովիս կողմէ շնորհակալութեամբ պիտի ընդունուին նաեւ հանդէսներէն առաջ, անհատական նէշներ նոյն նպատակին համար: Բոլոր գումարները պէտք է զրկուին գանձապահ Տիգրան Խան Ներսիսեանի, 17, Rue Cadet — Paris (9<sup>e</sup>): Հատորին հրատարակումէն յետոյ, Յանձնաժողովս զեկոյց մը պիտի դրիէ հայ մամուլին իր հաշտուութիւնը ներկայացնելու համար: Րաֆֆիի ներկած հատորին հրատարակման բոլոր ծախսերը հանելէ յետոյ, մնացած գումարները պիտի յատկացուին դրական մրցանակի մը, Րաֆֆիի անունով, որուն մանրամասնութիւնները պիտի յայտարարենք իր ատենին:

Յանձնաժողովիս անդամներն են.—  
Նախագահ Ա. Զօպանեան, Հիմնադիր տնօրէն Անտիտ հանդէսի Գեորգի - նախագահ Վ. Եարեանեան, նախագահ «Համազգային»-ի Ընդհ. Բարտուղար Մկրտիչ Պարսաւեան, Հիմնադիր տնօրէն Կեանքի եւ Արեւտ ամսագրի Գանձապահ Տիգրան Խան Ներսիսեան, Հայր Վ. Յովհաննէսեան, անդամ Միլիթարեան Միւրախութեան. Տ. Լ. Գեորգի. Տ. Արսլանեան. Տիկին Մարի Կիւլպէնկ-

եան. Տիկին Տիգրանի Միսաբեան, նախագահուհի Չ. Կ. Խաչի. Օր. Գագագեան, քարտուղարուհի Փարիզի Հայ Երիտ. Ակումբի. Օր. Զ. Գալֆայեան, Հայ Օրիորդաց Միութ. Հ. Բ. Ը. Մ.—ի. Փրոֆ. Ն. Արմեց. Գ. Աքմանեան (Ա. Սեւա), խմբագիր Մշակոյթ պարբերականի. Վ. Անդրէասեան, Հ. Մ. Ը. Մ.—Սկաուտներ. Բժ. Ա. Ալան. Հ. Բալուեան, խմբագիր Զարբնաց տարեգրքի. Տ. Բաղդասարեան, Հայ Կամ. եւ Մարտիկներու Միութիւն. Լ. Բաշալեան. Ռ. Բերբերեան. Գալիք Բէկ. Բժ. Հ. Զարդարեան, Հայ Գրողներու Ընկերակցութիւն. Վ. Էլմանեան, Հայ Ազատ Արեւստագէտներ. Վ. Էսէրեան. Ռ. Թադէոսեան, Նախկին Պատ. Հայ Սպաներու Միութիւն. Ծ. Թիւրապեան,

ատենապետ Հայ Ուս. Միութ. Բժ. Վ. Թորգոմեան. Ա. Կանէտանեան, Զափահաս Որ. Միութիւն. Ա. Կատիսեան. Տ. Կամսարական. Լ. Կիւմիւշկէրեան, Հ. Բ. Ը. Միութեան ներկայացուցիչ. Ա. Հանրմեան. Ա. ձիւնպիւշեան, խմբագիր Ապագայ շարաթաթերթի. Մ. Մալումեան, Աղջատ. Ընկ. Փարիզի Հայոց. Ղ. Մելոյեան. Ծ. Միսաբեան, Հիմնադիր տնօրէն Յառաջ օրաթերթի. Եր. Յարութիւնեան. Ծ. Նարդունի, խմբագիր Հայ Բոյժի եւ Երկունքի. Ս. Պողոսեան, խմբագիր Արագած շարաթաթերթի. Ա. Շահխաթունի. Հրանտ Սամւէլ. Սիվան — Կոմիտաս Երգչախումբ. Ս. Վրացեան, Հիմնադիր տնօրէն Վէմ հանդէսի. Բ. Յարշեան, Հայ Արիներ:

ՄՈՒՐԱՏ — ՌԱՖԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Մայիս 24-ին, Փարիզի քաղաքապետութիւնը պաշտօնական ընդունելութիւն սարքեց Փարիզի հայ գաղութին՝ Մուրատ — Ռաֆայելեան վարժարանի հարիւրամեակի առթիւ: Այս ընդունելութեամբ վերջ գտան այն հանդէսները, որոնք սկսել էին անցեալ օգոստոսին, վեներտիկում, յիշեալ վարժարանի հարիւրամեակ յորելեանի առթիւ: Բացի հայկական հաստատութիւնների մէջ կազմակերպւած հանդէսներից, Ֆրանսական Ակադեմիայի քաղաքական եւ բարոյական գիտութեանց կամառն էլ, իր նիւտերից մէկում, հանդիսարան պէս փառաբանեց Միլիթարեան վանքի կատարած մշակութային մեծ դերը: Ընդհանուր առմամբ, Մուրատ —

Ռաֆայելեան վարժարանի յարելեանական տարին անցաւ յաջող, թէեւ, պէտք է ասել, որ կարող էր եւ պէտք է ասել լայնատարած ու ժողովրդական դառնար, եթէ յորելեանի նախաձեռնութեան ու կազմակերպութեան տուրք համագային բնոյթ: Իրապէս տօնակատարութիւնը, կարծես, յարանաւանական շրջանակից շատ դուրս չեկաւ: Մուրատ — Ռաֆայելեան վարժարանը, ինչպէս եւ վեներտիկի ու վիեննայի միաբանական հաստատութիւնները նախ եւ առաջ հայ ազգային մշակոյթի վառարաններ են հանդիսանում եւ, որպէս այդպիսին, ընդհանուր ազգային սեփականութիւն են եւ ընդհանուր ազգային պարծանք:

ԳԱՂԱՔԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Մայիս 18-ին Երեւանում քաղաքի քաղաքային (կոմունալ) քանդակարան, որ ներկայացնում է Հայաստանի մայրաքաղաքի քանդակարանը:

Քաղաքի անցեալն ու ներկան: Թանգարանը քաղաքացի է չորս բաժնիներից. 1) Ուրարտական — խալդական ու միջ-


նադարեան շրջան, 2) պարսկական տիրապետութեան շրջան, 3) ռուսական տիրապետութեան եւ անկախութեան շրջան, 4) խորհրդային շրջան: Հին դարը ներկայացնում են սակաւաբիւ քաղաքներ, բայց գործիչներ, բռնագէտ պարսկացիներ եւ այլն: Միջնադարից մնացել են գլխաւորապէս խաչաքեր, որոնք յայտնաբերւել են կաթուղիկէ եկեղեցում, որ քանդու է բոլորեւիկները: Աւելի հարուստ է պարսկական շրջանը. ցուցադրւած են Երեւանի բերդը, Գիւրջի քարամասարան, Կոնդի տեսարանը, հին բաղնիքը, Փանայանի տունը, Սարգսի պալատի յուսանկարը, դրամներ, պղինձէ ամաններ, կնուներ, սկուտեղներ, կաթսաներ եւ այլն: Բնականաբար, շատ աւելի

նոյս է ռուսական եւ հանրապետական շրջանը եւ, ի հարկէ, աւելի բազմազան խորհրդային շրջանը: Յատուկ նիւթ է քաղաքացիական պատերազմը, յայտնաբերուած հակադրելու հիմն ու նորը, աշակէս, Պոզուս - Պետրոս քանդուած եկեղեցու մակետի կողմէն՝ դրւած է նոյն եկեղեցու տեղը շինուած «Մոսկու» հիւրանոցի մակետը: Մի առանձին սենեակում ամփոփուած են նկարիչներ Մ. Սարեանի, Փ. Թերլեմէզեանի, Առաքելեանի, Գիւրջեանի, Գայֆէջեանի, Ղարիբեանի եւ ուրիշների նկարները Երեւանի տեսարաններով: Թանգարանը գտնուում է Գոյ - Մէջիտի շէնքում, որ կառուցուած է 1736 - 47 թւականներին եւ նոյնպէս քանդարանային յուշարձան է:

**«ՄԱՐԶԱՆ» ՕՊԵՐԱՆ**

Երաժշտագէտ Կարօ Զաքարեանը յորինել է «Մարջան» անունով մի օպերա, որ մեծ յաջողութեամբ ներկայացւել է Մոսկուայում: Օպերայի նիւթը առնուած է Հայաստանի քաղաքացիական կռիւներից. խօսքերը կազմել է բանաստեղծ

Արշ. Խոնդկարեանը: «Մարջան»-ը գրուած է Պետական Օպերայի յանձնարարութեամբ. հեղինակը աշխատել է ըստ կարելույն, հարազատ մնալ ժողովրդական երաժշտութեան: Երեւանի թերթերը մեծ գովեստով են խօսում Կարօ Զաքարեանի գործի մասին:



**ԳԻՐԲ ԵՒ ՄԱՄՈՒԼ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Հայաստանում, վերջին տարւայ ընթացքում, ոչ մի աչքի ընկնող գիրք լոյս չի տեսել: Խանջեանի շրջանում ծրագրուած գործերը — Հանրագիտական բառարան, Մեյֆոնեան ֆոնտ, վաւերագրերի եւ ժողովրդական բանահիւտութեան նիւթերի, նոր դասագրքերի հրատարակուելու կանգնեցւած է, իբրեւ «ագգայնական-հակայեղափոխական» գործ, իսկ նոր գործեր դեռ մէջտեղը չկան: Մեյֆոնեան ֆոնտի կենտրոնական հիմնարկութիւնը լուծուած է եւ ամբողջ գործը կենտրոնացւած է կառավարութեան ձեռքին, որով փաստօրէն վերջ է տրուում այնքան օգտաշատ գիտական հատորների շարքին: Անցեալում լոյս տեսած մի շարք դասագրքեր ու գրական երկեր, ինչպէս, օրինակ, Զարեան

ցի «Գիրք Ճանապարհին», Մկ. Արմէնի «Երեսան» ու «Հեղնար Աղբիւր»-ը եւ այլն, արգելուած են. գրականութեան եւ արւեստի նկրտած պարբերականները՝ «Խորհրդ. գրականութիւն», «Խորհրդ. Արւեստ», «Գրական Թերթ» դարձել են անբովանդակ ու խեղճ հրատարակութիւններ, որոնք կամ ռուսական թերթերից արտատպումներով են լեցուում, կամ գրուում է՝ ինչ որ վերելից է հրահանգուում: Ինքնուրոյն դատողութիւն, սեփական միտք, ազատ խօսք — նշոյն իսկ գոյութիւն չունի: Պետքատն էլ մաւրել ու վերականգնուել է՝ կենդանի գործի անընդունակ դառնալու աստիճան: Հայոց տպագրական խօսքի պատմութիւնը ամառութիւն պիտի գտնէ Հայաստանում վերջին տարեշրջանի ընթացքում:

**ՐԱՖՓԻԻ ԵՐԿԵՐԸ**

Րաֆֆին ամենաբեղուն հայ գրողներից մէկն էր, եթէ ոչ ամենէն բեղունը: Իսկ տպագրուած երկերի քանակի տեսակէտից, կարելի է ասել, նա մրցակից չունի: Գաղափար տալու համար, թէ Րաֆֆիի գործերը ինչքան են ժողովրդական, առաջ բերեմք այն ցանկը, որ այրի Տիկ. Աննա Րաֆֆին գետեղել է «Տանկահայք»-ի երկրորդ տպագրու-

թեան յանելուծում (Վիեննա, 1913): Այս ցանկը արժէփառք է եւ ժամանակագրութեան հաստատման տեսակետով: Րաֆֆիի ողջ եղած ժամանակ առանձին գրքով լոյս են տեսել նրա հետեւել երկերը, իւրաքանչիւրը 1200 օրինակ: Աւելի տպածների թիւը նշանակուած է առանձին:

- 1.- 1874 թ.ին՝ «Փռուչ», Ա. հատոր, Թիֆլիս, 1500 օրինակ:
- 2.- 1874 թ.՝ «Փռուչ», Բ. հատոր, Թիֆլիս, 1500 օրինակ:
- 3.- 1880 թ.՝ «Խենթը», Շուշի:
- 4.- 1881 թ.՝ «Դաւիթ - Բէկ», Ա. հատոր, Թիֆլիս:
- 5.- 1882 թ.՝ «Դաւիթ - Բէկ», Բ. հատոր, Թիֆլիս:
- 6.- 1882 թ.՝ «Նամասյի Մէլիբու-թիւնները», Թիֆլիս:
- 7.- 1882 թ.՝ «Ոսկի Աբաղաղ», Թիֆլիս:
- 8.- 1882 թ.՝ «Ղարաբաղի աստղա-զէարը», Թիֆլիս:
- 9.- 1883 թ.՝ «Կայծեր», Ա. հատոր, Թիֆլիս:
- 10.- 1883 թ.՝ «Նաչագողի յիշատա-կարանը», Ա. եւ Բ. մասն, Թիֆլիս:
- 11.- 1883 թ.՝ «Նաչագողի յիշատա-կարանը», Գ. եւ Գ. մասն, Թիֆլիս:
- 12.- 1884 թ.՝ «Ջալալէդդին», Մոս-կու, 2000 օրինակ:
- 13.- 1884 թ.՝ «Կայէնի կտակը», Թիֆլիս:
- 14.- 1884 թ.՝ «Պսակ» (ժողովածու), Թիֆլիս:
- 15.- 1887 թ.՝ «Կայծեր», Բ. հատոր, Թիֆլիս:
- 16.- 1888 թ.՝ «Մամուլ», Ա., Բ. եւ Գ. հատոր, Թիֆլիս, 1800 օրինակ:

Այս բոլոր գրքերը հրատարակելի են Բաֆֆիի սեփական միջոցներով, բացի «Կայծեր»-ից, որին մեկնաս է հանդի-սացել գնդ. Մեյիֆ - Հայկազեանը, եւ «Խենթ»-ից, որ տպւել է Արել Արքեսեա-նի ծախսով:

Բաֆֆիի մահից յետոյ, նրա կնոջ Տիկին Աննայի հոգածութեամբ լռյս են տեսել հետեւեալ հատորները, իրաքան-չիւրը 2400 օրինակ:

- 1.- 1889 թ.՝ «Հայ կինը և Հայ երե-տասարդութիւնը» (արտատպւած «Մշա-կ»-ից), Թիֆլիս:

- 2.- 1890 թ.՝ «Մինն այսպէս, միւսն այնպէս (տպւած ձեռագրից, պատկերա-գարդ), Թիֆլիս:
- 3.- 1890 թ.՝ «Խենթը եւ Ջալալէդ-դին», Մոսկու, Բ. տպագրութիւն (3000 օրինակ):
- 4.- 1891 թ.՝ «Դաւիթ Բէկ», Ա., Բ. եւ Գ. հատոր, վերջաբանով, Բ. տպա-գրութիւն, Թիֆլիս:
- 5.- 1891 թ.՝ «Կայծերի վերջը» (ձե-ռագրից), Թիֆլիս:
- 6.- «Վէպիկներ եւ պատկերներ», Ա. հատոր (ձեռագիր եւ արտատպութիւն), Թիֆլիս:
- 7.- 1892 թ.՝ «Կայծեր», Ա. հատոր, Բ. տպագրութիւն, Թիֆլիս:
- 8.- 1893 թ.՝ «Վէպիկներ եւ պատ-կերներ» (ձեռագիր եւ արտատպւած), Թիֆլիս:
- 9.- 1893 թ.՝ «Արծիւ Վասպուրա - կանի» (ձեռագիր եւ արտատպութիւն), Թիֆլիս:
- 10.- 1893 թ.՝ «Պարոյր Հայկազն», Թիֆլիս:
- 11.- 1893 թ.՝ «Ո՞վ էր մեղաւոր», Թիֆլիս:
- 12.- 1893 թ.՝ «Ճրիգոլին», Թիֆլիս:
- 13.- 1894 թ.՝ «Նամասյի Մէլիբու-թիւնները», Բ. տպագրութիւն, Թիֆ-լիս:
- 14.- 1894 թ.՝ «Ջահրումար» (ձեռա-գիր), Թիֆլիս:
- 15.- 1895 թ.՝ «Նաչագողի յիշատա-կարանը», Բ. տպագրութիւն, Թիֆլիս:
- 16.- 1895 թ.՝ «Տաճկահայք» (ար-տատպութիւն), Թիֆլիս:

Բացի այդ, այրի Տիկ. Աննա Բաֆ-ֆիի միջոցներով, Վիլնայի Միքիթար-եան տպարանից լռյս են տեսել հետեւ-եալ հատորները, իրաքանչիւրը 3000 օ-րինակ.-

- 1.- 1898 թ.՝ «Մամուլ», Ա., Բ., Գ. հատոր, Բ. տպագրութիւն:
- 2.- 1903 թ.՝ «Դաւիթ - Բէկ», Ա., Բ., Գ. հատոր, Գ. տպագրութիւն:

- 3.- 1903 թ.՝ «Ոսկի Աբաղաղ», Բ. տպագրութիւն:
- 4.- 1904 թ.՝ «Կայծեր», Ա. հատոր, Գ. տպագրութիւն:
- 5.- 1904 թ.՝ «Կայծեր», Բ. հատոր եւ վերջ, Բ. տպագրութիւն:
- 6.- 1905 թ.՝ «Նաչագողի յիշատա-կարանը», Ա., Բ., Գ. եւ Գ. մասն, Գ. տպագրութիւն:
- 7.- 1905 թ.՝ «Խենթը եւ Ջալալէդ-դին», Գ. տպագրութիւն:
- 8.- 1905 թ.՝ «Ջալալէդդին», Գ. տպագրութիւն:

- 9.- 1906 թ.՝ «Նամասյի Մէլիբու-թիւնները», «Ղարաբաղի Աստղազէարը», «Կազմիքի Ղարաբաղի» — առաջինը Գ. տպագրութիւն, երկրորդը՝ Բ. տպա-գրութիւն, երրորդը՝ արտատպութիւն «Արձագանգ»-ից, մի հատորի մէջ:
- 10.- 1911 թ.՝ «Սալբի», Ա. հատոր, ձեռագիր:
- 11.- 1912 թ.՝ «Պարսկական պատկեր-ներ» (նոր շարադասութեամբ, ձեռա-գիր եւ արտատպութիւն):
- 12.- 1913 թ.՝ «Տաճկահայք» (նոր շարադասութեամբ, ձեռագիր եւ արտա-տպութիւն), Բ. տպագրութիւն:

ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Հ. Բ. Ը. Միութեան Նուպարեան Մատենադարանը հետզհետէ կը մոխա-նայ հատորներով եւ մեր ժամանակա-կից պատմութեան համար կարեւոր նը-շանակութիւն ունեցող վաւերագիրնե-րով: 1935-ին տրամադրւած 481 կտո-րի տեղ, 1936-ի մուտքը եղած է 2927 կտոր՝ հետեւեալ կերպով բաժնւած.— 1923 զանգամ հատորներ, 73 հաւաքա-ծոյ լրագիրներու եւ պարբերականնե-րու, 63 պատկեր, լուսանկար, քարտ, հայ երաժշտական նօքագրութիւն, եւ այլն, 6 հին գրչագիր եւ 1688 նամակ, ձեռագիր եւ ինքնագիր աշխատութիւն: Ասոնց մեծ մասը ներ տրւած է, ուրիշ-ներ գնւած են եւ ոմանք ալ փոխանակ-ւած կրկնակներու հետ:

Ամենէն կարեւոր նւիրատութիւն-ները ըրած են Երեւան (148 հատոր), Տ. Պ. Էսմէրեան (79 հատոր) եւ 2 հին գրչագիր, Տ. Լ. Բաշայեան (66 հա-տոր), Հ. Բ. Ը. Միութեան կեդր. վարչութիւնը (48 հատոր), Գ. Սինապ-

եանի ժառանգութեան 135 հատոր պարսկերէն եւ արաբերէն: Նւիրատու-ներէն չորսը օտարականներ են՝ Մ. Գը-րաֆթ - Պոնար, Մոստայի վաքսը, Մ. Պալքրուշայիս եւ Մ. Հ. Լըռուա:

Մատենադարանին վարչութիւնը ան-դու ջանք է գործ կը դնէ աւելցնելու համար հայ ժամանակակից պատմու-թեան վերաբերեալ վաւերագիրներու հաւաքածոն, որ հիմակուց արդէն մեծ արժէք մը կը ներկայացնէ եւ գնահա-տելի աղբիւր մըն է պատմութեան հա-մար: Նորստաց գրութեանց մէջ յիշեմք 1348 պատմական վաւերաբուրք, հան-գուցեալ Յովհաննէս փաշա Գուշում-նեանի ինքնագիր Յիշատակները, 324 նամակ զանգամ անձերէ՝ Տ. Վ. Մա-լեգեանի կողմէ յանձնւած, 4 վաւերա-բուրք Տ. Լ. Կերտանէ, եւն.:

1936-ին Հ. Բ. Ը. Միութեան կող-մէ Նուպարեան Մատենադարանին հա-մար ծախսւած գումարն է 679 անգլ. ոսկի:

# ԳՐԱՆՈՍԱԿԱՆ

Մ. Օրախելաշվիլիի՝ «ՍԵՐԳՕ ՕՐՋՈՆԻԿԻՉԷ», Մոսկւա, 1936.

Օրախելաշվիլին իր ազգակից եւ ընկեր Օրջոնիկիձէի յիսնամեակի առթիւ մի գրքոյ է գրել, որը փաստօրէն դամբանական է դարձել, որովհետեւ Օրջոնիկիձէն մեռել է արդէն: Օրախելաշվիլին չափազանցում է Օրջոնիկիձէի կատարած դերը հին Բագուս, բայց ուղղակի հեքիաթներ է պատմում Օրջոնիկիձէի մասին իրանում: Բառացի նա գրում է. «1909-ի ամառը Բագուս բուշուրիկեան կազմակերպութիւնը ուղարկում է (Օրջոնիկիձէն) իրանի Գիլան նահանգը, որը յեղափոխական շարժման կենտրոնն էր: Օրջոնիկիձէն գալիս է էնզելի եւ Ռէշու 1909-ի աշնանը եւ ղեկավար դեր կատարում յեղափոխական պայքարում: Նա եղել է զանգածային շարժումների բաղաժանան ղեկավարն ու կազմակերպիչը ընդդէմ բռնի ցարական ֆաղափականութեան: Սարգար - Մուսի յեղափոխական խմբի շարժումը Շահեսանների դէմ, որոնք յարձակւել էին Արդաբիլի վրա, կազմակերպւել է Օրջոնիկիձէի մօտ մասնակցութեամբ, եւ նա զննցել է այդ խմբի հետ»:

Պարսկական դեպքերին անդրադառնալով՝ Օրախելաշվիլին ասում է, թէ Թարիզի գրաւումից յետոյ «Կովկասեան յեղափոխականները անցան Գիլան»: Կովկասեան յեղափոխականները մեր նփրեմն ու ընկերներն էին, Օրախելաշվիլին այդ մասին լուս է, իսկ Օրջո-

նիկիձէին սհագին դեր է տալիս - ամբողջ հեքիաթ:

Օրջոնիկիձէն փախչում է Սիբիրոյ ախարից Բագու եւ այնտեղից գալիս Գիլան, գլուխը պահելու նպատակով: Հայ յեղափոխականները, այսինքն դաշնակցականները նրան, իբրեւ կովկասցիի, պահում են, Օրջոնիկիձէն ապրում է նրանց նպաստով: Ո՛չ մի մասնակցութիւն, ո՛չ թէ ղեկավար, այլ՝ նոյնիսկ սովորական, չի ունեցել կռիւներում, ո՛չ զենք բռնել եւ ոչ լեզու գիտէր, եւ Օրախելաշվիլին հաւատացնում է, թէ նրան «մուշտիդ» (սուրբ) էին ասում, իբր թէ վայելած մեծ ժողովրդականութեան համար, մինչդեռ իր բուժակի արհեստը բանեցնելուց գատ ոչինչ չի արել: Դաշնակցականների օգնութեամբ էր նաեւ, որ Օրջոնիկիձէն անցաւ Եւրոպա:

Այս հեքիաթի հնարումը բնորոշում է ո՛չ միայն Օրախելաշվիլուն, այլ եւ իրեն Օրջոնիկիձէին, որը այդ գիրքը կարդացել է եւ թոյլ է տւել տպագրել: Բնորոշ է եւ հետեւեալը. Օրախելաշվիլին գրում է, թէ 21 յունւար 1936-ին ազրբեջանեան պատգամաւորութեան ընդունելութեան ժամանակ, երբ Օրջոնիկիձէն ներս է մտնում, Ստալինը բացազանցում է. «Ողջո՛յն Ազրբեջանի ազատարարին, նա առաջինը մտաւ Ազրբեջան»: Թէեւ Ստալինի բերանով է ստեղ-

ծած, բայց այս էլ հեքիաթ է, որովհետեւ Բագուի խորհրդայնացումը ուրիշ մարդիկ են արել:

Անգուստ ուսանեանք է շաշվել Օրախելաշվիլին եւ իր հայրենակից Սերգոի ուրիշ աշխատանքների մասին: Ինչպէս յայտնի է, Ստալինը նրան առաջ քաշեց Շահեսանի մահից յետոյ Անդրկովկասում հայ բուշուրիկներին չէքֆացնելու համար: Օրջոնիկիձէի երեւումով խաւարեց Երկրային Կոմիտէի Հայ բուշուրիկների արեւը՝ սկսած Նագարեքեանից եւ վերջացած Միրզոյեանով: Բայց Մոսկւան, այսինքն՝ Լենինը առանձին արժէք չէր տալիս Սերգոին. այդ երեւում է, թէ կուզ, այն ջանքերից՝ որով Ստալինը Լենինին գրել է տալիս մի նամակի տակ, «թէ Ռեշիլիստի եւ թէ Ստալինի կարծիքով, Սերգոն շատ վստահելի զինուորական աշխատող է եւ գործնական յեղափոխական, եւ ինքս նրան նախաճում եմ 10 տարուց աւելի»: Այս տողերը ապացոյց են, որ Օրջոնիկիձէն պարզ կուսակցական աշխատատուր է եղել եւ ոչ թէ գործիչ: Եւ իբօք, մինչեւ Կովկասում վերերեւալ Օրջոնիկիձէն երբորդ կարգի գործիչ է եղել: Կովկասում միայն, յենւելով վրացի ազգայնական բուշուրիկների վրա, Սերգոն իրեն համար դիրք ստեղծեց:

Օրախելաշվիլին գրում է. «Անդրկովկասեան հանրապետութիւնների կուսակցական կազմակերպութիւններում, յատկապէս վրաց կազմակերպութեան մէջ, յայտնաբերեց ազգայնական շեղում, առանց որի ճնշման չէր կարելի մտածել իսկ Լենինի եւ Ստալինի ծրագրի գործադրութեան մասին: 1921 թ. յուլիս 31-ի կուսակցութեան Կովկասեան Բիւրօի (Կարիւրօ) լայնացած լիագումար նիստը, որին ղեկավարում էր Ստալինը, ամբարժեշտ նկատեց յատկապէս ընդգծել «ազգայնական թեֆուլի» գոյութիւնը, որ արտայայտւել էր

արտաքին առեւտրի եւ հանրապետութիւնների հողային սահմանագծման, մասնատների վերացման եւ ստուգիչ կէտերի խնդրներում»: Հետագայ դեպքերը ցոյց տւին, որ գործը ոչ թէ քաղական թեֆում էր կուսակցական գործից, այլ լրիւ ազգայնական թեֆում դէպի անջատողականութիւն: Վրաց ազգային թեֆում ունեցողները (ուկրոնիստները) դարձան ձգողական կենտրոնը ազրբեջանցի Նարիմանովականների - ուկրոնիստների, ինչպէս նաեւ քաքարական եւ ուկրայնական ուկրոնիստների համար: Ըստ Ստալինի՝ այդ թեֆումը ներկայացնում է իրենից «վրաց բունդ ազգայնականութիւնը, որ յարձակման է անցել հայերի եւ ազրբեջանցիների դէմ, եւ որը ուզում է վրաց ազգին արտօնեալ վիճակ տալ Անդրկովկասում»:

Սրդ՝ ի՞նչ արաւ Սերգոն. վերեւ յիշուած եւ 2 նոյեմբ. 1921 թ. Կարիւրօի նստերից յետոյ անդրկովկասեան ընդհանուր տնտեսական մարմին ստեղծեց, այսինքն՝ ֆիլման դարձրեց անդրկովկասեան, իսկ էութիւնը պահեց վրացական: Սահմանների խնդրում էլ ըստ Ստալինի, վրաց յարձակող բունդ ազգայնականութիւնը յարթեց, թէեւ Օրախելաշվիլին Սերգոի յատուկ մի գործն է համարում այն, որ 1922 թ. յունւար 23-ին վրաց Կոմկուսի համագումարը փոխեց ղեկավարութիւնը: Ինչո՞ւ չպիտի փոխէր, երբ Սերգոն արդէն նրանց ծրագիրը իրագործել էր:

Օրախելաշվիլին Սերգոին ուզում է ներկայացնել իբրեւ առաջեալ Անդրկովկասի հանրապետութիւնների եղբայրութեան, այն ինչ իր իսկ տւեալներից այս գրքում երեւում է, որ՝ 1) Սերգոն վրաց բունդ ազգայնական գործիչ է եղել, որ՝ 2) Սերգոն Կոմկուսի մէջ տւական բանաձեւերով ճնացրել է հայերին եւ իր ծրագիրը անցկացրել, որ՝ 3) Սերգոն առիթ ունէր պատմական դեր

կատարելու իր ժողովրդի եւ Անդրկովկասի համար, բայց իրօք մնաց հարազատ աշակերտը Գուգուսաների, Վեշապելիների ու Ժորգանիաների եւ որ՝ 4) Սերգոն էր, որ իր կուսակցական ընկերներին վանեց դէպի ազգայնական դիրքերը: Եանջեան – Բերիա պատմութեան սկիզբը այդ օրերից է գալիս:

Օրախելաշարիին այնուհետեւ Օրջոնիկիճէի միւս գործերն է գովում, մինչեւ ծանր արդիւնաբերութեան ժողովրդական կոմիսարութիւն, մինչդեռ նրա մահուանից յետոյ պարզեց, որ Օրջոնիկիճէի գործերը միայն նառերի մէջ են եղել եւ որ իր օգնական Պիտակովը եւ ամբողջ հիմնարկութիւնը կազմւած

է եղել վնասարարներից մահից յետոյ Մեծաուկին յանձնւած է կարգադրելու Սերգոի բողած տխուր ժառանգութիւնը:

Մահից յետոյ միայն պարզեց, որ Սերգոն փոքր հոգիով եւ սահմանափակ կարողութիւնների տէր լարախաղաց է եղել, որ բարձրացել էր յեղափոխութեան ալիքի, բայց, մանաւանդ, Ստալինի պաշտպանութեան շնորհիւ: Մասնաւորապէս Անդրկովկասում նրան շատ կը յիշեն, բայց կը յիշեն աւելի իր վատ գործերով: Եւ Օրախելաշարիին ստորաբարձութեամբ եւ անգուսպ ուսանաներով լի գրեթէ էլ չի օգնի...:

Ն. ԲԱՒԱԼԵԱՆ

Ն. Հանգոյց՝ «ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ», Ա., Մատենաշար «ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ», № 1, Պէյրուք, 1937.

16 էջոց փոքրիկ տետրակ է, որի մէջ Ն. Հանգոյցը մեկնաբանում է Հ. Յ. Դաշնակցութեան կանոնագրի հիմնական սկզբունքները: Ինչպէս իր «Մըտածումները Հ. Յ. Դաշնակցութեան մասին» գրեթէ չի, Ն. Հանգոյցի մտքերը պարզ են, յստակ ու հանրամատչելի եւ, որպէս այդպիսին, լիովին հասնում են գծւած նպատակին: Մի քանի դիտողութիւններ, սակայն, ուզում ենք անել:

Նախ՝ կուսակցութեան բնորոշումը ի՞նչ է կուսակցութիւնը: Ն. Հանգոյցը մի շարք համեմատութիւններ անելով՝ եզրակացնում է, թէ կուսակցութիւնը այն կարգի կազմակերպութիւնն է, որ ի նկատի ունի «մարդկութեան բարձրագոյն շահերը»: Այսօր բաւական չէ. «մարդկութեան բարձրագոյն շահերը» հետապնդող շատ կազմակերպութիւններ կան, որոնք, սակայն, կուսակցութիւն չեն, եկեղեցիներ, օրինակ, կամ գիտական ու մարդասիրական զանազան ընկերու-

թիւներ: Կուսակցութիւն լինելու անհրաժեշտ պայմանը մի կազմակերպու - րեան քաղաքական յատկանիշն է:

Սխալ եւ հնացած, մարքսիզմից ժառանգութիւն մնացած տեսակէտ է եւ կուսակցութիւնը անպատճառ դասակարգային կազմակերպութիւն համարելը. տեսականօրէն կարող են լինել եւ ասպարահարգային, համագային նըպատակներ հետապնդող կուսակցութիւններ:

1Մեզ քուտ է նայելու, որ բաւարար չափով չէ շեշտւած եւ «կուսակցութեան համակիրների» դերը. ճիշտ է, որ կուսակցութեան հիմքը իր անդամներն են, բայց առանց «համակիրների», միայն սեփական անդամների ուժով ո՛չ մի կուսակցութիւն չի կարող հասնել ստաշտրած նպատակներին: Եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը միշտ ստաշտրագ նշանակութիւն է տւել ու տալիս է «համակիրներին», որոնք, ինչպէս ասում էր Բոստումը, «պոտենցիալ դաշնակցական-

ներ» են: Կուսակցութիւնները ամէն տեղ ազգի փոքրամասնութիւնն են կազմում, եւ իրենց նպատակի յաջողութիւնը ասպակովելու համար պէտք է ազգի մեծամասնութիւնն իրենց կողմը ունենան, այսինքն՝ պարտաւոր են «համակիրներ շահել»:

Մի դիտողութիւն եւս. Ն. Հանգոյցը գրում է (էջ 11), թէ՛ ոչ մէկ մարմին կարող է իր գերադաս ժողովը լուծել, բայց ժողովները կարող են ստորագրու մարմինները լուծել: Ըստ Հ. Յ. Դ. կանոնագրի, մարմիններն էլ կարող են լուծել ստորագրու ժողովները, օրինակ, Բիւրօն կարող է լուծել շրջանային ժողովը, բայց ոչ մէկ ժողով չի կարող իր գերադաս մարմինը լուծել: Հանգոյցի առած համեմատութիւնը սըխալ է:

Այս դիտողութիւնները, սակայն, բնաւ չեն նսեմացնում Ն. Հանգոյցի գրեթէ արժէքը: Ճիշտ է, մենք կը գերադասէինք Ն. Հանգոյցին տեսնել իր բնական տարերքի մէջ՝ բանասիրական ու գրական – բնադատական հիմնական արժէքներ արտադրելիս, բայց քանի որ նա գերադասում է այսպիսի համեմատողի տեսակներով հրապարակ գալ, — դրա համար էլ շնորհակալ ենք: Մաղքենք միայն, որ մատենաշարը թիւ 1-ի վրա չկենայ: \*)

Ս. Վ.

\*) Երբ այս տողերը շարւած էին, ստացանք նաեւ երկրորդ տետրակը: ԽՄԲ.

ՅԻՄՆԱՄԵԱՅ ՅՈՒՆԵԼԵԱՆ

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻ (1887 — 1937)

«Հանդէս Ամսօրեայ» հայագիտական Ուսումնաբերքը, որ լոյս կը տեսնէ Վիլնիւայի Միջիթարեան Միաբանութեան հովանաւորութեան տակ, բոլորեց իր հրատարակութեան 50-րդ տարեդարձը:

«Հանդէս Ամսօրեայ» յընթացս 50 տարիներու գործեց հայագիտական մարզի վրա եւ հնձեց մեծամեծ արդիւնքներ ի նպաստ հայ մըշակոյթի ուսումնասիրութեան, աշխատակցութեամբ բազմաթիւ հայ եւ օտար մասնագէտ գիտուններու:

Նկատի առնելով հայագիտական Ուսումնաբերքի այս ազգօգուտ ծառայութիւնը պիտի տօնէ հմբագրութիւնս այս բարեդէպ տարեդարձը յոբելեանական հանդէսով:

Խմբագրութիւնս վստահ, թէ հայ Հասարակութիւնը բարձր պիտի գնահատէ հայագիտական ուսման բարգաւաճման համար տարւած այս աշխատանքները, հրաւեր կը կարդայ հայ Հասարակութեան, մասնաւորապէս հայ հմբագիրներու, Ուսուցիչներու, Գրագէտներու, Գրասէրներու եւ հայ Մշակոյթի պատմութեամբ Հետաքրքրուողներու, մասնակցիլ այս տօնախմբութեան, բարոյապէս եւ նիւթապէս:

Առիթը ըլլայ Յոբելեանս հայ Հասարակութեան մէջ արծարծելու

սէր եւ հետաքրքրութիւն դէպի հայագիտական ուսումներ եւ ոգեւորելու իւրաքանչիւր անհատ հայ անցեալ եւ ներկայ Մշակոյթի գիտակցութեամբ :

Այս սէրը, հետաքրքրութիւնն եւ գիտակցութիւնը պիտի համախմբեն Ուսումնաքերքիս շուրջը ազգասէր եւ ուսումնասէր համակիրներ, որոնց ներկայութիւնն եւ աջակցութիւնը պիտի ըլլան քաջալեր հմբագրութեանս, անվեհեր եւ աւելի լայն ծաւալով յառաջ մղելու հայ մշակոյթի հետազոտութեան համար այնքան անհրաժեշտ եւ հայ անուանի համար այնքան պատուաբեր Ուսումնաքերքիս հրատարակութիւնը :

Յորելեանի տօնախմբութիւնը տեղի պիտի ունենայ տարւոյս Հոկտեմբեր 3-ին ի Վիեննա, Միսիքարեան Հանդիսարահին մէջ :

Անդամք Յորելեանական Յանձնաժողովի՝ Հ. Ն. Ա.ԿԻՆԵԱՆ, Հ. Վ. ԻՆԳԼԻԶԵԱՆ, Հ. Պ. ԷՍԱՊԱԼԵԱՆ, Տեաք ԳԵՂԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ, ԿԱՐԱՊԵՏ ՅԱԿՈՒԵԱՆ, ԳՐԻԳՈՐ ՄԵԼԻՔՍԷԹԵԱՆ, ԱՐԱՄ ԾԵՐՈՒՆԵԱՆ :

Ամէն գրութիւն եւ առաքում ուղարկել առ  
Rév. P. N. AKINIAN, VII. Mechitaristengasse 4, VIENNE (Autriche).

### ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ. Գիւղալեան, «Պատմական խնդիրներ», Պէյրուք, 1937:

Հ. Ն. Վ. Ակինեան, «Մովսէս Գ. Տաքեւացի Հայոց Կաթողիկոսն եւ իր ժամանակը», Ազգային Մատենադարան, ձԼԹ, 1936, Վիեննա:

Հ. Ն. Վ. Ակինեան, «Սիմէոն Դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն» (Տարեգրութիւն եւ Յիշատակարանք), Ազգ. Մատենադարան, 1936 Վիեննա:

Հ. Ն. Վ. Ակինեան, «Եղիշէ վարդապետ եւ իւր պատմութիւնն Հայոց պատերազմի», Մասն երկրորդ, Ազգ. Մատենադարան, 1936, Վիեննա:

Հ. Պ. Էսապալեան, «Տատեանի համարաբարտն եւ Հայերէն Աւետարաններու առաջին քարգմանութիւնը», Ազգ. Մատենադարան, 1937, Վիեննա:

Ընդհանուր գրացուցակ Միսիքարեան

Գրականատանցի ի Թրիէտ, ի Վիեննա եւ ի Պլովզիւ, նոր շրջան, քիւ 6, 1776 - 1936, Վիեննա, 1936:

«Երզնիական Ժողովածու», Հրատ. Հայ շեմարանի Շրջանաւարտներու Միութեան, քիւ 1, Պէյրուք, 1937:

Ս. Յ. Թէրղեան, «Հանքնի Ուրամահայ Դիւցազմարարը», պատկերազարդ, 1937, Աթէնք, 500 էջ, գին մէկ դոլար, դիմել՝ «Նոր Օր», Աթէնք:

Երեսնամեայ Յորելեան Հայկ. Բար. Ընդհ. Միութեան, Յուշագիր Մարտէլի մասնաճիւղի, 1936, Մարտէլլ:

Տեղեկագիրք Սոփիայի Հայ Համագործակցական «Թրակիա» Դրամատան 1936 տարեշրջանի:

Ա. Գ. Մեսուսեան, «Երեք Մեներգ», դաշնակի ընկերակցութեամբ:

«Հայրենիք», քիւ 6, 7, 8:

«Սխոն», քիւ 5, 6:  
«Բաղձազէպ», քիւ 3, 4:  
«Հանդէս Ամսօրեայ», քիւ 1 - 5:  
«Հասկ», քիւ 5, 6:  
«Պապ Ուխտի», քիւ 3:  
«Նորհրդային Արեւտ», քիւ 9 - 10:  
«Գրական Թերթ», քիւ 15, 16, 17, 18, 19:  
«Միութիւն», քիւ 184, 185:  
«Հայ Բոյժ», քիւ 30, 31, 32, 33:

Կեանք եւ Արեւտ», քիւ 3, 4:  
«Հերկ», ամսագիր, քիւ 1, Պուրէշ, 1937:  
Սահակ - Մեարոպ, հանդէս մշակոյթի, Ա. տարի, քիւ 1, խմբ. Գարեգին Եպ. Տրապիզոնի, Մարտէլլ:  
«La Russie Nouvelle», Revue bimensuelle, Directeur Al. Kerensky, N° N° 1 - 29, Paris, 1936 - 1937.

### Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան վեցամսեայ ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՄԻԱՍԻՆ  
Տարեկան 10 դոլար  
վեցամսեայ 5 ,,  
Հասցէ՝

13-15 Shawmut st. BOSTON MASS (U.S.A.)

### Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ՕՐԱԹԵՐԹ

Տարեկան վեցամսեայ Եռամսեայ Հասցէ՝  
6 դոլար  
3 ,,  
2 ,,

Hairenik Press, 13-15 Shawmut st. BOSTON-MASS (U.S.A.)

### Ա Ր Մ Ե Ն Ի Ա

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Արտասահման, տարեկան, Արժանքիւն, տարեկան, վեցամսեայ, Հասցէ՝  
3 դոլար  
6 փետ  
3.50 ,,

«ARMENIA» Canning 1087, Buenas-Aires, (Argentine)

### Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս, տարեկան, 150 եգ. դի. վեցամսեայ, 80 ,,  
Արտասահման, տարեկան, 40 շիլինգ վեցամսեայ 20 ,,

Հասցէ՝  
«Houssaper», B. P. 868 Le CAIRE (EGYPTE)

### Ն Ո Ր Օ Ր

ՕՐԱԹԵՐԹ

Յունաստան, տարեկան, 420 տր. վեցամսեայ 210 ,,  
Եւրոպա, տարեկան, 135 ֆր. վեցամսեայ 80 ,,  
Ամերիկա, տարեկան, 8.00 դոլար վեցամսեայ, 4.50 ,,

Հասցէ՝  
«NorOr», 20-A, Rue Vouli, ATHÈNES (GRÈCE)

### Ա Չ Գ Ա Կ

ՕՐԱԹԵՐԹ

Սիւրիա՝ տարեկան 550 ս. դ. Սիւրիա՝ վեցամսեայ 300 ս. դ. Արտասահման՝ տարեկան 7 դոլար Արտասահման՝ վեցամսեայ 4 դոլար Հասցէ՝

«Aztag». B. P. 587 Beyrouth (Liban)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ.— Արհաւիրքի Օրեր . . . . . 1  
 Յ. ԲԻԻՐՏԵԱՆ.— Հայ եւ Արաբ հնագոյն յարաբերութիւնները . . . 38  
 ՏՈՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ.— Յուշատետրէս . . . . . 44  
 ՀԱՅ — ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ — . . . . . 58  
 ՀՄ. ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Դէպքերը Վասպուրականում . . . . . 73  
 ՄԻ ԲԱՆԻ ՃՇՏՈՒՄՆԵՐ.— Ս. ՎՐ. . . . . 78  
 ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.— ԸՆԾԱՅԵՑԻ . . . . . 83  
 ԱՆՅԵԱԿ.— Ատրպետ, Հայաստան Գէորգեան, Զ. Մաքիկեան 91  
 ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ.— Գրականութեան վիճակը Հայաստանում.— Բափֆիի Յոքելեանը.— Մուր.— Ռաֆայէլեան վարժարանի հարիւրամեակը.— Քաղաքային Թանգարան Երեւանում.— «Մարջան» օպերա . . . . . 94  
 ԳԻՐՔ ԵՒ ՄԱՍՈՒԼ.— Հրատարակութիւնների վիճակը Հայաստանում.— Բափֆիի երկերը.— Նուպարեան Մատենադարան . . . . . 103  
 ԳՐԱԽՕՍԱԿԱՆ.— Մ. Օրախելաշվիլի՝ «Ս. Օրջոնիկիձէ», Ն. Բաղայեան. Ն. Հանգոյց՝ «Մեր Կանոնագիրը», Ս. Վ.— 106  
 ՍՏԱՅԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . 110  
 ՅԱԻԵԼԻԱԾ.— Վահրամ Եպ. Մանկունի, «Գէորգ Դ. եւ իր ժամանակը» . . . . . 273

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Փրանսա եւ Սիւրիա տարեկան՝ 60 ֆրանք  
 Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս՝ տարեկան 4 դոլար  
 Մնացեալ բոլոր երկիրները տարեկան՝ 3 դոլար  
 Կանխիկ վճարող նոր բաժանորդների համար՝ նախորդ տարիների թիւերը՝ կէս գնով :  
 Հասցէ՝ նամակների, դրամի, յողւածների եւ ուրիշ ամէն տեսակ առաքումների համար.—

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

Impr. ARTISTIQUE. 42, Rue de la Jonquiére, PARIS (17e)

Լուսթեամբ իմն դիտէր Վեհ. Հայրապետ զամենայն ամբաստանութիւնս զոմանց քահանայից եւ զպաշտօնէից եկեղեցեաց, զանգամոց Թեմ. Ատենի, զատենադպրէ եւ զքարտուղարաց դիւանատան, ըննէր խնամով զխնդիրս ժողովրդեան եւ զաղբերսագիրս, եւ անօրինէր զարժանն, յանձնեալ Թեմակալ — Առաջնորդի կամ Թողեալ յանձնել Սինոդի ի ներկայութեան իւրում զալ կարգադրել զկարեւոր վճիռս կամ զբացառութիւնս :

Տեղային եւ անստորագիր ամբաստանութիւնք, եւ յաճախութիւնք զըզարտութեանց եւ ստութեանց կորուսանէին զարժէս ոմանց արդարացի դիտողութեանց, թէպէտ յաջողէին զէթ ըստ մասնեայ պղտորել զմիտս նախապաշարմամբ, եւ ազգել զկասկածանս :

Յաւուր կիւրակէի Ծաղկազարդի (յԹ—ն Ապրիլի) էջ Նորին Սըրբութիւն ի Ս. Եկեղեցի վանաց ի ճաշու — ի Ս. Պատարագի, որ առանձին յառաւօտեան ժամերգութենէ կատարէր ըստ հնոյ եւ իսկական սովորութեան Հայաստանեայց յԵկեղեցիս Հայոց ի Ռուսաստան, մինչ կից ընդ առաւօտեան ժամերգութեան կատարի ճաշու ժամ եւ Ս. Պատարագ ի Թորքիա :

Ոչ բաւէին Ս. Աստուածածնի եկեղեցի եւ գաւիթ վանուց խուռն բարձրութեան ժողովրդեան եւ այսպէս շարունակէր խոնէր յառաւօտս եւ յերեկոյի յԱւագ Ուրբաթու, ի Չատկի եւ ի Կիւրակէի Ս. Յարութեան մինչեւ մեկնեցաւ Նորին Սըրբութիւն ի Թիֆլիզէ :

Որոշեալ էր տալ ի նմին աւուր զպաշտօնական զառաջին այցելութիւն Հայրապետական առ Միքայէլ մեծ դուքս Նիկոլայեւիչ փոխարքայ Կովկասու, եւ եղև այսպէս :

Մերձ ի կէսօր եկն պետական պատուիրակ զօրապետ Վասիլի Զինովիէվ ի վեհարան՝ բերեալ զփոխարքայական կառս ի պատիւ Ս. Հայրապետի : Նորին Վեհափառութիւն, նստեալ ի նոյն կառս ընդ Զինովիէվ զօրապետի, զնաց ի պալատն փոխարքայական : Հայրապետական զօրապիւր եւ զօրապիւր վեղարաւորք յառաջէին, նստեալ յերկվարս, որպէս եւ շաթիրք յառաջընթացք : Իսկ Տ. Մակար եւ Սարգիս Արքեպիսկոպոսունք, Յովհաննէս Եպիսկոպոս. Ռչտունի, վարդապետքն Պետրոս Տէր — Ստեփանեան (Վեհապետեան), Յովհաննէս Աէթեան, Սիմէոն Աէֆէրեան, Խորէն Գալֆայեան, Ստեփան Սանտալճեան, Գրիգոր Մուշեղեան եւ Սուքիաս Պարդեան, աւագ քահանայք ոմանք, պարոնայք Մաղաք Մաղաքեան եւ Յակոբիկ Նէվրուգեան հետեւէին Հոգեւոր Տեառն նստեալ ի կառս :

Ի հասանել Նորին Սըրբութեան ի դուռն պալատան պաշտօնեայք նշանաւորք զիմաւորեցին եւ առաջնորդեցին Հոգեւոր Տեառն ի մեծ

սրահն ընդունելութեան պալատան, ուր յոտնկայս համախմբեալ էին ի միալար դիծ շուրջանակի Հայ, Ռուս, Վրացի եւ Մահմէդական պաշտօնեայք առաջնակարգ եթէ քաղաքականք և եթէ զինուորականք՝ զարդարեալ այլ եւ այլ շքանշանօք եւ համազգեստիւք պաշտօնակա- նօք: Ի ճակատու երկարութեան սրահին եւ ի հարաւակողմն երկրորդ դրան մերձ յանկին կախեալ կայր զորմէ մեծազիր եւ շքեղազարդ պատկեր Աղեքսանդր Բ. Կայսեր Նիկոլայեվիչի, եւ յերկուս կողմանս կենդանագրի էին սեղանք երկու, յաջակողմեանն ետեալ էին հրո- վարտակ վաւերացման Կաթողիկոսութեան եւ շքանշանն Աղեքսանդր Նեվալցոյ ընդ կայսերական հրովարտակին:

Ի մտանել Հոգեւոր Տեառն ընդ հետեւորդացն ի մեծ սրահն ընդ սովորական դուռն արեւմտեան եմուտ եւ Միքայէլ մեծ իշխան փոխ- արքայ պաշտօնական համահանդերձիւք եւ շքանշանօք ի սրահ անդր ընդ դուռն հարաւային, եւ դիմաւորեցին զիրեար:

Յողջունել Նորին Սրբութեան զփոխարքայն Միքայէլ, նա խո- նարհեալ համբուրեաց զս. Աջն Հայրապետական: \*)

Յետ փոքու միջոցի փոխադարձ ներկայացմանց, շնորհաւորեալ փոխարքայի զԿաթողիկոսական պաշտօն, զշքանշան Աղեքսանդրի հանդերձ բարեմաղթութեամբք, իբր ի դիմաց Կայսեր առեալ ի սե- ղանոյ գհրովարտակն կաթողիկոսութեան եւ զշքանշան Աղեքսանդրի Նեվալցոյ՝ յանձնեաց Վեհ. Հայրապետի, եւ այսպէս աւարտեցաւ այս արարողութիւն:

Զկնի այսր հրաւիրեալ տարաւ Մեծ Դուռս զՀոգեւոր Տէր յառան- ձին ընդունարան իւր, եցոյց զյարգանս արժանաւորս եւ գհիրասի- րութիւն: Խօսեցան ընդ միմեանս իբր ժամ մի, սակս ճանապարհոր- դութեան եւ յաղագս դրեց Թիֆլիզու եւ կողմանցն, վեր ի վերոյ բա- նիւք: Յորժամ կամէր մեկնել Նորին Սրբութիւն, խնդրեաց Մեծ Իշ- խան Փոխարքայ եւ տարաւ զՀոգեւոր Տէր առ Օլիա իշխանուհի տի- կին իւր, որպէսզի օրհնեսցէ զնա եւ զղաւակունսն: Զոր եւ կատար- եալ՝ վերադարձաւ Վեհ. Հայրապետ ընդ հետեւորդացն եւ ընդ հրա- վիրակ Զինովիէվ զօրապետի փոխարքայական կառօք ի վեհարան ի վանսն:

Դնեմք աստ մի զկնի միոյ զպատճէնս հրովարտակացն կայսերա-

\*) Ըստ առասկամ սովորութեան խաչակնքեաց Հոգեւոր Տէր ի վերայ փոխար- քայի եւ ի վերայ բարձրաստիգան պաշտօնէից՝ համբուրելով եւ գնակատս ի համ- բուրելն նոցա զԱջ Նարին Սրբութեամ:

կանաց որ վասն կաթողիկոսութեան եւ սակս շքանշանի Աղեքսանդրի Նեվալցոյ (Նէվալցոյ):

ՀՐՈՎԱՐՏԱԿ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

« Արագահաս Ողորմութեամբն Աստուծոյ  
« Մենք Աղեքսանդր Երկրորդ

« Կայսր եւ ինքնակալ ամենայն Ռուսաց, Մոսկուայ, Գիէվի,  
« Վլադիմիրայ, Նովկորոդի, Արքայ Ղաղանու, Արքայ Աստերխա-  
« նայ, Արքայ Լեհաստանի, Արքայ Սիպերիոյ, Արքայ Քէրսոնէսի  
« եւ Տավրիկիոյ, Արքայ Վրաստանի, Թաղաւոր Պսկովու եւ Մեծ իշ-  
« խան Սմոլենսկայ, Լիդովսկայ, Վոլինսկի, Փոդոլսկի եւ Ֆինլան-  
« դիոյ, իշխան Էսթլանտիոյ, Քուրլանտիոյ եւ Սեմիոնէսկի, Պելոս-  
« տոկայ, Քարելսկայ, Տվերսկայ, Իւկորսկայ, Փերմսկայ, Քատըս-  
« կայ, Պուլլարաց եւ այլոց, Թաղաւոր եւ Մեծ իշխան Նովակորոտի,  
« Նիչովեան երկրի, Չեռնիքովայ, Րիազանու, Փոլոդսկայ, Քոն-  
« դիյսկայ, Վիթեպսկայ, Մոտիսլաւայ, եւ համայն հիւսիսային կող-  
« մանց հրամանատու, եւ Թաղաւոր Իպէրիոյ, Քարթալինի, եւ Քա-  
« պարտիոյ եւ Նահանգին Հայոց (Երեւանայ), Չերքէզաց եւ լեռնա-  
« կան իշխանաց եւ այլոց, ժառանգական Թաղաւոր եւ Տիրող, ժա-  
« ոանգ Նորվեկիոյ, Դուքս Շլէզվիկ - Հոլշթէյնի, Սբարմատնայի  
« Անթամարսենայ եւ Օլտենպուրկի, եւ այլն, եւ այլն, եւ այլն:

« Յարդ լիցի համօրէն Ազգի Հայաստանեայց, զի լուեալ զմիա-  
« հաւան ցանկութիւն, զոր յայտ արար նա հանդիսաբար ի Սբ. Էջ-  
« միածին յեթնբորոգի \*) անդ աւուր ամսեանն Սեպտեմբերի ներ-  
« կայ այսր ամի հազարբորոգի ութհարիւրբորոգի վաթսունբորոգի  
« վեցբորոգի, հաստատեմք միք յաստիճան անդ Պատրիարքութեան  
« սրբոյ Էջմիածնի եւ Կաթողիկոսութեան Ամենայն Հայոց զնախկին  
« Պատրիարքն Կոստանդնուպոլսոյ եւ զԱրքեպիսկոպոսն Պրուսայու  
« զՏէր ԳիՈՐԳ:

« Ամենաբարձրեալն Աստուած օրհնեսցէ զԾայրագոյն Պա-  
« տրիարքն ի պաշտօն ծառայութեան, որ մեծ է առաջի Տեառն, առ  
« ի բարօրութիւն եւ ի փրկութիւն համօրէն Հայկազանց սիրեցելոցն  
« առ ի մէնջ:

« Տուաւ յաթոռանիստ քաղաքն մեծ Փեթերպուրկ, յամի Տիառն

\*) Պարտի լինել 17, եթէ ոչ իցէ սխալ քարգմանչի: Մոսացեալ եւք ճշտել ընդ իսկակամի:

« 1866, ի քսաներորդի երրորդի առուր ամսեանն Նոյեմբերի, որ ամ  
« երկոտասաներորդ է մերումս թագաւորութեան :

**ԱՂԵՔՍԱՆԴՐ**

« Նախարար ներքին գործոց Սթաթս. — Սեքրետար Վալուելի » :

Իսպառ նորորինակ եւ եզական է շքեղազարդ ձեռանկար շրջա-  
գիծ հրովարտակիս այսորիկ, յորում գծազրեալ են հայկական նշանք,  
Մասիս, էջմիածին, Ս. Առաքեալքն եւ առաջին լուսաւորիչք Թաղէոս  
եւ Բարթողիմէոս, Ս. Գրիգոր երկրորդ Լուսաւորիչ Հայաստանեայց,  
Ս. Հայրապետն Սահակ եւ Ս. Մեսրոպը Առաջին թարգմանիչք՝ ի  
ռուսական ձեւս եւ ի նկարս եթէ ըստ կերպարանաց, եթէ ըստ զգես-  
տաց եւ եթէ ըստ այլոց պարագայից :

**ՀՐՈՎԱՐՏԱԿ ՇՔԱՆՇԱՆԻ**

Առ Ծայրագոյն Պատրիարք Սրբոյ Էջմիածնի եւ Կաթողիկոս  
Ամենայն Հայոց Գէորգ

« Ի հաւատքս մտերմութեան մերոյ առ Ազգն Հայաստանեայց,  
« որ ընտրեացն զՁեզ ի Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ա-  
« մենայն Հայոց, որպէս եւ ի նշան մերումս առ Ձեզ սեփական եւ ա-  
« ռանձին բարեհաճութեան, համակցորդ առնեմք զՁեզ ի կայսերա-  
« կան ասպետութեան Սուրբ եւ բարեպաշտ Մեծի Դքսի Աղեքսանդրի  
« Նեվազեոյ, զորոյ զնշանական առաքելով ընդ սմին՝ մնամք Ձեզ  
« կայսերական Մերովս շնորհիւ բարեացակամ

**ԱՂԵՔՍԱՆԴՐ**

Տուեալ եւ այլն :

Յետ առնլոյ Հոգեւոր Տեառն զհանդիստ սակաւ ինչ, գնաց եւ  
վճարեաց ընդ Ձինովիէվի զփոխադարձ այցելութիւնս առ իշխան Օր-  
պելեանի (վրացի), առ լեհազգի Առլովսկի նահանգապետ Տիխեաց,  
առ բարոն Նիկոլայի (գերմանացի), կառավարիչ գլխաւոր կառավա-  
րութեան Կովկասեան Փոխարքայութեան (ըստ քաղաքականի), եւ  
առ զօրպետ Կարցով, օգնական Փոխարքայի եւ գլխաւոր կառավա-  
րիչ զինուորական գործոց Կովկասու, եւ վերադարձաւ ի վանս փո-  
խարքայական կառօք :

Իսկ ի 11-ն ամսոյ յԱւագ Երեքշաբթեոջ զմիջաւորը եկն Միքա-  
յէլ Մեծ Դուքս փոխարքայ եւ վճարեաց զփոխադարձ այցելութիւն  
իւր առ Վեհ Հայրապետ՝ առանց զեկուցանելոյ կանխաւ : Եւ յետ տե-

սակցելոյ եւ ընկալնլոյ զարժանաւոր յարգանս, յորժամ կամէր վե-  
րադառնալ, Հոգեւոր Տէր տարաւ զնա ի Ս. Եկեղեցի, ուր կատար-  
եաց զյատուկ մաղթանս արտաքոյ ի սովորական ցուցակէ վասն Կայ-  
սեր Ռուսաց եւ վասն Փոխարքայի շքեղ իմն հանդիսիւ, ափ յափոյ  
տեսեալ զկարեւոր պատրաստութիւնս :

Եւ զի նուիրական աւուրք էին Աւագ շաբաթու եւ Ս. Զատիկի, ոչ  
եւ Հոգեւոր Տէր զայցելութիւն ումեք, ոչ եւ արտաքս ի վանաց, ըստ  
պատշաճի էջ ի Ս. Եկեղեցի սկսեալ յորէ Աւագ Հինգշաբաթու, եւ  
ներկայութեամբ իւրով եթէ փառաւորեաց զհանդէսս եւ զարարողու-  
թիւնս եւ եթէ միտիթարեաց զժողովուրդ, որ անխափան փութայր  
յաճախէր յԵկեղեցի այնչափ, մինչեւ ոչ գտանել զտեղի յԵկեղեցեոջ  
եւ յընդարձակ բակի վանաց : Դժուարութիւն մեծ էր եւ եկեղեցակա-  
նաց յերթեւեկին յԵկեղեցի :

Կատարեալ գտօն Ս. Յարութեան մեծահանդէս փառաւորու-  
թեամբ եւ սրտաշարժ երգեցողութեամք, ընկալաւ Վեհ. Հայրապետ  
յիւր ներկայութիւն զինի աւարտման Ս. Պատարագի զեպիսկոպո-  
սունս, զվարդապետս, զաւագ քահանայս, զնշանաւոր հայազգիս,  
զպաշտօնեայս զինուորականս եւ քաղաքականս ի Հայոց, ի Ռուսաց  
եւ ի Վրաց, զներկայացուցիչս արհեստապետաց եւ արհեստաւորաց  
եւ ամենայն դասու ժողովրդեան, եւ զըպրոցական եւ զկրթական  
պաշտօնեայս, որոց շնորհաւորեաց զՍ. Զատիկ հանդերձ բարեմաղ-  
թութեամբք ըստ իւրաքանչիւր աստիճանաց, կարգի եւ արժանեաց,  
եւ օրհնեալ զնոսա զամենեսին՝ արձակեաց վայելել ըստ կարգի եւ  
ըստ տեղական սովորութեան զսեղանն, զոր ետ պատրաստել Տ. Մա-  
կար Արքեպս., եւ ըմպէին զգինիս վասն կենաց Հոգեւոր Տեառն,  
վասն Կայսեր եւ Փոխարքայի եւ վասն այլոց : Եւ ապա երթային յիւ-  
րաքանչիւր բնակարանս կամ շրջին ի Զատիկական շնորհաւորու-  
թիւնս եւ մասնակցէին կեցցէից գինիօք եւ շամպանեայիւք, զոր հա-  
մարեմք սովորութիւն աննախանձելի եւ վնասակար :

Յետ այսորիկ զմիջաւորը ի նմին իսկ աւուր գնաց Վեհ. Հայ-  
րապետն ի շնորհաւորել զՍ. Զատիկ Մեծ Իշխան Փոխարքային Կով-  
կասու : Ի յաջորդ աւուր ի Մեռելոցի Զատիկի, ի 17-ն Ապրիլի կատար-  
եալ զմեծահանդէս մաղթանս առթիւ տարեդարձի ծննդեան Օգոստ.  
Կայսեր Ռուսաց Աղեքսանդրի, ընկալաւ եւ մեծարեաց զհրաւէր Փոխ-  
արքայի եւ մասնակցեցաւ պաշտօնական ընթրեաց ի պալատան Մեծ  
Իշխանի ի պատիւ Կայսեր ընդ Մակար եւ Սարգիս Արքեպիսկոպոսաց,  
ընդ Յովհաննէս Եպ. Ռչտունեոյ Առաջնորդ Կարուց եւ ընդ Խորէն  
վարդ. Գալֆայեան : Ըստ սովորութեան ներկայ էին յընթրիսդ բա-

զում պաշտօնեայք նշանաւորք եւ բարձրաստիճանք ի զինուորակա- նաց եւ ի քաղաքականաց :

Ի 19-ն Ապրիլի փոխանակեաց Մեծ Իշխան Փոխարքայն զչնորհա- ւորութիւն Զատիական առ Վեհ . Հայրապետ :

Նորին Սրբութիւն նախ քան զմեկնելն ի Տփլիսեաց , զնաց յատկա- պէս առ Մեծ Իշխան փոխարքայ ի 22-ն Ապրիլ ամսոյ յաւոր շարա- թու , եւ խօսեցաւ ընդ նմա եւ խնդրեաց օգնել ինքեան սակս վերաքըն- նութեան Պալատէնիոյ 1836-ի , յարգել զազատութիւնս իւր եւ զիրա- ւունս սակս յարաբերութեանց որ ընդ արտաքին աշխարհաց եւ ան- ձանց , միանգամայն յաղազս վարչութեան կամ կառավարութեան Ս . Էջմիածնի եւ վիճակաց Ռուսաստանեայց եւ ընդ Առաջնորդաց :

Խոստացաւ Փոխարքայն զկատարեալ բարեկամութիւն եւ զօգնու- թիւն համաձայն խնդրանաց Նորին Սրբութեան յամենայնի եւ ըստ ամենայնի , յաւելեալ միանգամայն , զի ի զիմաց ոռուսական կառավա- րութեան չիք արգել ինչ ընդ վերաքննութիւն Պալատէնիոյ , ընդ ա- զատ յարաբերութիւնս կաթողիկոսականս եւ ընդ կատարումն վար- չական պարտաւորութեանց : Ընդ որ մեծապէս ուրախացաւ Հոգեւոր Տէր լիայոյս ահնկալութեամբք , մանաւանդ զի խոստմունքն այնո- քիկ համաձայնեալ ընդ բանից դեսպանին Կ . Պոլսոյ Պ . Իկնաթիէվի՝ ներշնչէին Նորին Սրբութեան զկատարեալ վստահութիւնս մինչեւ կարծել բացարձակապէս անկեղծ եւ արդար լինել ոռուսական դիւանա- գիտութեան եւ կառավարութեան :

Փոխարքայ Միքայէլ Մեծ Դուքս հնարիւք իմն ձեւացուցեալ զբարեպաշտութիւն՝ աղաչէր զՀոգեւոր Տէր առնուլ ընդ փոյթ զօ- ծումն կաթողիկոսական , եւ յաւելոյր յայտնել զփափաք անձամբ ներկայ եւ ահանատես լինել հանդիսի եւ արարողութեան օծման : Եւ Հոգեւոր Տէր խորին իմն միամտութեամբ հրաւիրէր զնա ի Ս . Էջմիա- ծին , պատուել իւրով ներկայութեամբ զհանդէսն օծման եւ զՀայս եւ այլն , ոչ իմացեալ զիսկական միտս Նորին Կայսերական Բարձրու- թեան :

Ի 22-ն ամսոյ յաւոր Նոր – Կիւրակէի ետ Մեծ Իշխան փոխար- քայ ընդ երէկս զտասաներորդ ժամու ի նորոյ զյատուկ ընթրիս հրա- պուրիչս ի պատիւ Վեհ . Հայրապետի , հրաւիրեալ զՍարգիս եւ զՄա- կար Արքեպիսկոպոսունս , զՊետրոս , Յովհաննէս , Սիմէոն , Ստեփան , Խորէն եւ զԴրիդոր (Մուշեղեան) վարդապետս , զպարոնայս Մաղա- քիս եւ Յակոբիկ , զԶինովիէվ զօրապետ , եւ զբազմաթիւ պաշտօն- եայս առաջնակարգս եւ զնշանաւորս ի Հայազգեաց , ի Ռուսաց , ի Վը- րաց , ի Լեհաց եւ ի Պարսից : Ի ժամ ընթրեաց նուագէին պարբերա-

բար արքունական զինուորական նուագածուք : Կենացք թնդացուցա- նէին զմեծ սրահն ընդունելութեան փոխաշքայական պալատան :

Համեմատեալ զընթրիսդ ընդ իշխանական ընթրեաց Օսմանցւոց , ըստ գինեաց եւ արբեցութեան ծանրանայր առաւելութիւնն կամ գե- րազանցութիւնն ի կողմն ոռուսաց , իսկ ըստ տեսական եւ քանակու- թեան կերակրոց , խմորեղինաց , անուշեղինաց եւ պտղոց , ընդ մաք- րութեան ծանրանայր գերազանցութիւնն ի կողմն Օսմանցւոց :

Թողցուք զայս :

Եկն ժամանակ բարեպատեհ այցելելոյ եկեղեցեաց եւ դպրոցաց Հայոց : Վասն տրոյ ի 24-ն ամսոյն յաջակողմն Կուռ գետոյ , եւ ի 25 Ապրիլի ի ձախակողմն այցելեաց Վեհ . Հայրապետ Ս . Եկեղեցեաց , Ներսիսեան Դպրանոցի եւ այլոց ծխական դպրոցաց Հայոց ի Մողնի , ի Հաւլարար , եւ յայլ տեղիս : Ուղեկցէին Նորին Սրբութեան Տ . Մա- կար եւ Սարգիս Արքեպիսկոպոսունք , վարդապետք , աւագ քահա- նայք , եւ անձինք տմանք պատուաւորք ի Հայոց , հոգաբարձուք , ե- րէցփոխանք , որպիսիք ըստ անձնիւր եկեղեցւոյն եկեալ ի ծխական ե- կեղեցիս եւ ի դպրոցս՝ դիմաւորէին զՀոգեւոր Տէր ըստ արժանաւորն կարգի եւ յարգալիւր ընդունելութեամբք :

Տեսեալ զանյարմարութիւնս ինչ , զփոշիս եւ զանմաքրութիւնս յոմանս եկեղեցիս եւ սեղանս մանաւանդ՝ վշտացաւ Վեհ . Հայրապետ եւ պատուիրեաց զգուշանալ , միանգամայն արգելուլ ժամարար – պա- տարազիչ քահանայից երթալ եւ ննջել յանձնիւր տունս յաւուրս ժա- մարարութեան , շինել փութով զժամարարատունս ի բակս եկեղեց- եաց , կարգել զհերթակալութիւնս հանդերձ այլովքն : Հրամայեաց բազմապատկել զծխական դպրոցս ի պէտս երկուց սեռից յարտաքին սրահս (բակ) կամ առնթեր եկեղեցեաց իւրաքանչիւրոց եթէ ի քա- ղաքի եւ եթէ ի համայն վիճակի :

Հաւանեցաւ յոյժ ընդ կրթական մասն Ներսիսեան Դպրանոցի վերակազմելոյ :

Համաձայն խնդրանաց եւ հրաւիրանաց Մեծ Իշխան Փոխարքա- յի ի 26 եւ ի 27-ն Ապրիլի յաւուր Զորեքաբաթու եւ Հինգաբաթու զնաց Վեհ . Հայրապետ յայցելութիւնս արքունական դպրոցաց երկուց սեռից , վարժարանաց եւ կիսավարժարանաց (զիմնագիտ եւ պրոգիմ- նագիտ) , Նունեան օրիորդաց վարժարանի զտանելոյ ընդ պաշտպա- նութեամբ փոխարքայուհւոյ , ոմանց նշանաւոր հաստատութեանց (զինարանի , թնդանօթարանի) , եւ Սիօն անուանեալ աւագ եկեղեցւոյ ոռուսաց՝ առանց հանդիպելոյ ոռուսական եպիսկոպոսի :

Ոչ գտաւ գոհացուցիչ ընչայ ազգի աշակերտս եւ զուսանողս ի պետական վարժարանս ի կրօնական ուսմունս եւ ի մայրենի լեզուով: Այս առթիւ եւ ըստ թելադրութեան Փոխարքայի ջան կալաւ Երեմիա զօրավար Արծրունի (հայր Գրիգոր եւ Անդրէաս Արծրունւոյ) համոզել զՎեհ. Հայրապետ, որ եւ նուիրեաց զտարեկան զուսմարս հինգ հարիւրական (500) ուսուցից ի նպաստ Նունեան վարժարանի առ ի կրթել զերկուս հայուհիս: Ասէր Արծրունի, զի ոչ է պարտ ինայել զհաւ՝ ուստի դայ սադ (գագ կէլէն եէրտէն՝ քառուգ էսերկէնմէգ): Սիրէր եւ պատուէր Հոգեւոր Տէր զԱրծրունին, եւ ահամայ կամօք կատարեաց զառաջարկութիւն նորա: Զամս ինչ վճարեաց վիճակն Տիխեաց զայս զուսար իբր ի տուգանս առանց առնլոյ գէթ զչնչին փոխարինութիւն:

Հարկ է յաւելուլ աստանօր եւ արձանագրել, զի Միքայէլ Մեծ Իշխան ի տեսակցութիւնսն յարմարէր զբանսն եւ յայտնէր զգոհոհուութիւնս զՄակար Արքեպիսկոպոսէ եւ զձեռնասուն աշակերտէ նորա զՍուքիաս Արքեպիսկոպոսէ Պարզեանց, իբր զի միանան ընդ հայ երիտասարդս ոչ բարեմիտս եւ խրախուսեն զնոսա ի հակառակութիւնս ընդ դէմ ուսական կառավարութեան: Պախարակէր զպարանոցն Ներսիսեան եւ զուղղութիւն նորա: Փափաքէր, զի հեռանային Տ. Մակար Արքեպիսկոպոսէ եւ Սուքիաս Արքեպիսկոպոսէ Տիխեաց:

Եւ ի միւսէ կողմանէ Տ. Մարգիս Արքեպիսկոպոսէ. եւ կուսակիցք իւր զբողոքին զփողովուրդ ընդ դէմ Տ. Մակար Արք. -ի, յերկուրէն զամբաստանութիւնս եւ ջանային յուղել զխոռովութիւնս: Թողցուք յիշել զյաճախատեղաց զանստորագիր նամականի: Այլ ի նանիր վաստակէին՝ անհիմն լեալ ըստ բազում մասանց, բաց ի չափազանց յանդըզնութեանց Սուքիասայ Արքեպիսկոպոսէ, զոր սիրէր կենսազիրս:

Սարգիս Արք. կեղծէր զվիշտ եւ զարտասուս, իբր զի Մակար Արք. տուեալ է ծեփել զյիշատակարն իւր որ ի ճակատու վեհարանի, եւ զի իբր ինքն Զալալեան շինեալ էր ամբողջութեամբ եւ ի հիմանէ զվեհարան - առաջնորդարան վանուցդ, մինչ նա փակեալ յառաջոյ զընդարձակ դատիկոն զպալքոնաձեւ սրահ վերնայարկի որ յերկարութիւն շինուածոյ յարեւմտից կուսէ՝ կազմեալ է զմի սենեակ ի վերայ Կուռ գետոյ, զընդարձակ սրահ (սոֆա) եւ զնախասենեակ մտից դրան կից առանձին զանգակատան Եկեղեցւոյ: Ուստի սխալ էր եւ աւելորդարանութիւն պարունակութիւն յիշատակարանի:

Իսկ Վեհ. Հայրապետ ոչ հաւանէր առնել զփոփոխութիւն ինչ, խոստանայր զիտել եւ քննել առժամս, փորձել եւ ըստ այնմ անօրինել զարժանն յապագային: Մանաւանդ յարգէր զՄակար Արք. եւ զիտ-

հեմութիւն նորա: Միանգամայն զգուշացոյց զՏ. Մակար Արք. եւ զՍուքիաս Արքեպիսկոպոսէ եւ պատուիրեաց վերջնոյն հեռանալ ի գրգռութեանց եւ յերիտասարդական անփորձութեանց, եւ խոստացաւ տալ նմա զառանձին ասպարէզ զործունէութեան յայլում վիճակամասի, եւ այսու ըստ մասնեայ շահել եւ զսիրտ Փոխարքայի:

Ոչ դադարէր Զալալեան ընդ արժանաւոր արբանեակի իւրում Նիկողայոսի Յովսէփեան Աշտարակեցւոյ թարգմանի Սինոդի, զորպիսի պաշտօն վարէր վերջինն առնթեր Վեհ. Հայրապետի, տարածայնէր միանգամայն ի գաղտնի զգրգռիչ եւ զգայթակղեցուցիչ բանահիւսութիւնս եւ զգրպարտութիւնս ընդդէմ Հոգեւոր Տեառն եթէ բանիւ բերանոյ եւ եթէ անստորագիր կամ կեղծեալ նամակօք ի Թիֆլիզ եւ ի ճանապարհի, սկսեալ ի Կ. Պոլսոյ, որպէս համառօտեցաք այլուր:

Համբերութեամբ մեծաւ հսկէր Վեհ. Հայրապետ, հետեւել յորդորել եւ՛ շահել զամենեսին եւ բերել յուղղութիւն եւ ի կարգ:

Ոչ աւելորդ համարեցի արձանագրել աստ եւ զբարի գործ առնուրումն Ղարապաղցւոյ Աստուածատուր անուն, նամակացրուիչ պաշտօնեայ արքունական սուրհանդակատան Տիխեաց: Նախքան զմեկնել մեր ի Թիֆլիզէ, յաւուր միում, մինչ երգէր կենսազիրս զմեկնել մեր ի Թիֆլիզէ, Հայր՝ ուղղեալ յանուն Նորին Սրբուզերգն Բարեաւ երթ ի մէնջ, Հայր՝ ուղղեալ յանուն Նորին Սրբութեան Վեհ. Հայրապետի Ազգիս Հայոց աստ ի Կ. Պոլիս, երբ զնաթեան Վեհ. Հայրապետի Ազգիս Հայոց աստ ի Կ. Պոլիս, երբ զնամականի եւ այլն, լուսաւ զոր երգէաք մեղմ ձայնիւ եւ յառանձին սենեկի որ մերձ ի նախադուռն վեհարանի, եւ զի բերեալ էր զնամակ եւ յանուն մեր, զգածեալ արտասուեաց եւ խնդրեաց տալ ինքեան զօրինակ մի: Եւ կենսազիրս ետ նմա զթերթս ինչ ի տպագրելոցն, որոց արդիւնք նուիրեալ էին ի նպաստ Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի Եւտի - Գուլէի Կ. Պոլսոյ, ընթերցաւ զերգն եւ առեալ զբացատրութիւնս՝ յայտնեաց զիղծս նուիրարբեր լինելոյ, եւ յանձնեաց զմի վիճակաւոր բաժնեթուղթ ի ուսական ներքին փոխառութեանց՝ խնդրեալ կաւոր բաժնեթուղթ ի ուսական ներքին Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի: Հասուցանել ի նպաստ եւ ի նուէր Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի: Օրհնեաց Հոգեւոր Տէր զայդ բարենախանձ՝ կատարեալ եւ զիղծս նորա: Յետ ամաց ինչ շահեցաւ բաժնեթուղթն այն զ5000 ուսուրի (իբր 600 ոսկի Օսմանեան), եթէ ոչ վրիպիմք ի յիշողութեանէ:

ԳԼՈՒԽ ԾԱ.

ՅԱՂԱԳՍ ՈՒՂԵՒՈՐԵԼՈՅ Ս. ԿԱԹՈՒՂԻԿՈՍՒԻ Ի ՏՓԵՆԱՑ  
ՄԻՆՁԵՒԻ ՅՍԲ. ԷՁՄԻԱՄԻՆ

Փոյթ մեծ էր Վեհ. Հայրապետի երթալ հասանել ի Ս. Էջմիածին

եւ անդէն ձեռն ի գործ արկանել, ընդ որ թելադէր եւ ուսական կա-  
ռավարութիւն, եւ միամտաբար հաւատայր Հոգեւոր Տէր ըղձին վերջ-  
նոյն: Ունէր եւ ինքն զներքին պատճառ:

Վասն որոյ յետ վճարելոյ Հոգեւոր Տեառն փոխադարձ այցելու-  
թիւնս, զպաշտօնական տեսակցութիւնս եւ զընդունելութիւնս, եւ  
զայցելութիւնս հրաժեշտի որոց արժան եւ հարկ անհրաժեշտ էր, որ-  
պէս եւ նոքա եւ Հայք եւ այլք փութային գունդագունդ յերթայի  
բարեաւ, պատրաստեցաւ ուղևոյ լինել յաւուր Հինգշաբաթու ի 4-ն  
Մայիսի:

Էր ժամ հինգ, իբր ի միջօրէի, էջ Ս. Հայրապետ ի Ս. Եկեղեցի,  
աղօթեաց, օրհնեաց զժողովուրդը եւ ել յուղի կառօք ուղեկցութեամբ  
Արքեպիսկոպոսաց, վարդապետաց, պատուիրակ - ուղեկցացն թուր-  
քիոյ, աւադ քահանայից, նշանաւոր աղագանոց, ոմանց պաշտօնէից  
եւ ներկայացուցաց արքունականաց, դրօշակաւոր արհեստապետաց  
եւ բազմախուռն բազմութեան ժողովրդեան Հայոց:

Յետ միոյ ժամու, հասեալ մերձ ի կրծանիս արուարձանն՝  
պատուեաց Նորին Սրբութիւն զճաշ զպատրաստեալն ի Հայագգի մե-  
ծամեծաց ոմանց յայգւոջ ուրեք:

Ապա, յիններորդ ժամու շարունակեաց Հոգեւոր Տէր զճանա-  
պարհ իւր եւ զտասաներորդ ժամու եհաս յիջեւանն Սողանլը, յորմէ  
արձակեաց զժողովուրդը իւր սիրելի, զարհեստապետս, զներկայա-  
ցուցիչս եւ զնշանաւոր անձինս, զմեծամեծս Հայոց հանդերձ օրհ-  
նութեամբ եւ շնորհակալութեամբ: Ել ի ճանապարհ եւ եհաս յիջե-  
ւանն Կողայու ընդ երէկս ի մետասաներորդ ժամու, ուր եւ գիշեր-  
եաց:

Զիններորդ ժամու առաւօտեան մեկնեալ ի Կողայէ՝ զկնի միոյ  
ժամու եհաս Վեհ. Հայրապետ յիջեւանն Սարվան, գերկոտասանե-  
րորդ ժամու առաւօտեան յիջեւանն Մուղանլու, ուր եւ պատուեաց  
զնախաճաշ զպատրաստեալն ի քահանայից եւ ի Հայոց Շուրվէրու  
ի համանուն վիճակաբաժնէ Տփիսեաց, որք, որպէս եւ քահանայք եւ  
Հայք մերձաւոր գիւղօրէից կողմանցն յիւրաքանչիւր սահմանս յար-  
մարաւորս՝ դիմաւորեալ ուղեկցէին, դիմաւորեցին զՎեհ. Հայրա-  
պետ, ըստ սովորական կարգի, ոչ մոռացեալ զհաց եւ գաղ, միանգա-  
մայն ուղեկցեցան եւ առին զօրհնութիւն Հայրապետական: Ի չոր-  
րորդ ժամու առաւօտեան մեկնեցաւ Նորին Սրբութիւն ի Մուղանլուէ,  
զկնի միոյ ժամու եհաս յիջեւանն Կոտրած Կամրջոյ առ Կուռ գետով  
յաջակողմն, ընդ երէկս զինն ժամու եկեալ յիջեւանն Սարանլու, ուր

եւ գիշերեաց՝ պատուեալ զպատրաստութիւնս եւ զընթրիս ջերմե-  
ռանդ Հայոց որ ի Կողբացուց եւ յայլոց գիւղօրէից ի վիճակաբաժ-  
նէն Ղազարու (Տփիսեաց), օրհնեաց զնոսա եւ անդ ագաւ զգիշերն:

Ի յաջորդ շաբաթ աւուր, ի 6-ն Մայիսի, զինն եւ կէս ժամու ա-  
ռաւօտեան, մեկնեալ Ս. Հայրապետ ի Սալահլուէ՝ եհաս ի մետասա-  
ներորդ ժամու ի փոքրիկ իջեւանն Շուրաբաթ, երկոտասաներորդ  
ժամու յիջեւանն Աղստեաւ (Ախտաֆա, ըստ գործածականին) առ  
Աղստեւ գետակով, յաջակողմն ի բարձրաւանդակի, ուր էառ հան-  
գիստ իբր քառորդս երկուս: Եւ ապա շարունակեալ զուղին՝ եմուտ ի  
մացառոտ եւ ի վտանգաւոր սահմանս Ղազարու, եհաս գերկրորդ ժա-  
մու յիջեւանն Չախմախլու (որ եւ Ուղունթալա), անտի զհինգ եւ կէս  
ժամու մերձ ի կէս օր ի գեղեցիկ եւ յօղասուն իջեւանն Քարվանսա-  
րայ գեղջ Հայոց ի լանջս անտառախիտ լեռանց, ի միջափայրի զուար-  
ճալի եւ ախորժելի, կանաչազարդ եւ անտառախիտ ձորոյ եւ նեղու-  
ցի Տէլիճանի: Պատուեաց անդ զճաշ զպատրաստեալն ի բարեպաշտ  
Հայոց Քարվանսարայի, Սեւ Քարի, Սաշաջուրի, Ուղունթալայի եւ  
Աշխի, եւ օրհնեաց զնոսա: Գիշերեաց անդ Նորին Սրբութիւն՝ ա-  
խորժեալ ի Քարվանսարայէ եւ ի դրիցն:

Որպէս յամենայն տեղիս առնէր Նորին Սրբութիւն, հրաւիրեալ  
զքահանայս եւ զժողովուրդը ի ներկայութեան իւր՝ խօսակցէր ընդ  
նոսա, հարցանէր զտեղեկութիւնս ներքինս եւ արտաքինս, խրատէր  
եւ յորդորէր զնոսա յեկեղեցասիրութիւն, յուսումնասիրութիւն, ի  
բարեպաշտութիւն, յազգասիրութիւն եւ ի ներքին ներդաշնակու-  
թիւնս, տալով եւ զհրահանգս կարեւորս եւ զպատուէրս օգտակարս,  
ընդ որս ոգեւորեալ Հայոց՝ ուրախ լինէին եւ մխիթարէին յոյժ:

Յ7-ն Մայիսի, յաւուր կիւրակէի, էլ Վեհ. Հայրապետ զտասա-  
ներորդ ժամու առաւօտեան ի Քարվանսարայէ: Քաջ երիտասարդք  
Հայոց Ղազարու որպէս յերէկի, նոյնպէս այսօր շարունակէին զքա-  
ջավարժ ձիախաղս եւ զզինաշարժութիւնս, եւ առաւել գրաւէին զհա-  
մակրութիւնս եւ զզովեստս մեր զինուորական փորձառութեամբք իւր-  
եանց եւ կրթութեամբ յայնպիսիս անձուկ վայրս եւ ի ձորուղիս, զոր-  
պիսիս տեսանեմք յետ այսօրիկ ի բազում տեղիս ի Հայոց, մանաւանդ  
ի հայաշատ վայրս, յԱրարատեան, ի Սիւնեաց աշխարհս եւ յայլս:

Ի մետասաներորդ եւ կէս ժամու հասեալ ի գետեգերեայ եւ ի  
զուարճատեսիլ իջեւանն Զուրաւստան, որ ունէր զխոնարհագոյն դիրս  
ի լեռնաձորակի եւ յօճապտոյտ նեղուցի Տէլիճանու, յետ սակաւուց  
մեկնեցաւ եւ անտի Հոգեւոր Տէր եւ սկսաւ ուղի մեր բարձրանալ ի  
զառիվերս նորաչէն խճուղևոյ առ օճապտոյտ եզերք գետոյ եւ նեղու-



Աստաֆրէյվ ուսն նահանգապետ Երեւանայ, կառավարիչն ժանդարմ անուանեալ առանձին լրտեսական եւ ստիկանական վարչութեան, բերդապետն եւ այլք, եւ շնորհաւորեալ զգալուստ Ս. Հայրապետի առին զօրհնութիւն եւ վերադարձան յիւրաքանչիւր բնակարանս: Եւ այսպէս շարունակէին եւ յաջորդէին միմեանց այցելութիւնք:

Յառաջին երեկոյին Դշ. աւուր ի 10-ն Մայիսի փութացեալ եկին ի Մայր Աթոռոյ Տեղակալ (Ատենապետի Սինոդի եւ ոչ Տեղապահ Կաթողիկոսական) Տ. Գէորգ Արք. Վեհապետեան եւ անդամք Սինոդի Յովհաննէս Արսլանեան Վաղարշապատցի եւ Գէորգ Մկրտիչեան երեւանցի Եպիսկոպոսունք, եւ փրկոնեալ եւ վեղարեալ ներկայացան Վեհ. Հայրապետի եւ մատուցին զշնորհաւորութիւնս եւ զյարգանս իւրեանց, միանգամայն վայելեցին զպատիւս Նորին Սրբութեան:

Յետ առնլոյ զկարեւոր հրահանգս եւ զպատուէրս Նորին Սրբութեան՝ ի նմին աւուր ընդ երէկս վերադարձան Տեղակալ եւ անդամք Սինոդի ի Ս. Էջմիածին առ ի տնօրինել զոր լուան եւ զոր հարկ էր ի դիմաւորելն զՍ. Կաթողիկոս:

Իսկ Հոգեւոր Տէր ի Դշ. եւ ի Եշ. աւուրս (Մայիս 10 - 11) հաճեցաւ շրջել եւ երթալ յայցելութիւնս եկեղեցեաց Հայոց, հոգեւոր զպրանոցի, ի փոխադարձ այցելութիւն նահանգապետի, Արսէն Սուլթանի Գեղամեանց եւ Պ. Ղահրամանի Աղամալեանց սիրելոյն ի հին զարմից Հայոց եւ յիշխանական դասակարգէ, եւ ի վերադառնալն աւանդեաց Մկրտիչ Եպ. -ի զկարեւոր պատուէրս զեկեղեցեաց եւ ըստ զպրոցաց — թոյլ էր Մկրտիչ Եպ. եւ ապիկար ի վարչականի:

Պատրաստեցաւ Վեհ. Հայրապետ յաւուր Ուրբաթու ի 12-ն Մայիսի երթալ հասանել յԱթոռ իւր Հայրապետական ի Ս. Էջմիածին:

Զերկրորդ ժամու առաւօտեան եւ յուղի ընդ համայն ճանապարհորդակցաց եւ խուռն բազմութեան Հայոց Երեւանայ եւ մերձակայ դիւղօրէից՝ կազմեալ ուղեւորական թափօր փառաւոր եւ սրտաշարժ հանդոյն հանդիսի դալատեան Տեառն ի Ս. Երուսաղէմ: Քաջ երիտասարդք Հայոց վառեալ յաշխոյթ մեծ փորձէին յաջողակութեամբք զձիարչաւս, զղինախաղս, զձիախաղս ուղմականս եւ զայլս այսպիսիս, եւ բուռն եռանդեամբ մրցէին, թնդացուցանէին զօրս հրացանաձողութեամբք՝ բարձրացուցեալ զթանձր ամպս փոշեաց: Գոռցես ոչ բաւէին զդրդիւնք եւ փոշիք բազմութեան կառաց եւ հանդարտ ձիաւորելոց:

Իաբախէին սիրտք մեր եւ յուղէին սիրտք ընդ տես քաջութեանց եւ եռանդեան Հայոց, մանաւանդ ընդ նշմարումն Կաթողիկէի Ս.

Էջմիածնի, զոր տեսաք կարօտակէզ եւ արտասուալից աչօք ի հեռուստ յետ միոյ ժամու ի սահմանոյ Ս. Հռիփսիմէի վանուց: Ոչ յադէաք ի դիտելոյ եւ զՄասիս, զորոյ զգագաթ տեսաք զառաջինն յեջեւանէն Եղունարք զեղջ: Եւ անդէն ներշնչեցաք ուղղել զբանաստեղծական իղձ չափաւոր:

Եհաս Հոգեւոր Տէր ի հրապարակ որ առաջի հիւսիսային մեծ ի դրան պարսպի Մայրավանուց, ուր կազմ եւ պատրաստ մնայր եկեղեցական թափօր մեծ եւ վեհաշուք ընդ Հայրապետական Ամպհովանուց. համախմբեալ էր եւ ամենահոծ բազմութիւն Հայոց ի Վաղարշապատէ եւ ի շրջակայ դիւղօրէից. էջ ի կառաց մեծաւ դժուարութեամբ, հնչեցին կեցցէք, սրտագին աղաղակք բազմութեան, զդրդէին զանգակք Ս. Էջմիածնի եւ Վաղարշապատու: Աւագ լուսարար Յովհաննէս Եպ. Ասլանեան եւ զընդհառ ի թիկունս Նորին Սրբութեան, եւ Տեղակալ Գէորգ Արք. զգաւազան եւ զխաչ ի ձեռս, եմուտ Հոգեւոր Տէր ընդ Ամպհովանեաւ, հաճեցաւ ընդ աղ եւ հաց մատուցեալ ի Միաբանութեէ, լուաւ զշնորհաւորական եւ զխնդակցական ուղերձ Տեղակալ Արքեպիսկոպոսի, յետ որոյ հնչեցին որոտալիւր երգք շարականաց եւ յառաջանայր: Ըստ սովորական կարգի եմուտ Ս. Կաթողիկոս ի մայրավանս՝ անցեալ ընդ արտաքին — պարսպային դուռն հիւսիսոյ եւ ընդ ներքին դուռն Տրդատայ անուանեալ, եւ անտի ի լուսաշող եւ ի նուիրական Մայր Տաճար Հայաստանեայց Առաքելական Ս. Աթոռոյ: Յետ յուղեալ աղօթից առաջի Ս. Սեղանոյ Իջման՝ Նորին Սրբութիւն լուաւ զճառ ուղերձի, որ ի դիմաց Ս. Ուխտի Համայն Միաբանութեան Մայրավանուց, ողջունեաց եւ օրհնեաց զՄայր Տաճար զԱթոռ Հայաստանեայց, զՄիաբանական Ուխտն համօրէն, զՀայս եւ զներկայ ժողովուրդ հանդերձ բարեմաղթութեամբք: Ասաց զՊաիպանիչ եւ զՀայր Մեր՝ արձակեալ ի խաղաղութիւն:

Ապա ելեալ ի Մայր Ս. Տաճարէ՝ եհարց Հոգեւոր Տէր զտեղի տապանի Տ. Տ. Ներսէս Կաթողիկոսի Աշտարակեցոյ, դարձաւ ի ձախակողմն — ի հարաւակողմն զանդակատան մեծի, առ առաջին սեամբ որոյ թաղեալ էր, եւ ասաց զՀոգւոց յատուկ՝ յարգեալ զնա իբրեւ զԵպիսկոպոսական ծնող եւ ձեռնադրող իւր: Ունէր առ նա եւ զսէր նախապաշարեալ:

Կատարեալ եւ զայս՝ սովորական ուղեկցութեամբ եպիսկոպոսաց զնաց մինչեւ ցարտաքին դուռն Վեհարանի, ընդ որ մտեալ հանդերձ ոմամբք աւագօք եւ իւրայնովք ի ներքին բակ, եւ անտի ի խոնարհագոյն դուռն Վեհարանի՝ ել եւ ի վեր ի մեծատուն Կաթողիկոսատան, եւ առանձնացեալ յամառնային սենեակ՝ էառ հանդիստ սակաւ ինչ:

Որպէս յամենայն ուրեք ի ճանապարհորդութիւն՝ Հայք գիւղօրէից առ ճանապարհաւ եղելոց մատուցեալ զիաց եւ զաղ, եւ կազմեալ զթափօր եկեղեցական՝ զիմաւորէին զՎԵՏ. Հայրապետ հանդերձ զանդահարութեամբք, նոյնպէս՝ արարին Հայք Ճաֆարապատ, Փարաքար եւ Վաղարշապատ գիւղօրէից յիւրաքանչիւր սահմանս յերեւանայ մինչեւ ի Ս. Էջմիածին:

Ընդ երէկս հրաւիրեաց ՎԵՏ. Հայրապետ զաւագ եպիսկոպոսունս ի Վեհարան եւ եհարց ի նորոյ զողջունէ, սլատուեաց զնոսա եւ խօսեցաւ ընդ նոսա զառօրեայ խնդրոց ոմանց եւ զտեղական սովորութեանց. ինքն հարցանէր եւ նոքա սլատասխանէին:

**ԳԼՈՒԽ ԾԲ.**

**ՅԱՂԱԳՍ ՄԱՂԹԱՆԱՅ ԵՒ ՎԱՍՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆՅ ՈՄԱՆՅ**

Ըստ հնաւանդ սովորութեան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի եթէ ի գալստեան Ս. Կաթողիկոսաց եւ եթէ ի վերադառնալն ի հեռաւոր ճանապարհորդութեանց ի Ս. Էջմիածին՝ համայն Միաբանութիւն որպէս փութաց զիմաւորել զՀոգեւոր Տէր եկեղեցական հանդիսի եւ երգովք շարականաց հանդերձ զանդահարութեամբք, նոյնպէս ի յաջորդ աւուրս, որպէս եւ յաւուրս տօնախմբութեանց անուանց եւ տարեդարձից օծմանց Կաթողիկոսաց, եւս եւ ի տօնի Կաթողիկէ Եկեղեցոյ Ս. Էջմիածնի, առնել զՀայրապետական յատուկ Մաղթանս ի ներքին բակի զառաջեալ Վեհարանի: Իսկ եթէ բացակայ կամ հիւանդ իցէ ՎԵՏ. Հայրապետ, կատարէ Միաբանական Ս. Ուխտն զայս Մաղթանս բոլորեալ ի քարայտակ կիսաբոլորակի զառաջեալ մեծի զանգակատան, որ յարեւմտեան կողմն Տաճարի:

Արդ, համաձայն այս սովորութեան ի 13-ն Մայիսի, ի Շարաթու, յերկրորդ աւուր գալստեան Նորին Սրբութեան ի Մայր Աթոռ կատարեցաւ փառահեղ հանդէս Մաղթանաց ըստ այսմ եղանակի, կցեալ եւ զպաշտօնական ներկայացմունս:

Յետ աւարտման առաւօտեան ժամերգութեան, հանդիստ առեալ իբրեւ ժամ մի, յառաջ քան զհարկանել զզանդակս ճաշու ժամու Ս. Պատարագի միանուագ հարուած մեծի զանդակի ըստ սովորութեան աղբարարեաց Միաբանից եւ այլոց փութալ համախմբել ի Մաղթանս զառաջեալ Վեհարանի ի ներքին բակի: Որոց աճապարեալ հասանել ի ներքին բակ, եպիսկոպոսունք եւ վարդապետք առեալ զվեղարս եւ զփիլոնս, սարկաւազունք ուրարեալ, եւ զպիրք աշակերտք զպրանո-




**« Վ Է Մ » - Ի Ն**

- Բաժանորդ կարելի է գրել ի հետեւեալ տեղերը. —  
 Ֆրանսա՝ Լ. Գեւորնեան, 17, Rue Damesme, Paris.  
 Ն. Կակոսեան, (Մարտէյի եւ շրջակայքի ընդհ. գործակալ)  
 49, Rue Nationale, Marseille.  
 Յունաստան՝ «Նոր Օր», 20-A, Rue Vouli, Athènes.  
 Կիպրոս՝ Յ. Մահտեսեան, Arasta St. No. 1, Nicosia.  
 Բուլղարիա՝ Գ. Հալաճեան, K. Haladjian, B. P. 444, Sofia.  
 Ռումանիա՝ Ե. Սարգսեան,  
 Typ "Astoria", 14, Str. Pictor Luchian, Bucarest.  
 Եգիպտոս՝ Գ. Մխիթարեան, խմբագր. «Յուսարեր»-ի.  
 B. P. 868, Le Caire.  
 Եթովպիա՝ Յ. Գ. Պուրսալեան, Hirna.  
 Լիբանան, Գառնիկ Գիւղպեան,  
 Collège Arménien 127, rue Vadi Abou Jemil, Beyrouth.  
 Սիրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 310, Alep.  
 ,, Ս. Պոյաճեան, B. P. 321, Damas.  
 Իրաք՝ Մ. Սոսեան, South Gate Bataveen, 27-1, Bagdad.  
 Իրան՝ Վար. Բարայեան, Թաւրիզ:  
 ,, Ա. Գէորգեան (Սուրբիստանի ընդհ. գործակալ),  
 Իրան՝ Մ. Համբարձումեան, Ահվազ,  
 Southern State Railway, Ahwaz.  
 Թեհրան՝ Ար. Սոջայեան,  
 A. Khodjayan. Magasin «Khochnoud», Avenue Lalezar, Téhéran.  
 Սպանիա — Ջուզա՝ Թաղ. Թաղէոսեան  
 Հիւս. Ամերիկայի ընդհ. գործակալ՝ Յ. Կորոյեան,  
 H. Gopoian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.).  
 Հարաւ. Ամերիկա՝ Եղ. Սաչերեան, Canning 1245, Buenos-Aires  
 » » Ար. Գալստեան,  
 Rua 25 de Março, 262 São Paulo (Brésil).

**«Յ Ա Ռ Ա Զ»**

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ  
 Խմբագիր՝ ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԲԵԱՆ

ԲԱՃԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	Վեցամսեայ	Եռամսեայ
Ֆրանսա եւ Գաղութներ	140 ֆրանկ	70 ֆրանկ	35 ֆրանկ
Լեզիս, Եգիպտոս, Զիցերիա, Իտալիա	250 ֆրանկ	130 ֆրանկ	
Ռուսիա եւ Երկիրներ	200 ֆրանկ	100 ֆրանկ	
Սմերիկա	200 ֆրանկ	100 ֆրանկ	



---

Imp ARTISTIQUE. — 42, Rue de la Jonquière, PARIS 17<sup>e</sup>